Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

4431, 4432
4433

281·67
2-22

Ш- 602

ՀԱՆԴԷՍ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ

ՀԱՅՈՑ

ՈՐ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ

"ԱՄԷՆ ԲԱՆ ՓՈՐՁԵՑԷՔ, ԲԱՐԻՆ ԱՄՈՒՐ ԲՌՆԵՑԷՔ:"
Ա. Թեսաղ. Ե. 21:

ԿԱՐԳԱԴՐԵԱՑ

Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

ԱԿՆՑԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1880

11081

معارف عموميه نظارت جليله سنك رخصتيله

Հրամանաւ Ժողովոյ պաշտօնէից հասարակաց կրթութեան

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՒԹԵԱՆՑ

ՅՈՐՈՑ ՔԱՂԵԱԼ ԵՆ ԲԱԶՈՒՄ ԲԱՆՔ ՀԱՆԴԻՍԻՍ

1. Առաջնորդ Աւետարանական եկեղեցւոյ անդամոց, տպեալ ի Կ. Պօլիս 1855, ի ձեռն Ամերիկայի Միսիոնարաց։

2. Արեւելք, ամսօրեայ Հանդէս հրատարակեալ ի Փարիզ խմբագրութեամբ Ոսկանեանի։ Միայն 1856 ի թիւերն են գտուած։

3. Արեւելեան Մամուլ, ամսօրեայ Հանդէս հրատարակեալ ի Զմիւռնիա։ Միայն 1874 ի թիւերը կարդացուած։

4. Արձանագրութիւն կամ Ատենագրութիւնք Ազգ. Ընդ. Ժողովոյ, 1870—1873 կամ Ա—ԿԷ նիստերը քննուած են։

5. Աւետաբեր լրագիր խմբագրութեամբ Ամերիկայի Միսիոնարաց, հրատարակեալ ի Կ. Պօլիս։ 1855—1878 նայուած են։

6. Բարի Մարդ և Բարի Քրիստոնեայ Տ. Մատթէոս կաթողիկոսի և նախկին Պատրիարքի Կ. Պօլսոյ, ուր տպեալ է հրամանաւ Պատրիարքի։

7. Դիտակ լրագիր խմբագրութեամբ Խ. Ս. Խիթիճեանի, որ է մին յերկուց Բողոքականաց Պօլսոյ, ուր հրատարակէր։

8. Եկեղեցական պատմութիւն Մելքիսեդեկ Վարդապետի Մուրատեանց, որ է միաբան Ս. Երուսաղեմայ, և դասատու պատմութեան ժառանգ. դպրոցին Ս. Յակոբայ վանուց, որ Պատրիարքի հրամանաւն տպեալ է յԵրուսաղէմ 1871։

9. Եկեղեցական Պատմութիւն Հ. Վարդան Վ. Ըսկարեանի ի Մխիթարեանց Վիէննայի, ուր տպագրեալ է 1872։

10. Ընթերցասիրութիւն Նիկողոս Զօրաեանի՝ բանիբուն ազգայնոյ, տպեալ ի Կոստանդնուպօլիս 1852։

11. Լոյս Հանդէս խմբագրութեամբ Արժ. Հմայեակ Վար. Դիմաքսեանի, տպեալ ի Կ. Պօլիս։ Միայն Ա—Ե շրջանի թիւերը կարդացուած։

12. Հանդիսարան Հայաստանեայց Լուս. Ս. Եկեղեցւոյ, Տ. Մատթէոս Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ ուր տպեալ է։

13. Հայրենիք լրագիր խմբագրութեամբ Մ. Յ. Մելիքեանի, տպեալ ի Կ. Պօլիս։ Միայն 1875 ի թիւերը գտուած են։

14. Մասիս լրագիր իբր պաշտօնական թերթ Ազգ. Պատրիարքարանի, խմբագրութեամբ Կ. Ս. Խիթիճեանի։ Քանի մը թիւերը միայն նայուած։

15. Մանզումէ լրագիր Կ. Յ. Փանոսեանի։ Քանի մը թիւերը նայուած։

16. Ցուցարարութիւն 1846 ի Բողոքականաց առ Ազգայինս ։

17. Յոյս ամսօրեայ Հանդէս հրատարակեալ ի Վանս Արմաշու, ընդ պատասխանատուութեամբ Վանահօր, խմբագրութեամբ Միաբանից ։ Միայն Է, Ը. համարները մեծաւ մասամբ կարդացուած ։

18. Պատասխանի Պատրիարքարանի ընդդէմ Ա. և Բ. Ցուցարարութեանց Բողոքականաց, յամի 1846 ։

19. Պատասխանի Հայ Աւետարանականաց առ Հայ Լուսաւորչականս, զոր հրատարակեցին Ակնցի Բողոքականք ի Կ. Պօլիս յամի 1875 ։

20. Պատասխանի Բարի մարդ (6) անուանեալ գրքին, զոր ետուն Ամերիկացի Միսիոնարք, տպեալ ի Պօլիս 1860 ։

21. Կրօնագիտութիւն Քրիստոնէական . . . ըստ Հայոց, գրեալ Միքայէլ Ծայրագոյն վարդապետ Սալլանդեանց միաբան Էջմիածնի, և դասատու փիլիսոփայութեան և աստուածաբանութեան վարժարանին . տպեալ ի Մոսկուա յամի 1831 ։

22. Պատկեր Հայաստանեայց Լուս. Ս. եկեղեցւոյ, հրատարակեալ ի Լուսաւորչեան անուանեալ ընկերութենէ ի Պօլիս 1866 ։

23. Պատմութիւն Հայոց Աւետիս վարժ. Պէրպէրեանի, որ էր դըրագիր Մատթէոս սրբազանի, տպեալ ի Կ. Պօլիս յամի 1871 ։

24. Պատմութիւն Հայոց Ս. Պ. Փափազեանի ։

25. Պատմութիւն Հայոց Հ. Եփրեմ Ջագըճեանի ի Մխիթարեան միաբանից Վիէննայի, ուր տպեալ է յամի 1872 ։

26. Սահմանադրութիւն ազգային, ըստ վաւերացեալ օրինակին ։

27. Սկզբունք դաստիարակութեան, Թարգմանեաց յիտալական լեզուէ Խ. Բ. Խւթիւճեան հանդերձ յաւելուածովք ։

28. Քննական կրօնագիտութիւն Տ. Սահակ Քահանայի Տ. Սարգսեան. Հրամանաւ Կրօնական Ժողովոյ տպեալ ի Պօլիս 1874 ։

29. Օրագիր լրագիր խմբագրութեամբ Օ. Խօճասարեանի, հրատարակեալ ի Պօլիս ։ Մի քանի օրինակները միայն նայուած ։

ՑԱՆԿ ՀԱՆԴԻՍԻՍ

ԳԼՈՒԽ Ա. Յառաջաբան, (երես) 1

ԽՆԴԻՐ 1. Հայն ի յուզման կայ, „ 1

„ 2. Ի՞նչ ըլլալու է ազգասիրի մը ընելիքը, „ 6

„ 3. Համդիսիս վախճանը, „ 8

„ 4. Խնդիր առ ընթերցողս, „ 10

ԳԼՈՒԽ Բ. Մուտ բողոքականութեան ի Տաճկաստան, „ 11

ԽՆԴԻՐ 1. Ի՞նչ է Աւետարան քարոզելու պարտքը, „ 12

„ 2. Ի վերայ Բողոքական ընկերութեանց, „ 16

„ 3. Ի Տաճկաստան գործող Բող. ընկերութիւնք և նոցա արդիւնքը, „ 18

„ 4. Մուտ բողոքականութեան ի Հայս, „ 23

„ 5. Համառածիլ Հայ Բողոքականաց, „ 32

ԳԼՈՒԽ Գ. Թէ ինչո՛ւ բողոքականութիւնը կընդունուի կամ կմերժուի, „ 39

ԽՆԴԻՐ 1. Բողոքականութիւնը մոլորութի՞ւն է թէ բարեփոխութիւն, „ 40

„ 2. Աւանդութիւնը պահպանել կամ բարեփոխել, „ 43

„ 3. Լուսաւորչական եկեղեցին կարօ՞տ է բարեկարգութեան կամ ոչ, „ 50

„ 4. Եկեղեցին բարեկարգել անոր մէջ մնալով կամ անկէ զատուելով, „ 54

„ 5. Ազգասիրութիւնը կ՚ներէ՞ Լուսաւորչական եկեղեցիէն բաժանիլ կամ ո՛չ, „ 63

„ 6. Բողոքականաց՝ Հայոց Աւետարան քարոզելը հակաքրիստոնէակա՞ն գործ է կամ քրիստոնէական, „ 69

„ 7. Տարաձայնութիւն ի Հայս եկեղեցական գործոց մէջ, „ 74

ԳԼՈՒԽ Դ. Զուգակշիռ Բողոքական Հայուն ընդ Լուսաւորչականին, „ 81

ԽՆԴԻՐ 1. Թիւ ժողովրդեան ու իմացական և բարոյական որպիսութիւնք նոցա, „ 82

„ 2. Ուսումնավայրք և որպիսութիւնք դաստիարակաց, „ 91

„ 3. Ազգային կառավարութիւն և որպիսութիւնք պաշտօնէից նորա, „ 102

„ 4. Կառավարութիւն Լուսաւորչական և Աւետա-

ըմնական եկեղեցեաց եւ որպիսութիւնք պաշտօնէից նոցա ,	„	110
„ 5. Մատենագրութիւնք եւ որպիսութիւնք նոցա ,	„	124
„ 6. Ներկայ վիճակ Լուսաւորչականաց եւ Աւետարանականաց ,	„	131
ԳԼՈՒԽ Ե. Կանխատեսութիւն ի վերայ ապագայի Լուսաւորչականին եւ Բողոքականին ,	„	136
ԽՆԴԻՐ 1. Քաղաքական փոփոխութիւնք աննպաստ են լուսաւորչականութեան եւ ինպաստ բողոքականութեան ,	„	137
„ 2. Բողոքական ընկերութեանց ջանքերուն աւելնալը աննպաստ են Լուսաւորչականին եւ նպաստաւոր բողոքականութեան ,	„	139
„ 3. Բողոքականաց վրայ եղած յարձակումը կդադրի եւ Լուսաւորչականացը կսկսի ,	„	141
„ 4. Աւետարանականը իւր բարւոք դաստիարակութեանը արդիւնքը պիտի վայելէ , Լուսաւորչականն ալ իւր Թերութեանցը ,	„	144
„ 5. Հայոց մէջ անկրօնութիւն կտարածուի ,	„	147
„ 6. Աճումն բողոքականութեան ,	„	152
ԳԼՈՒԽ Զ. Վերջաբան ,	„	154
ԽՆԴԻՐ 1. Եկեղեցական , ազգային եւ ուսումնական միութիւն ,	„	155
„ 2. Բողոքականութեան ընդհանրացում ,	„	157
„ 3. Ցաղագս բարեկարգեալ միութեան ,	„	163

ՀԱՆԴԷՍ ՀԱՅՈՑ

ԹՈՒՐՔԻՈՅ

Տ. ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ
291

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա. Հանդիսատէրը անդէպ չհամարիր աստ տալ մի քանի կանխաբան ծանօթութիւններ , որք կպատկանին առ վախճան Հանդիսին և կվերաբերին նորա պարունակութեանը , ինչպէս և իւր փափաքանացը ։ Ուստի Հանդէսը կբացուի այսու խրողութեամբ , թէ ,

1. ՀԱՅԸ Ի ՅՈՒԶՄԱՆ ԿԱՅ

Բ. Այս յուզումը կերևի թէ՛ Հայուն մտաւոր կարողութեանց վըրայ , թէ՛ խորհրդոց՝ առարկայից , և թէ՛ նոցա հետևութեանց՝ գործոց մէջ ։ Այպաքէն երբ մանկիկը կըլլայ մարդ և ժողովուրդը ազգ , կսկսի այս յուզումը , որ է առիթ և սկիզբն զարգացման և յառաջացման . իսկ Հայը դարուս մէջ հասած կերևի մըրկածուփ յուզմանց , յորում ըստ ամենայն մասանց առաւել կալեկոծի այժմ քան նախորդ դարուց մէջ ։ Նման երիտասարդի որ աշխարհ խորհուրդներն ու խաղերը յառաջագոյն ի բաց թողեալ է՝ երիտասարդական երևակայութիւնն ու զուարճութիւնքը այլ ևս անբաւական կհամարի զարգացեալ մտայն և ըղձից , և կպատրաստուի ձեռն մխել կատարելութեան սկզբանց և գործոց որ ապահովեն ապագայ բարօրութիւնը իւր և իւրայնոց ։

Գ. Ջունիմք տեղի դեղանիշ նկարագրի Հայութեան և յուսալից ապագայի նորա , զոր կերաշխաւորեն ներկայ պատրաստութիւնք . պէտք է ի բան բերել զկրողութիւնս ։ Եւ ահա ի Հանդիսի աստ կբացուի արդի Հայուն խնկապատակը , ուր կերևի յետս կոյս տարածեալ առաջնուղեղը , գործարանն հասողութեան , և փոքրը-

կացեալ յեմնուղեղը, որ գործարանն է զգայողութեան։ Եթէ բաղդատենք զայժմու Հայս իրենց նախնեաց և դրացի մի քանի ազանց հետ, պիտի շատ տարբեր գտնենք. մինչ սոցա զգացական մասն է մեծ՝ ի նշան քաջութեան և բուռն կրից, նոցա հասողականն է ընդարձակ, որ ցոյց իմն է խորհրդոյ և հանճարի։ Այս է իմացականութեան կամ դատողականութեան տեսարանն, ուր արդի Հայուն դպրոցներ ու խորհրդանոցները կան նախնեաց մարտկոցներու և զինարաններու քով։ Հոն ներկայն կդնէ իւր մատենագրութիւնը, որ մտաց է արդասիք, անցելոյն գանձուց քով, որք արդիւնք էին քրտանց ժիր մշակին։ Եւ եթէ յարդեանց առ պատճառն ձեռնարկեմք, որ լաւագոյն կերպ է այսպիսի իրաց հետազօտութեան մէջ, պէտք կըլլայ նայիլ թէ ի՛նչ կգրէ և կընէ արդի Հայը։

Դ. Դարուս Հայը, քան զնախնիս առաւել հաղորդ եղած Արեւմտից՝ Եւրոպիոյ և Ամերիկոյ, հետամուտ է գիտութեանց և ուսմանց, զորս վերջին դարերս կամ գտած են կամ կատարելագործած, որպիսիք են բնագիտութիւն և տարրալուծութիւն։ Նոր Հայը անձնատուր է արհեստից և ճարտարութեանց, որք մանաւանդ մտաց կորով կպահանջեն քան զօրութիւն բազկաց, ինչպէս են բժշկութիւն և հեռագրութիւն։ Մինչ զի կրնայ ըսուիլ, թէ այսօր այնպիսի գիտունք և արհեստաւորք տասնապատիկ են թուով և արդեամբ քան որ կային դարուս սկիզբը։ Զայս ցուցնել հանդիսադրին գործը չէ։ Նա կուզէ նկատել ուրիշ կէտ մը որ գոգցես յորձանավայր է եղած մտաց Թուրքիոյ Հայուն, իբրև ժողովրդեան որ կրօնական խնդրոց մէջ մանաւանդ բացորոշ է քան զշրջակայ ժողովուրդս։

Ե. Արդարև ամբողջ Թուրքիա ի յուզման կայ նկատմամբ կրօնական վարդապետութեանց. բայց Հայուն յուզումն այնպէս է, որ Հայուն պատմութեան մէջ ասոր նմանը չէ տեսնուած։ Դարուս ըսկիզբները Հայն ուզեց համախոհութեան գալ իրմէ հատուածեալ մէկ մասին՝ Հայ պապականաց հետ։ Ի պայքար ելին Հայ կրօնագէտք, որոց մելանին հետ կըսուի թէ արիւն իսկ խառնուեցաւ և ընթերցողաց ջղերը սարսեց։ Այս սարսման վրայ հասաւ բողոքականութիւնը, որոյ առջև արդէն յարևմուտս սասանած էին եկեղեցւոյ վարդապետութիւնք. ուստի հարկ եղաւ որ տարաձայն վարդապետներ շուտ միանան, ախոյեան կանգնին նորա դէմ, իբրև հասարակաց թշնամւոյ։ Բողոքականութիւնը սկսած էր կուսակցութիւն մը կազմել Հայոց մէջ, յորոց ոմանք եկեղեցւոյ վարդապետութեանց

խելամուտ եղած էին Հայ—Պապական վէճերէն, և գիտէին թէ ի՛նչ են անոնք և ի՛նչ սկզբանց վերայ հաստատեալ։ Լուսաւորչական եկեղեցին ուրիշ հատուած մըն ալ տուաւ, և պարտաւորեցաւ բանամարտը շարունակել և ինքզինքը երկբերան սրով պաշտպանել՝ ընդդէմ պապականութեան և բողոքականութեան։ Լուսաւորչական եկեղեցւոյ որդիքը կտարուբերէին սասանեալ գաղափարով։ Մահմետականութիւնն ալ, ստիպեալ ի պարագայից դրական ասպարէզ իջաւ և «Շէմ—իւլ Հագիգէթի» պէս գրքով մահմետականութիւնը գրչով, փոխանակ սրոյ, ուզեց Քրիստոնէից ընդունելի առնել, և փաստաբան և ջատագով գտաւ ի քրիստոնէից անգամ։ Յետ այսորիկ եկաւ Աստուածեանութիւնը, որ կուրանայ թէ յայտնեալ կրօն կայ, և կընդունի միայն ի՛նչ որ բանականութիւնը կուսուցանէ, և կանուանէ զայն բնական կրօն։ Աստուածեանութեան թարգման կանգնեցաւ Գաղղիախօս Հայը, որ կզերին լուծէն ազատելու ճար մը և ազատութիւն համարեցաւ զայն։ Սակայն հոս ալ կանգ չէր կրնար առնուլ միտքը, որ հաւատոյ նուազէն անկեալ կտարուբերէր ի յուզման։ Ճամբան բաց էր երթալու մինչև ի նիւթականութիւն ուր նախապէս հասած կերևի Զմիւռնիացի Հայ Գալուստ Կոստանդեան, որ կուզէ Հայ երիտասարդութեան հասկցնել, թէ ո՛չ ի տիեզերքի Աստուած կայ և ո՛չ մարդուս մէջ հոգի։

Զ. Հետևեալ պարբերութիւնք կհաւաստեն այս դիտողութեանց գլխաւոր կէտերն։ Լոյս հանդէսը (Ա. շրջ. 4) ցաւ յայտնեց թէ Հայոց մէջ անհաւատութիւն կտարածի, և ապա պարտաւորեցաւ գոչել (Բ. շրջ. 2) թէ «Ահաւասիկ անհաւատութիւնը և անկրօնութիւնը եկած մտեցած են Հայոց ընտանեկան կենաց դուռը։» Եւ Յոյս հանդէսը (Ե. հատ. 1) «Գնոստիկեանք կպնդէին թէ, կըսէ, հաւատքը ագէտ ժողովրդեան կամ ռամկին համար է..։ Այս իմաստով և գրեթէ այս բառերով խօսքեր երբեմն երբեմն մեր ազգի թերթերուն մէջ ալ կգտնեմք, իսկ խօսակցութեանց մէջ շատ անգամ կլսեմք..։ Եւ ասոր մէջ այնչափ յառաջ գացած են մէկ քանի ողորմելիներ, որ ի բնախօսութեան կամ ի տարրալուծութեան ագէտ ըլլալնին խոստովանիլ ամօթ կհամարին, բայց երբ առիթը բերէ՝ կրօնի նիւթոյ վրայ բան մը չգիտնալնին հպարտութեամբ կյիշեն..։ Ո՛չ միայն լոկ սպառնալից թշնամութիւն մը կաճի հաւատքի դէմ, այլև հպարտութիւնը շողքորթուելով անոր ոտնհար կլինի..։ Յարձակումը Աւետարանի դէմ է, Քրիստոնէական աստուածաբանութեան դէմ։» Յոյս կը հաստատէ զայս օրինակներով։

Է. Հայր Վ. Վ. Ըստեփանեանի բառերին պէս սա ևս նկատելի է, թէ «Եղած չէ ժամանակ մը (մանաւանդ Հայոց համար) . . որուն մէջ Քրիստոնէութեան թշնամիները՝ այնպիսի նենգաւոր հնարքներով և ամէն կարելի միջոցներով Քրիստոսի եկեղեցւոյն, անոր փըրկաւէտ վարդապետութեանցը և սուրբ սահմանադրութեանցը դէմ կռուին, ինչպէս հիմակուան ժամանակս։ Տպագրութեան մամուլն և հրապարակական թերթերն երբէք այնպիսի ժիր գործունէութիւն ցուցուցած չէին . . . ինչպէս այսօրուան օրս։ Եւ ինչ որ տպագրութիւնն ու լրագիրները չէին կրնար ընել՝ նոյնը կկատարեն ժամանակիս արտաքոյ կարգի դիւրինցած հաղորդակցութեան միջոցները. որով այլևայլ կրօնական գաղափարներ ու սկզբունքներ իրարու կընդհարկանին։ Ուստի մէկը՝ որ Քրիստոնէական կրօնին և ուղղափառ Եկեղեցւոյ պատմութեան ամենևին տեղեակ չէ, և կամ անոնց վրայ մէկ քանի վեր ի վերոյ և անբաւական տեղեկութիւններ ունի, . . այնպիսին շատ անգամ վտանգի մէջ կիյնայ սըտութիւնը ճշմարտութեան տեղ փոխանակելու . . . որ իր վնասակար հետևութիւններովը շատ չօշափելի եղած է նաև մեր ազգին մէջ" (Եկեղ. Պատ. յառաջաբան)։ Զոյն նկարագրէ և ոմն (ի Գիտ. 142) թէ «Մենք իննևտասներորդ դարու մարդիկ ազատութեան և գիտութեան պատերազմին միշտ և ամէն վայրկեան ականատես ենք. լուսոյ և խաւարի պատերազմը յառաջ կտանի, գաղափարք գաղափարաց կընդհարկանին, և ելեքտրական հոսանքին նման մաքէ միտք, սրտէ սիրտ լուսոյ կայծեր կցատկէ . . ։ Մտքերու մէջ յեղաշրջում մը տեղի կունենայ. նախապաշարման տեղ՝ լուսոյ և ճշմարիտ գիտութեան գաղափարներ կյաջորդեն. ազատութեան գերեվարութիւնը կդադրի և բանական արարածը՝ իր ստորնութեան վիճակէն կբարձրանայ։ Ի՞նչ քաղցր է տեսնել (Հայ ժողովուրդը որ այսպէս) դէպ ի յառաջադիմութիւն կմիտէ և արագ արագ քայլերով կձգտի ի լայնածաւալ ասպարէզ գիտութեանց։»

Ը. «Մէկ խռովութիւն մը կայ ազգիս մէջ,» կըսէ Գիտակ (թիւ 70), «որ ըստ ինքեան մեծ քաջալերութիւն է, այն է յառաջադիմութեան նկատմամբ եղած ընդհանուր տենչը, ընդհանուր փափաքը, մանաւանդ գաւառացի ազգայնոց մէջ։ Սակայն վախճան մը ձեռք բերելու համար լոկ փափաքն սոսկ չըներ, այլ միջոց ալ պէտք է. երբոր միջոցը կպակսի, փափաքն ալ կամաց կամաց կպակսի և կանհետանայ։ Հայը ներկայ դարուս պանծալի քաղաքակրթութեանը մէջ յառաջադէմ հանդիսանալու բարեբախտութիւնը չու-

նեցաւ, ոչ թէ տենչ և բաղձանք չունենալուն համար, և ո՛չ իսկ ատոր հասնելու բնական ձիրք կամ ընդունակութիւն չունենալուն պատճառաւ, այլ պարզապէս միջոցներ չունենալուն պատճառաւ։ Սակայն մեր ցաւը հոս ալ չվերջանար. աւելի ցաւալի պարագայ մը ունինք նկատելու։ Մինչդեռ երկինք իւր սիրելոյն այգիէն խաղող կսպասէր նա փուշ և տատասկ բերաւ։ Մեր արդի վիճակը ճիշտ այս է. Յառաջադիմութի՛ւն, յառաջադիմութի՛ւն աղաղակած ատեննիս՝ սկսանք ետ ետ երթալ. և ստուգիւ մեր նախնիք շատ նկատմամբ մեզմէ առաւել գերազանց վիճակ ունէին, մանաւանդ բարոյական նկատմամբ որ ամէն ուրիշ բարեմասնութեանց պսակն է։»

Թ. «Մի յուսար ամենևին որ բարոյականութիւնը աւրուած կամ վնասուած ժողովրդեան մը մէջ ո՛ և է աղէկ բան կրնայ ըլլալ։ Նա հիմն է ամենայն բարեաց։ Պէտք էր ամէն բանէն առաջ և ամէն բանէ աւելի ազգը իւր բոլոր ուշադրութիւնը այս խնդրոյն տալ։ Ամէն ջանք թափուելու էր և ամէն միջոց ի գործ դրուելու էր որ ազգը առաջին աստիճանի բարձր բարոյականութեան մը տէր ըլլար։ Պէտք է նորա բարոյական ձիրքերը մշակուին, յղկուին և սըրբագործուին, քանզի այս պիտի ըլլար ուրիշ ամէն բարոյականութեանց արմատ և նախադուռ։ Սակայն հիմա այս կարևոր կէտը ո՛չ միայն հիմնովին բարձի թողի եղած է, այլ և հակառակը գործելու համար չարակամ և շահամոլ անձանց ազատ և արձակ ասպարէզ թողուած է, որոնք ժողովրդեան մէջ անարգել կթափեն իրենց մահացուցիչ թոյները նոցա բարքն ու վարքը ապականելու, և ա՛լ դէշը՝ ժողովուրդն ալ իւր կամօքը կնուցանէ և կքաջալերէ զանոնք։»

Ժ. Եւ ահա այս ամէն դիտողութիւնք կհաստատեն, թէ «այսաւուր Հայը յիսուն տարի առաջուան Հայը չէ. իւր (խելքն ու հետամտութիւնքը,) իր բարքը և սովորութիւնները խիստ շատ փոխուած են։» փոփոխութիւններ որ ինչպէս լաւ կողմ ունի, ունի յաւէտ վնասակար հետևութիւններ՝ ըստ նկատողութեան աչալուրջ դիտողաց։ «Արդ քանի որ այս է իրաց վիճակը,» կըսէ նոյն խըմբագիրը (Գիտ. 71), «մեզի կթուի թէ մեր ժողովրդոց համար ժամանակ է սա խնդիրը յարուցանել, թէ Մենք ի՛նչ պիտի ըլլանք.» իրաց այս վիճակին մէջ ի՛նչ ընել պարտինք և

2. ԻՆՉ ԸԼԼԱԼՈՒ Է ԱԶԳԱՍԻՐԻ ՄԸ ԸՆԵԼԻՔԸ

ԺԱ. Երիտասարդը, զոր ի վէր անդր (Բ.) օրինակ բերինք ազգիս, քանի որ կուզէ ապագայն ապահովել և հետամուտ կըլլայ կենակից ամուսին մը ընտրել, օգտակար արհեստ կամ ապրուստի ճամբայ սահմանել և դրամագլուխն շահաւէտ կերպով գործածել, ո՞չ ապաքէն նորա փոքր բարեկամաց պարտքն է խոհական խորհրդով առաջնորդեն նմա առ վախճանն։ Եւ ահա Հայ ազգը այս օրուան օրս կձկտի որդեգրել եկեղեցական պատշաճ դրութիւն մը կջանայ ստանալ ազգային կառավարութեան լաւագոյն կերպ մը, կհետամտի ի ձեռս բերել կատարեալ դաստիարակութիւն մը և կաշխատի ուսանիլ շահեկան արհեստներ։ Վասն որոյ ամէն խորագէտին ազգայինի անտնօրինելի պարտքն է ազգին ընդունելի ընել ինչ որ իւր շրջահայեաց տեսութեամբը ազգին նպաստաւոր կտեսնէ, և ջանալ գործադրել տալ զանոնք։ Մանաւանդ ոյք բանիւ և գրով ազդեցութիւն ունին հասարակաց մտաց և գործոց վերայ՝ պարտին նախնի և արդի ազգաց յառաջդիմութեան ու յաջողուածոց հետքերը ուշի ուշով քննել, անոնց ինկած և ելած տեղերը լաւ դիտել, այն նպատակաւ որ անոնց փորձերէն օգուտ քաղեն։ “Միայն թէ, կըսէ Իւթիւճեան (Դիտ. 60), կէտ առ կէտ անոնց ընթացքին հետևելու վտանգէն զգուշ ըլլալ պէտք է.... (քանզի) ուշիմ մարդոյն հանճարը այն կէտին մէջ կփայլի, որ գործքի կամ ձեռնարկութեան ատեն իրաց պարագաները և վիճակը կճանաչէ, կհաշուէ և ըստ այնմ կվարուի։”

ԺԲ. Նկատելի իրողութիւն մըն է, թէ “ասկէ իբր քառասուն կամ յիսուն տարի յառաջ, ‘Ալաֆրանկայ’ բառը Տաճկաստանու ժողովրդոց համար ամենևին նշանակութիւն չունէր, ոչ ֆրանկը և ոչ ալան, ամէն բան ‘Ալաթուրքայ’ կերթար, այսինքն աղէկ դէշ ամէն բանի մէջ անոնք իրենց յատուկ կերպը և ոճը ունէին. իրենք իրենց համար կխորհէին, իրենց համար կգործէին ու իրենց համար կտնօրինէին։ Ամէն ինչ որ ունէին իրենցն ու իրենցմէ էր, դրսէն օտար ազդեցութիւն չկար վրանին։ Սակայն հիմա բանը հոն չմնաց, դարը փոխուեցաւ, հինը անցաւ և ամէն բան նոր եղաւ..։ Այս ընդհանրական վերանորոգութեան անդիմադրելի հոսանքին առաջքը ձեռքերնիս կապած անտարբեր պիտի կենա՞նք, որ նա քշէ տանի մեզ ուր որ ուզէ։ Եւ կամ մենք ևս զգալով դարուն այս անժխտելի հարկը, պիտի ուշաբերինք ու մեր նախ-

նեացը պէս արիաբար յառաջ գանք և մեր նաւուն ղէկը մենք մեր ձեռքը առնենք, որպէս զի Եւրոպականին կապիկը լինելու վտանգէն զերծ մնալով մենք մեր ազգային վերանորոգութիւնը ունենանք։”

ԺԳ. Եւ արդեօք ըստ բաւականին յայտնի չեղա՞ւ, թէ Անգլիական կամ Ամերիկեան այս կամ այն եկեղեցւոյ դրութիւնը ըստ ամենայն մասանց Հայաստանեայց չյարմարիր. Եւրոպական ազգաց սահմանադրութիւնը չկրնար կառավարել Հայ ազգը. Գաղղիական դաստիարակութեան չգար Թուրքիոյ միտքը. Արևմտեան արհեստից գործադրութիւնը յառաջ չերթար ի Տաճկաստան առանց փոփոխութեան։ Եւրոպականին հետևելնիս է մէկ “պատճառը, որ մենք չենք կրնար ճակատնիս բաց աշխարհիս առջև կենալ և պարծիլ իբրև յառաջադէմ ազգ մը։ Ժողովրդեան մը կամ ազգի մը լուսաւորութեան թուականը և յառաջադիմութիւնը այն օրէն կսկսի, երբ նա ինք ձեռք կզարնէ ինքզինքը բարեկարգելու՝ իր վիճակը բարգաւաճելու։ Խոստովանելու ենք թէ մեր ազգը դեռ այս կէտին հասած չէ։ Ժամանակին հոսանքէն մղեալ յառաջացումը իրական յառաջադիմութիւն չէ, լոկ երևոյթ մըն է որ հիմ չունի ու ներքին բարեկարգութեան և բարգաւաճման չնպաստեր։”

ԺԴ. “Արդ խնդիրը այս է թէ դարուս լուսաւորութեան ու մտաւոր զարգացման ընթացքին հետ քալելու ենք, կամ ուրիշ խօսքով լուսաւորութեան հետ բարեկարգութիւնն ալ յառաջ երթալու է եթէ ո՛չ կվնասուինք, ինչպէս որ փորձն ալ ցուցուցած է։ Շատերը կվախնան մինչև անգամ բարեկարգութիւն բառը բերան առնելէն, իբր թէ քրէական յանցանք մը եղած ըլլայ այս ժողովրդեան հին և հաստատեալ սովորութեանցը դէմ։ Բայց այս վախը բնաւ տեղ չունի, որովհետև քանի որ մտաց զարգացում և լուսաւորութիւն կայ, բարեկարգութիւնն ալ պիտի ըլլայ, չենք կրնար մէկը միւսէն զատել։ Բարեկարգութեան տարրը լուսաւորութեան մէջ է, և ասոր ալ իսկութիւնը, ինչպէս վերը ըսինք, փորձը արդէն ապացուցած է. շատ հին սովորութիւններ, կարծիքներ, և այլն, հիմա փոխուած են. ըսել է թէ ժամանակը իր գործը կտեսնէ և ժողովուրդները կվարէ յառաջ կտանի, և նոցունց առաջնորդք և ուսուցիչք ձեռքերնին կապած պէ՞տք է որ կենան և ետևէն նային։” (Դիտ. 71)։

ԺԵ. Նկատողութեան արժանի բան մըն է, թէ Հայուն գրեթէ ամէն բանը քիչ շատ բարենորոգում մը ընդուներ է բաց ի եկեղեցական իրաց, և այն մանաւանդ որ ինչ կվերաբերի եկեղեցական

դասուն։ Հայոց ազնուապետական (Ամիրայից) կառավարութիւնը՝ ի շնորհս սահմանադրութեան փոխեցաւ հասարակապետական (ժողովրդական) դրութեան։ Դաստիարակութեան դպրութիւնը (տիրացութիւնը) փոխեցաւ ուսումնականութեան, ինչպէս և դպրոցական կառավարութեան պատիժը՝ խրատի։

Մատենագրութեան գրաբառ լեզուն փոխեցաւ աշխարհաբառի, որ կատարելագործելով եղաւ կանոնաւոր լեզու մը։ փոխեցաւ Հայուն արհեստը՝ գործը և ընտանեկան սովորութիւնը, ինչպէս մերը կըսուէր։ Սակայն ինչ որ էին նոյնն են և կմնան եկեղեցական օրէնքն ու պատուիրանը, ծէսն ու արարողութիւնը, բաց ի պահոց ճիւղահամարի և նմանեաց, որոց գործատէրքն են աշխարհականք։

ԺԶ. Եթէ եկեղեցական դասը չէ յառաջեր դարուս լուսաւորութեան հետ, ապա կացութիւն նորա վնասակար բացառութիւն է ազգային գործոց համընթացութեան։ Այս բացառութիւնը կարի մեծ ազդեցութիւն կընէ ուրիշ գործոց ազգին, որ կրօնական ժողովուրդ է, և որոյ զօրաւոր կապակցութիւնը կրօնի հետ է որ հիմն է ուղիղ բարոյականութեան։ Զայս գիտելով Ներսէս Ս. Պատրիարք՝ յատենի ընդհանուր ժողովոյ կաղաղակէր. “Զօրութիւնը միութեան մէջն է, և միութիւնը պահողը քրիստոնէական սէրն է, որ մեր հաւատքին գործնականն է . . . բարձրացունենք ազգային բարոյականութիւնը . . մեր հոգևոր և մարմնաւոր երջանկութեան կարապետը մեր եկեղեցին է . . . մեր եկեղեցականութիւնը բարձրացունենք և ազնուացունենք։” (Յոյս Ե. Թիւ 5։) Հապա ամէն ազգասիրի, յատկապէս եկեղեցականի հարկաւոր է նկատել Հայուն արդի վիճակը, և այս է ահա

3. ՀԱՆԴԻՍԻՍ ՎԱԽՃԱՆԸ

ԺԷ. Այս վախճանին ժամանելոյ նպատակաւ հանդէսս մանաւորապէս մէջ պիտի բերէ ի՛նչ որ հարկաւոր կհամարի։ Ուստի պիտի նկատէ ի՛նչ որ կայ վերջին յիսուն տարուան գրութեանց մէջ նկատմամբ Հայոց որ ի Տաճկաստան, գլխաւորապէս Լուսաւորչականաց, որք մեծամասնութիւն են, Բողոքականաց, որք բարեկարգութեան հետամուտ են և սիրահար, իսկ Պապականաց պատահաբար, որքան որ պէտք է միւս երկուքը լուսաբանելու համար։ Հետևապէս բնական և արժան է որ ի հանդիսիս երևին մանաւանդ Լուսաւորչականք, իսկ դուն ուրեք Բողոքականք, իւրենց ճշգրիտ որպիսութեամբ։

ԺԸ. Գիտեմք թէ այս առաջադրութիւնը լիովին ի գործ դնել դիւրին չէ մանաւանդ մեզի պէս մէկուն. սակայն կապաւինինք ընթերցողաց ներողութեանը, որով միայն ընդունելի լինելուն ակն ունիմք։ Դժուարութիւնը կկայանայ գլխաւորապէս ըստ տեսութեան մերում երկու բանի մէջ. մին է իրողութիւնը ճշգիւ ներկայացնել, և միւսը՝ ամբողջ և անթերի։ Ճշգիւ ներկայացնելու համար պէտք է անկողմնակալ ոգի և անաչառութիւն։ Վասն որոյ նախ ջանք կընեմք ինչ որ տեսած ենք և գիտենք առանց կողմնակցութեան յառաջ բերել, և նախապաշարման մութ գունով չաղօտացունել հանդէսը և ընթերցողաց միտքը։ Բայց թէ կրցանք արդեօք այսպիսի չէզոք մտօք նկարել, այդ ընթերցողաց դատաստանին կմնայ։ Միայն թէ մտաց օրէնք մը կայ զոր թէ գրողն և թէ ընթերցողն ի մտի ունենալու են, զի մի տարաձայնութեանց առիթ լինի այս գործը։ Այսինքն թէ միտքը առանց խորհրդոյ չկրնար տեսութիւն մը կազմել. և ի խորհրդածութեան անդ՝ ինչ որ կնպաստէ խորհողին վախճանին՝ կազդէ մտացը։ Խորհողը լաւ կըմբռնէ զայն և զօրաւոր բանիւ կարտայայտէ. իսկ ինչ որ աննպաստ է իւր նպատակին ժամանելոյ՝ քիչ ազդեցութիւն կընէ, հետևապէս տկար փաստիւ կներկայանայ։

Ուղղեալ մտքին օրէնքն է այս, և իւր ազդեցութիւնն անշուշտ պիտի ընէ հանդիսադրին գրչին վրայ, կխնդրեմք որ խստապահանջ չըլլան ընթերցողք։ Ընթերցողաց դատողութենէն կուզէ խոնարհ բառ ընդունիլ հեղինակը և օգուտ հանել ազգին և հայրենեաց, որում կուզէ ծառայել։

ԺԹ. Իսկ անաչառութիւն ըսելով կիմանամք՝ իրողութիւնը եղածին պէս ի յայտ բերել առանց փոխելու զայն և այնպիսի գոյն մը տալու՝ որ սխալներն պահուին և թերութիւնք անտեսուին։ Գիտեմք թէ ազգին մէջ կան գրիչներ որ ազգը խրախուսել ուզելով՝ պակասութիւնը պարուակելու և առաւելութիւնը աւելցունելու սկզբունքը որդեգրած են, որ սիրոյ և արգահատանաց արդիւնք կրնայ համարիլ։ Կան նաև հեղինակներ որ անհոգներն արթնցնելու նպատակաւ անոնց մոլութիւնները և մոլորութիւնները կխայտառակեն և անոնց սխալները և պակասութիւնները խստիւ կյանդիմանեն։ Այս սկզբունքը անվեհերութեան և քաջութեան արդիւնք կրնայ համարուիլ։ Այս հակադիր ընթացքները անշուշտ ունին իրենց օգուտն ու վնասները, ինչպէս և ջատագովներն ու պախարակողները։ Ասոնց վրայ առանց խօսելու հերիք է մեզ աստ ըսել թէ մենք ի Հանդիսի աստ կարևոր դատեցինք, բռնել վերջին անաչառութեան ընթացքը, որպէս զի

իրողութենէ հետևութիւն հանեմք, և գործադրելի վախճանի մը ժամանեմք։

Ի. Իրողութեանց պատմութիւնը ջանացինք ժողվել հաւատարիմ և ընդունելի գրութիւններէ, և խորհելու ձեռնհաս և փորձ հեղինակներէ։ Եւ ի տեղեկութիւն չգիտցողներու ի վեր անդր դրինք գրութեանց ցուցակը, յորոց առինք գլխաւոր խորհուրդներ և շատ մը տեղեկութիւններ։ Բազմիցս իրենց խօսքը կուտամք ի Հանդիսի՝ մէջ բերելով բուն անոնց խօսքերը (.քերականական դոյզն փոփոխութեամբ), ի բացատրութիւն մեզմէ կաւելնան երբեմն փակագծեր։ Իսկ ուր որ միայն անոնց խորհուրդը կառնեմք, տեղերը կնշանակեմք ի վստահութիւն ընթերցողաց։ Այսպիսի զգուշութեամբ ահա ջանացինք, ըստ առաջադրութեան մերում, իրողութեանց ճշգրիտ բովանդակութիւն մը հանդիսացունել անոնց, որոց ըղձալի է Հայուն ապագայն բարւոքել։

4. ԽՆԴԻՐ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ԻԱ. Գալով իրողութեանց ամբողջ և անթերի ներկայանալու դժուարութեան, մեր ձեռքէն եկածն ընելէն ետքը կդիմեմք ընթերցողաց օժանդակութեանը, խնդրելով մեր բարեկամներէն որ հաճին առ մեզ ղրկել ինչ գրութենէ որ կկարծեն թէ տեղեկութիւն կրնամք առնուլ Թուրքիոյ Լուսաւորչական և Բողոքական Հայոց ներկայ կացութեան վերայ։ Նաև խնդրեմք թող հաճին առանձին նամակով կամ հրապարակաւ իրենց դիտողութիւններն ընել, զորս Հանդիսադիրը նպաստ պիտի համարի այս գործոյն կատարելութեանը, որում նուիրած է իւր գրիչն ու քրտունքը։ Ղրկուելի գրութիւններն ու նամակները մեզ կրնան ժամանել, եթէ ի դիւրութիւն իւրեանց, յանձնեն զանոնք մեր այն բարեկամաց, որք մօտակայ են իրենց և կթըղթակցին ընդ մեզ։

ԻԲ. Այսու խնդրանօք միանգամայն խոստովանած կըլլամք այս գործոյն անկատարութիւնը, վասն որոյ՝ յուսամք թէ անմեղադրելի կըլլամք առաջի այնոցիկ որք վերահասու պիտի լինին այս թերութեան, և կարօտ անոնց նպաստաւոր խորհրդոց։ Բայց այսքան կանխաբանութենէ ետքն ալ եթէ գտնուին Հանդէսը պախարակողներ կամ նախատողներ, այնպիսեաց գրութիւնք և վարմունք իսկ կրնան յաջորդելի գրութեան մը նիւթ լինել ցուցունելու համար թէ դեռ ազգին մէջ փոխան փաստի՝ փայտ գործածողներ կան։ Եւ կրթեալ մտաց ու սրտի անվայել դիտողութիւնք թերևս ցոյց մը ըլլան այն բանին

զոր մերժել պիտի ճգնին. և մեք՝ որ շատերուն որդեգրած անվեհերութեան ճամբան ընտրեցինք, այնպիսի հարուածներէ առանց կորուսանելու շահած պիտի լինիմք։

ԻԳ. Իցի՜ւ այսպիսի միտք և սիրտ ունեցող ո՛չ մի անձ գտնուէր Հանդէսը պատուողաց մէջ, և այս պիտի լինէր մեզ ուրախութիւն ոչ վասն զի հանդիսադիրը չարհամարհէր, այլ վասն զի ազգին բարւոյն համար յառաջադոյն աշխատող փորձ և քաջ արանց ջանքերն մեծամեծ փոփոխութիւններ են գործած յազգիս։ Մինչ երբեմն նախատակոծ եղաւ Նիկողոս էֆ. Զօրայեան, որ առաջարկեց թողուլ գրաբառն՝ և աշխարհաբառը մատենագրութեան լեզու ընել, առաջարկութիւն մը որ այս օր եղած լմնցած է (Ընթերցասիրութիւն 255), մինչ Գարագաշեան Պատուելի արհամարհեցաւ, վասն զի խրատ տուաւ ազգին ղրկել 'ի Գերմանիա երիտասարդներ որ դաստիարակուին բարձրացունելու Հայ եկեղեցականութիւնը, որ դեռ դարման մը ընդունած չէ և ողբոց արժանի կհամարուի (Արևել. Մամուլ 1874, Ա), մինչ Հայոց Հայրիկը համարեցաւ այր որ “ուր երթայ օգտակար չըպիտի ըլլայ, բայց (եթէ զինքը) ուզող մասին պատի՛ժ մը” (Հայրենիք 272), մինչ սոքա և մանաւանդ Հայրիկ, փոխան քրտանց և երկանց, այսպիսի անուան կենթարկին երբ կիրքեր կբորբոքին, կրնա՞ հանդիսադիրը գէթ ցուրտ արհամարհանքներէ ազատ մնալու յոյս ունենալ։ Սակայն չէ՛ փոյթ արդէն նա գիտէ թէ կուզէ ծառայել ազգին, և թէ դեռ կան լոկ ի կրից բռնութենէ գրողներ և խօսողներ, և Հանդէսը մթագնող բուն այդպիսեաց վիճակն է, որոյ բարելաւութեան երանի՛ թէ ծառայութիւն մը մատուցանել կարենար Հանդէսս։

ԳԼՈՒԽ Բ

ՄՈՒՏ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ

ԻԴ. Ամերիկացի Բողոքական Քրիստոնէից Տաճկաստան մարդ ղրկել և Աւետարան քարոզելով Լուսաւորչական Եկեղեցին հատուածել և զատ Հայ-Աւետարանական եկեղեցի մը կազմելը՝ թէ՛ Հայ ազգին վերջերս ունեցած գործոց մի երևելի իրողութիւնն է, և թէ՛ Հանդիսիս ներկայացունելի փոփոխութեանց նախաշաւղաց մին։ Ուստի պատկան է աստ բովանդակել նորա սկիզբն ու վերջը և անոր կցորդ դէպքերը, որոց վրայ թուի թէ շատ տարբեր համոզումներ կան հասարակութեան մէջ։ Եւ այս տարաձայնութիւնը կպահանջէ որ հա-

մառօտ մի քանի դիտողութիւններ յառաջ բերենք նկատմամբ Աւետարան քարոզելու պարտաւորութեան։ Այս նիւթին վրայ քանի մը Հայ գրիչներ այնպիսի դատաստաններ ըրած և գաղափարներ յայտնած են, որ քիչ ամօթ և նախատինք չի բերեր Հայաստանեայց դըժբախտ եկեղեցւոյն, որ ի պարագայից ճնշուելով առիթ չէ գտած այս մասին ընդարձակ տեղեկութիւն տալ իւր որդւոց։

ԻԵ. Կվախեմ թէ գուցէ այս կէտին վրայ քիչ մը շատ խօսելու թելադրիմ, յափշտակուելով այն փառաւոր յոյսէն, թէ Հայը Նախախնամութենէն կպատրաստուի, որ ըլլայ Ասիական Հեթանոսաց Լուսաւորիչը, որով պիտի ժամանէ փառաց դարուն։ Գուցէ ընթերցողաց ոմանք ունայն սեպեն այս յոյսն, աննկատ դնելով պարագայից, որք զայս կաւետեն, ինչպէս պիտի երևի ի վերջկոյս գործոյս։ Վասն որոյ թող թոյլ տան գրչի մը որ այս առթիւ պատմութեան հետ խառնէ և այն ճշմարտութիւնները, որք պիտի պատրաստեն զմիտս առ այսպիսի ապագայ։ Հապա տեսնենք թէ

1. Ի՞ՆՉ Է ԱՒԵՏԱՐԱՆ ՔԱՐՈԶԵԼՈՒ ՊԱՐՏՔԸ

ԻԶ. Չկայ Հին կտակարանի մէջ այնքան ճոխարար բացատրեալ կանխագուշակութիւն, քան այն թէ ի ձեռն Մեսիայի պիտի հաստատուէր բարոյական թագաւորութիւն մը, որ պիտի տարածէր ընդ ամենայն երկիր։ Քրիստոս ալ երբ եկաւ այս երկնից թագաւորութիւնը հաստատել, աստուածպաշտական կրօնը թեթևցուց Հրէից խարական օրինաց ծանրաբեռնութենէն և յարմարեցուց ամենայն ազգաց ընդունելութեանը։ Առ այս պատրաստեց իր հետևողաց միտքը, և երբ Հօրը թագաւորութեան սկզբունքները հրատարակած ու անօրինութիւնները կատարած կդառնար առ Հայր, պատուիրեց հետևողացը, թէ «Երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զԱւետարանն ամենայն արարածոց» (Մարկ. ԺԶ)։ «Ուսուցէք նոցա զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ)։

ԻԷ. Գալիլեացի հրեայք, ըստ խոստման Քրիստոսի, քանի մը օր ետքը երբ զօրութիւն ընդունեցին ի վերուստ, որ երթան մինչև երկրի ծայրերը Աւետարանին ճշմարտութեանց վկայելու (Գործ. Ա. 1–10։ Բ. 1–15)։ Ձեռք զարկին այս մեծ գործին Երուսաղեմէն սկսելով (Ղուկ. ԻԴ. 48, 49)։ Ամէն անոնք ալ որ ուսան անոնցմէ՝ պարտք ճանչցան նաև ուսուցանել այլոց թէև մեռանիլ հասնէր իրենց։ Եւ ապաքէն այս քարոզիչներէն բիւրաւորք մեռան, սակայն կենդանի մնացողները չէին կրնար չխօսիլ, ըստ օրինակի առաքելոց (Գործ. Դ. 20)։

ԻԸ. Քրիստոնէութեան նախընծայ Հայոց մէջ ալ տեսնուեցաւ այս հոգին, որք զոր ինչ Թադէոսէն լսեցին, ի Հայաստան տարածել ջանացին։ Նոյն ինքն Աբգար թագաւոր բաւական չհամարեցաւ իւր հպատակներն աշակերտել Քրիստոսի, վեհապետաց մտադրութիւնը հրաւիրեց քրիստոնէութեան վրայ և գուն գործեց ընդունելի առնել զայն։ Եւ ի ժամանակս Լուսաւորչին Հայք էին որ աւետարանեցին շրջակայ ազգաց, Աղուանից հովիւ յուղարկեցին զԳրիգոր, և Վրաց ուսուցին՝ զՄեսրոբ վարդապետ։ Ասորիք ալ մինչև Ասիոյ ծայրը, ի Չինաստան, տարին Աւետարանը։ Ռուսաստանցիք Հիւսիսային ազգաց ընդունելի ըրին զայն, և դեռ կքարոզեն ի Ճաբոն, ինչպէս և այլք այլ ուրեք։

ԻԹ. Բայց ի՛նչ պէտք է այս ջանքը, ինչո՞ւ Քրիստոնեայք պարտին իրենց կրօնը տարածել։ Որովհետև Քրիստոս այսպէս պատուիրեց, եւ իրենք, իբրև հլու և հնազանդ հետևողներ, պարտ էին նորա պատուէրը կատարել, թէև ասոր օգուտը չգիտնային։ Սակայն շատ լաւ գիտեն, թէ մարդոց յաւիտենական երջանկութեանը կարի հարկաւոր է գիտնալ ինչ որ Աստուծոյ Յայտնութիւնը կուսուցանէ։ Ըստ որում առանց յայտնեալ ճշմարտութեան ազդեցութեանը մարդիկ կա՛մ անփոյթ կըլլան իրենց յաւիտենական վիճակին վրայ, կամ այնպիսի բաներ կընեն, որ անբաւական են փրկութեան համար. ինչպէս կերևի ո՛չ միայն բնական կրօնի հետևողաց և մոլապաշտ հեթանոսաց վրայ, այլ և Քրիստոնեայ կոչուած մարդոց վրայ, որք Աւետարանի ազդեցութեան տակը չեն։ Եւ քանի որ Քրիստոնէութեան ոգւով լեցուած անձինք հետևող են անոր, որ յաշխարհ եկաւ կորուսածը գտնելու համար իւր կեանքը իսկ դնելու, կրնա՞ն արդեօք չքարոզել անոնց, որ կամ անհոգութեամբ և կամ կուրօրէն կերթան ի կորուստ։

Լ. Քրիստոնեան պարտի Աւետարանը քարոզել նաև վասն զի Աւետարանն աղբիւր է ամենայն բարութեանց վասն անհատից և ազգաց։ «Աստուածպաշտութիւնը, կըսէ Պօղոս, ամէն բանի օգտակար է, որ թէ ներկայ և թէ ապառնի կենաց խոստմունքը ունի» (Ա. Տիմ. Դ. 8)։ Քանզի Աստուածաշունչը «օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու, և արդարութեան խրատելու համար, որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած» (Բ Տիմ. Գ. 16, 17)։ Կամ ուրիշ խօսքով ըսենք առանց բարոյականի կատարեալ դաստիարակութիւն չըլլար, առանց

Քրիստոնէութեան ալ՝ ուղիղ բարոյական։ «Դարուց փորձառութիւնը», կըսէ Տօք. Խաչատուր Բ. Խըթըճեան (Սկզբունք Դաստ.), «վերջապէս հասկցուց աշխարհիս թէ առանց թափանցելու Քրիստոնէական կրօնին ճշմարիտ հոգւոյն, անհնար է բանաւոր դաստիարակութեան կատարեալ դրութիւն մը ունենալ. դրութիւն մը՝ որ ո՛չ Եգիպտացւոց քահանայապետական, ո՛չ Քաղդէացւոց մոգական, ո՛չ Արևմտեայց արուեստական ցնորքներն և ո՛չ ալ Աթենական, Սպարտական և Հռովմէական թերութիւններն ունենայ. դրութիւն մը՝ որ անդամազննաբար քննէ մեր բովանդակ ձիրքերը, և բնազննաբար իբր թէ չափէ անոնց գործողութեան սահմանները, ու վարժէ մեր թէ՛ ֆիզիգական և թէ՛ բարոյական բնութիւնը բնականին համեմատ գործելու, զօրացունէ, կազդուրէ մեր մարմինը, ծաւալէ մեր իմացական կարողութիւնները, ընդարձակէ մեր տեսութեան հորիզոնը, լուսաւորէ մեր խիղճը, դրդիւ մը տայ մեր ճշմարիտ պարտականութիւնները կատարելու, և ապա պահէ մեզ ամէն տեսակ նախապաշարումէ։ Կարճ խօսքով՝ բանաւոր գործողութիւն մը տալով մեր իմացական և բարոյական ձիրքերուն, ի լոյս բերէ մեր գերազանցութիւնը իբր մարդ, որով միայն ըստ ամենայնի օգտակար կրնամք ըլլալ ընկերութեան» ազգի մարդկան։ Կիզոյ, որ Գաղղիոյ անուանի քաղաքագէտներէն մէկը և ընտիր մատենագիր է, իր մէկ ճառին մէջ ըսած է, թէ «Մենք Գաղղիացիքս, տեսանք որ մեր ընկերական վիճակը շտկելու համար ամբողջ դարէ մը ի վեր եղած փիլիսոփայական դիտողութիւններն ու քաղաքական միջոցներն անպտուղ եղան. ինչո՞ւ համար, վասն զի մարդս յաւիտենականութեան համար եղած է, և մենք ուզեցինք զանի պատրաստ ընել այն կարճ ժամանակին համար միայն որ պիտի մնայ այս աշխարհիս վրայ։ Թող ուրեմն Ս. Գիրք տարածելով և մարդոց մտքերը անոր պատուէրներուն ուղղելով՝ նորէն սկսինք մարդիկ յաւիտենականութեան համար կրթել։ Այսպէս անոնք ինքնին պատրաստ պիտի ըլլան աշխարհային պարտաւորութեանց և վայելմանց»։ Արդ քանի որ Քրիստոնեան վերահաստ կըլլայ թէ Աւետարանի քարոզութեամբ ըրած կըլլայ Աստուածահաճոյ և մարդոց օգտակար գործ մը, կրնա՞յ չքարոզել։

ԼԱ. Աւետարանը քարոզել՝ կրօնը արդիւնաւոր ընել և զՔրիստոնեայս ի կենդանութեան պահել ըսել է։ Ուստի Քրիստոնեայք պաշտամունք կկատարեն, որ միջոց է Աստուածպաշտութեան հոգին վառելու և բորբոքեալ պահելու, և ուր չափահասները կյորդորուին Աւետարանին օրհնեալ պատուիրանացն հնազանդելու։ Դպրոցաց մէջ

Քրիստոնէական վարդապետութեան և Սուրբ Գրոց դասեր կաւանդեն մանկտւոյն, որ նորա ճշմարտութեանց տեղեակ լինի և Քրիստոնէաբար ապրի։ Վարժարաններու մէջ երիտասարդք կպատրաստուին, որ կրօնի պաշտօնեաներ լինին. ոմն ի տաճարի Տեառն հրահանգէ, ոմն ի սրահի դատարանին կրթէ և ոմն գրիչ ի ձեռին ճշմարտութեան փաստը պաշտպանէ։ Այս է ներքին կամ ժողովրդական քարոզութիւնն, զոր եկեղեցին կընէ։

ԼԲ. Եկեղեցին ունի նաև պարտաւորութիւն և արտօնութիւն, որ ձեռնտու լինի այլոց եկեղեցեաց որ ուղղափառութենէ շեղին և հոգևորութենէ նուաղին։ Այսպիսի նպատակաւ էր որ ի նախնումն եղան ժողովներ մոլորեալները ուղղութեան բերելու, բայց երբ այս գործին հետ մարդկային խորհուրդներ խառնուեցան, ապարդիւն եղաւ ջանքը։ Սակայն սկզբունքն այս էր թէ քրիստոնէից պարտքն է, թէ՛ անհատապէս և թէ հաւաքապէս, մոլորեալը դարձունել։ Ուստի երկար ժամանակ ջանքեր ըրաւ Արևելեան եկեղեցին որ Արևմտեանը դարձունէ մոլորական խորհուրդներէ, և սա՝ զնա։ Յոյնք, Հայք, Վիրք և Ասորիք աշխատեցան որ ուղղեն ուրիշ ազգաց եկեղեցւոյ սխալները։ Նոյնը կընեն դեռ յարևմուտս պապականն ու բողոքականը, որք իրարու ժողովրդոց մէջ քարոզիչներ կուղարկեն։

ԼԳ. Քրիստոնէից քարոզութեան ընդարձակ մէկ դաշտն ալ ոչ-քրիստոնեայ, այսինքն հեթանոս և հրեայ ժողովուրդներն են։ Քրիստոնեայք ասոնց կքարոզեն նոր կրօն մը, Քրիստոնէութիւնը։

Ընդհանրական եկեղեցին երբէք դադրած չէ կատարելէ այս պարտքը, թէև, այս դարուս մէջ եղածին չափ կրնայ ըսուիլ թէ ջանք եղած չէր։ Առաքելութեան կամ տարածման հաւատոյ ընկերութիւններ մեծ գործունէութեամբ կաշխատին այլ և այլ երկիրներ և զանազան կերպով։ Այս ընկերութեանց մեծ մասը Պապական և Բողոքական ժողովրդոց կողմանէ հաստատեալ են, յորոց ոմանք անձամբ կաշխատին կամ բանիւ և կամ դրով քարոզելով, և ոմանք իրենց դրամական նպաստիւքը նոցա օգնելով։ Հայը բաւական առիթ ունեցած է Պապական ընկերութեանց և նոցա գործոց վերայ տեղեկութիւն առնալու, զոր կրկնել աւելորդ պիտի ըլլայ։ Սակայն այնպէս չէ Բողոքական առաքելութեանց մասին։ Որովհետև կթուի թէ Հայը ասկէ ետքը իր փառաց դարուն քանի մերձենայ, այս ընկերութեանց հետ աւելի գործ պիտի ունենայ, ուստի աւելորդ չէ հակիրճ տեղեկութիւն մը տալ։

Զ. Ի ՎԵՐԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ԼԴ. Հոս չպիտի խօսիմք այն ընկերութեանց վրայ, որք անուղղակի կծառայեն զմարդիկ Քրիստոնէութեան ազդեցութեան տակ բերելու, որպիսի են որբանոցներ, կիրակնօրեայ դպրոցներ և գինեհատութեան ու ժուժկալութեան համար աշխատող ընկերութիւններ։ Ասոնցմէ միայն յԱնգլիա դարուս սկիզբները գտնուողներուն անուանց ցուցակը, ըստ Լամբերթինի, Սաղմոսի չափ գիրք մը կըլլայ։ Պիտի խօսիմք միայն այն ընկերութեանց վրայ որք ուղղակի կծառայեն Քրիստոնէութեան տարածման և հաստատութեան ընդ ամենայն երկիր։

ԼԵ. Այս նպատակաւ կազմեալ ընկերութեանց մէջ մեծ ծառայութիւն կմատուցանեն Աստուածաշնչի ընկերութիւնք, որոց գործն է ամենայն հաւատարմութեամբ Ս. Գիրքը այլ և այլ լեզուաց թարգմանել, հրատարակել և ցրուել տալ։ Ասոնց վրայ բաւական ընդարձակ կպատմէ Ամերիկացի հեղինակ մը Ռօպերդ Պայրտ իւր 1851ին հրատարակած Արձանագիր կամ Յիշատակարան անուն գործոյն մէջ, ուր կբովանդակէ «Բարոյական և կրօնական յառաջդիմութիւնը ԺԹ. դարուն առաջին կիսուն մէջ» գլխաւորապէս ի ձեռն Բողոքական ընկերութեանց։ Այս գրութենէն կտեսնուի որ, բացի նախորդ դարուն մէջ հաստատեալ մի քանի ընկերութիւններէ, յիշեալ միջոցին կազմեալ կան 63 ընկերութիւններ, որք մինչև 1850 առաւել քան 200 լեզուէ հրատարակած են իբր 40,000,000 Աստուածաշունչ և անոր կտորները։ «Թէվարիխ ի տին վէ քիլիսէ» գիրքը (Երես 605) այս ընկերութեանց թիւը մինչև 1870 կհանէ իբր 200ի և հրատարակուած գիրքերուն թիւը՝ 60,000,000ի։ Ասոնց մէջ երևելիքն են Բրիտանական և արտաքին Աստուածաշնչի ընկերութիւնը հաստատեալ 1804ին, Բրուսիական Ս. Գրոց ընկերութիւնը ի Պեռլին կազմեալ 1805, և Ամերիկայի Աստուածաշնչի ընկերութիւնը սկսեալ 1816։ Այս կարգէն են նաև կրօնական գրոց և տետրակի ընկերութիւնները, որք ըստ անուանց իւրեանց զանազան լեզուէ գրքեր և տետրակներ կհրատարակեն։ Այս ընկերութիւնք տարուէ տարի կուտան միլիոնաւոր ոսկիներ զորս ի սէր Քրիստոսի կհանգանակեն Եւրոպայի և Ամերիկայի Բողոքական ժողովուրդք։ Ահա ասոնց շնորհիւն է որ Թուրքիա ալ կվայելէ քանի մը լեզուի թարգմանեալ Աստուածաշնչի, գրոց և տետրակաց արդիւնքը։

ԼԶ. Յայտնի է թէ այս ընկերութիւնք սերտ կապակցութիւն ունին Միսիոնարական ընկերութեանց հետ, որոց վախճանն է ի ձեռն ա-

ւետարանչաց Քրիստոնէական դաստիարակութիւն տալ, եկեղեցիներ կազմել և զանոնք խնամել մինչև որ կարող լինին զիրենք հոգալ։ Այս ընկերութիւններէն ոմանք որ ներքին կամ ընտանեկան կանուանին, կաշխատին տկար եկեղեցեաց համար, որք ընկերութեանց կազմեալ երկրին մէջ կան, ինչպէս և Գաղթականաց համար, որք իրենց մէջ ցրուեալ են։ Իսկ ոմանք, որ արտաքին առաքելութիւն կկոչուին, կաշխատին հեթանոսաց, Հրէից և Քրիստոնեայ ժողովրդոց համար, որք սփռեալ կան երկրի երեսին վրայ։ Ռօպերթ Պայրտ, վերոյիշեալ հեղինակը, այս ընկերութեանց 1850ի եկամուտը կհաշուէ առաւել քան 1,300,000 լիրա։ Մանաւորապէս արտաքին առաքելութեանցը 6,500,000 լիրայէն աւելի, զոր առած են 38 ընկերութիւնք, որք 1,280 տեղ պահած են 2,033 միսիոնար, հանդերձ 4,208 գործակցօք որոց խնամօք կկրթուին իբր 200,000 դպրոցի աշակերտներ և կհրահանգին գրեթէ 300,000 միացեալ կամ հաղորդեալ եկեղեցւոյ անդամներ։ Այս արտաքին առաքելութեանց թիւը Աւետաբեր (Թիւ 218) կհանէ 1863ին 48ի, որք ունին 9,415 գործակալ, խառն միսիոնար և գործակից, 235,000 դպրոցական, 317,000 անդամ և 1,121 000 լիրա եկամուտ։

ԼԷ. Քանի որ ընկերութիւնք ամէն երկիր կգործեն և ամէն ազգէ և կրօնէ կջանան մարդիկ ժողովել ի փարախ Քրիստոսի, և հոն եղածներն արածել ի մարմանդս ճշմարտութեան Աւետարանի, քանի յանդէտս բռնած համարելի են այն խօսքերն, զոր շատ անգամ կլսուի Բողոքականաց, թէ գնացէք հեթանոսաց քարոզեցէք, կռապաշտից ուսուցէք, մահմետականաց հասկցուցէք. Ամերիկացիք թող իրենց վայրենի եղբարց խօսք հասկցունեն, (Բարի մարդ և քր. 85։ Մասիս 743 էն), և քանի՛ անպատշաճ է ասել, թէ «Անգղիացիք, Բրուսիացիք, Գերմանացիք, և ուրիշ ասոնց նման իմաստուն և կրթեալ Բողոքական ժողովուրդները... բնաւ ազգին անգին քարոզիչներ չեն խրկեր» (Մաս. 272)։ Թերևս այս սխալը անկէ ծագած է որ «Մայրաքաղաքին մէջ ու ուրիշ հայ գտնուած տեղուանքը՝ Ամերիկացիներէն զատ» Բողոքական ընկերութենէ քարոզիչներ չեն տեսներ այսպէս գրողները. (Անդ)։ Ուստի պատշաճ կհամարիմք հակիրճ ծանօթութիւն մը դնել նաև Աւետարանական Դաշնակցութեան վրայ, որոյ վերոյիշեալ ամենայն ընկերութեանց համախոհութիւնը և գործակցութիւնը կտեսնուի։

ԼԸ. Աւետարանական Դաշնակցութեան ընկերութիւնը 1846ին կազմուեցաւ Լոնտրայի մէջ։ Ընկերութեան առաջին ժողովին ներկայ գտնուեցան ութ հարիւր անձինք, պաշտօնեաներ և աշխարհա-

893 - 2006

կանք, աստուածաբանութեան դասատուներ և անուանի մատենագիրներ, որոնք տաներկու տարբեր երկիրներ և յիսուն եկեղեցական յարանուանութիւններ կներկայացունէին, բայց ամէնն ալ դաւանող էին Աւետարանական կոչուած դաւանութեանց։ Դաշնակցութեան նպատակն եղաւ, ինչպէս ցուցուած է գործնականապէս, Աւետարանական Քրիստոնէից մէջտեղ զգացման և գործունէութեան սերտ միութիւն մը հաստատել և յառաջ տանիլ։ Փարիզու ժողովին մէջ, որ եղաւ 1855ին, հետևեալ որոշումն որդեգրեց ընկերութիւնը։ «Ժողովս կյորդորէ որ ազդու ջանքեր ըլլան կրօնական ամենակատարեալ ազատութիւն ձեռք բերելու ամէն երկիրներու մէջ, և այս ոչ միայն Բողոքականաց համար, այլ և ամենուն համար առանց խտրութեան կրօնից։ Եւ այս վախճանին հասնելու համար աղերսագիրներ գրուին և ներկայացուին որ և է երկրի թագաւորին կամ իշխանին, ուր կրօնական հալածում կայ։» Այս որոշման համեմատ սկսաւ այն մեծ գործը զոր դաշնակցութիւնը մեծ եռանդեամբ և յաջողութեամբ յառաջ տարաւ, և շատ անգամ երևելի անձերէ բաղկացեալ պատգամաւորներ ղրկեց Սպանիոյ, Իտալիոյ, Ռուսիոյ, Պարսից, Տաճկաց և Ճաբոնի թագաւորաց։ Այս դաշնակցութիւնը 3–4 տարին անգամ մը ժողով կընէ, ուր խորհուրդներ կըլլան թէ ինչպէս կրնան յառաջ տանիլ գործը, զոր ստանձնած են։ Ցարդ 8 ժողով եղած է, որք, առանց դպչելու ազատութեան, մեծ նպաստ գործած են Քրիստոնէութիւն տարածելու և սէր ու միութիւն յառաջ բերելու Քրիստոնեայ անհատից և եկեղեցեաց մէջ։

3. Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՂ ԲՈՂ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՆՈՑԱ ԱՐԴԻՒՆՔԸ։

ԼԹ. Գործոյս ամբողջութիւնը կպահանջէ և բանից կարգը կբերէ, որ հոս կարճ տեղեկութիւն մը տանք, թէ ո՛յք են այն ընկերութիւնք որ կաշխատին Տաճկաստան լուսաւորելու, ո՛րոց համար կգործեն և ինչ արդիւնք ունեցած են։ Եւ արդէն ընկերութեանց և Աւետարանական դաշնակցութեան վրայ ըսուածներէն կիմացուի, թէ նորա անգամ ամենայն եկեղեցիք և ամենայն ընկերութիւնք համախոհ են, հետևապէս ըստ պահանջման պարագայից իրարու գործակից, այնպէս որ Հայ Աւետարանական եկեղեցին, ինչպէս և այլ Բողոքական ժողովուրդք, զիրենք երախտապարտ կհամարին ոչ միայն այն ընկերութեանց որք կգործեն ի Տաճկաստան, այլ և անոնց որք ուղղակի գործ մը չունին այս երկրին մէջ։

Խ. Այսպէս 1857ին ի Պեռլին գումարեալ Աւետ. Դաշնակցու-

թեան ժողովոյն շնորհակալիքը մատոյց, որ «30–40 տարիի չափ յառաջ Ազգին մէջ ծագեցին Նոր կտակարանի աշխարհաբառ թարգմանութիւնը՝ Անգղիական և Արտաքին Աստուածաշնչի ընկերութեան շնորհիւ»։ Հայաստանեայց եկեղեցին, կըսէ, շնորհապարտ կհամարի զինքը ընկերութեանց, «որոնք Արևմտեան կիսագնդին հեռաւոր սահմաններէն իրենց քրիստոնէական եղբայրսիրութեան գործը տարածեցին Տաճկաստանի մէջ սփռեալ ազգի մը... (որոյ) համար երեսուն տարուընէ ի վեր աշխատելով ջանք ըրին բարեկարգելու զանիկայ, և քրիստոնէական ամենապարզ և մաքուր վիճակի մը հասցնելու։ Դարձեալ մեծ խնդութեամբ կուրախանայ Հայ Աւետարանական եկեղեցին գտնելով այս Քրիստոնէական Միաբանութեան մէջ այն եկեղեցիներն ևս, որ Գերմանիոյ ու Բրուսիոյ ջերմ սրտերուն կարեկցութիւնը և ողբակցութիւնը հաղորդեցին մեզի, մեր այն օրերուն մէջ՝ երբ դեռ իբրև Քրիստոնէական եկեղեցի արտաքին կազմութիւն մը չառած՝ մեր նախնի եկեղեցւոյն եղբայրներէն ոմանցմէ իբրև հերետիկոս կհալածուէինք չարաչար... Թող գիտնան մեր եղբայրները որ Արևելքի մէջ ամէն ազգերէն առաւել Հայոց ազգը երկիւղած յարգանք մատուցանելով Աստուծոյ խօսքին... եթէ վերին նախախնամութիւնը բարեհաճի իրենց կարծածէն և յուսացածէն խիստ աւելի պիտի օրհնուի և արդիւնաւորի» (Աւետ. 85)։

ԽԱ. Տաճկաստանի մէջ մեծ գործ ունեցող ընկերութեանց մին է Ամերիկեան Պօրտը, որ յԱմերիկա հաստատեալ ամենէն առջի առաքելական ընկերութիւնն է։ Ցորմէ հետէ, յամի 1810ին, հաստատեալ է ընկերութիւնը, շարունակ կզօրանայ և գործը կճոխանայ։ Այնպէս որ մինչ 1812–1815 երեք տարուան միջոցին 46,732 թալերի գործ ունէր, 1832–1835, քսան տարի ետքը, եռամեայ գործն էր 592,148 թալերի։ 1852–1855 հասաւ 1,232,860 թալերի, և 1877ի մէջ մէկ տարեկան ելումուտն եղած էր 482,204 թալեր, որ կընէ իբր 106,000 ոսկի։ Եւ նոյն տարին ընկերութեան գործոյն մէջ աշխատող այր և կին Ամերիկացւոց ամբողջ թիւն էր 371, բնիկ աշխատողաց թիւն 1,178, յորոց 126ը հովիւ էին, 263ը՝ քարոզիչ, 560ը՝ վարժապետ և 229ը՝ օգնական, որք 248 եկեղեցեաց հետ կապակցութիւն ունին։ Պօրտ ընկերութիւնը Միսիոնար ունի ո՛չ միայն Տաճկաստան, այլ և Հիւսիսային Ամերիկայի Հնդիկներուն մէջ, մի քանի Պապական երկիրներ, Ափրիկէ, Հնդկաստան, Չինաստան, Ճաբոն և Միքրոնեզիա կամ Ովկիանիա։

ԽԲ. Անգղիոյ մէջ «Տաճկաստանի առաքելութեան օգնող» ընկերութիւն մը կայ որ «Անգղիոյ մէջ եղող ամէն կարգի Քրիստոնեա-

ներէ կրավկանայ", կըսէ Ցօք. Համլին (Ա.եռ. 52), որ «թէ ազգային եկեղեցւոյն կղերականներն և թէ անոնց չմիացողները (այսինքն)՝ Անգլիոյ, Սկովտիոյ և Իռլանտայի մէջ Եպիսկոպոսական ըլլան թէ Երիցական, Ժողովրդական թէ Մեթոտիստ և թէ բարեկամք ըսուածները, որոնք ճշմարիտ Քրիստոնէական համակրութիւն մը կզգան Արեւելքի մէջ գտնուող իրենց եղբայրներուն համար, խորհելով անոնց խաւար դարերու մէջ այնչափ քաշածներուն և հաստատութեանց վրայ։ Եւ հիմա քանի որ անանկ ատեններ մը հասեր են որ կրնան անցեալ դարերուն մէջ զրկուած արտօնութիւններնին վայելել, կուզեն օգնել անոնց ամէն տեսակ յառաջադէմ զարգացման մասին, թէ՛ դաստիարակութեան՝ թէ՛ կրօնականին և թէ՛ արդի կենցաղավարութեան օգտակար արհեստից մէջ։ Այս ազնիւ անձերէն մէկը որ Սկովտիացի մըն է... 100 սթերլին լիրա տուաւ, որ Տաճկաստանի հպատակ Քրիստոնէից համար օգտակար գրքեր հրատարակուին"։ Այս «ընկերութիւնը", կըսէ ընկերութեան պաշտօնատարներէն մին, «Արեւելքի մէջ Քրիստոնէական գործոյն յաջողութեանը համար անխոնջ օգնելու կփութայ։ Երուսաղեմայ Կօպաթ Եպիսկոպոսը 1,500 լիրա օգնութիւն ընդունեց այս ընկերութենէն, նոյնպէս Միսիս Հաութէլի և քանիերեք ալ ուրիշներ օգնութիւն ընդունեցին", յորոց մին է և Այնթապ Գօլէճ որ բաւական նպաստ դաւ ընկերութենէն (Գլխ. 63)։

ԽԳ. Որովհետեւ ընկերութիւնը Տաճկաստան գործակալ չունի, ու հասարակ Ամերիկացի Միսիոնարաց կուղարկէր հանգանակած ստակը, որ ըստ մախճանի ընկերութեան գործածուի։ Քանզի, ինչպէս իրենց մէկ ժողովին մէջ ըսած է Շաֆթսպըրիի կոմսը, շատ աւելի աղէկ կհամարին որ Տաճկաստանի մէջ աշխատող Ամերիկացիներուն ձեռքն եղած գործին օգնեն, «քան թէ ուրիշ նոր ընկերութիւն մը հաստատեն՝ նոյն արտին մէջ գործելու, որ կրնայ մարդոց միտքը վրդովել և ժողովրդոց այնպէս կարծել տալ, թէ ընդդիմամարտութիւն մը կայ, քանի որ իսկապէս միութիւն և ներդաշնակութիւն կայ". (Ա.եռ. 149ի ցուցուած)։ Անգամ մը ժողովի մը մէջ իրենց մէկ պատուարժան անդամը ատենախօսեց, թէ Տաճկաստանի վերանորոգման գործը հաճելի աշխատութիւն մը է, հետեւապէս պարտին օգնել հոն գործող Ամերիկացի միսիոնար եղբարց։ Ուրիշ անգամ մ'ալ մէկերնին ըսաւ, թէ երբ պատեհութիւն կըլլայ, Ամերիկացի եղբարց գործակցելու առիթը փախցնելու չէ։ (Գլխ. 62)։

ԽԴ. Մեծն Բրիտանիոյ՝ Տաճկաստանի Դաստիարակութեան դըր-

ծին օգնելու նպատակաւ Մալթայի մէջ վարժարան մը հաստատեց, որոյ «նպաստող բարեսէր անձինքը", կըսէ տեղեկութիւն ունեցող մէկը (Ա.եռ. 144) «Աւետարանին համար նախանձաւորութեամբ լի են և մարդոց հոգիներուն (փրկութեան) համար սիրով վառուած"։ Ի Լոնտրա 1860ի գումարեալ ժողովի մը մէջ տեղեկութիւն տրուեցաւ, թէ «Մալթայի Բրօթէսթանդ Ուսումնարանը հիմնադրուեցաւ 1846ին, որ Տաճկաստանի՝ Կեդրոնական Ասիոյ՝ Հիւսիսային Ափրիկէի և Միջերկրական ծովուն մօտերը եղած ուրիշ երկիրներուն կրօնական և ընկերական վիճակին զարգացումը յառաջ տանի՝ հոն աղէկ դաստիարակութիւն առած բնիկ գործակիցներու միջոցով...։ Հոս աղէկ դաստիարակութիւն մը կտրուի բնիկներուն՝ որ կարողացունէ զանոնք քարոզիչ, Ս. Գիրք կարդացող-օգնական, վարժապետ, թարգմանիչ, բժիշկ և այլն ըլլալու...։ Շատեր կան որ կուզեն Ուսումնարան մտնել, կմնայ որ Անգլիոյ ժողովուրդը միջոց պատրաստէ, և կրնանք ակնկալել թէ Աստուծոյ օրհնութեամբը՝ Արեւելքի ինկած Եկեղեցիները իրենց նախնական մաքրութեանը վերածնին"։ Բայց այս Ուսումնարանէ, Անգլիոյ և Սկովտիոյ Գօլէճներն ալ բաց են Արեւելքի Երիտասարդութեան, ինչպէս որ ոմանք գացած և կատարեալ կրթութեամբ դարձած են ի Հայրենիս։

ԽԵ. Կան նաեւ ուրիշ ընկերութիւններ որոց գործակալք կաշխատին Տաճկաստանի վերանորոգութեան համար։ Հրէից ընկերութիւնը, որ ընդ ամենայն երկիր Հրէից դարձին համար միսիոնարներ ունի, ունի նաեւ ի Տաճկաստան, որք Երուսաղէմ, Պաղտատ, Զմիւռնիա, Թեսաղոնիկէ և այլուր կգործեն, առանց պատեհութիւն փախցնելու նաեւ Քրիստոնէից համար գործել է։ Ինչպէս է Երուսաղեմայ Եպիսկոպոսը, որ Քրիստոնեայ ուխտաւորաց համար ալ կաշխատի։ Չըրչ Միսիոնարական ընկերութիւնն ու Ամերիկացի Երիցական ընկերութիւնն ալ Միսիոնարներ ունին յՍուրիա և յԵգիպտոս։

ԽԶ. Ինչպէս որ քանի մը անգամ ըսուեցաւ, այս ընկերութիւնք կաշխատին թէ՛ Մահմետականաց և թէ՛ Հրէից և Քրիստոնէից համար անխտիր, որ առջիններն հաւատքի բերեն, և վերջինները հաւատքի հնազանդեցունեն։ Ուստի Ս. Գիրքը թարգմանած են Արաբերէնի, Թրքերէնի և ի Տաճկաստան բնակող ամէն գլխաւոր ազգաց կամ գործածուած լեզուաց։ Նոյնպէս և դաստիարակութեան և կրօնքի վերաբերեալ գիրքեր, մաքրութիւնը յայտնելու և ուղղութիւնը հաստատելու ջատագովութիւններ, ինչպէս որ պէտք է ամէն ազգի և եկեղեցւոյ։ Տնօրէնութիւններ եղած են որ ամէն ոք իրեն իմանալի լեզուով քարոզ լսէ և պաշտամունք կատարել կարենայ, որոց համար

եղած ընդդիմութեանց արդիւք գնելու միջամտութիւն խնդրուած է կառավարութենէ։ կամ թէ բանք ջանքեր եղած են որ կրօնական կատարեալ ազատութիւն ըլլայ թէ՛ Մահմետականաց, թէ՛ Հրէից և թէ՛ Քրիստոնէից համար։ Եւ ամէն միջոց որ պատշաճ կդատեն իրենց վախճանին ժամանելու, գործած են և կգործածեն ըստ տանելոյ կարողութեան։ Հետևապէս, ուր որ աշխատութիւն կայ հոն Բողոքական ժողովուրդ մը կայ. շատ քիչ, և առ հասարակ քիչը շատուոր ժողովրդեան հետ խառնուած։ Այսպէս Երուսաղեմայ Բողոքականք Հրեաներէն են մեծաւ մասամբ, Եգիպտոսինը՝ Ղփտիներէ, Մակեդոնիոյ կողմերը՝ կա՛մ Հրեայ կամ Յոյն, Ռումելի՝ Պուլկար, և Անատոլու՝ Հայ, թէպէտ հետերնին խառն են Ասորիք և այլ ազգեր։

Խէ. Եւ այս աշխատութեան արդիւնքին վրայ Պօլսոյ ընկերութեան Արտաքին գործոց քարտուղարը Պատ. Տօք. Գլարք այսպէս կտեղեկագրէ։ «Օսմանեան կայսրութեան մէջ Ամերիկացի միսիոնարաց աշխատութիւնը երեք ժամանակի կրնայ բաժնուիլ, կըսէ։ Առաջինը 1818–1839, յորում Ամերիկացի Քրիստոնէից մտադրութիւնը դարձաւ Թուրքիոյ վրայ, ուր 35,000,000 ժողովուրդ կար, յորոց իբր 12,000,000ը Քրիստոնեայ էր, և անոնց սերունդն էր, որք ի վաղուց ընդունած էին Քրիստոնէութիւնը։ Այս առաջին 20 տարուան միջոցին՝ հիմեր դրուելով մեծ գործ կատարուեցաւ և դէպ ամէն կողմ բաց դռներ գտնուեցան Աւետարանը քարոզելու։ Երկրորդ միջոցին, որ է 1839–1860, գրեթէ ամէն գլխաւոր քաղաք, Պոլսէն մինչև Եփրատ, եղաւ կեդրոն տարածման դաստիարակութեան և Աւետարանին լուսոյն, և Բողոքականք ճանչցուեցան Դռնէն իբրև ուրոյն ժողովուրդ։ Երրորդ ժամանակին մէջ, որ է 1860–1877, նշանաւոր յառաջադիմութիւն տեսնուեցաւ. բնիկ եկեղեցիք բազմացան յոյժ և սկսան անձամբ ընել քարոզութեան և դաստիարակութեան ծախքը։ Մեծամեծ ջանքեր եղան հասարակ և բարձրագոյն դպրոցներ բանալու երկու սեռից համար, և կին միսիոնարաց թիւն աւելցաւ։ Նաև Թուրքերէն Ս. Գրոց նոր թարգմանութիւնը կատարեցաւ, և Աստուածաշունչը Թուրքիոյ ամենայն ազգաց լեզուովը կարդացուի հիմա (Աւետ. 1878 ի 49)։

Խը. Այս գործոց արդիւնքը դարձեալ Մեծ. Յակոբոս Էֆ. Մատթէոսեան այսպէս կտեղեկագրէր 1871ին, երբ Անատոլու այցելելէն դարձած էր։ Թուրքիոյ մէջ, կըսէ (Աւետ. 1871 ի 41), Բողոքական Միսիոնարաց թիւն է ընդ ամէնը 166, որոց հետ գործակցութեամբ կաշխատին 140 բնիկ օգնականներ։ Ամէն կիւրակէ Տէրութեան այլ

և այլ մասանց մէջ 250 տեղ Աւետարանական պաշտօն կկատարուի։ Միսիոնարաց հաստատած դպրոցներու մէջ կան 6,720 աշակերտք։ Անոնք հաստատած են նաև որբանոց մը և արհեստներու դպրոց մը, որոց մէջ 300 բնիկ աշակերտք կան և 200 հիւանդի համար 3 հիւանդանոց։ Անցեալ տարուան մէջ միսիոնարք հրատարակեցին 72,000 կտոր Ս. Գիրք, ամբողջ կամ մաս, 25,000 կտոր կրօնական գրքեր և 30,000 դպրոցաց համար դասագրքեր։ Ամերիկայի ընկերութիւնները նոյն տարուան մէջ 50,298 լիրա ծախք ըրին. Անգղիական ընկերութիւնք 30,421 և Բրուսական ընկերութիւնք 23,000 լիրա։ Ամերիկացի և Անգղիացի Միսիոնարք իրենց աշխատութիւնը նուիրած են գլխաւորաբար Աւետարանի քարոզութեան ու գրոց և տետրակաց հրատարակութեան. իսկ Բրուսացիք՝ դաստիարակութեան և բարեսիրական գործոց"։ «Պէտք է այսուհետև հաւատքով և քաջալերութեամբ յառաջ տանիլ գործը, կըսէ Տօք. Գլարք, և այժմու դիրքէն և պատրաստութիւններէն մեծամեծ օգուտ քաղել։"

Խթ. Ասոնք արդեանց շատ թերի և անպատկան հաշիւն համարելու եմք, ըստ որում գործը՝ իբրև բարոյական իրողութիւն, ընդունակ չէ թուական հաշուի. միայն թէ ցոյց մը կրնայ ըլլալ թէ ինչ բանէ արտադրեալ են և ինչ բան կրնան արտադրել։ Լաւ ևս է ըսել թէ չափը կյայտնեն այն իմանալի խմորին, որ ըստ ասից Քրիստոսի, բոլոր զանգուածը խմորելու համար դրուած է ամենայն ազգաց մէջ որ ի Տաճկաստան։ Հետևապէս յարդ եղածներն միայն նախապատրաստութիւն համարելի են կրօնական և բարոյական, ինչպէս և ուսումնական խմորման մը, որ ի մօտոյ ունի մեծ փոփոխութիւն մը գործել։ Որոյ նշանները պիտի տեսնենք յընթացս գործոյս, թէպէտ և թերի, քանի որ միայն Հայուն վրայ ըրած ազդեցութիւնը տեսնելու առիթ պիտի ունենամք։ Տեսնենք արդ թէ ինչպէս սկիզբն առաւ։

4 ՄՈՒՏ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀԱՅՍ

Ծ. Շատ անգամ կհարցուի թէ Բողոքականք ինչո՞ւ կքարոզեն զԱւետարանն և Հայոց, որ իրենց պէս Քրիստոնեայ են։ Նախորդ խնդիրներէն կտեսնուի, թէ Բողոքականք պարտաւոր կհամարին զանձինս, որ կենաց բանը քարոզեն ամէն ազգաց և ազանց, համոզուած լինելով թէ անիկա հարկաւոր է ամէն մարդու, մանաւանդ անոնց՝ որք մտիկ չընելու պատճառանք կփնտռեն։ Նաև Հայաստանեայց Եկեղեցին, ուր լեցուած է խաւարին դարուց մոլորական խորհուրդ֊

ներն և ծխասիրութեան արարքը, կարօտ է բարեկարգութեան, որ կարենայ դիմանալ լուսաւորեալ դարուս գաղափարին և օգուտ ընէ ժողովրդեան։ Բողոքականք փորձառու են և գիտեն թէ ինչպէս Պապականութիւնը չկրցաւ պաշտպանել իւրքինք վերջին դարուց յարձակմանց առջև, Հայաստանեայց Եկեղեցին ևս չպիտի կարենայ պահել իւր դրութիւնը, երբ գիտութիւնք յԱրևելս յառաջ երթան. և եթէ երբէք պարզամիտ անոնց քիչ շատ կրցած է օգտակար ըլլալ ի նախնումն, զարդիս պիտի չկրնայ ըլլալ, և գուցէ անհաւատութիւնը ողողէ զՀայաստան։ Մանաւանդ թէ մինչ միսիոնարք յԱրևելս կու գան Աւետարան տարածելու, չեն կրնար չբողոքել այն բաներուն դէմ, զորս հակառակ կհամարին Ս. Աւետարանի և անհամաձայն, անոնք ուր ալ որ գտնուին։ Եթէ յԱրևմուտս բողոքեցին Պապական եկեղեցւոյ մոլորութեանց և չեղծմանց դէմ, կրնայի՞ն յԱրևելս աչք գոցել անոնց վրայ, թէ և քիչ մը տարբեր երևոյթով տեսնէին զանոնք։ Մանաւանդ թէ քանի որ յԱրևելս կու գան Հրէից և Հեթանոսաց քարոզել, կրնա՞ն թողուլ որ նոյն առջև Հայաստանեայց եկեղեցին Քրիստոնէութեան աղքատ օրինակ մը երևնայ։ Այսպիսի խորհուրդներ շատ անգամ յեղյեղեալ կը գտնուին Բողոքականաց և Միսիոնարաց գրութեանց մէջ, որոց օրինակ կամ վկայութիւն բերել աւելորդ է։

ԾԱ. Այս համոզմանց բնական հետևութիւնն էր՝ ջանալ որ Հայք հոգևորին, Աւետարանին ոգւով լեցուին, և Հայաստանեայց Եկեղեցին բարեկարգի, վարդապետութիւնք ուղղուին և արարողութիւնք բարեփոխին։ Դժուարին չեղաւ Հայոց մէջէն այս համոզման հետևող գտնել, որք համակամութեամբ գործել սկսան և կըսէին, թէ մոլորութիւն է բացի Ս. Գրոց անսխալ հեղինակութիւն ճանաչել, և Հին կտակարանին համապատիւ համարել Անկանոն գրքերն, որք Եբրայական բնագրին մէջ ալ չկան։ Մոլորութիւն է բացի Քրիստոսի կատարած քաւութենէն՝ բարեգործութիւն, առաքինութիւն և ապաշխարանաց գործ մը փոխարէն համարիլ մեղաց թողութեան և առիթ արդարացման։ Սխալ է թէ չափահաս հաւատացեալ մը կամ անչափահաս մանուկ մը չկրնար փրկուիլ՝ եթէ մկրտուած չէ, և թէ երախային վերայ մկրտութիւնը բնութեան փոփոխութիւն մը կը գործէ, որ ըստ Ս. Գրոց վերստին ծնանիլ կանուանի։ Սխալ է թէ Հաղորդութեան նուիրեալ հացն ու գինին կփոխակերպեն էութիւննին և կըլլան իսկապէս մարմին և արիւն Քրիստոսի, մինչ իսկ պատարագիչը թէև ցուցա ըլլայ։ Անհիմն է՝ բացի մկրտութենէ և Հաղորդութենէ Եկեղեցւոյ խորհուրդներ ճանաչել՝ իբրև ի Քրիստոսէ սահմանադրեալ, թէպէտ և կան հարկաւոր ծէսեր և օգտակար արարողութիւններ։ Անհիմն է վարդապետել, թէ կենդանեաց ողորմութեամբ և պատարագի յիշատակութեամբ կընէրուին մեռելոց անվճար մեղքերը, և թէ մեռեալ սրբոց աղօթքին կամ միջնորդութեանը դիմելու են կենդանի հաւատացեալք, որ առաջի Աստուծոյ ընդունելի լինին իրենց մաղթանք։

ԾԲ. Ասոնցմէ և նման վարդապետութիւններէ կհետևցունէին և կըսէին, թէ պէտք է փոփոխել և այն արարողութիւնք՝ որք կամ այս անընդունելի վարդապետութեանց վրայ են հաստատեալ, և կամ ի տգիտութենէ մուծեալ, որք ոչ միայն շինութիւն չեն տար Քրիստոնէին, այլ և վնասակար իսկ են։ Ուստի վերցունելու է, կըսէին, քահանային առջև խոստովանելու հարկը, ու միայն խրատ ընդունելու կերպ մը համարելու է, զի մի մեղաւորը Աստուծոյ փոխանորդ ճանաչէ զքահանայն և անկէ արձակում առնելով բաւականանայ։ Բարեփոխելու է ապաշխարանքի դրութիւնը, յորդորելով որ հաւատացեալք ի սրտէ շարժեալ ընեն ինչ որ պարտք կհամարին իրենց և այլոց։ Վերցնելու է մեռոնն ու օծումն և մասունքները որ մարդիկ նիւթապաշտութեան չերթան։ Հաղորդող չեղած ատեն պատարագ ընելու չէ, այլ յաճախ քարոզելու է զխաչեալն Քրիստոս, և նորա կենարար վարդապետութիւնները։ Արարողութեանց ձևերն ու կերպերն անփոփոխելի ցուցունելու և պահելու չէ, քանի որ մարդ է զանոնք կարգադրողը, այլ ըստ պահանջել պարագայից օգտակարն ընելու է։ Եկեղեցական ընթերցուածոց մէջէն վերցունելու է այն ձև խօսքերն որ կամ սխալ են կամ սխալ կը հասկցուին. քիչ կարդալու և հասկցունելու է իմանալի լեզուով։ Խաչ, պատկեր և արձան դնելու չէ պաշտաման տեղին որ կրօնական պատիւ կամ յարգանք չընծայուի անոնց։ Դաստիարակելու է ժողովուրդը՝ մանաւանդ եկեղեցականը, որ կարենան ճշմարտութիւնը բացատրել և ախոյեան հանդիսանալ։

ԾԳ. Բողոքականաց և Միսիոնարաց գրութեանց նայելով՝ ահա բարեկարգութիւն ըսելով այսպիսի բաներ կիմացուին, զորս ընդունելի ընելու գուն գործեցին ըստ ներելոյ պարագայից։ Եւ, եթէ յաջողէին ուղղութիւն մը բռնել դէպ ի բարեկարգութիւն, ո՛չ ժողովուրդը բաժնելու միտք կը ցուցնէին և ո՛չ զատ եկեղեցի կազմելու։ Եւ տարբեր ի՞նչ կրնային ընել, քանի որ Բողոքականութիւնը ո՛չ տեսանելի Եկեղեցւոյ գլուխ կճանչնայ զոր պարտական էին և Հայք ընդունել, և ո՛չ եկեղեցական յօրինուածութիւն որուն մէջ մնալով Հայաստանեայց Եկեղեցին կորուսանէր իր անկախութիւնը։

Ո՛չ ապաքէն նոյն ինքն Բողոքականութիւնը բողոք մըն է այնպիսի բռնաւորութեանց դէմ, յորմէ կերկնչէին Հայք։ Եթէ Պապականութեան դէմ կբողոքեն Միսիոնարք, կրնայի՞ն Հայոց մէջ նորա սկզբունքներով գործել, կազմելով անհիմն Եկեղեցի մը որ չէր կըրնար կանգուն մնալ և որոյ կործանումը նախատինք էր ընկերութեան և սոսկումն Միսիոնարաց։ Զայս գիտելով Պօրտ ընկերութիւնն այնպէս տնօրինած էր, որ “իրմէ օգնութիւն ընդունող օտար Եկեղեցիք եկեղեցական կապով կապուած չըլլան Ամերիկայի Եկեղեցեաց (միոյն) հետ, այլ ազատ և զատ դիրք մը բռնեն։” Ինչպէս կտեսնուի և իւր արարքէն, որ “ի սկզբանէ հետէ Պօրտ ընկերութեան պաշտպանութեան ներքև 80,000 անդամ ունեցող՝ (այլևայլ երկրէ և ազգէ կազմեալ) 273 Եկեղեցիներէն 8 հատը միայն որոշակի ընդունած են Ամերիկայի Եկեղեցեաց մէկուն կամ միւսին կառավարութեան դրութիւնը։ Այս 8 Եկեղեցիք ալ Ամերիկայի նախկին բընիկներուն մէջ կազմեալ եկեղեցիներ են” (Ատեա. 1874 ի. 48)։

ԾԴ. Հետևեալ հատուածներն ալ կհաստատեն խնդրոյս վերաբերեալ իրողութիւնները։ Անգղիական ժողովի մը մէջ, գումարեալ ի Լոնտոն 1860, երևելի պաշտօնակալ եկեղեցական մը, “Շատերէն հիմակուան ատենս կհարցուի, ըսաւ, թէ ինչու մենք ջանք կընենք քրիստոնէական ճշմարտութեան տարածումը յառաջ տանիլ անանկ երկիրներ, ուր որ դարերէ ի վեր Քրիստոնեայ եկեղեցիներ կան։ Հիմա կըսեմ առանց երկբայելու, բայց խորին ցաւով, որ այն երկիրներուն (Տաճկաստանի) Քրիստոնէութիւնը մեր Տէրոջը և իր Առաքելոց սորվեցուցած Քրիստոնէութենէն շատ տարբեր է։ Արևելեան եկեղեցիներուն վիճակը անանկ մըն է որ, իրօք արգելք է Քրիստոնէական ճշմարտութեան փաստին ... (արգելք) Մահմետականաց Քրիստոնէական կրօնքը ընդունելուն։ Այդ եկեղեցեաց պաշտօնները գրեթէ բոլորովին անանկ լեզուով կկատարուին՝ որ ընդհանուր ժողովուրդը չհասկնար. գոյափոխութեան վարդապետութիւնը լիովին կպաշտպանուի. աշխարհականաց զլացուած է Ս. Գրոց գործածութիւնը։ Իրօք շատ մեծ կարօտութիւն կայ Արևելքի մէջ մաքուր Քրիստոնէական կրթութեան. թէև շատ դարերէ ի վեր Քրիստոնէական եկեղեցիներ կան.” (Ատեա 144)։ Տօք. Ուիլեամ Կուտէլ կհրատարակէր “Թուրքիոյ Աւետարանական եկեղեցեաց”, թէ հիմա 1864ին՝ “քառասուն տարիէն աւելի է, յորմէ հետէ Թողի Հայրենիքս և եկի ի Տաճկաստան ...։ Ի սկզբան՝ երբ ձեր մէջ մտանք, դուք զատ ժողովուրդ մը չէիք և երբէք չէինք ակնկալեր թէ պիտի ըլլաք։ Որովհետև մեր տնօրէնութեան մէջ բնաւ տեղի չկար որ եկեղեցա-

կան իրողութեանց խառնուինք. ուստի երբ մէջերնիդ մտանք, բընաւին դիտաւորութիւն չունէինք որ բաժանմունք յարուցանենք. այլ մի միայն կփափաքէինք որ ձեզի քարոզենք զՔրիստոս և ան խաչը ելած։ Յատուկ մեր ալ դիտաւորութիւնը նոյնն էր, զոր ունեցան Միսիոնարք որ ի Պարսկաստան աշխատեցան այն (Նեստորական) հին եկեղեցւոյն համար։ Անոնց աշխատութիւնը բաժանմունք յառաջ չբերաւ այն եկեղեցւոյն մէջ, այլ ամէն տեղ աշխատեցան, նոյն եկեղեցւոյն եպիսկոպոսաց և քահանայից հետ քարոզեցին նոցա պաշտաման տեղեաց մէջ, օգնեցին և տեսչութիւն ըրին նոցա դըպրոցաց, ու ըրին ինչ որ կրնային ընել որ բոլոր ժողովուրդը լուսաւորի և բարձրանայ” (Վազլարի նամակը)։ Աւետաբեր ալ (Թիւ 158) այս նիւթին վրայ խօսելով, “Ի՞նչ օրհնութիւն պիտի ըլլար,” կըսէ, “Հայոց ազգին, թէ որ ամէնքը որոշէին իրենց կրօնքին մէջ մարդոցմէ մտածները դուրս ձգելով միայն Աստուծմէ եկածը պահել ...։ Այն ատեն ազատ պիտի ըլլային չահախնդիր կղերին իրենց վրայ դրած ծանր շղթաներէն, և Աստուծոյ օրհնութեամբը պիտի վերականգնէին, ու ծաղկէին բոլոր ան բաներուն մէջ՝ որովք ազգ մը յաջող և երջանիկ կըլլայ։ Ամէն բանէն վեր իրենք և իրենց զաւակները Աստուծոյ գծած ճամբուն մէջ քալելով, կատարելապէս վըստահ կըլլանք, որ երկրիս վրայ երջանկութեան ու երկինքն ալ յաւիտենական փառաց պիտի հասնին։”

ԾԵ. Միսիոնարաց բանից համաձայն կը գտնենք և գործերն։ Անոնք սկսեցին Ս. Գրոց թարգմանութիւններէ, հանդերձ հրատարակութեամբ կրօնական և բարոյական գրոց և տետրակաց, ու ձեռք զարկին ազգը դաստիարակել դպրոցներով։ Ինչպէս և կը պատմէ Աւետիս վարժապետ Պէրպէրեան, որոյ բանից միայն իրողութիւն պարունակող մասունք մէջ կը բերենք։ “Զայսու ժամանակաւ (1839) նորաղանդ քարոզիչք Ամերիկացւոց՝ որք ի վեց ամաց հետէ եկեալ էին ի Կոստանդնուպօլիս քարոզել և տարածել զաղանդ իւրեանց՝ պատճառաւ ուսուցանելոյ մանկանց զլեզուս Անգղիերէն, զաշխարհագրութիւն և զթուաբանութիւն, և զայլ ուսմունս կարևորս և զպիտանիս, բացին գիշերօթիկ դպրոցս ի Բէրա և Պէպէք գիւղ, և հաւաքեցին ի նոսա աշակերտս բազումս ըստ մեծի մասին ի Հայոց։ ... և ի փոքունց սկսեալ ծեսից պահոց և տօնից ... յանդգնեցան և ի գոյափոխութիւն Սուրբ Հաղորդութեան ... ի բարեխօսութիւն սրբոց ամբաստանել, ջնջելով և զպատկերաց նոցին և զնըշխարաց մասանցն յարգութիւն (պատմ. Հայոց երես 268)։”

ԾԶ. Նկատելի է թէ այս գործողութիւնք սկսան ի Կոստանդնու-

պօլիս, ուստի դատաւորները չէին տարածած մինչեւ որ պատրիարքարանը որոշեց թէ բարեկամաբա՞ր վարուելու էր այս շարժմանց հետ թէ թշնամաբար։ Հետեւապէս գաւառացի բնակիչք մասնակցութիւն չէին կրնար ունենալ այս կարեւոր որոշման մէջ, թէ Արեւմտեան ձեռնտուութիւնը ընդունելո՞ւ էր թէ մերժելու։ Բարեկարգութեան առջեւը դուռ բանալ կամ գոցելու որոշումը տալ կմնար Պօլսեցւոց վրայ, յորոց հասարակութիւն կոչուած մասը բանի չէր կրնար խառնուիլ, քանզի, «Նախ քան զՍահմանադրութիւն,» կըսէ Յ. Ոսկան էֆ. «ինչէր ժողովուրդը. խաշան բթամիտներու խումբ մը, զոր խիստ դիւրին էր իբրեւ աչքը գոց ջոկեր մը վարել, եւ նիւթականով գոհացնել, կամ նիւթականով միայն գրգռել, ինչպէս որ կպահանջէր կառավարողաց փառասիրութիւնը կամ շահը» (Ազգին վիճակին վրայ ընդ. տեսութիւն մը. երես 45)։ Եւ այս կառավարողներն էին Պատրիարքունք եւ Ամիրայք. «Այս պաշտօն միայն անոնց է հոգեւորականաց» (Պէր. պատմ. Հայոց 269)։ Ուստի որոշումը կմնար Պատրիարքաց հանճարին եւ կրօնագէտ համարեալ աշխարհականաց։ Ստեփաննոս, Յակոբոս եւ Աստուածատուր Պատրիարքունք Ազգային ճեմարանի եւ այլ չվոթ խնդրոց կռիւներովը անցուցին, մինչեւ ելաւ ի գահ Մատթէոս պատրիարք, առ այս խորհրդակից ունելով Տէրոյենց կամ Ջամուրճեան պատուելին։

ԾԷ. Մատթէոս Պատրիարք պապական գաղափարով տոգորեալ էր, զոր իւր ամէն գրութեանց մէջ գրեթէ կցուցնէ։ Մինչ իսկ ի կաթոլիկութեան կհրատարակէ ջատագովութիւն մը Դաշանց Թղթոյն, որոյ «Հերքումը» պատրաստեցաւ դրել Շահնազարեան։ Յիրաւի իւր գրութիւնները կարդացող մը չկրնար անհաւան գտնուիլ Մուրատեանց Մելքիսեդեկ վարդապետին տուած վճռագրոյն թէ, «Մատթէոս մեծ հմտութեան տէր չլինելով՝ իւր գրուածներն մեծաւ մասամբ ժողովածոյք են համանման իմաստներով։ Մատթէոսի գրուածոց մէջ խիստ շատ հակասութիւններ կան, որ անհմտութեան նշան է, եւ մանաւանդ որ կամելով Հայաստանեայց Եկեղեցին պաշտպանել բողոքականութեան դէմ՝ տեղ տեղ բոլորովին անգիտաբար խորասուզած է պապականութեան մէջ» (Պատմ. Եկեղ. 617)։ Ասկէ տարբեր չէ եւ Տէրոյենցի մտաց ծնունդը, զոր տեսեալ ոմանց՝ պապական համարած են իրաւամբ, եւ որոց պապականութեան դէմ բողոքած են խմբովին, ինչպէս վարը պիտի տեսնենք, եւ Գ. Մուրատեան յատուկ տետրակաւ մը մերժած է այդ թիւր գաղափարները։

ԾԸ. Պապականութիւնը, որ յԱրեւմուտս պարտեալ կգտնուէր

բողոքականութեան առջեւ, չէր կրնար անտարբեր հանդիսատես լինել նորա յԱրեւելս արշաւելուն վրայ։ Մանաւանդ երբ կտեսնէր թէ կմտնէ եւ Հայոց մէջ, զոր ի վաղուց անտի պատրաստուած էր կուլ տալու, եւ զոր փութաց բողոքականութիւնը ճողոպրել նորա ձեռքէն։ Ուստի երբ «Պօլսոյ Լատինները իմացան, կըսէ Իւնիվէռ, Գաղղիական թերթը, թէ Հայ ազգին լուսաւոր (Պապականանալու մերձեցած) մասը վտանգի մէջ է, որոշում ըրին թէ թիկունք ըլլալ այս Հռովմէականներուն, եւ Անգլիայի ու Բրոդեստանդներուն անթոյլատու քաղաքականութեան դէմ զանոնք պաշտպանել» (Արեւելք Թիւ ժԳ. 1855)։ «Հալածեալ Քրիստոնեաներ» ստորագրութեամբ Բողոքականաց առ Ամիրայս մատուցեալ աղերսագիրն ալ կըսէ, թէ «այս սաստիկ (հալածման) հովը չփչէր արեւելեան զեփիւռէն . . . այլ արեւմտեան կողմի հակառակ հովերէն կշարժի, որ դարոյս մէջ անգամ մ'ալ փչելով ազգը երկուքի բաժնեց։»

ԾԹ. Դժուարին պիտի չըլլայ գիտել թէ այս Պապական հովը ո՛ր բերնէն կփչէր, եթէ յիշեմք ինչ որ գրեց Իւնիվէռ լրագիրն Գաղղիացւոց, առնելով Պօլիսէն գրուած նամակէ մը։ «Հայերը հիմա երեք (կարգի) բաժնուեր են, կըսէ նա։ Մէկ կողմը՝ իրեն պարագլուխ ունենալով Տատեան Պօղոս Ամիրայն, կբաղկանայ ազգին ամենալուսաւոր եւ ամենազգօն մարդոցմէ, որք դժբախտաբար ո՛չ բազմաթիւ են եւ ոչ միաբան, անոր համար սրտերնուն մէջ կպահեն իրենց կրօնական համոզումը» (Արեւելք Թիւ ժԳ)։ Նաեւ դժուարին պիտի չըլլայ գտնել այն փետուրը՝ գրիչը, որ այս հովին առջեւ կշարժէր ի Կոստանդնուպօլիս, ուր Ջօհալ Հանդէս կհրատարակուէր, զոր «Իւնիվէռ գովելով երկինք կհանէ, կըսէ Արեւելք (Անդ), եւ Ջամուրճեանի պէս մարդու մը երեւելի փիլիսոփայի եւ մատենագրի անուն կու տայ։» Ահա քեզ բերան մը եւ փետուր մը, որոց մէկը ի Փարիզ Գաղղիերէն Յայտարարութիւն կհրատարակէ յանուն ազգին, եւ միւսը ի Պօլիս Հայու կերպարանօք։ Նա փարիզու Եպիսկոպոսին կըսէ, «Սրբազան Տէր, ես ալ ձեզի նման կաթոլիկ եմ,» եւ սա ազգին հաւատացունել կուզէ թէ, «Հռովմայու եւ մեր (ազգին) Եկեղեցւոյն կրօնին եւ դաւանանքին մէջ իսկական տարբերութիւն մը չկայ . . . (անանկ որ) Հայոց Եկեղեցւոյն դաւանութենէն հեռացող անձը Հռովմայ դաւանութենէն կհեռանայ եւ բողոքականութեան կմօտենայ։ Եւ Բրոդեստանդները որ դաւանութեան մէջ որ Պապականներէն կզատուին (կզատուին եւ Հայոց Եկեղեցիէն, քանզի) Հայոց Եկեղեցին ալ նոյն դաւանութիւնները Պապական Եկեղեցւոյն պէս կընդունի» (Արեւելք Թիւ ժԳ. 1855)։

Ի. Արդ ի՞նչ աչօք կրնար նայիլ Մխիթարեան գործոց վրայ ժողովուրդ մը՝ որոյ գործունէութիւնը կ'ննար այսպիսի վարձկան դրադետի՝ պապականացեալ Ամիրայից և լատինասէրս Պատրիարքի ձեռք։ Ժողովուրդ մը որ, եթէ Եկեղեցական պատմութեան վրայ նայէր, պիտի գտնէր թէ ի վաղուց անտի վնասներ կրած է օտար քրիստոնէից հետ ի հոգևորս հաղորդակից ըլլալէն, ժողովուրդ մը, կ'ըսեմ, որոյ խելապատակը խճողեալ կայր Եկեղեցականաց դերիշխանութեան վարդապետութեամբ, և դարեր ու նեղութիւններ մոռցուներ տուած էին, թէ քրիստոնեայք պարտաւոր են ընդ ամենայն աշխարհ տարածել զԱւետարանն և ծառայութիւն մատուցանել հոգևոր տկարամտաց։ Եւ երբ սկսան Գաղղիական ազդարար հողմունք եւս փչել և շարժել ոմանց գլուխն ու շրթունքը, և այլոց փետուրն ու թերթերը, ա՛լ Բողոքականութիւնը ինչ որ ալ ըլլար, չէր կրնար սպասել խաղաղ ելից։ Պատերազմը մօտալուտ էր, որոյ նախաշարժութիւնը սկսաւ Յակոբոս Եպիսկոպոս, զոր Ամիրայք փութացան «առ ժամն կարգեցին (յամին 1839) խորհրդական (Ստեփաննոս) Պատրիարքին։ Եւ ետուն ի ձեռս նորա զլեկ ազգային կառավարութեան տնօրինել զամենայն ըստ իւրում խոհականութեան . . . զի մի՛ ճարակեսցի աղանդն յազգիս։ Եւ նա կամելով ահ արկանել և դողացուցանել զամենեսին զի մի՛ ոք համարձակեսցի ի դպրոցս նոր աղանդիցն յայց ելանել, առանց ինչ քննութեան և հարցման աքսորեաց յանկարծ զԹոմմայ վարդապետ ի վանս Արմաշու և զՋիֆլիգեայ Պօղոս և զՅովհաննէս վարժապետս ի Կեսարիա, որք անմեղք էին յայսմ ըստ վկայութեան բազմաց. աքսորեաց և զտէր Գէորգ քահանայ Խասգիւղի և զմիրացու Յովհաննէս ի Թէքիրտաղ բանտարկութեամբ քսու արանց, և եւս յաւել նզովել յատենի եկեղեցւոյ զաղանդն իսկ Լութերի” (Պէր. պատմ. Հայոց 269)։

ԿԱ. 1844 Յուլ. 1ին Պատրիարքական աթոռը բարձրացաւ Մատթէոս Եպիսկոպոս, «վերցան ներքին խռովութիւնք, որ ծագած էին յաւուրս նախորդայն, և պարագայք նպաստաւոր թուեցան առաջխաղացման։ Ուստի առաջին գործ Մատթէոս Պատրիարքին եղև հանել և դարձուցանել զմոլորեալսն ի ժողովրդենէ իւրմէ . . . և կամելով նախ և յառաջ իմանալ զհաշիւ սոցա, . . . գտան 8,000ի չափ հաշուեալք ի թումարաց ծխատէր քահանայից Կոստանդնուպոլսոյ և գիւղօրէից նորին . . . (յորոց) բազումն եղեն, որք արծաթով խաբեալ էին աղքատութեան աղագաւ և ամսականս առնուլին, և ոմանք ի պարտուց իւրեանց դրամովք նոցին զերծեալք, պարտա-

ւորեալ էին զհետ երթալ նոցին։ . . . (Ուստի) ինքն իսկ խոստացաւ տալ զամսականն զայնոսիկ։” Այսպիսի ծախուց հաշիւը երբ հրաժարեալ առենը կու տայ, «Ահա կըսէ, 37,865 դահեկան տուեալ եմ մինչև ցարդ ի պէտս դարձի նորադանդից ի ծոց Ս. Եկեղեցւոյս.” (Երես 364)։ «Եւ վասն սոցա որք վիճաբանիլ կամէին ի վերայ այսոցիկ, որոշեաց զմենեակ մի ի Մայր Եկեղեցւոջ, և եդ ի նմա զՊատուելի Յովհաննէս Տէրոյենց (Ջամուրճեան)՝ զայրն բազմահմուտ և լեզուագէտ։ Եւ հրամայեաց զի որ ոք ունիցի տարակուսական խնդիր ինչ և վիճել կամիցի, գնասցէ առ նա, գրեսցէ զխնդիրն և գրով առցէ զպատասխանին։ Բայց առնք բաւական չէին ի դարման պատառուածոց, վասն որոյ «Մատթէոս Պատրիարք գրեաց և հրաւիրեաց զԸրբազան Կարապետ նախորդ Պատրիարքն՝ որ նստէրն յԻւսկիւտար, և զՅովհաննէս Արքեպիսկոպոս՝ փոխանորդն Երուսաղեմի, և զծերունին Յովհաննէս վարդապետ՝ զքարոզիչն Խասգիւղի, պատմեաց նոցա մի առ մի զեղեալսն ամենայն։” Այլ նոքին թէ Նիկոմիդացի Տէր Վրթանէս քահանայն կանչեցին ի Պատրիարքարան որ յետս կեցուցանեն խօսելէ Բողոքականաց բանձները. բայց նա հաստատուն կեցաւ իր մտաց վրայ և (դուցէ) բերնէն այնպիսի խօսքեր հանեց որ քիչ մնաց Թադէոս վարդապետ չիք քահանան հոն պիտի զարնէր մեռցունէր։ Ուստի Պատրիարքին «խորհուրդ արարեալ ընդ նոսա, միաբան վճռով և ստորագրութեամբ յառաջիկայ կիւրակէին յայնմիկ ընթերցաւ կոնդակ բանադրանաց յամենայն եկեղեցիս Կոստանդնուպօլսոյ ի Յունվար, 12. 1846։ Առաքեաց և զօրինակ կոնդակին յԱնատօլու և ի Ռումէլի ի զգուշութիւն պարզամիտ ժողովրդեան Հայոց”, զի մի ընդունիցին զսա «ի տուն՝ իբրև դայլ յափշտակող, չառնել զողջոյն սորա իբրև զհոգեկորոյս մահադեղ, և զգուշանալ հանդերձ ամենայն տամբք ի այնպիսի մոլորեցուցիչ ամբարիշտ հետևողաց մոլար վարդապետութեան նորադանդից։”

ԿԲ. «Ի միջոցիս յայսմիկ, . . եկեղեցպանք և պատուաւոր անձինք բազումք եկին առ Պատրիարքն, բողոք բարձին զամբաստանելոյն զայնոցիկ, և ասեն. Հա՛յր Սրբազան, ամբարիշտքս այսոքիկ հանապազօր քարոզեն ի սրճանոցս, և ի շուկայս զանհաւատութիւն իւրեանց, և զՀայս կռապաշտս կոչեն և մոլորեալս, և յարուցանեն խռովութիւնս մեծամեծս։ Եւ զի ոդեաք մեր, որպիսիք են ջրհանակիրք և նաւավարք, գոլով ջերմեռանդ ի հաւատս իւրեանց պատասխանեն նոցա անլուր հայհոյութեամբ։ Եւ ո՞ գիտիցէ, դուցէ յաւուր միում արբեալ ոմն ի ջրհանակրաց ոչ կարելով համբերել, հարցէ

գնաս սրով կամ քարամբ և սպանցէ, և յայնժամ զի՞նչ լինիցի։" Ապա Պատրիարքին խորհուրդ արարեալ, որպէս ասացաւ, "Յետ բանադրելոյ զերեցն վրթանէս, բանադրեաց և զյամառեալ գլխաւոր աղանդոյս նորին։" (Պէրպէրեանի պատմ. Հայոց Գլ. ԾԷ)։ Եւ Յունուարի 8, 1846ին "Նոր կոնդակ մը հանեց", կըսէ Բողոքականաց բրած Յայտարարութիւնը, "որ ամէն Եկեղեցեաց մէջ կարդացուեցաւ կաթողիկէ Եկեղեցւոյ տօնախմբութեան օրը . . . և այս բանադրանաց թուղթը (հրամայած է) որ անընդհատ ամէն տարի նոյն օրը պիտի կարդացուի բոլոր իր իշխանութեան տակը մնացող ժողովրդոց մէջ։ Այսպէս, կըսեն, "Մատթէոս Պատրիարք յաւիտեան կրաժնէ զմեզ (Աւետարանի հետևողներս) Հայոց Եկեղեցիէն այս կոնդակին մնայուն հրամանաւն և բարձր իշխանութեամբը։" Մատթէոս Պատրիարք և համախոհք չէի՞ն գիտեր արդեօք թէ "կարծեաց՝ մանաւանդ կրօնական կարծեաց համար հալածելու սկզբունքը բնականին հակառակ ըլլալէ զատ, հետևութեամբն ալ վնասակար է, (զի չհասցուներ նպատակ եղած) իւր վախճանին։ Վասն զի այս գործը հալածելոց մաքէն անդորրութիւնը արտաքսելով, ուղիղ դատողութիւն չեն կրնար ընել, որ իրենց մոլորութիւնը ճանչեն։ Պատմական ապացոյցներն և հանապազօրեայ փորձառութիւնք անմատրական պակաս են այս ճշմարտութիւնը անժխտելի հաստատելու։" (Սկզբ. Դաստիա. 13)։ Եւ ահա սոյն սկզբան մէկ ցաւալի օրինակն ալ կըլլայ այս հալածման հետևութիւնը, որ էր

Ե. ՀԱՏՈՒԱԾԻԼ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ

ԿԳ. Հայ Բողոքականաց ազգային իրաւասութենէն բաժնուիլը կրկին մօք կնկատուի, մէկ մը՝ իբրև անդամ Հայաստանեայց Եկեղեցւոյն, կանջատին կրօնական իրաւասութենէ, մէկ մալ՝ իբրև Բարձրագոյն Դրան հպատակ ժողովուրդ, քաղաքական իրաւասութենէ։ Մատթէոս սրբազան իբրև եպիսկոպոս և գլուխ Թուրքիոյ Հայ Լուսաւորչական Եկեղեցւոյն նզոված էր Բողոքականները, և իբր Պատրիարք և Ներկայացուցիչ Հայոց՝ առաջի Բարձրագոյն Դրան, կըլլանար զանոնք պաշտպանելէ։ Ոչ միայն այսպիսի իմն արդելանօք կպարտաւորէր զանոնք, որ՝ եթէ պիտի չդառնան, զատ Եկեղեցի մը ըլլան և գլուխ մը ունենան առաջի Կառավարութեան, այլ և Նորաղանդից դէմ (1846ին) հանած երկրորդ յայտարարութեամբը բացէ ի բաց ճամբայ կցուցնէր ասելով թէ, "իրենց ազատութիւնը երբէք չենք բռնաբարեր, կրնան ուզած տեղերնին երթալ, կրնան

ուզած աղանդնուն հետևիլ, մէկը իրարմէ չզատեր զանոնք։" Բողոքականք ալ, թերևս համարելով թէ իրենց նպատակին լաւ ևս կծառայէ, ջանացին որ քաղաքական իրաւասութենէ չանջատին, եթէ կարելի լինի, մինչ պարտաւորեալ են բաժանիլ կրօնապէս։

ԿԴ. Ուստի երբ Հայ Աւետարանական անուամբ զատ եկեղեցի մը կազմելու վրայ էին՝ այս անջատման պատճառներնին 1846 Օգոս. 25ին այսպէս յայտարարեցին։ "Մենք Հայ ազգի Աւետարանական Քրիստոնեայքս՝ Աստուծմէ վախնալով և իւր Աւետարանին հնազանդելով մերժեցինք և մէկդի ձգեցինք մեզմէ այն ամէն մարդկային աւանդութիւնները և արարողութիւնները, որ հակառակ են Աւետարանին և քրիստոնէական եկեղեցւոյ մաքրութեանը . . .։ Բնաւ զատուելու միտք չունենալով այն եկեղեցիէն, որոյ անդամներն էինք առաջուց, որ երկար ժամանակ միացած կեցեր էինք։ Եւ կողբայինք նորա՝ Քրիստոսի, մարգարէից և առաքելոց սովրեցուցած նախկին հաւատքէն մոլորելուն վրայ, նպատակ ունենալով որ զանիկայ Ս. Աւետարանաւ լուսաւորենք և նորոգենք։ Եւ որովհետև կընդունինք, և միշտ ընդունած ենք եկեղեցւոյ Նիկիական հանգանակը ամբողջ, որն որ ամէն Քրիստոնեայք կընդունին . . . վասն որոյ ընդհանուր Քրիստոնէից հին հանգանակը ընդունելովնիս կրնայինք նոյն (Հայաստանեայց) եկեղեցւոյ օրինաւոր անդամները սեպուիլ։" Եւ տարւոյս Յունվար 22ին "Հալածեալ Քրիստոնեայք" ստորագրութեամբ խոնարհ աղերսագիր մը մատուցեր էին առ Սրբազան Պատրիարքն՝ հանդերձ դաւանութեամբ, ուր կըսէին թէ, "Մեր ազգը այնչափ կսիրեմք՝ Պօղոսի առաքելոյն Հռովմայեցւոց թղթոյն (Գլ. Թ. 3) մէջ գրածին պէս, որ Հայազգի անունիլը մեզի պարծանք կսեպենք։ Եւ ամենևին չենք ընդունիր ուրիշ անուն մը, թէև հասարակօրէն մեզի Բրոթեսթանդ կըսուցեն, բայց մենք կրկին կխոստովանինք, թէ ազգաւ Հայ եմք, հաւատքով Քրիստոնեայ և Օսմանեան տէրութեան հնազանդ հպատակներ, (հետևապէս Հայոց Պատրիարքութեան իրաւասութեան ենթակայ)։ Եւ թէ որ կրօնական կամ քաղաքական բաներու մէջ մէկ սխալմունք մը ունինք, ըստ որում երբէք ինքզինքնիս անսխալ չենք համարիր, յօժարութեամբ կընդունինք, թէ որ սխալմունքներնիս ցուցնել հաճիք։"

ԿԵ. Ասոր վրայ "Մատթէոս արքեպիսկոպոս՝ Հայոց Պատրիարքը, կըսեն (ի յայտարարութեան անդ), նոր հանգանակ մը հնարեց, որ Քրիստոսի և առաքելոց սովրեցուցած հիմնական վարդապետութեանց մեծապէս կհակառակի . . .։ Այս հանգանակին երրորդ յօդուածին մէջ Պատրիարքը կպահանջէ մեզմէ, որ եօթն խորհուրդ-

ներն ընդունինք, քանի որ Ս. Գիրք երկու խորհուրդ կցուցանէ..։ Չորրորդ յօդուածով կպահանջէ մեզմէ ընդունիլ մկրտութիւնը... (այնքան) հարկաւոր փրկութեան, որ կատարելապէս անմեղ եակ մը (իսկ) չկրնար փրկուիլ առանց անոր...։ Նոյն յօդուածով նաև կպահանջէ մեզմէ որ դաւանինք թէ մեղաւորը առանց քահանային արձակմանը անհնար է որ մեղաց թողութիւն և յաւիտենական կեանք գտնէ... Հինգերորդին մէջ կպահանջէ որ հաւատանք, թէ հաղորդութեան հացն ու գինին Քրիստոսի ճշմարիտ և իրական մարմինն ու արիւնն է..։ Վեցերորդին մէջ կպահանջէ որ ընդունինք, թէ պէտք է երկրպագութիւն ընել խաչերուն՝ պատկերներուն և մասունքներուն.., կպահանջէ նաև որ ընդունինք սրբոց բարեխօսութիւնը...։ Եօթներորդին մէջ կպահանջէ որ եկեղեցւոյն ամէն ըսածներն ընդունինք...։ Իններորդ յօդուածին մէջ ալ կպահանջէ մեզմէ, որ (Բողոքական հանուր եկեղեցիները)... նզովենք և մերժենք իբրև ամբարիշտ և հայհոյիչ Ս. Հոգւոյն, և իբրև թշնամի Աստուծոյ և իւր ամենայն սրբոց...։ Բայց մենք առաւել Աստուծոյ քան թէ մարդոյ հնազանդելով՝ չընդունեցինք Պատրիարքին այս նոր հանգանակը, վասն որոյ եկեղեցիէն (կտրեց) հանեց մեզ, և հրապարակաւ ու յականէ յանուանէ բանադրեց...։ Եւ ձեռքէն բոլոր եկածը ըրաւ և աշխատեցաւ մեզ նեղը ձգել, որ ընդունինք և ստորագրենք իր նոր հանգանակը, և այսպէս իր հոգևոր յանցանք սեպածներուն դէմ մարմնաւոր պատիժ (գործածելոյ) սքանչելի օրինակ մը կթողու գալու դարերուն։ Վերջապէս՝ բոլոր այս բաներէն ետև Յունիսի 8ին Պատրիարքը նոր կոնդակ մը հանեց, որ ամէն եկեղեցեաց մէջ կարդացուեցաւ (Տես վերը ԿԲ.)։ Այսպէս յաւիտեան կբաժնէ զմեզ Հայաստանեայց եկեղեցիէն, այս կոնդակին միայուն հրամանաւն ու բարձր իշխանութեամբը։"

ԿԴ. "Եւ ահա այս եղած բաներն կարդարացունեն Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի մը կազմուելնիս։ Որովհետև Պատրիարքը իւր բոլոր կարողութիւնը և իշխանութիւնը բանեցուց մեր կործանմանը համար, և ջանաց որ մեզ զրկէ եկեղեցւոյ ամէն արտօնութիւններէն և խորհուրդներէն, զորս երկրաւոր բարիքներէն գերազանց կը սեպենք։ Վասն որոյ մեր անձը պաշտպանելու իրաւունքնիս և հոգիներնուս փրկութիւնը և մեր հոգևոր շինութիւնը փնտռելու անհրաժեշտ իրաւունքնիս ոչ միայն կարդարացունեն մեր զատ եկեղեցի մը ըլլալը, այլ և կպահանջեն որ ըլլանք։ Որովհետև յաւիտենական բաժանմամբ զատուած ենք Հայոց եկեղեցիէն, և հնար չկայ որ դարձեալ միանանք առանց անոր հոգեկորոյս սխալմունքները ընդունելու։ Վասն որոյ հարկ եղաւ որ զատ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի մը ըլլանք, և իրօք ալ եղանք ի շնորհս Աստուծոյ (1846 Յուլ. 1)։ Որովհետև պարտական ենք մեր ընտանեացը և զաւկներուն սորվեցունել Եհովային պատուէրները և անոր մեզի յայտնած ամէն ճշմարտութիւնները, և որովհետև ասիկայ առանց Աւետարանին հրապարակաւ քարոզութեանը կատարելապէս չըլլար, ուստի իրաւամբ Հայ Աւետարանական եկեղեցի մը կկազմուինք այս նպատակին համար։ Որովհետև Քրիստոս իբրև եկեղեցւոյ գլուխ հաւատալով՝ անոր վարդապետութիւնները ընդունելով և սրտանց հնազանդելով Ս. Աւետարանին՝ Քրիստոսի մի, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցւոյն անդամներն ենք, վասն որոյ պարտական ենք այս անդամ ըլլալնիս դաւանիլ ամենայն Աւետարանական կանոնօք և արտօնութեամբ մասնաւոր և առանձին եկեղեցի մը կազմելով։ Որովհետև Ս. Աւետարանը Քրիստոնեայներէն կպահանջէ որ աղօթք ընեն ամէն մարդոց համար... նաև կպահանջէ որ հրապարակաւ ընեն զայս... վասն որոյ պարտական ենք եկեղեցի մը ձևանալ, ուր Աստուծոյ կամացը համեմատ անդադար աղօթք մատուցանենք (ամենայն իշխանաւորաց համար)... և մանաւանդ մեր ազգին համար սրտանց կփափաքինք և Աստուծմէ կխնդրենք որ պարգևէ անոնց ամէն հոգևոր օրհնութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ մտքերնին լուսաւորէ և սրտերնին արդարութեան ոգւով՝ մարդասիրութիւնով և աստուածային սիրով լեցունէ. Ամէն։"

ԿԵ. Այսպէս Մատթէոս Պատրիարք թէև տեսաւ թէ "առաջին" համարած գործը, որ էր Բողոքականութիւնը արմատախիլ ընել ազգին մէջէն, անկարելի էր, և թէ առաւել հաստատուեցաւ, բայց և այսպէս չերևիր թէ փոխեց կերպը, զոր ի վեր անդր (երես 31,32) ստորագրեցաւ։ Պոլիս եղած բաներուն լուրերը հռչակուեցան ի գաւառս, ուր կտարածուէր և Բողոքականութիւնը, հետևապէս պէտք էր գործադրել կոնդակներուն հրամանները, այսինքն նզովել Բողոքականութեան յարողները և կտրել ազգային (գուցէ ոմանք կհասկնային և մարդկային) ամէն տեսակ յարաբերութենէ, որ հետևութիւնն էր առաջնոյն, եթէ ոչ տեսականապէս՝ անշուշտ գործնականապէս։ Եւ որքան տգէտ են գաւառացիք և անկիրթ քան զմայրաքաղաքացիս, և որքան որ կառավարութիւնը թոյլ է կամ անկարգ քան որ է ի Կ. Պոլիս, այնքան առաւել ընդունելութիւն գտան բանադրանաց կոնդակներն ի գաւառս, ուր կրօնական խռովութիւն մ'էր ազգին մէջ փրթէր կերթար։ Մատթէոս Պատրիարք

1848 Հոկտեմբերի մէջ թէպէտ պաշտօնանկ եղաւ և կորոյս անձնական ազդեցութիւնը, սակայն կանէր պաշտօնական գործոց ներգործութիւնը, զոր չերևիր թէ փոխեց յաջորդը Յակոբոս Պատրիարք, մանաւանդ շարունակեալ կերևի նայելով ի գաղափարս նորա, որ ի “բան խրատականի”, հրատարակեալ 1851ին Ուր “Սիրոյն Յիսուսի Քրիստոսի կյորդորեմ, կըսէ, Լուսաւորչեան ազգս Հայոց, որ (Բողոքական) մոլար աղանդապետներէն հեռու փախչիք՝ որպէս ի թունաւոր կարճաց, որոց ամէն մէկը իրենց մտաց կերպ կերպ չար խորհուրդները կատարելու համար, Սուրբ Գրքերէն դուրս ելլելով՝ ինքնահնար վարդապետութիւններ կքարոզեն, և իրենց պէս թուլամորթ մարդիկ հետևող կգտնեն նոյն հոգեկորոյս վարդապետութեանցը:” վասն որոյ “զգուշ լերուք ի խմորոյ սուտ անուն Քրիստոնէից և ի սուտ քարոզութեանց նոցա որ բոլորովին խաբէութիւն է և կեղծաւորութիւն” (Երես 16, 44):

ԿԸ. Այսպիսի նզովից և զգուշութեան արդիւնքը այն եղաւ որ այլ և այլ կերպերով Բողոքականաց մարմնաւոր նեղութիւնները աւելցան, որոց թուի թէ ալ չկրցան դիմանալ, կամ օգտակար համարեցան որ Բողոքական տէրութեանց պաշտպանութեանը դիմեն, որ Բարձրագոյն Դռնէն զատ ժողովուրդ ճանչցուին, քանի որ մինչ 1850 պաշտօնապէս Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան տակն էին: “Յաւուրս Յակոբայ Պատրիարքին, կըսէ Պէրպէրեանի Հայոց պատմութիւնը (երես 307), դեսպանք Ամերիկոյ և Բրուսիոյ հաճեցուցեալ զԲաննիկ (Դեսպանն Անկլիոյ) ընդ իւրեանս խնդրեցին ի Բարձրագոյն Դրանէն շնորհել Բողոքական Հայոց զանկախութիւն զՊատրիարքէն Հայոց: Եւ Բարձրագոյն Դուռն ի շնորհս նոցա անջատեաց զնոսա իբրև որոշ ժողովուրդ, տալով նոցա արքունի հրովարտակաւ զանկախութիւն զՊատրիարքէն Հայոց, և եդև գլուխ նոցա Քէրէստէճեան Ստեփան՝ եղբայր Յակոբայ Պատրիարքին Հայոց. . : Եւ եղաւ պատուանուն սոցա Իֆէնտի կամ Բրոթեսթանդ Էֆէնտիսի:” “Մատթէոս Արքեպիսկոպոսը,” կըսէ Միխոնար մը (պատասխ. Բարի մարդոյ Երես 3), “կրնայ կոչուիլ գլխաւոր կազմակերպող Բրոթեսթանդութեան ի Տաճկաստան, աշխարհածանօթ է իր գործոց պատմութիւնը, որոց հետևանքը եղաւ՝ Աստուածային բարեխնամ տնօրէնութեամբը, Տաճկաստանու մէջ Բրոթեսթանդ եկեղեցեաց ազատութեան և անկախութեան ֆէրման մը՝ Օսմանեան բարեգութ վեհափառ Թագաւորին շնորհիւը: Իր ազգին և եկեղեցւոյն մէջ գտնուող Աւետարանականաց դէմ բռնած ընթացքը՝ եթէ աւելի մեղմ ըլլար, և անոնց դէմ յարուցած հալածանքը՝ եթէ այն աստիճան դառն և անգութ չըլլար, յիրաւի տակաւին պիտի յապաղէր Աւետարանական ազատ (ժողովուրդ) և որոշ եկեղեցի մը կազմուիլը:”

ԿԹ. Աւետաբեր (ի թիւ 157) այս հալածանաց միայն մայրաքաղաքը եղածներուն բովանդակութիւն մը կընէ, ցուցնելու համար, թէ “Բրոթեսթանդները կամովին չզատեցին ինքզինքնին Հայոց ազգէն (վարչութենէն):” “Այս երկրին մէջ տակաւին նոր է շատերուն յիշողութեան մէջ 1846ին դէպքերը, երբ Մատթէոս Պատրիարք . . . իր ազգէն եղող Բրոթեսթանդները զրկեց իրենց քաղաքական արտօնութիւններէն: Առանց իր կամ իշխանութեանը տակն եղող մարդոց հրամանին ոչ կրնային տուն կամ խանութ վարձել՝ ոչ ծախու առնել կամ ծախել, առնելիք չէին կրնար ժողվել. տեղ մը երթալու համար ճամբու անցագիր չէին կրնար առնել, չէին կրնար ամուսնանալ և չէին կրնար ալ իրենց մեռելը թաղել: Մինակ Կ. Պոլիս քաղաքին մէջ խել մը Բրոթեսթանդ Հայեր Պատրիարքին հրամանովը դուրս վռնտուեցան իրենց վարձած տուներէն՝ խանութներէն, և ապրուստի համար գործ մը ընելու արտօնութիւններէն արգելուեցան, ոմանք ալ բանտը նետուեցան, տանելով շատ մը ընտանիք յետին խեղճութեան և գրեթէ մինչև անգամ անօթութենէ մեռնելու վիճակին հասան: Հացագործաց ապսպրուած էր որ Բրոթեսթանդաց հաց չծախեն, ջրկիրներուն ալ՝ որ ջուր չտանին: Շաբաթներով ամիսներով պատսպարելու տեղ և ուտելիք տալին կարեկցութիւն ընող օտարականք այս խեղճ հալածեալ Բրոթեսթանդներուն, զոր իրենց ազգին Պատրիարքը դուրս ձգեր էր անօթութենէ մեռնելու:” Այս բովանդակութիւնը գործադրութիւն կը թուին այն պատժական կանոնին, զոր Սրբազան Պատրիարքը հրատարակել տուած էր երկրորդ յայտարարութեան մէջ 1846ին. կանոն մը, զոր Հայոց ազգային ժողովը 719ին դրած էր ի դարձ Պօղիկեանց, և զոր իրաւամբ գործադրելի է կըսէր և յաղագս Բողոքականաց: “Պօղիկեան (այժմ կարդացուելու էր՝ Բողոքական) կոչուած աղանդաւորները,” կըսէ կանոնը, “մատնիչք են, որոց տուները նստիլ կամ հաղորդակցելով յարաբերութիւն ընել և երթալ գալու պէս բաներ պէտք չէ, այլ բոլորովին պէտք է անոնցմէ հեռանալ, զանոնք խոտել և մերժել. . . եթէ մէկը անոնց հաղորդակցի՝ յարաբերութիւն ընէ և բարեկամութիւն ցուցնէ, այնպիսի մէկը՝ մինչև իր դադարիլ և ուղղափառ դաւանութեան դառնալը, տանջելու և սաստիկ պատժելու է:” Ասոր վերջին նախադասութիւնը կմեղմէ՝ և հոգևոր մօք կառնէ թէև յայտարարու-

թիւնը (երես 16), դէմ զայն գործադրող մարդիկ կերևի թէ մարմնաւոր տանջանք և նեղութիւն հասկցան, որ վերստին գանգատանաց առիթ տուին։

Հ. Զայս ամենայն ի նկատի առնելով չե՞նք ձայնակցիր արդեօք Մուրատեան Մ. վարդապետին հետ խորհելու, թէ «Մատթէոսի բռնած բանադրական ընթացքը խիստ ձեռնտու եղաւ Բողոքական քարոզիչներու նպատակին, վասն զի հալածել՝ կնշանակէ տարածել (և հաստատել)։ Եւ ահա այսպէս մէկ կողմանէ Բողոքական քարոզիչներու (իմա Միսիոնարաց) հետամտութիւնը և Բողոքականութեան յարողներուն թեթևամտութիւնը, և միւս կողմանէ Մատթէոս Պատրիարքի անխոհեմ ընթացքը պատճառ կլլին և մեր եղբայրներէն մի մասն կհեռանայ մայրենի եկեղեցւոյ ծոցէն, և Բողոքականութեան յարելով առանձին (ժողովրդական) հաստատուած մը կկազմէ առանձին ազգապետ մը ընտրելով իւր համար։» (Պատմ. եկեղ. 606)։ Արմաշու միաբանութեան Ցոյն ևս (հատ. Է. 1.), կպարտաւորի խոստովանիլ թէ «Հայերն իրենց բնական եղած միամտութեամբ (կամ կարճատեսութեամբ) չէին կրնար տեսնալ այն խորամանկ (հաստարմատ) հնարքը. զոր Բողոքականք դաւադրեցին (պատրաստած էին). մինչ իսկ Պատրիարքները՝ (թողլով շատ աւելի տգէտ եկեղեցականներն ու բիրտ հասարակութիւնը) միամիտ եղան և բանադրանօք յարձակեցան Հայոց եկեղեցւոյն թշնամեաց դէմ։»

ՀԱ. Հալածեալն Վրթանէս հայրիկ ևս իւր տետրակաց միոյն մէջ զոր հրատարակեց 1868 ին, իւր տեսութիւնը այս բանին վրայ սապէս կբացատրէ։ «Ամերիկացի քարոզիչք,» կըսէ. «Բողոքական աշխարհի Աւետարանին և Քրիստոնէութեան վրայ ունեցած փորձառութիւնը Հայոց ազգին հաղորդած, և այն փորձառութեան իբրև ապացոյց հին և նոր կտակարանները քարոզած և ազգին ընտանի լեզուովն ալ նոյն գրքերը տպած ատեններն, Բողոքական եկեղեցականութիւն մալ քարոզեցին...։ Հայոց եկեղեցին ալ բանադրանաց շանթերը այս բաժանման դէմ յարձակելով ճշմարտանաւոր պատուար մը քաշեց իր և Բողոքական Քրիստոնեայ աշխարհին մէջտեղ, և ասով միանգամայն՝ իր ընելու պարտաւոր եղած բարեկարգութեան դէմ։ Երանի՜ թէ Ամերիկացի քարոզիչք՝ Աւետարանին և Քրիստոնէութեան վրայ ունեցած փորձառութիւններն՝ Հայոց միայն հաղորդել բաւական համարելով, Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեան պատասխանատուութիւնը իրեն թողած ըլլային...։ Եւ (երանի՜ թէ) Հայոց եկեղեցին ալ այս բաժանման

դէմ չբողոքէր և բացարձակ ընդդիմութիւն չընէր որևիցէ բարեկարգութեան դէմ։ Երանի՜ թէ Հայոց եկեղեցին նմանէր (և այժմ կնմանի) այն Բերիացւոց, որ ազնուագոյնք էին՝ քան որ ի Թեսաղոնիկն էին, որք հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ այս այսպէս»։ Եւ իցի՜ւ մենք ևս. որ անցելոց գործերը կը դիտենք, փոխան մարդոց մեղադիր լինելու՝ արդահատէինք ի վերայ տկարութեան մարդոյ, որ կարևոր իրաց մէջ իսկ անսխալ չերևիր շատ զգուշութեամբ հանդերձ։ Հետևապէս անոնց սխալանքէն՝ օգուտ, և փորձառութենէն խրատ հանէինք և ամէն բան քննելով բարին ընդունէինք։»

ԳԼՈՒԽ Գ

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ ԿԱՄ ԿԸ ՄԵՐԺՈՒԻ

ՀԲ. Արդ որպէս զի իրողութեանց հանդիսացումէն հետևութիւն հանել կարենամք և ուրիշ անգամ եղած վնասները ջնջենք կամ օգտի փոխարկենք, պէտք է դիպաց պատճառներուն վերահաս լինել։ Մանաւանդ թէ որպէս զի արդի Հայուն որպիսութեան վրայ ճշգրիտ տեսութիւն մը առնենք՝ պարտիմք խնամով դիտել նորա գաղափարներն ու համոզմունքը, զորս ունի նկատմամբ եկեղեցական խնդրոց, որ, ինչպէս ըսինք (Գ), Հայ մտաց յորձանավայրն է համարելի։ Գաղափարներ՝ որ առիթ են միաբանութեան կամ տարաձայնութեան ազգի, որոյ գոյութիւնը գոդցես եկեղեցական դրութեան վրայ կխարսխի, կամ ինչպէս կըսեն, եկեղեցին է փարախ միութեան Հայ որդւոց։ Եւ որովհետև այսօր Հայաստանեայց եկեղեցին (թողլով պապականութիւնը) յերկուս բաժանեալ ներկայացաւ ի Հանդիսիս, Հայ Լուսաւորչական և Հայ Աւետարանական, կամ Հայաստանեայց և Բողոքականաց, ուստի հարկաւոր կհամարիմք աստ հանդիսացունել պատճառներն, որովք ոմանք կմերժեն զԲողոքականութիւնը և այլք կ'որդեգրեն։ Եւ որով, ինչպէս դիտած էր Հայրենիք «Բողոքականաց թիւը երթալով կտուարանայ» կամ եթէ մեղմելով ըսենք, Բողոքականաց բաժանումը կուէ, և նոցա գաղափարներն յազգայինս կտարածին վեր ի վերոյ տեսնուածէն շատ աւելի։

ՀԳ. Այս պատճառներն կրնան հետևեալ կարգին բաժնուիլ, որք իրարու հետ կապակցութիւն մալ ունին, և ամէնն ի միասին յառաջ կբերեն գործնական հակառակութիւններ։ Արդի դրութիւն֊

ներէ կ'երևի, թէ 1. կարգ մը մարդիկ կան որ Բողոքականութիւնը մոլորութիւն կսեպեն, իսկ կարգ մալ բարեկարգութիւն կհամարին զայն։ 2. կան մարդիկ ազգին մէջ, որ իրենց նուիրական պարտք կհամարին ըստ ամենայնի պաշտպան լինել նախնեաց աւանդութեանց, մինչ շատեր ալ կան որ խոհեմութիւն է կըսեն ամէն բան քննել և բարին ընել։ 3. Ոմանք կկարծեն թէ Լուսաւորչական եկեղեցին ոչինչ ունի փոփոխելի, իսկ ոմանք կցուցնեն թէ կան ուղղելի վարդապետութիւններ և բարւոքելի ծէսեր ու կանոններ։ Եւ անոնք որ եկեղեցւոյ բարեկարգութեան պէտքը կցուցնեն, գործադրութեան մասին կտարաձայնին. զի 4. ոմանք կուզեն կատարել զայն առանց բաժնուելու անկէ, մինչ ոմանք անհնարին կսեպեն այս և կզատուին Լուսաւորչականութենէ, որ ըլլայ թէ մնացողները բարեկարգութեան թելադրեն։ 5. Ազգասիրաց կարգմալ կայ որ կպնդէ թէ ուէ պատճառաւ ազգային եկեղեցիէն բաժնուիլը նշան է ազգատեցութեան և նուաստութեան, որոց կհակառակին կրօնասէրք։ 6. Կան ալ որ կկարծեն թէ Բողոքականք Հայ Քրիստոնէից քարոզիչ խրկելովն հակաքրիստոնէական գործ մը ըրած կըլլան, Մխիթարք ալ՝ զիրենք խրկողներուն պէս շահախնդիր բաներ կընեն. բայց կան ալ որ կհամարին թէ ատով Բողոքականք Քրիստոնէական պարտք մը կատարած կըլլան, Մխիթարք ևս անձնուէր ծառայութիւն կընեն Հայոց։ Եւ ահա այս տարաբանութենէն հետևած են 7 հակառակութիւնք ընդ Լուսաւորչականս և ընդ Բողոքականս։ Այս տարաձայնութիւնք պիտի ըլլան գլխոյս պարունակած խնդիրներն. տեսնենք արդ թէ

1. ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ Է ԿԱՄ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ

Հգ. Մոլորութիւն ըսելով հոս կիմանամք վարդապետութիւն որ անհամաձայն կամ հակառակ է Ս. Գրոց պարզ բացատրութեանց կամ փրկութեան հարկաւոր եղած ողջմտութեանց, որոց բովանդակութիւնը կհամարին ոմանք՝ տիեզերական ժողովոց հաւատոյ դաւանութիւնքը կամ հանգանակը։ Այսպիսի մոլորութիւն ընդունողները ոմանք սովոր են հերձուած կամ հերետիկոս անուանել, որք ըստ Մատթէոս կաթողիկոսի (Բարի մարդ 189) “Առաքելոց քարոզութեանը և վարդապետութեանը յայտնի կհակառակին և դայթակղութիւն կու տան հաւատացելոց։” Դարձեալ ասէ (երես 185) ընդհանրական “ժողովները անոնց կըսէին հերձուած (հերետիկոս) և մոլորեալ, որ Քրիստոնէական Սուրբ հաւատոյ ուղղափառութիւնն Աւետարանական և առաքելական բացայայտ ճշմարտութեան և ուղղափառութեան կհակառակէին։” Այսպիսիք, կըսէ (անդ 187), պէտք է որ “տիեզերական Սուրբ ժողովոյ մէջ ալ քննուին, և երբոր յամառեալ մնան նոյն աղանդին և մոլորութեան մէջ՝ յայնժամ պիտի անուանին իրաւամբ հերձուած և հերետիկոս։” Չը գիտենք թէ Հայք ե՛րբ և ո՛ւր ըրին տիեզերական ժողովը որ քննեն թէ Բողոքականաց վարդապետութիւնքը, որովք կտարբերին իրենցմէ, մոլորական են թէ ողջամիտ. գուցէ Պապականք խմացուցին թէ իրենց Տրիտենդեան տիեզերական (Պապական) ժողովը քններ է Եւրոպիոյ Բողոքականաց վարդապետութիւնքը և մոլորական հրատարակեր, ուստի և Հայք ալ պէտք չէ դժուարութիւն կրեն։ Հետևապէս ոչ միայն Հայ Բողոքականս այլ արևմտեան Բողոքական եկեղեցիս մոլորեալ և հերետիկոս համարեցան քանի մը Պատրիարքունք Կոստանդնուպոլսոյ։ Ուստի հրամանաւ նոցա նզովեցան, մերժուեցան ի հաղորդակցութենէ Քրիստոնէական եկեղեցւոյ, ամենայն Բողոքականք կամ Լուտերականք՝ յատենի Հայաստանեայց եկեղեցւոյ, դէթ որ ի Տաճկաստան (տես Կ—ԿԵ.)։

Հե. Եւ մինչև ցայժմ պակսած չեն պաշտօնեայք եկեղեցւոյ, որ ի դիպել առթի կնզովեն համայն Բողոքական ազինս երկրի. ինչպէս կան և հեղինակներ որ տակաւին նորաղանդութիւն կցուցնեն զԲողոքականութիւն, և մոլորութիւն՝ նոցա վարդապետութիւնքը, որովք կտարբերին Լուսաւորչական դրութենէ։ Այսպիսի հրահանգութեամբ սնեալ ժողովրդոց մէջ ալ դեռ կայ մեծագոյն մաս մը որ բողոքականութիւնը ճանչցած է կորուսիչ մոլորութիւն, զոր ընդունողը կըլլայ աղանդաւոր, հերետիկոս, ֆարմասօն և անհաւատ։ Իսկ ընդ հակառակն՝ յորմէ հետէ մուտ գտած է բողոքականութիւնը ի Տաճկաստան, եղեր են որ նկատեր են զայն բարեփոխութիւն վարդապետութեանց, որք եղծեալ զեղծեալ են առ տգիտութեան, որ փրկութեան ճամբան դժուարացուցեր և բազմաց անկարելի են ըրեր։ Վասն որոյ կընդունին զհամօրէն Բողոքականս կամ Աւետարանական եկեղեցիս որ ոչ միայն անմոլար են ի ճշմարտութենէ, այլ և դիւրընթաց ճանապարհ կյարդարեն փրկութեան, զոր կուտէ շնորհն Աւետարանի, ուր ամենայն պարզութեամբ ցուցուած են Բողոքականաց դաւանածները։ Այս տեսութեան արդինքն է Հայ Աւետարանական եկեղեցւոյ կազմութիւնը, որոյ անդամք կաւելնան ամ ըստ ամէ, ինչպէս կցուցնեն վիճակագիրք։ Այս դաղափարն յառաջ կերթայ ոչ միայն անոնց մէջ որ Բողոքական են կամ կըլլան, այլ և նոյն իսկ Լուսաւորչական եկեղեցւոյ յար-

եալ ազգայնոց մէջ. որք՝ եթէ ոչ արդեամբ գէթ համոզմամբ կմերձենան ի բողոքականութիւն։

ՀԶ. Այսպիսի համոզման մը արդիւնք կրնայ սեպուիլ այն, որ հեղինակաց ոմանք սկսեր են ցուցանել, թէ Եւրոպիոյ և Ամերիկայի Բողոքական եկեղեցիք ևս անդամ են ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի։ Ինչպէս է Մասիս (թիւ 370), որ Քրիստոնեայ անուանեալ եկեղեցեաց «ամէնն ալ, կըսէ, մէկ հիմ և մէկ հիմնական սկզբունք ունին. հաւատոյ էական մասանց և փրկութեան միջոց եղած բաներու մէջ մէկ են... և երևելապէս ալ մի միայն միութեան ամփոփեալ կապը կամ դաշնադրութիւնը ունին, այսինքն Նիկիական հանգանակը։ Միայն մէկ ազգի մը. տեղւոյ մը կամ ժողովոյ մը անունով չճանչցուիր այս ճշմարիտ (ընդհանրական) եկեղեցին, յայտնի ուրացողները մէկդի առնելով՝ Հայ, Յոյն, Պապական, Բողոքական (Լուտերական կամ Բրոթեսթանդ), Ռուս, Գերմանացի, Անգղիացի, Ամերիկացի, Բրուսիացի, Գաղղիացի (են.) անուններով ազգերէ եղող մէկ մը կրնայ նաև անդամ մը եղած ըլլալ Յիսուս Քրիստոսի մի միայն ճշմարիտ եկեղեցւոյն։" Այս նոյն գաղափարը կյայտնեն և այլ հեղինակք, մինչ իսկ Մաղթէոս կաթողիկոս ի Հանդիսարանի (եր. 121, 201) կհաստատէ, թէ «հարկ է ճանաչել, որ բազմութիւն ուղղափառ և բարեպաշտ հաւատացելոց մի են ներքին հաւատքով... թէ և զանազանուած ըլլան, ազգաւ և լեզուաւ, աշխարհաւ և տեղեաւ, ձևով և արարողութեամբ։" "Հայոց Սուրբ եկեղեցին միայն կհերքէ և մերժէ տիեզերական Սուրբ ժողովով հերքեալ և բանադրեալ հերձուածները՝ հերետիկոսները և աղանդաւորները". և որովհետև, ինչպէս վերն ալ բացուեցաւ, Արևմտեան Բողոքական եկեղեցիք մերժեալ չեն ի Տիեզերական ժողովոց, զորս Սրբազանը կընդունի, նոքա ևս "քաղցական անդամք են եկեղեցւոյն Քրիստոսի և խորհրդական մարմին նորա։"

ՀԷ. Բողոքականութեան մօտութիւն մը չըլլալու համոզման ցոյց տալ կրնայ համարուիլ այն, որ ազգայնոց շատերը՝ թէև անդամ Լուսաւորչական եկեղեցւոյն, չեն ընդունիր նորա այն վարդապետութիւնները, զոր և Բողոքականք մերժեր են։ Կան որ հարկաւոր կհամարին վարդապետութեանց ուղղութիւն մը տալ, կան ալ որ արարողութեանց բարեփոխում կուզեն։ Եւ այս փոփոխութեանց հակումը դէպ ի բողոքականութիւն է, ինչպէս կտեսնուի վերջին հեղինակաց գրութիւններէն, որք մի քանի վարդապետութիւններ մանաւանդ բողոքականաց պէս կբացատրեն քան Լուսաւորչական գրութեան ուսուցածին պէս։ Այս ամենայն տեսութիւնք

պէտի հաստատունն յընթացս բանից, ուստի աստ օրինակներ բերել անդէպ կհամարուի։ Բաւ է խորհիլ թէ բողոքականութիւնը ապաքէն կմերժուի ի բազմաց իբր մոլորութիւն. իսկ խորհող մտքեր այլևայլ ցոյցեր կընեն, թէ մոլորութիւն չեն համարեր զայն, թէև չորդեգրեն, և թէ ընդունողներ ալ անպակաս են ընդ միջա։

2. ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼ ԿԱՄ ԲԱՐԵՓՈԽԵԼ

ՀԸ. Թէ ինչ է եկեղեցւոյ մը աւանդութիւնը, զորմէ քանի մը բան պէտք յառաջ բերեմք, շատեր տարբեր բաներ կիմանան։ Քրիստոնէական աւանդութեանց վրայ խօսելով Քննական կրօնագիտութիւն (երես 375, 376), «կիմանամք, կըսէ, անգիր բան Աստուծոյ որ կենդանի ձայնով աւանդուած է եկեղեցւոյ Աստուծոյ... բայց թէ ո՛ւր պէտք է գտնեմք այս աւանդութիւնը... կպատասխանեմք, ի վաղընջական հանգանակին, ի կանոնս Առաքելոց, ի սահմանս և ի կանոնս տիեզերական Ս. ժողովոց, ևս ի խորհրդատետրս, և ի գիրս պաշտամանց վաղեմի եկեղեցւոյ, ի ժամակարգութիւնս աստուածային պաշտամանց, ի կարգս հսկմանց՝ պահոց՝ տօնից և կիրակեից, խորհրդոց և մատակարարութեանց նոցին, են։" Այս սահմանէն կհետևի, թէ մասնաւոր եկեղեցւոյ մը աւանդութիւններն ալ պէտք է համարիմք, անգիր բան անձանց կամ ժողովոց՝ որ հեղինակութիւն ունին եկեղեցւոյ մը հրահանգութիւն տալ, և ատոնք պէտք է գտնուին վերոյիշեալ տեղերն, որ նոյն եկեղեցւոյն կվերաբերի։ Այսպէս կիմացուի նաև Մ. Վ. Սալլանթեանցի խօսքն ալ (Կրօնա. թիւ 45), որ կընէ միայն վարդապետական մասին, "Հայաստանեայց եկեղեցի," կըսէ, "ուսուցանէ որդւոց իւրոց զամենայն ուղղափառութիւն Ա. յԱստուածաշունչ մատենին... Բ. ի սահմանս և ի վճիռս Ս. ժողովոց իւրոց և Գ. ի հաւատապատում գիրս, որք են վեց այսուքիկ՝ Յաճախապատում... Շարական, Ժամագիրք, Խորհրդատետր, Մաշթոց և Ընդհանրական։" Ապա վերասաց գրոց մէջ ինչ վարդապետութիւն և արարողութիւն որ կան՝ աւանդութիւնք են Հայաստանեայց եկեղեցւոյն, զորս ոմանք անփոփոխ և հաստատուն պահելու ջանադիր են, մանաւանդ թէ եկեղեցականք ուխտիւ պարտաւորեալ իսկ։

ՀԹ. Քանզի եպիսկոպոսք ի ձեռնադրութեան իւրեանց ըստ յայտարարութեան կոնդակի Տ. Տ. Գէորգ կաթողիկոսի (Ատենագրութիւն եր. 658) «ուխտեն և երդնուն նախ ի ժողովի եպիսկոպոսաց ի սինոդի առաջի Սրբոյ Խաչի և Աւետարանի, և ապա ի ժա-

մու կոչման յաջողեան եպիսկոպոսութեան … վասն նախանձախնդիր լինելոյ անխախտ պահպանութեան կանոնաց եկեղեցւոյ։» Միջեան կաթողիկոս ալ (ի պարտավճարի երես 230)՝ կու տայ «Օրինակն վկայականին զոր հայրապետն տայ նոր ձեռնադրեցեալ եպիսկոպոսաց,» ուր պայման դրուած է «մինչև ցելս շնչոյն մնալ ի հնազանդութեան մեծի և սրբոյ աթոռոյն Էջմիածնի և ի նմա նստող հայրապետացն, որոց ներհակիցի երբէք ի հաւատս՝ ի գործս՝ ի բանս և ի կամս, և ոչ շեղիցի կերպիւ իւիք ի սրբոյ հաւատոյն՝ ի դաւանութենէն և ի կրօնիցն՝ զորս Ս. աթոռն Էջմիածնի և եկեղեցիք Հայաստանեայց ունին։» Եւ թէ այսու ուխտադրութեամբ կամ պայմանաւ ինչ հասկցուելու է, ի դիպել ատենին այսպէս բացատրել կու տան (անդ երես 203), թէ «խոնարհ կամաւ և յօժարութեամբս յանձն առի և հաւանեցայ հետևիլ ամենայնիւ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ հաւատոյ դաւանութեամբ և եկեղեցական արարողութեամբ, ընդունել որ ինչ հաւատայ և դաւանեայ … Լուսաւորիչն մեր Ս. Գրիգորիոս և որդիք և թոռունք նորա, Ս. Ներսէս Շնորհալին և այլ ամենայն սրբազան և ուղղափառ հայրապետքն և վարդապետքն, որք նոյնն հաւատոյն և դաւանութեանցն հետևեցան և աշակերտեցան մինչև ցայժմ։ Զորոց աւանդեալն և ընկալեալն ունին այսօր ամենայն եկեղեցիք Հայաստանեայց … ուր և լիցեն։ Որոց և ես ամենայնիւ յօժարութեամբ հետևիմ և աշակերտիմ, զհաւատացեալն ի նոցանէ և ես հաւատամ, և զարարեալն ի նոցանէ և ես առնեմ, զօրհնեալն և զընկալեալն ի նոցանէ և ես օրհնեմ և ընդունիմ, և զանիծեալն և զխոտեալն ի նոցանէ և ես անիծեմ և խոտեմ։»

Զ. Գրեթէ սոյն օրինակ կերդնուն և կուխտեն նաև վարդապետք և քահանայք ի ձեռնադրութեան իւրեանց, որ՝ ըստ որում շատ տեղեր յատենի ժողովրդեան կկատարուին, ուստի և ծանօթ հասարակաց, աւելորդ է օրինակել զայս։ Մանաւանդ երբ մտածենք, թէ ազգային սահմանադրութիւնն իսկ, որ քաղաքական կանոնադրութիւն մը կրնայ համարիլ մանաւանդ քան կրօնական, և լուսաւորեալ մտաց ծնունդ է համարելի քան կանոն վաղընջական, կպարտաւորէ կրօնական ժողովը «Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը ու աւանդութիւններն անխախտ պահել … և ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննելով եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել.» (Յօդ. 28)։ Հասարակութեան մէջ մեծագոյն մաս մը կայ, որ լսածնէն և տեսածնէն տարբեր բան մը որ լսեն կամ տեսնեն՝ «օրէնք քակել» «օրէնք կոխկռտել» կհամարին,

վախնալով թէ «որ քակէ ցանկ (աւանդութիւն) հայրենի, խածանիցէ զնա օձն վայրենի։» Այս հնասիրաց ճշգրիտ նկարագիրը կընէ հեղինակ մը հետևեալ բանիւք։ «Անոնք որ այս կուսակցութեան ջերմեռանդներէն են, կռնակնին դարձնելով ապագային դէմ անցեալին վրայ կնային տխուր հայեցուածքով։ Քանի կհեռանան անցեալէն, նորա յոռութիւնները կմոռնան և լաւութիւնքը չափազանց կմեծցունեն։ Ամէն տեսակ փոփոխութիւն ասոնց աչաց դէշ կերևին, ուստի ամենայն ջանքով կաշխատին ընդդէմ կալ նորոգութեանց։ Նոր սովորութեանց և արարից վրայ կվշտանան, և կերկնչին թէ ապագային մէջ շատ մը չարիք պիտի պատահին, զոր կնախատեսեն և կգուշանան։ Իսկ անցեալին սովորութիւնքն ու կացութիւնը՝ սրբազան է յաչս այսպիսեաց, ըստ որում ամէն վաղընջական՝ բան այսպիսիք ի նախնեաց մնացած աւանդ մը կհամարին, թէ փառօք և պատուօք պէտք է պահպանել զանոնք։ Ուստի կսիրեն ամէն հին բան ո՛չ որովհետև ուղիղ է և լաւ, այլ որովհետև նախնական է և հին. սակայն կատեն ամէն նոր բան մի միայն նոր ըլլալուն պատճառաւ։ Այսպիսեաց նշանաբանն է ‹Ամէն հնաւանդ բան զգուշութեամբ պահելու է› հետևապէս անցելոյն թէ ուղիղն և թէ սխալն միանգամայն կփակչին։»

ԶԱ. Այս ծերուկ հնասէրներն հակառակորդ ունին իրենց նորասէր կարգ մը, որք առաջադրած կերևին, ինչպէս կթելադրէ Լուսինեան Էֆէնտի (Օրագ. 469), «Տէքարդայ սկեպտիկեան վարանմամբ բռնադատել ազգային բոլոր (ամէն տեսակ) դրութիւնը. հինը նորակերտել, զաւելին յատել և թերին լրացնել … (զի) Հայոց համար հարկ է մտաւոր յեղափոխութիւն մը, և այս յեղափոխութիւնը նախ Պոլսէն (գաւառացականներէն մանաւանդ) պիտի կայծանէ և գաւառները ճարակէ։ Այս նորասիրութիւնը օրուան կուռքն է, երախայ ազգաց շողշողուն պաճուճապատանքը, և նորը սիրելը միշտ նորը կերտելու մէկ խթանն է։» Եւ այս բնական արդիւնք է այն յուզման՝ յորում կայ դարուս Հայն, ինչպէս ստորագրեցաւ Յառաջաբանի (գլ. Ա. 1.), և այնքան սրընթաց և համատարած, որքան հզօր է այն յուզումն և ընդհանրական։ Զոր տեսեալ Պարոն Վրոյրի իւր «Հայկական Նամականիին» մէջ (երես 4) Հայը երկու կուսակցութեան կբաժնէ — Հնասէր և Նորասէր անուամբ. նոքա, կըսէ, կուզեն ամէն հին բան պահպանել, և սոքա ամէն բան փոփոխել։ Ուրիշ հեղինակ մալ կստորագրէ նորասէրները իբր այնպիսիք, որ «կռնակնին դարձուցեր են ընդդէմ անցելոյն, ուր նայիլ անգամ չեն ուզեր, մանաւանդ կուզեն բոլորովին

ազատ մնալ նորա ազդեցութիւններէն: Նախնեաց խորհրդոյը երբէք կարևորութիւն չեն տար, և չեն յարգեր նոցա ջանից և քրտանց արդասիքը. նոցա թերութիւնները կծաղրեն և տկարութիւնին կայպանեն: Ասոնց գործն է քակել, և ըստ տեսութեան իւրեանց չիք ինչ նախնական որ պէտք չունենայ փոփոխութեան, ուստի սոցա նշանաբանն է ‹Ջնջել ո և է հին բան›:"

ՁԲ. Ցեղափոխութեանց այս ծայրայեղութիւնը չկրնար մեզ անբացատրելի եթէ նկատուի որպիսութիւնն աւանդութեան, զոր բաղումք ուխտած են «անխախտ պահպանել", և որով հարկաւ կզայրացունեն ընդդիմաբանից կիրքերն, որ կաղդէ և խորհրդոյ: Աւանդութիւնը կրնայ նկատուիլ իբրև դաւանութիւն քրիստոնէական վարդապետութեանց, իբրև կանոնադրութիւն կրօնականի վերաբերեալ գործոց, և իբր ծէս եկեղեցական պաշտամանց: Ո՞ր պատմագէտ է որ չգիտեր թէ Հայ վարդապետք և հայրապետք այնքան տարաձայն են իրարմէ, որ մինչ մէկը զմիւսը նզովեր է և մերժեր իբրև հերձուածող, մինչ իսկ գաւառական ժողովներ քանի քանի անգամ ելեր են իրարու դէմ, ասոնց ոմանք ալ այնքան մթախօս են և խրթնաբան մինչ ի կարևոր համարեալ վարդապետութիւնս, որ անոնց խօսքերէն Մխիթարեանք պապականութիւն կհանեն, և Հայք՝ նորա հերքումը: Ո՞ր կրօնագէտ է որ չտեսներ մեծ թերութիւն նախնեաց աստուածաբանութեան մէջ, և սխալ բացատրութիւն՝ ի վարդապետութիւնս նոցա: Թողլով հիները օրինակ մը բերենք արդի երկու երևելի եպիսկոպոսաց տեսութիւնը:

ՁԳ. Միքայէլ Վ. Սալլանթեան 1831ին ի Մոսկուա տպեալ "Կրօնագիտութեան" մէջ ընդարձակօրէն կհաստատէ, թէ կայ "աներևոյթ եկեղեցի, զոր կանխաւ Մեծն Բարսեղ և այլք բաղումք յետ նորա, որպէս և Շնորհալին մեր, ծանեան և ուսուցին: Աներևոյթ, կամ ըստ Շնորհալւոյն իմանալի եկեղեցին այն է, որ բաղկանայ յաներևոյթ անդամոց և ի ներքին կամ յաներևոյթ կերպէ, այսինքն է ընկերութիւն այն սուրբ և ընտրեալ քրիստոնէից՝ որք ուղղափառ հաւատով և ճշմարիտ սիրով միանան ընդ Աստուծոյ և ընդ միմեանս: Գոյութիւն և հանգամանք այսր եկեղեցւոյ, զոր Լատինք ուրանան, քաջ ապացուցանի Ա. յանստեղի բանից Ս. Գրոց: Բ. Ապացուցանի ի գոյութենէ աներևոյթ անդամոց և աներևոյթ կերպին, իբր զի եթէ գոն աներևոյթ անդամք և կերպ, ապա և գոյ աներևոյթ եկեղեցի՝ բաղադրեալ ի նոցունց: Գ. Ապացուցանի յայնմանէ զի ի հանգանակս հաւատոյ՝ յառաքելոց և ի ժողովոց յօրինեալս, եդեալ կայ բանս ‹Հաւատամք ի սուրբ եկեղեցին›. իսկ արդ երևելի եկեղեցին ոչ է հաւատալի, այլ զգալի և տեսանելի, ըստ որում հաւատքն ոչ է զերևելեաց այլ զաներևութից: Ապա ուրեմն գոյ աներևոյթ եկեղեցի, որում քրիստոնեայք հաւատան և զոր՝ իբրև մասն հաւատոյ, դաւանին ի հանգանակի". (Թիւ 102, 103):

ՁԴ. Մատթէոս արքեպիսկոպոս ալ ի Կ. Պոլիս 1854ին հրատարակեալ Համդխարանին մէջ կուսուցանէ, թէ "Նիկիական հանգանակին ‹Հաւատամք և ի մի միայն . . . եկեղեցի› խոստովանութեան բանը՝ նորադաւանները իրենց մոլորական դրութեան իբրև նպաստ առնելով չափազանց ասելով, թէ հաւատքը երևելի և տեսանելի բանի մը համար չէ, այլ անտեսանելի և աներևոյթ բաներուն համար պէտք է հաւատքը . . . Ուրեմն, կըսեն, եկեղեցին ալ աներևոյթ կըսուի և է: Ո՛վ կուրութիւն հոգւոր և մոլորութիւն չարաչար: . . . Եւ որովհետև պարտաւոր ենք նորադաւանից չարաչար և տեսակ տեսակ մոլորական դրութիւնը քամահելով և անարգելով հերքել . . . մեր եկեղեցւոյ բարեպաշտները կզգուշացնեմք այնպիսի մոլորութիւններէն: Վասն որոյ եթէ ազգիս մէջ ուղղափառ կարծուած անձանց մէկը թէ աշխարհական ըլլայ և թէ եկեղեցական (թէ՛ վարդապետ և թէ եպիսկոպոս—ինչպիսի է Սալլանթեանն, միաբան Ս. Էջմիածնի և դասատու աստուածաբանութեան) նորադաւանից գլխահնար որոգայթին մէջ ինկած քարոզէ և ուսուցանէ, թէ աներևոյթ կամ անտեսանելի եկեղեցի կայ, որում քրիստոնեայք կհաւատան, և իբր մասն հաւատոյ կդաւանին Նիկիական հանգանակին մէջ, այնպիսի անձը (թէև մեռած ըլլայ) և նորին քարոզութիւնը ի միասին՝ նորադաւանից հետևող ճանաչելով կհերքեմք (կնզովեմք) մեք ուղղափառքս իրենց աղանդապետ չարամիտ հեղինակին հետ:" (Երես 122, 127):

ՁԵ. Այսպիսի շատ մը հակադրութիւններ կգտնուին ի Հայս աւանդեալ դաւանութեանց մէջ, որ կարի զգուշանալի են քան զկանոնս, զոր շատ անգամ փոխեր և հինը կոխտեր են: Եւ ո՞վ չգիտեր թէ անոնք շատ թերի են և իրարու հակառակ իսկ. մինչ օրէնսդէտ մը կհամարձակի ամէն տեսակ կանոնաց համար ըսել, ինչ որ կըսէ Հմայեակ վարդապետ (Լոյս շրջ. Դ. 3) յաղագս "Ամուսնական խնդրոյ", թէ "խնդիրն երբ առն և կնոջ պոռնկութեան վրայ կը յանգի, նոյն իսկ (Հայաստանեայց) եկեղեցին որոշ օրէնք մը չահմաներ . . . այս տեսակ պարագայից մէջ Ազգ. Պատրիարքարանը մերթ ամուսնութեան հրաման կու տայ նախորդ Պատրիարքաց ոմանց օրինակին հետևելով, և մերթ կարգիլէ դարձեալ նախորդ Պատրիարքաց ոմանց արգիլած օրինակները յիշատակելով: . . .

(իրողութիւնը) խոնարհաբար կներկայացունենք Ս. Էջմիածնայ նախամեծար Մայր աթոռոյ Ս. Հայրապետին, որ իւր Սուրբ սինոդովը դարման մը խորհիլ բարեհաճի, և ամսանութեան նկատմամբ կատարեալ և անթերի կանոնագիր մը հրատարակէ։" Աւանդեալ ո՞ր կանոնն է զոր երբ գործադրել պէտք եղեր է իւր մթութեամբը և անորոշութեամբը տարաձայնութեանց և կռուոյ առիթ տուած չէ։ Քանի՞ տարի անցաւ և քանի ընդհ. ժողովոյ նիստեր եղան մինչև որ կրցան որոշման մը գալ թէ ինչ օրինօք ընտրելի են կաթողիկոսունք Սսոյ, Աղթամարայ, և Պատրիարքն Երուսաղեմի։ "Եկեղեցւոյ կանոններն ու վճիռներն իսկ, կըսէ փախաղեան Ս. Էֆէնտի (Ատենագ. երես 754), զորս եկեղեցին դրեր է, ի վերջոյ երբ հարկը պահանջեր է փոփոխուեր են եկեղեցւոյ նոր ժողովներուն միջոցաւ։ Ջանք մը կայ մեր մէջ (ի վաղուց անտի) հիմնական կարգադրութիւն մը ընելու, որ անյեղլի լինի. ապագային իշխելու խորհուրդներ կան . . . ո՞վ կրնայ պնդել թէ այս հեռատես նըկատումներն և հաշիւները ճշգրիտ են և անվրիպելի, և թէ նոյն իսկ այս աւուր փրկաւէտ համարուած միջոցներն վաղը ինչ պիտի համարուին։" Ասոր ցաւալի ապացոյց է Ազգ. սահմանադրութիւնը որ տրուած ատենն, ան ալ շատ մը փորձառու մարդոց տեսութեամբ, պիտի փրկէր ազգը յամենայն անկարգութեանց, իսկ փորձը հակառակը ցուցուց, ինչպէս պիտի տեսնենք վարը (ՃԿԳ-ՃԿԶ)։

ԶԶ. Եւ եթէ խոհական մարդոց փորձառու մէկ կանոնագրութիւնը այնքան կասկածելի եղաւ որ Խրիմեան Հայրիկ հրաժարեցաւ ուխտել նորա տառին գործադրութիւնը, ի՞նչպէս կիշխեն այք երդնուլ որ անխախտ պահեն եկեղեցւոյ կանոններն, որ վաղ ժամանակաց և ոմանք անփորձ մտաց անորոշ արդիւնք են։ Եւ երբ տեսնեն թէ մեծամասնութիւն մը կայ, որ աւանդութեանց պաշտպան կենալ կուզէ յանդէտս կամ յամառութեամբ, լուսաւորեալ մտքեր կրնա՞ն ատոր հանդուրժել, մանաւանդ երբ տեսնեն թէ իրենց ազատութիւններն ալ պիտի կաշկանդուին այն մաղէ չուանով։ Եթէ անցեալը ներկայիս նախնին է, և կուզէ սորա վերայ տիրել, ո՛չ ապաքէն և ներկայն ապագային նախնին պիտի ըլլայ. եթէ այն նախկինն պարտք և արտօնութիւն ունէր գործել վասն իւր և վասն ապառնոյն, ինչ որ իւր փորձառութիւնը կուսուցանէր. ինչո՞ւ այս նախկին ըլլալքն ալ նոյնը չպիտի ընէ։ Մանաւանդ որ Հայաստանեայց եկեղեցին բաց ի Տիեզերական ժողովոց անսխալ հեղինակութիւն չճանաչեր, ուրեմն նախնի Հայք՝ առանձինն և միաբանաբար սխալական են. և եթէ սխալական՝ ապա սրբագրելի են նոցա ամէն

գործերն և չեն պարտաւորիչ արեանց, մինչև որ նոցա ուղղութիւնըն ու օգտակարութիւնը չտեսնուին։

ԶԷ. Եւ ահա այսպիսի խորհրդածութիւններով Ազգին մէջ շատեր կան, որ ծայրայեղութիւններէն խուշելով սկզբունք ըրած կերևին ամէն բան փորձել և բարին բռնել։ Ասոնք կձայնակցին Աւետաբերի (1877 ի 36), և կըսեն թէ "կուրօրէն ընդունելու չենք նախնեաց բոլոր կարծիքները և վարդապետութիւնները առանց քննելու զանոնք զգուշութեամբ, թէ արդեօք ճշմարիտ են թէ սխալ։ Որչափ և հանճարեղ ու անկեղծ ըլլան մեր նախնիք, սխալելի մարդիկ էին, ուստի չենք կրնար անոնց կարծիքները և վարդապետութիւնները ընդունիլ իբրև անսխալ պատգամ Աստուծոյ . . ։ Իւրաքանչիւր դար բան մը կաւելցունէ մարդկային տեղեկութեանց գանձուն վրայ. իւրաքանչիւր սերունդ իր հետազօտութիւններովը նոր ճշմարտութիւններ կգտնէ, և կամ աւելի կատարեալ կերպով կպարզացունէ և կլուսաւորէ արդէն ճանչցուած ճշմարտութիւնները։ Եթէ աշխարհք յամառութեամբ բռնէր ինչ որ նախնիք կորվեցընէին, ամենևին յառաջադիմութիւն պիտի չըլլար ապագային մէջ . . ։ Անցելոյն մէջ կան մոլորութիւններ, ինչպէս նաև ճշմարտութիւններ, և ներկայն ապաստանարան ըլլալու չէ այն մոլորութեանց։ Որչափ դարեր որ մոլորութիւնները ընդունուեցան իբրև ճշմարտութիւն, անոնք ճշմարտութիւն չեղան՝ դեռ մոլորութիւն են, և փնտռուելու՝ ի յայտ ածուելու և իբրև չար մերժուելու են։ Անոնց հետևանքը չար են՝ և ջանալու ենք զմեզ անոնցմէ բոլորովին ազատել։ Այս սկզբունքը գործադրելի է մարդկային գիտութեանց ամէն ճիւղին համար. քաղաքական՝ աշխարհականական և եկեղեցական ամէն տեսակ կարգաց և սովորութեանց համար։"

ԶԸ. Այսպէս խորհող մարդոցմէ ոմանք տրամադիր են ընդունելու բողոքականութիւնը, որ աւանդապահաց պէս ոչ հինը սրբազան կհամարի և ո՛չ նորը պատուական՝ միայն հին կամ նոր ըլլալուն համար։ Այլ կառնու Ս. Գիրքը մէկ ձեռքը և բանականութիւնը ի միւսը, կկշռէ ամէն վարդապետութիւն՝ կանոն և ծէս և որը որ ուղիղ կգտնէ և օգտակար՝ կորդեգրէ, իսկ ինչ որ սխալ և անշահ՝ կմերժէ, որմէ ալ որ հաստատեալ և առաջարկեալ ըլլայ։ Իսկ ո՛չ նորաւէրները և ո՛չ հնաւէրները յարմարութիւն ունին բողոքականութեան զի նա ամէն բանի, գուցէ և Ս. Գրոց դէմ կբողոքէ, և սա ամէն բան պահել կուզէ, մինչ իսկ վնասակար արարողութիւններն ու ծէսերը, որովհետև ի նախնեաց այնպէս է դտեր։ Սիրելի է այսպիսեաց հայրերնուն գնացած ճամբէն քալել, որ դիւրին կթուի

մեզի մնաց. այնպիսեաց ալ՝ դնել ընդ անկոխ ճանապարհ, որ կորուկ կսեպեն և կորովամտութեան գործ։ Եւ սակայն նկատելի է թէ տարուէ տարի կպակասին աւանդապահներն, որ ազգին մեծամասնութիւնն են. ծանրագլուխները կմնան միջակայնոց հետ, և բողոքականութեան կըլլան տրամադիր, իսկ կարի աշխոյժները կանգնին՝ կերթան կխառնուին նորասիրաց հետ, որք, թերևս առաջնոց չափ, կհեռանան բողոքականութենէ։ Եւ այսպէս երկու ծայրերը գտնուողներն ալ կմերժեն զբողոքականութիւնը, տարբեր ուղղութեամբ և հակառակ համոզմամբ, որոյ դուցէ դեռ վերահաս չէ հնասէրը և զնորասէրն իրեն աջակից կսեպէ, մինչ հակառակորդն է։

Յ. ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՐՕՏ Է ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՈՉ

Զթ. Թուի թէ անոնք որ պաշտպան են Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդութեանց՝ այնպիսի հաշտ (կամ դոյզ) աչօք կնային նորա դաւանութեան՝ կանոնաց և ծիսից վրայ, որ զանոնք կհամարին անթերի և պարագայից ամենայարմար, հետևապէս անկարօտ որևիցէ բարեփոխութեան. կերևի ևս թէ անոնցմէ ոմանք իրենց սկզբան անհամաձայն կհամարին որ զանոնք թերի կամ սխալ ցուցնեն, քանի որ երդմնցեր են հաւատարիմ աւանդապահ լինել նոցա, անսխալ և անայլայլելի բանի մը պէս։ Ոմանք ալ դուցէ կվախեն թէ հակառակորդաց բերանը փաստ դրած կըլլան՝ եթէ, Եկեղեցին թերութիւններ և բարեփոխելի բաներ ունի, ըսեն, և թէ, եթէ անգամ մը քանի մը բան բարեփոխելու թոյլ որ տան, թումբը կճեղքի և ալ բարենորոգմանց հեղեղին առջևը չեն կրնար առնուլ։ Անոնցմէ ոմանք ալ, որպէս թէ իրենց գիտցածն ուրիշ մը չգիտեր, մեծամեծ գովեստներ կու տան Լուսաւորչական եկեղեցւոյ արդի դրութեան, ինչպէս ըրած է Հանդիսարանը, և ինչպէս կընեն Յոյս և Լոյս հանդէսները։ Քննական կրօնագիտութիւնն ալ (եր. 392), “Հայոց եկեղեցին չդաւանիր, կըսէ, ինչ որ Ս. Գիրք չեն սորվեցուներ, ոչ ալ կքարոզէ ինչ որ անոնց օտար կամ հակառակ է։ Հայոց եկեղեցին սուրբ է, (և ըստ Հանդիսարանի անմեղ և անարատ), վասն զի մկրտութեամբ սրբեալ է ի սկզբնական մեղաց . . . ։ Հայոց եկեղեցին կաթողիկէ՝ ընդհանրական . . . և առաքելական է, վասն զի եկեղեցւոյ դանձուն աւանդեալ առաքելական գրոց և վարդապետութեանց ըստ ամենայն մասանց հպատակ և հնազանդ է մինչև ցդրակէտն և նշանախեցն։” Յովհաննէս վարդապետ Փափազեանն ալ առ Ակնցի Բողոքականս գրած յորդորակը (տես Ակնցւոց “պա-

տասխանի” տետրակին մէջ) Լուսաւորչական եկեղեցին կցուցնէ “ուղղափառ . . . անսխալ և ճշմարիտ . . . առաքելական դաւանութեանց վերայ շինեալ. որոյ հեղինակը Ս. Հոգին է և հիմը Քրիստոս . . . արարողութեան ո՛չ մէկ բանը հակառակ Ս. Գրոց և առաքելական վարդապետութեանց ու կանոնաց . . . որ չունի սխալմունք կամ ստութիւն մը . . . մաքուր և անբիծ (և վերջապէս թէ) Հայաստանեայց Ս. եկեղեցին մազի մը չափ շեղած չէ՝ առաքելական և ընտիր վկայեալ հայրապետաց դրութենէն։” Նկարագիր մը որուն հաւատացողները կմեղանչեն եթէ բարեփոխութեան վրայ խորհին անգամ, չէ թէ հաւանին բարենորոգմանց առաջարկութեան։

Դ. Այս վստահ սրտերն ու մտքերը կարծեն թէ Լուսաւորչականութիւնը գովելով կպայծառանայ, և ուրիշ եկեղեցիք քամահուելով խորշելի կըլլան՝ դէմ Լուսաւորչականաց, որ անոնց չհետևին։ Ուստի այնպէս կստորագրեն Պապական եկեղեցին որ Քրիստոնէական հակապատկերը կերևի, ուր ամենայաջող կերևի Տ. Սահակ Տ. Սարգիսեան ի քննական կրօնագիտութեան։ Հանդիսարանն ու Բարի Սերմն ալ, ինչպէս և Հմայեակ Վարդապետ Դիմաքսեանն, որք արատ չեն թողուր որ բողոքականութեան վրայ չդնեն և մուր չմնար որ նորա պատկերին վրայ չքսեն։ Թողունք Յոյն և Ասորի եկեղեցեաց վրայ նախնեաց ըսածները, որ մեր բանից սահմանէն դուրս է, և արդէք նոցա հետ գործ ունեցած չեն, որ տեսնէինք թէ ի՞նչ պիտի ըսէին։ Եւ եթէ տիեզերական եկեղեցւոյ մէջ մի միայն Լուս. եկեղեցւոյ այնպէս անսխալ՝ անմոլար և սուրբ ու անարատ մնալուն եզական պատճառը հարցուի, “վասն զի, կպատասխանէ Հանդիսարանը (երես 68, 259), ասոր համար յատուկ արժանահայց մաղթանք և աղօթք ըրած է բազմերախտ քահանայապետն և Լուսաւորիչն մեր Ս. Գրիգորիոս։” Մինչ Ս. Աւետարանի ընթերցողաց յայտնի է թէ Քրիստոս ալ վասն եկեղեցւոյ իւրոյ արժանահայց աղօթք մատոյց առ Հայրն (Յովհ. ԺԷ), բայց և այնպէս ծանոյց, թէ սուտ քրիստոսներ, սուտ մարգարէներ, գող և աւազակներ պիտի դան և շատերը պիտի մոլորեցունեն. (տես Մատ. ԻԴ. 24. 25։ Մարկ. ԺԳ. 6։ Յովհ. Ժ. 1)։ Եւ թէ նոյն իսկ առաքելոց ժամանակները եղան մոլորեցուցիչներ և նեռեր, որք զեկեղեցին խռովեցին և կործանական բաներ ուսուցին, որոց հետևողք ալ պիտի չպակասին ապագայ դարուց մէջ, ըսին նոյն իսկ Առաքեալք (Բ Թես. Բ. 4։ Ա Յովհ. Բ. 18)։ Բայց եթէ մէկը այնքան միամիտ ըլլայ որ հաւատայ թէ ամենայն եկեղեցիք մոլորեալ և խանգարեալ են բայց ի Լուս. եկեղեցւոյն, այնպիսին եթէ “թողու իրեն Ս. եկեղեցին և

բաժանի, զատուի անոր աստուածային և հոգևոր հաղորդակցութենէն, ան մարդը թէ որ ընաւ մեղք մը չունենայ՝ և սուրբ սիրտ ունենայ, այս իրեն Ս. եկեղեցւոյն հետ ունեցած առնչութիւնը և թշնամութիւնը բաւական աններելի մեղք է" (Հանդէս երես 206)։

ԴԱ. Նկատելի է թէ Լուս. դրութեան պաշտպանաց նոյն իսկ այս ծայրայեղ ջանքն էր, որ առիթ տուաւ բաժնելու Բողոքականաց, զոր ընդունողները յայտարարեցին թէ Լուս. եկեղեցին կարօտ է բարեկարգութեան, ինչպէս տեսաք իւր անդր (ԾԱ. ԾԲ. ԿԷ.)։ Բարեկարգութեան, որոյ գործադիրք և պաշտպանք պէտք էր ըլլային եկեղեցականք, որք ընդհակառակն «բարեկարգութիւն բառը անգամ գոգցես կխափեն բերան առնելէ, իբր թէ քրէական յանցանք մը եղած ըլլայ՝ ժողովրդեան հին և հաստատեալ սովորութեանցը դէմ" (ԺԳ)։ Ակնցի Բողոքականք ալ գրեցին ի պատասխանի Յովհաննէս վարդապետի Յորդորակին, թէ «յորմէ հետէ կարդացեր ենք Յորդորակը՝ կարի ներդործեալ ենք սա խորհրդէն թէ, եթէ այն անձը իսկ, զոր կրօնագէտ կհամարէինք ՝եկեղեցին մաղ մը շեղած չէ առաքելական դրութենէ՝ կըսէ, հապա ադէտն ի՞նչ պիտի ընէ։ Եւ եթէ անոնք որ եկեղեցւոյն բարեկարգիչք (պարտին) ըլլալ, այնպէս կդատեն, ալ ո՞րքան պիտի յապադի շատերուն փափաքելի եղած եկեղեցական բարեկարգութիւնը։" (Պատաս. երես 12)։ Բարեկարգութիւն աղաղակողները միայն Բողոքական եղողները չեն, ազգին մէջ բազմաթիւ անձինք կան որք կըողբեն ամենայն տեսակ եկեղեցական ջեղծմանց որ ի բանս և յարարս, սակայն ասոնց առ հասարակ անլսող է եկեղեցական դասը, յորմէ կախեալ կայ գործը մեծապէս։ Բայց զի մի կարծիցի թէ համայն եկեղեցականք նոյն հնասիրաց կարգէն են, պէտք է նկատել թէ անոնցմէ ոմանք այլեայլ կերպով կաշխատին վասն բարեփոխութեան, զոր կփնտռէ Վահան վարդապետ (Հայրենիք 277) «Դեռ երէկ եկեղեցին բարեկարգելու խօսքեր կըսուէր եկեղեցականներէ անգամ" կըսէ ցաւ ի սիրտ։

ԴԲ. Այս բարեկարգութիւն ուզողներուն մտաց ճշդիւ չենք կըրնար թափանցել և գիտել թէ ինչ տեսակ և ո՞րքան փոփոխութիւն կուզեն յեկեղեցական կրս, բայց ըստ որում ցարդ ըսածներէն յայտնապէս նախորդ խնդրոյն մէջ (ՁԱ) նորասիրաց վրայ դիտուածներէն կերևի, թէ ազգայնոց մէջ կայ սկզբան և համոզման տարբերութիւն, հարկաւ տարբեր պիտի ըլլան և նոցա պահանջած բարենորոգմունք։ Միայն այսքանս յայտնի է թէ այսպիսիք այնպէս չեն համարիր Լուսաւորչական եկեղեցւոյ դրութիւնը ինչպէս որ

վերը նկարագրեցին եկեղեցականք ոմանք (ՁԹ. Դ.), ինչպէս կերևի յատենի ընդհանուր ժողովոյ եղած ատենախօսութիւններէն, թողլով ի Լրագիրս եղած հրատարակութիւնս։ «Դիլիչեմ," կըսէ, Աղաբեկեան Մ. էֆէնտի, «որ երբ հոգելոյս Մատթէոս Սրբազանը կաթողիկոս կընտրուի, (Պոլսոյ) Գերագոյն ժողովը կգումարուի. բրօթօգօլ մը կլինէ, առաջարկութիւններ կընէ . . . որոց երկրորդը այն էր որ մի ժողով կազմուի Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեանը համար, ինչ որ եկամուտ և օտար է և մեր եկեղեցւոյ մէջ սպրդեր մտեր է, դուրս ելլէ, և ինչ որ մեր եկեղեցւոյ յատուկ է և հարազատ՝ ներս մնայ նորէն։" Նոյնը վերջապէս կըսէ, Էջմիածին «երկու պատգամաւոր խրկենք և գիտնանք թէ այս օր աշխարհիս երեսը իբր Քրիստոնեայ ժողովուրդ ինչ եմք մեք. (իմա՛ ինչ օրէնք և կանոն ունիմք), և մեր վիճակին դարման մը բերեմք" բարւոքելով զայն (Արձանագ. 751)։

ԴԳ. Նշանաւոր է բարեկարգութեան մասին նաև Լուսաւորչեան ընկերութեան ջանքերն, որով հրատարակեցաւ «Պատկեր Հայաստանեայց Լուս. եկեղեցւոյ" գիրքը, և պաշտօնապէս ի Պատրիարքարանէ արգիլեցաւ նորա ընթերցումը, թէև վերջերս լուած բան չէր պաշտօնական արգելք դնել գրքի մը, մինչ իսկ անհաւատութիւն և անբարոյականութիւն պարունակող գրութեանց։ Այս ընկերութեան վրայ Մանզումէ (ի թիւ 193) հրատարակեց, թէ «ազգային եկեղեցին բարեկարգելով իր հին և պարզ վիճակին վերածելու նպատակաւ՝ ազգին մէջ գաղտնի խորհուրդներ կըլլան, և հազարաւոր անձինք աս գաղափարին համամիտ են։ . . . Մեզի այնպէս կերևի թէ, եթէ այնպիսի գործի մը իրօք ձեռնարկուելով հրապարակաւ գործադրութեան սկսուի, կրնանք ըսել թէ երիտասարդաց մէջ այն գաղափարին արդեամբ եւ գոլութեամբ գործակից չեղող շատ քիչ մարդ պիտի գտնուի։ . . . Այս ընկերութեան նպատակը՝ Հռովմէական, Բողոքական եւ կամ Յոյն եկեղեցւոյ հետ միանալ չէ, այլ՝ օտար եկեղեցիներէ յետոյ մուտ գտած շատ մը աւելորդ արարողութիւններ բուն մեր Լուսաւորչական եկեղեցւոյն մէջէն վերցնելով՝ ազգային եկեղեցին իր հին պարզ վիճակին վերածել, հոգևոր կամ եկեղեցական վարչութիւնը մարմնաւորէն կամ քաղաքականէն զատելով՝ ազգը այժմու հոգեւոր եւ մարմնաւորէ խառն, ինչ ըլլալն անյայտ կործանիչ վարչութենէն ազատել է։" Արսլանեան Ստեփան փաշա ալ ի վեր կհանէ գաղտնիք մը, թէ «Պօղոս Պատրիարքի օրով Լուսաւորչեան անուն աղանդ մը երևան ելած էր մայրաքաղաքիս մէջ . . . ասոնք

առաջարկութիւն կընեն եղեր Ազթամարայ Խաչատուր եպիսկոպոսին իրենց գլուխ ըլլալ եւ նոր եկեղեցի մը կազմել՝ խոստանալով ընդունիլ զինքը իբրեւ կաթողիկոս". (Արձանագ. երես 833)։

ԴԴ. Եւ ահա ոմանց բարեկարգութեանց դէմ դուռն փակելու ջանքերն և ոմանց զայն կատարելու փոյթերն կպատրաստեն զմիտս ընդունելու կամ մերժելու բողոքականութիւնը։ Քանզի ոմանք միամտաբար կհաւատան այն չափազանց գովասանութեանց որ կտրուի Լուսաւորչական դրութեան, եւ ոմանք կյուսան թէ մերձ է նորա բարեփոխութեան օրերն, ուստի չեն թողուր զայն։ Մինչ իսկ կը մեղադրեն զԲողոքականս որ՝ ըստ ոմանց Լուս. դրութիւնը յանիրաւի խանգարեալ կհամարին և կքննեն, և ըստ այլոց կաճապարեն՝ չեն սպասեր նորա բարենորոգման և կթողուն զնա։ Սակայն այն անձինք որ կխեղեն թէ Լուս. դրութիւնը հարկաւորապէս կարօտ է վերանորոգման և պէտք ըլլալիք ջանքերը չեն լինիր, մանաւանդ թէ հակառակութիւն իսկ կենալով յուսալի չէ թէ ալ ալ եկեղեցին յաջողի այդ բարեփոխութեան, կբաժնուին անկէ իրօք եւ կճանչնուին Բողոքական։ Իսկ ոմանք եւս իրօք չեն բաժնուիր անկէ, թէ եւ համոզմամբ կան բաժանեալ, ու կմնան այն դասուն մէջ, որք դեռ կաշխատին նորա բարեկարգութեան կերպիւ իւիք։ Եւ այս կերպին գլխաւոր ուղղութիւններն են

4. ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ԱՆՈՐ ՄԷՋ ՄՆԱԼՈՎ ԿԱՄ ԱՆԿԷ ԶԱՏՈՒԵԼՈՎ

ԴԵ. Հոս չպիտի խօսիմք այն կարգի անձանց վրայ՝ որ եկեղեցւոյ բարեկարգութեան մասին ջանք մը չունին, այլ իրենց համոզմանը համեմատ կամ աւանդապահ են, կամ այլոց ձեռամբ լինելի բարեկարգութեան ակնկալու, կամ անհոգ եւ անփոյթ բարենորոգման կամ այն օրինակ վիճակի մը մէջ։ Զպիտի խօսինք և այն ծայրայեղ նորասիրաց ոմանց վրայ, որոց բարեփոխութիւն ըսածը՝ ըստ դիտողութեան Վահան վարդապետի (Հայրենիք 297) *գաղղիացւոց երբեմն ընդունած բնապաշտութիւնն ըլլալու է, որ եկեղեցին քակել՝ վերցունել կըլլայ չէ թէ նորոգել։ Ոչ ալ կխօսինք այն տեսակ ջանից վրայ որ ազգը ուրիշ, զոր օրինակ Պապական կամ Բողոքական եկեղեցւոյ մը հետ խառնելու կծառայէ, որ եկեղեցափոխութիւն յաւէտ աւելի է քան բարեփոխութիւն։ Այլ կխօսինք յաղագս բարեկարգութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ըստ բացատրութեան Եղնակեան Վրթանէս Հօր, "կրօնափոխութիւնը բարեկարգութիւն չէ" անուանեալ տետրակին մէջ։*

ԴԶ. "Հայոց եկեղեցւոյն պակասութիւն մը չէ ազգային անկախ եկեղեցի մը ըլլալը, անիկա այս գիրքով ո՛չ Քրիստոնէական եկեղեցի ըլլալէն կդադրի ոչ ալ ընդհանուր Քրիստոնէական միութենէն բաժնուած կըլլայ . . . եթէ Հայոց եկեղեցին ինքզինք Պապական կամ Լուտերական կամ Երիցական կամ Եպիսկոպոսական ընէ՝ նոյն եկեղեցեաց դաւանութիւնն ու ձեւը իրեն սեպհականելով, ամենամեծ սխալումներուն մէկը ըրած կըլլայ, զոր երբեք եկեղեցի մը կրնայ ընել։ Եթէ եկեղեցին բարեկարգութեան կարօտ է, անիկայ պիտի ընէ ի հարկէ ճշմարտութեան եւ ոչ ի շնորհս այս կամ այն ինչ եկեղեցւոյ, ոչ ալ ճշմարիտ բարեկարգութիւն մը ըրած կըլլայ որեւիցէ եկեղեցւոյ մը նմանելով։ Ս. գիրքը միայն, որ կանոն է հաւատոյ և բարուց, կրնայ սորվեցունել ճշմարիտ բարեկարգութեան թէ՛ հարկը և թէ չափն ու կերպը։ . . . Հայոց եկեղեցին ունի Նոր կտակարան, ունի առաքելական դարուց եկեղեցեաց պատմութիւնը, ունի նաև իր գոյութեան ամենէն հին դարուց պատմութիւնը. ասոնց նմանելով կրնայ որոշել թէ իր մէջը տիրող օտարամուտ սկզբունքներէն, կարգերէն և սովորութիւններէն ո՛րը իր վերակենդանութեան արգելք է . . . (այսպիսի բարեկարգութեանց իբրեւ օրինակ) ընդհանուր և գաւառական ժողովներն յիշել միայն բաւական է, որոց մեծ մասին նպատակը եկեղեցեաց մէջ մտած անկարգութիւնները վերցնելով զանոնք լաւագոյն կարգերով փոխանակել, և վարդապետութեանց մասին եղած սխալ հասկցողութիւններ կամ մթութիւններ լուսաւորել եղած է։"

ԴԷ. "Եւ արդ կհարցունեմք չունի՞ Հայոց եկեղեցին այս օրուան օրս իր պաշտամունքին՝ օրէնքներուն և կառավարութեան մէջ այնպիսի բաներ որոնք անգիտութեամբ կամ սխալ տեսութեամբ սպրդած կամ ընդունուած ըլլալով, եթէ մինչև ցարդ բարի և օգտակար կերեւնային, հիմա գրեթէ ընդհանուր վկայուած է (խորհողներէ) որ ո՛չ միայն անօգուտ այլ վնասակար իսկ են։ Զկա՞ն շատ մը բաներ՝ զորս Հայ կղերն իբր էական (հաւատալիք) կեղծելով՝ ինքզինք և ժողովուրդը խաբել կկեղծէ, քանի որ՝ բաց ի փոքր ռամիկ մասէ մը բոլոր ազգն անոնց այնպէս չըլլալուն շատոնց համոզուած է։ Զկա՞ն այնպիսի եկեղեցական օրէնքներ, կարգեր և սովորութիւններ որոց դէմ բողոքուած է, և որոնց չբարեկարգուիլը պատճառ է շատ անգամ որ անհատներ եկեղեցւոյն ձեռքէն վտարանջելու կըստիպուին։ Քրիստոնէական վարդապետութեանց Ս. Գրոց ճշմարիտ իմաստին համեմատ լուսաւոր բացատրութիւն, արարողութեանց մէջ փոփոխելու կամ չափաւորելու մասեր, եկեղեցական դասուն Պա-

պական պահանջումները որով ժողովուրդն իրմէ պաղեցուցած է, կղերին բարոյական, մտաւոր և նիւթական վիճակը, և ասոնց նման բաներ՝ ահաւասիկ բարեկարգութեան արժանի բաներ են։"

ՂԸ. Հայ Աւետարանականք կամ Բողոքականք կրնդեն թէ այս սկզբան համաձայն է այն բարեկարգութիւնը, զոր իրենք ընդուներ կամ ըրեր են և զնա ազգին մէջ ընդհանրացունել կուզեն։ Ապաքէն նոքա որ և է եկեղեցւոյ մի հետ պաշտօնական կապակցութիւն չունին, թէև Բողոքական կանոնանին և Բողոքական յարանուանութեանց հետ յարաբերութիւն կընեն, իսկ այս անունը կապակցութիւն մի չյայտներ նման Պապականութեան, յարաբերութիւնն ալ լոկ բարեկամական է։ Իսկ կրնայ լինել թէ ըրած փոփոխութեանց մէջ օգտակար բան ալ դուրս ձգած ըլլայ շատ մի վնասակարաց հետ, կամ անօգուտ բան մալ ընդունած լինի շատ մի շահաւետաց հետ. ասոնք ալ կրնան բարեփոխիլ՝ քանի որ նորա առջև բաց է բարեկարգութեան դուռը։ Պատկեր Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ յառաջաբանին ալ նայելով՝ այս սկզբան վրայ էր և Լուսաւորչեան ընկերութեան առաջադրած բարեկարգութիւնը։ Պէտք է որ կըսէ նա "Ազգին անկախ եկեղեցական գոյութեանը առանց դպչելու . . . փորձառութեան տուն տուած և ժամանակին յարմար իմաստուն բարեկարգութիւններով, և ո՛չ յեղափոխութեամբ, ազգը յառաջադիմական շարժման մէջ դնել, որ ինք իր ոտքովը քալելով հասնի՝ ուր որ ուրիշ ազատ Քրիստոնեայ ազգեր կամ ընկերութիւններ հասած են և պիտի հասնին . . . Թող ազգը աչքը իր վրայ միայն դարձունելով՝ բարեկարգէ զինքը այն բաներուն մէջ զոր Քրիստոսի վարդապետութիւնը, ճշմարիտ աստուածպաշտութիւնը ու հասարակութեան մի լուսաւորութեան ու յառաջադիմութեանն համար ժամանակին պարագաները կպահանջեն։"

ՂԹ. "Արդ ունի՞ ազգը կամ եկեղեցին բարեկարգելու այսպիսի կէտեր։ Այո՛։ Նախ՝ Հայոց եկեղեցին ունի վարդապետութիւններ որ ո՛չ Լուսաւորչական՝ այլ փոխառեալ ըլլալով փրկութեան վրայ մարդոյս հաւատքը սխալ հիման վրայ կկայացունեն, յորս և պաշտօնը Աստուծմէ ստեղծական և նիւթական իրաց վրայ կդարձունեն, փրկութեան արդիւնքը՝ պատճառ, պատճառը՝ արդիւնք, միջոցը՝ նպատակ և նպատակը միջոց կարծեցունել կու տան, և այնպէս Քրիստոնէութեան պարզ և մաքուր գիտութեան դէմ ժողովրդեան աչքին առջև թանձր և մութ վարագոյր կքաշեն։ — Երկրորդ՝ ունի այնպիսի ծէսեր և արարողութիւններ որ նոյնպէս Լուսաւորչէն չեն ու չեն կրնար ըլլալ, այլ երկար դարերու ընթացքին մէջ ուրիշ ե-

կեղեցիներէ փոխ առնուած, կամ անոնց ոգւովը խմորեալ մարդոց ձեռամբ մտած են։ Ծէսեր և արարողութիւններ՝ որոնք անհաւատներուն ծաղր, ճշմարիտ աստուածպաշտից ցաւոց, լուսաւորեալ մարդոց՝ արհամարհանաց նիւթ եղած, եկեղեցիները՝ թատրոններու, աստուածային պաշտօնն ու փառաբանութիւնն իր հոգևոր բնաւորութենէն մերկանալով՝ տօնահանդէսներու դարձուցած են։—Երրորդ՝ Հայոց կղերը ժողովրդեան նկատմամբ Քրիստոնէութեան էութեանը և ոգւոյն հակառակ յարաբերութիւն մի ունի։ Այս յարաբերութիւնն ալ, թէպէտ իր ծագումը ի վաղուց ունի, բուն Լուսաւորչական, Քրիստոնէական, առաքելական չէ, այլ օտար եկեղեցիներէ մտած։ Այս յարաբերութեան մէջ կղերը, փոխանակ իբրև ուսուցիչ, հովիւ, տեսուչ և հայր իր Քրիստոնէական պաշտօններուն յարմար գործածութիւն և ազդեցութիւն վարելու և անոր համեմատ ժողովրդեան մէջ իւր յարմար դիրքն ու պատշաճ պատիւն ունենալու, իբրև գերբնական զօրութեան տէր խումբ մի կներկայանայ, և ժողովրդեան սիրտն ահիւ կպաշարէ, և բռնի յարգութիւն մի կորզելէ ետքը զանոնք ուզածին պէս կգործածէ։"

Ճ. Ապաքէն այսպիսի բարեկարգութիւն մի ազգին փրկաւէտ կրնայ համարուիլ և կեցուցիչ լինել՝ ազատելով զնա ադիտութեան վնասներէն և անբարոյականութեան չարիքներէն, հետևապէս մէն մի ազգասիրի փոյթեռանդն ջանիցն է արժանի։ Եւ ահա յայսմ գործոյ մտքեր կտարբերին այդ բարեկարգութիւնը ի գործ դնելու մասին։ Ոմանք կըսեն թէ մնալու և գործելու է ի ծոց Լուս. եկեղեցւոյ մինչև որ ժողովուրդը պատրաստուի և բարեփոխութիւնքը ընդունի։ Սակայն Բողոքականք յամր կհամարին այս կերպն և անյաջող, զոր ընել խոհեմութիւն չէ, քանի որ՝ իբրև բռնկած տնէ դուրս ելնել և արտաքուստ վտանգը իմացունել ու յօգնութիւն կանչելն առաւել յաջող է և խոհական։ Իրողութիւնք, որք կնկատուին ի Հանդիսի աստ, պիտի ցուցնեն թէ երկու կերպերուն ո՛րը յաջող է և լաւ, հետևապէս որդեգրելու յարմար անոնց՝ որ այսպիսի կենսական բանի մի մէջ կուզեն կատարել իրենց պարտքը։ Հոս իբրև օրինակ առաջին կերպին, ի ներքուստ աշխատելոյն, քանի մի իրողութեանց վրայ դիտողութիւն ընել պէտք կըլլայ։

ՃԱ. Լուսաւորչեան ընկերութիւնը բազմաթիւ կուսակցութիւն մի կազմեց և առաջարկեց բարեկարգութեան պատկեր մի քան զոր թեթևագոյնը չկրնար ըլլալ, և որ ազգին խորհող մասին գաղափարաց պատկերացումը կրնար համարուիլ, սակայն և այնպէս ի՞նչ կրցաւ ընել արդեամբ, եթէ ոչ ոմանց միտքը պատրաստել

բարենորոգումներ ընելու կամ ընդունելու. իսկ միանգամայն ցոյց մը եղաւ, թէ աւանդութեան վրայ երդուեալ եկեղեցականաց ազդեցութիւնը անգործադրելի կընէ տակաւին որեւիցէ տեսակ բարեփոխութիւն ազգին մէջ, որոյ մեծամասնութիւնը նոցա խորհրդոց կհետեւի։ Լուսաւորչեան ընկերութիւնը ապացոյց մըն ալ յաւելիր ըսածին թէ պապականացեալ կղերն ժողովրդեան «գաղափարը ուզածին պէս կուրէ և կշինէ, անիկա ուզածին պէս և ուզածին չափ կկրթէ, շատ անգամ նաեւ անոր նպատակներուն և ձեռնարկութեանց խոչնդոտ կըլլայ.» ինչպէս եղաւ նոյն իսկ տարածման «Պատկեր Լուս. եկեղեցւոյ» գրքին, (Գ.Գ.) զոր Մասիս «պարզապէս բողոքական գիրք» անուանեց, և այլք կղերաց բերնէն ցուցին զայն «բողոքականութեան բաւական խելքով մտածուած և մինչեւ ցայսօր գործածեալ հնարից ամենէն հրապուրիչ միջոցը։» վասն որոյ ձեռնարկութիւնը անգործադրելի եղաւ իբրեւ գործ «եկեղեցին դաւաճանողներու,» և անոնք որ իրենց միտքը դրած էին կղերաց ըսելիքներուն ականջ չդնել, թերեւս երբ աշխարհականաց բերնէն լսեցին ինչ որ չէին ակնկալեր, լքեալ թողին գործը և քայքայեցան։

ԾԲ. Ազգային սահմանադրութիւնն ալ (Յօդ. 35) «կրօնական ժողովը,» կըսէ, «կանոնադիր մը պէտք է շինէ եկեղեցականաց վիճակին բարելաւութեանը... որպէս զի իրենց հոգեւորական պաշտօնները կարենան ձրի կատարել։» Հայոց Ս. Հայրիկը 23 տարի վերջը ի մօտոյ դիտեց և գտաւ թէ ազգը դեռ ժամանակ չէր ունեցեր «Եկեղեցականաց ներկայ անկերպարան վիճակը և ընթացքը կերպաւորել և կանոնաւորել՝ համաձայն Հայ. եկեղեցւոյ նախնի օրինաց և ուղղութեան... նոյն իսկ մայրաքաղաքիս քահանայից... պէտք եղած բարեկարգութիւնները կատարելու անձեռնհաս եղած է.» (Հրաժարագիր Հայրիկի)։ Կրօնագէտ և մանրազնին ուսումնական մը, Պատ. Յարութիւն Գահվէճեան, դիտեց թէ սահմանադրութեան վերցունել ուզած բանը՝ ստակի փոխարինութեամբ, «իրաւունք առնելով», կրօնական պաշտօն կատարելը, Սիմոնականութիւն ըսուած մոլորութիւնը կամ մոլութիւնն է, որն որ թէ՛ Ս. Գիրքը (Սաղմ. ԿԶ. 31 ըստ եօթանասնից թարգմանութեան, Միք. Գ. 11։ Զաք. ԺԱ. 12։ Երեմ. Է. 11։ Մատթ. ԻԱ. 13։ Յովհ. Բ. 16։ Բ Կոր. ԺԱ. 7.) կարգելէ օրինակաւ Սիմօն մոգի (Գործ. Ը. 20) յորմէ եկած էր մոլորութեան անունը, և թէ՛ Հայ. եկեղեցին կմերժէ (Յայսմաւուրք ի Մայիսի ԺԲ) հետեւելով խորհրդոց նախնի հարց, զոր օրինակ Ոսկեբերանի (քարոզ Գործ. Ը. ին վրայ)։ Ուստի այս պատուելին փորձեց եկեղեցւոյ մէջէն «թապախ ժուռ ածելը» և նման սովորու-

թիւնները վերցունելով քահանայից ամսական տալու դրութիւնը, զոր կառաջարկէ սահմանադրութիւնը, ի գործ դնել, որով կհամարէր թէ պիտի վերցուէին եկեղեցիէն շատ մը խեղկատակ ծէսեր, զորս ի ժողովրդենէ ստակ կորզելու, իրաւունք առնելու համար կպաշտպանէր կղերը, եթէ չհնարէր ալ։ Գիւղին, իմա Ակնայ Ապուչեղայի, հասարակութեան մեծամասնութիւնը ընդունեց առ այս սահմանեալ կանոնը, զոր վաւերացուց և Ակնայ թաղական ժողովն՝ հանդերձ հաւանութեամբ կրօնականին և տեղւոյն Առաջնորդին։ Իսկ գործադրութիւնը սկսաւ չսկսած՝ գիւղին քահանայն երկու երեք մարդոց հետ կուսակցութիւն մը կազմեց, զՊատուելին «բողոքական» ծանոյց, և զրպարտութիւններ իսկ ընելու չխղճաց, որով բանտարկուեցան մի քանիք և փախցան քահանային կուսակցութեան չարիքներէն և լքին թողին գործը, որոյ յարդիւնս գալուն աշխատեր էին 2–3 տարի և միայն գործադրեր 2–3 ամիս։ Լրագիրք հրատարակած են սոյն պատմութիւնը և օրինակ են թողուցեր (տե՛ս Մէճմուա 1039, 1061), թէ ամենափոքրիկ փոփոխութիւն մը իսկ, որքան որ օգտակար լինի, անհնարին է գոգցես, մուծանել մինչ իսկ յարաբերութիւնս Լուսաւորչական արդի դրութեան։

ԾԳ. Զամչեան Միքայէլ վարդապետ ի պատմութեան Հայոց արդէն պատմած էր թէ պատկերաց գործածութիւնը Լուսաւորչական եկեղեցւոյն մէջ գործածուիլ սկսաւ, դէթ ըստ այժմու սովորութեան, Պարտաւու ժողովէն վերջը, զոր և կրկնած էին ազգային հեղինակք ումանք։ Մարաշցիք եկեղեցի մը կշինեն, ուր պատկեր դնել չեն ուզեր համարելով զայն օտարամուտ վերջին սովորութիւն եկեղեցւոյ, մանաւանդ իբր գայթակղութիւն յաչս բողոքականամիտ ազգայնոց, որք բազմաթիւ են այն կողմերը։ Բայց «երբեմն երբեմն քահանայք և իշխանք ժողովուրդը կյորդորէին եկեղեցւոյ մէջ պատկեր դնել, (կըսէ Նամակագիր մը Աւետ. 1874 ի 52), իսկ լուսաւորեալ ժողովուրդը չէր ընդունէր անոնց խրատը։ Մօտերս Սսոյ (Մկրտիչ) կաթողիկոսի կողմէն քանի պատկեր մը դրուեցաւ յիշեալ եկեղեցին, և երբ ժողովրդեան կողմէն պատկերը վերցուեցաւ, կաթողիկոսը եկեղեցին գոցել տուաւ ըսելով ժողովրդեան թէ ‹կամ պատկերը կընդունիք և կամ եկեղեցին երթալու չէք՛։» Այս խրոխտութեան վրայ Բողոքական պատմագէտ Հայ մը կխորհրդածէ. թէ «Սրբազան Կաթողիկոսին ըրածը... (նոյն իսկ) Հայոց եկեղեցւոյն քարոզած վարդապետութեան նայելով՝ կռապաշտութիւն (համարելի) է։ Քանզի Հայոց եկեղեցին յայտնապէս ըսած է թէ պատկերին մատուցուած պատիւն և պաշտօնը ո՛չ թէ պատկերին տիրոջը, այլ բան

նութին կվերաբերի . . . Հայոց եկեղեցին՝ Հրէից, Նեստորականաց և Բողոքականաց եկեղեցիներէն, ոչինչ ընդունած հակառակ է նկարապաշտութեան։ . . . (Թող թէ) կաթողիկոսը նաև բուն իսկ իր խղճին և ճանաչմանը դէմ գործած է։ Եթէ հին՝ պարզ և միամիտ եկեղեցականաց նման ինք ալ հաւատար պատկերաց . . . և անկեղծ համոզում ունենար թէ առանց պատկերի եկեղեցին եկեղեցի չէ, և հոն մատուցուած պաշտօնը և աղօթքն ընդունելի չեն ըլլար, իր խղճէն այնչափ չէր մեղադրուեր։ Ինք այս բաներուն չէր կրնար հաւատալ, մինչև որ չհաւատար թէ իր օրհնած իւղը խառնեալ է Հոգւոյն Սրբոյ հետ՝ իր հրամանովը, քանզի եթէ Ս. Հոգին խառնուած չէ մեռոնին հետ, մեռոնն ալ կարող չէ պատկերին երեսէն կռապաշտութեան մեղքը ջնջել,» և այս է պատճառն որ Լուս. եկեղեցին առանց օծման պատկեր չգործածեր յեկեղեցիս։ (Աւետ. 1875 ի 13)։

ԾԴ. Նախորդ գլուխածները արդեօք լաւ մը հասկցուցած են յառաջիկայից, թէ դեռ անհնարութիւն կայ Լուս. եկեղեցւոյն մէջ բարենորոգումն գործել, որքան ալ կուշտ սխալ մը ուղղել և դոյն փոփոխութեանց ալ որ լինի։ Զոր օրինակ, Թողլով զայլ ընթերցուածս գէթ վերցունել Ցայսմաւուրքի կամ գործածութիւնը կամ նորա ափեղցփեղ պատմութիւնքը, որք հեղինակութիւն չունենալէ զատ փոխան շինութեան խանգարումն կու տան ողջմտութեան։ Զէ թէ փոփոխութիւն մը ընելու ձեռնարկութիւն չկայ տակաւին այն ընթերցուածոց, զորս Բողոքականք սխալ կհամարին, այլ տակաւին խօսքը չկայ բարեփոխելու անոնց ալ, որք անհամաձայն են նոյն իսկ Լուս. վարդապետաց որոց օրինակներ են նախորդ դէպքերն։ Պատկերաց վրայ եղած խորհրդածութիւնը՝ ի բ սպառութիւն այս խնդրոյն, քիչ մալ յառաջ տանինք։ Բնական կրօնագիտութիւնն երես
537 «հիմա ամէն ուսում և պատմութիւն,» կըսէ «որչափ որ կաբելի է, պատկերներով աւանդելու դրութիւնը մնացած է դրեթէ ամէն տեղի դպրոցներն ու վարժարանները։ Ասոր համար, ուրեմն, և եկեղեցեաց մէջ պատկերները մնացած են, ուսուցանելու համար՝ և ոչ պաշտելու համար են . . . (Փլորեայ բերնէն ալ կըսէ թէ) պատկերները աւելի տգէտներուն համար կնկարէին և եկեղեցեաց որմերուն վրայ կդնէին ի ցոյց, զի անոնց գրքերու տեղ կծառայէին ինչպէս կգրէ Գրիգոր քահանայապետը։» Բայց ցարդ ուր որ պատկեր մը կգտնուի Հայոց եկեղեցին, կօծուի մեռոնաւ. սովորութիւն՝ զոր Լատինք չունին, և յայնժամ պատկեր օրհնելու ընթերցուածը կկարդացուի, ուր կըսուի «Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի ճակատ

պատկերիս այս նշանաւ Ս. Խաչիս և սուրբ մեռոնաւս. և լիցի արագահաս օգնական և փրկիչ ի Տէր ապաւինելոց, ճանապարհորդաց պահապան, ալեկոծելոց օգնական, հիւանդաց բժշկարան, մեղաւորաց քաւարան, և աներկիւղ պահեսցէ զայնոսիկ որք ի տարակուսի կան . . . և տացի սմա զօրութիւն բժշկել զհիւանդս, հալածել զդեւս, բարեխօսել վասն մարդկան, շինութիւն գոլ տանց և առողջութիւն շնորհել հոգւոց և մարմնոց։ . . . Եւ սուրբ աջ սորա զազգս մեր զօրացուսցէ, զգերեալս ազատեսցէ, զբանտարկեալս հանցէ, զանհաւատս խորտակեսցէ և պահպանեսցէ զհաւատացեալս ամենասուրբ Երրորդութեանն։» (Մեծ Մաշտոց, տպեալ ի Կոստանդ. 1807. եր. 215։)

ԾԵ. Կրնանք շատ օրինակներ ալ յառաջ բերել տեսնելու թէ Լուս. արդի հեղինակաց վարդապետութեան և եկեղեցւոյ ընթերցուածոց մէջ անհամաձայնութիւններ կան, չըսենք հակասութիւն (ինչպէս է ԾԴ. ի օրինակը), զորս սրբագրելու խօսք անգամ չկայ։ Միքայէլ վարդապետ Սալլանթեան, որ պապականութենէ դարձած էր ի լուսաւորչականութիւն, վաղուց վերահաս եղած էր՝ ինչ որ Լուսաւորչեան ընկերութիւնն (պատկեր Հայաս. եկեղ. Ազգին մէջ) ըսաւ. այսինքն թէ, «Հայոց եկեղեցին՝ իբրև Հռովմէականութեան արբանեակ, անոր կղերական դրութեան ոգւովը տոգորուած, իր բովանդակ ծանրութեամբը դէպ ի նա կձգուի։» Ուստի կղերաց «գերբնական զօրութեան տէր» համարուելուն հիմունքը, կապելու և արձակելու պաշտօնին մեղաց թողութիւն տալու իշխանութիւնն, ուղիղ բացատրութեամբ կարի կասկածանաւոր է։ «Փականք, որոյ գործ են բանալ և փակել, իմացեալ լինին կրկին հոգևոր կարողութիւնք, (կըսէ ի Թիւ 155 կրօնագիտութեան), որոց առաջինն է պաշտօնն քարոզելոյ և ուսուցանելոյ զդէտս, յորոյ ուղիղ իմացուած՝ հարկ է ի միտ առնուլ, թէ մեղանչական գործողութիւն և ունակութիւն ի Ս. Գիրս նմանեալ լինի այնպիսի իրաց, որք բառնան զազատութիւն և զանձնիշխանութիւն մարդոյ, կամ արկանեն զնա ի ներքոյ բռնութեան և հարկաց ինչ։ Եւ ըստ այսմ առմեղքն՝ փոխաբանութեամբ կոչի կապ, կապանք, ձեռնակապ, ոտնակապ, ծրար, կնճիռն անիրաւութեան, ևն. . . . ըստ դոյին և մեղաւորքն անուանին կապեալք, բանտարկեալք, գերեալք, ևն . . . ։ Եւ համաձայն այդց փոխաբերութեանց կարողութիւն քարոզելոյ կոչի փականք, և քարոզիչքն ասին Ունել զփականս։ (Մատ. ԺԶ. 18։ Ղուկ. ԺԱ. 52 ևն։) Աւելին և սկսուածն քարոզելոյ ասի բացումն դրան, բանալ փականօք զդուռն բանից (Գործ. ԺԴ. 26։

Ա. Կոր. ԺԶ. 9։ Բ Կոր. Բ. 12 են,), և չքաղցրն կոչի փակել զարքայութիւն, թագուցանել զփականս (Մատթ. ԻԳ. 13։ Ղուկ. ԺԱ. 52 են)։ Իսկ յորժամ քարոզիչքն ուսուցանելով զճշմարտութիւնն Աստուծոյ՝ մուծանեն զանհաւատս յեկեղեցին կամ դարձուցանեն զմեղաւորս, այս ներգործութիւն նոցա՝ ըստ լեզուի Ս. Գրոց և ըստ յիշեալ այլաբանութեանցդ, անուանի հանել զկապեալս ի բանտէ, բանալ զաչս կուրաց, քարոզել կալելոց դարձակումն, դարձուցանել ի խաւարէ ի լոյս, և յիշխանութենէ սատանայի յԱստուած, տալ ժողովրդեան զգիտութիւն փրկութեան առ ի թողուլ զմեղս նոցա, լուսաւորել զխաւարեալս, զկոյրս, զաչս, արձակել զմեղաւորս, թողուլ մարդկան զմեղս, փրկել ի մեղաց, ապրեցուցանել զմարդիկ, շահել, կեցուցանել, արդարացուցանել... և այլ նման ոճք բանից։" Աստուածաբան վարդապետը քանի՛ ճոխաբար կը հաստատէ զայս վկայութեամբ բանից Ս. Գրոց, իսկ քանի՛ հիմնովին մոռցած են այս գործը պաշտօնեայք բանին Աստուծոյ, քահանայից դասը, և ուժերնին կթափեն պաշտօն պատարագ կատարելու ի թողութիւն մեղաց։

ԾԶ. «Իսկ երկրորդն է, (կշարունակէ ի թիւ 156), պաշտօնէական փոխառական և գործիական կարողութիւն թողութիւն տալոյ զղջացեալ մեղաւորաց, իսկ անզեղջ հրապարակական մեղաւորաց՝ զլանալ զթողութիւն. նաև (կարողութիւն) զրկելոյ ի մասնակցութենէ Ս. խորհրդոց՝ մինչև զղջացեալ ճշմարտիւ՝ հաշտեսցին ընդ Աստուծոյ (Մատթ. ԺԶ. 19։ Յովհ. Ի. 22, 23 ։)" Ուստի «Ապաշխարութիւնն է (կըսէ ի թիւ 161,) խորհրդական արարողութիւն՝ յորում մեղուցեալ և զղջացեալ քրիստոնեայն խոստովան լինի զմեղս իւր Աստուծոյ՝ (միայն թէ) առաջի քահանայի նորա, և ընդ յայտարարութեան թողութեան բանիւ քահանային, առնու յԱստուծոյ (ո՛չ թէ ի քահանայէն) զթողութիւն մեղաց ըստ հաւատոյ և ըստ տրամադրութեան իւրոյ։" Եւ այս քահանային առջև խոստովանիլն ալ ո՛չ թէ Աստուածային այլ եկեղեցական, մարդկային օրէնք է կըսէ ի թիւ 174։ Այս բացատրութենէն ալ կտեսնուի թէ որքա՛ն տարբեր կիմանան շատեր, նոյն իսկ Մատթէոս Սրբազան պատրիարք, եկեղեցւոյ ընթերցուածներն, որ ընդդէմ Բողոքականաց հանած հանդանակին չորրորդ յօդուածովը՝ իբրև եկեղեցւոյն վարդապետութիւն կհրատարակէր (կնե.), թէ մեղաւորը առանց քահանային արձակմանը անհնար է որ մեղաց թողութիւն և յաւիտենական կեանք գտնէ։ Եւ ո՞չ ապաքէն եկեղեցւոյ ծխարանի ընթերցմունքը մանաւանդ պապականամիտ Մատթէոս եպիսկոպոսի խմբածին

պէս կհասկցուին և այնպէս կհասկնան բիւրաւոր խոստովանորդիք, երբ կաղաղակեն ի ծունր անկեալ. «Հա՛յր Սուրբ, դքեզ ունիմ միջնորդ հաշտութեան... զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ՝ արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց..։ Վասն որոյ և քահանային արարեալ թողութիւն մեղաց ըստ ասից ծխարանի, պերճ և իշխանական բանիւ կըսէ, Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան... արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ի խորհրդոց, ի բանից և ի գործոց։"

ԾԷ. Այն օրինակ իրողութիւնք կհաւաստեն, թէ ապաքէն Լուս. եկեղեցւոյ մէջ կան հեղինակներ, որք կուզեն ժողովրդեան սխալ գաղափարները ուղղել և եկեղեցւոյ մէջ տեսնուած մոլորութիւնները Աւետարանի ողջմտութեանը դարձունել, սակայն դեռ եկեղեցական դրութեան մէջ բնաւին փոփոխութիւն մը չեն յաջողեր յառաջ բերել։ Որովհետև մէկ շտկողին դէմ տասը ծուռ կենալէն զատ, հին ծուռ մը շտկելու շատ զօրաւոր ջանք և քաջութիւն պէտք է, զոր կերևի թէ չունին շտկել ուզողները, որ առաւել պարզութեամբ և անվեհեր չեն խօսիր, որ չըլլայ թէ խրտուցնեն ժողովուրդը։ Կան և կուսակցութիւններ որ եկեղեցւոյ բարեկարգութեան համար աշխատած են և կաշխատին, իսկ ցաւ է տեսնել, որ ցարդ երևելի փոփոխութիւն մը յարդինս չբերին, համարեա թէ նոյն յիշեալ պատճառներով։ Այս աշխատաւորաց ոմանք ալ համոզուելով Բողոքականաց գաղափարին, թէ անյաղթելի դժուարութիւն կայ եկեղեցին բարեկարգելու առանց բաժնուելու անկէ, եթէ չթուլնան ալ, կթողուն եկեղեցին և կխառնուին ընդ Բողոքականս, զորս թէպէտ ըստ ամենայնի իրենց ուզածին պէս բարեփոխեալ չեն համարիր, բարեկարգութեան առաւել պատրաստական և դրամատեր կգտնեն քան զԼուս. ազգայինս, որք մեծաւ մասամբ անընդունակ են բարենորոգմանց։ Սակայն այլք կը մնան ի ծոց Լուսաւորչական եկեղեցւոյ թէ՛ գործեն թէ՛ ոչ, բարեկարգութիւն յուսան թէ չէ, որովհետև կհամարին թէ ազգասիրութիւնը այսպէս կպահանջէ։ Տեսնենք արդ թէ

Ե. ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԿՆԵՐԷ՞ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԷՆ ԲԱԺԱՆԻԼ ԿԱՄ ՈՉ

ԾԸ. Ցոլմք են յազգիս որ ազգասիրութիւնը «առաջին պարտք կհամարին և նախանձախնդիր են Լուսաւորչական եկեղեցւոյն, զոր փարախ կհամարին ազգային միութեան, ուր կուզեն պահել Հայկայ

որդւոցը։ Այսպիսեաց սիրտը կարելէր կնայէ ինչ որ առիթ կու տայ դուրս ելնելու կամ հանելու անկէ Հայ որդի մը։ Հետեւապէս կզայրանին ընդդէմ նոցա որ այդպիսի առիթներ կթելադրեն։ Այս ոգւով կդուրգուրան Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ՝ իբրեւ հասարակաց հօր, զոր, թէեւ տկարացած ըլլայ եւ խօթացեալ, պարտին զաւակունք պահպանել եւ խնամել։ Եւ ահա այս հոգւոյ արտայայտութիւն համարելի է ոմանց այն խօսքերը՝ զոր կընեն Լուս. դրութենէն չբաժանելու մասին։ «Մեր նախնիք,» կըսէ Վահան վարդապետ (Հայրենիք 279,) «զմեր եկեղեցին այնպիսի դրութեան մէջ հաստատած եւ պահած են, . . . որ իր մէջ ոչ ազգամիտս եւ ոչ հոգեմիտս տարր ունի, նա առանձին մէկ խումբ է ամբողջ քրիստոնէութեան մէջ ազատ եւ ինքնուրոյն, իր անկախ սահմանադրութեամբը, որ յաւիտենական է, որմէ մազն չափ շեղելու չէ, որուն գործադրութեան միշտ հսկելն առաջին գըլխաւոր պարտք եւ պաշտօն է ոչ թէ եկեղեցականաց միայն այլ եւ ժողովրդեան։ Ուստի նոքա որք ազգային եկեղեցիէն բաժնուիլ կխորհին կամ առանձնանալ եկեղեցւոյ մը մէջ, չարաչար կսխալին՝ ուէ քաղաքական կամ կրօնական կարծեաց մէջ։»

ԺԹ. Կան որ իրենց ազգասիրական զգացումն իբրեւ արտադրութիւն վշտացեալ սրտի, առաւել ցասմամբ կարտայայտեն եւ զԲողոքականս՝ որք եկեղեցիէն, իբր ազգային միութենէ, կբաժնուին, կհամարին թշնամի ազգին կամ քակիչ միաբանութեան։ Ինչպէս անուանեց ատենապետ Էֆէնտի խառն ժողովոյն, որ կըլլար ազգ. սահմանադրութիւնը վաւերացունելու առթիւ, ինչպէս եւ այլք որոց անձն ու տեղը ցուցնել հարկ չէ։ «Հայոց եկեղեցին եւ Ամերիկայի քարոզիչներ» տետրը (երես 17) զԲողոքականս կանուանէ ազգը «ուրացող, հերձուածող, բեռեկտող, գայթակղեցնող եւ ամենայն (ազգային) չարեաց պատճառ Հայ մոլորեալներ։» Խմբագիրներ կան որ զԲողոքականս ցուցած են իբրեւ «մասնիչ» Հայաստանեայց եկեղեցւոյն աւանդիցը, եւ դեռ քիչեր չեն այսպիսի բաներ գրելու գրիչներ եւ խօսելու բերաններ։ Իցիւ հոս վերջանար այսպիսեաց եռանդնաբորբոք արտայայտութիւնը։ Կան ալ որ, անշուշտ չափը անցնելով, կցուցանեն թէ մի միայն կիրք կամ նուաստ շարժառիթներն են պատճառ, որով Բողոքական կամ Պապական կըլլան Հայք։ «Միլլէթինի սէվ» անուն ազգասէր մը, Յոհաննէս Էֆ. Գիւրքճիեանօֆի, տետրակը (երես 26), ազգասիրութեան նուազութեան կու տայ, որով ազգայինք իրենց եղբարց պակասութեանց չեն կրնար երկայնամտել, եւ «ազգը թողլով կերթան օտարին հետ կխառնուին։ Անոնց ամէն

տեղ կայ, յատկապէս Հալէպ, Այնթէպ եւ Քիլիս, ուր մէկը պզտիկ բանէ մը ցուցածին պէս՝ վրէժն կհանէ կրօնափոխութեամբ . . . ո՞հ, այս կրօնափոխութիւնը մարդկութեան (ազգասիրութեան) որքան հակառակ բան ըլլալը երանի՜ թէ մէկը հասկցուներ ձեզ։»

ԺԺ. Բողոքականք իրենց համար այս ըսուածները կրկին պատճառի կու տան գլխաւորապէս, այսպէս խորհողները կա՛մ չափազանց ազգասէր են կա՛մ չափազանց կրօնատեաց, եւ կամ ազգասիրութիւնը այնքան մեծ բան կսեպեն որուն քով ոչինչ է եկեղեցական խտրութիւն, եւ կամ կրօնը այնպէս ոչինչ բան կհամարին որ անոր համար պէտք չէ ազգը թողուլ։ Անոնք երկու ծայրեր են որոց մէջ կարծեաց հարիւրաւոր աստիճաններ կրնան գտնուիլ, որք մէկ կամ միւս ծայրին մերձ են, հետեւապէս մէկ կամ միւս կարգին կվերաբերին։ Եթէ ասոնք ազգասէրներ են, իբրեւ մեծ բազմութիւն, ազգին մէջ մեծ բարեփոխութիւններ գործելու էին՝ յորմէ հետէ սկսած են այսպէս խորհիլ, որ 30—40 տարուան միջոց մըն է։ Եւ ըստ որում երեւելի բան մը ըրած չեն, ինչպէս պիտի հանդիսանայ յընթացս բանից, կհետեւի թէ կամ անյաղթելի արգելքներ ունին յառաջադիմութեան կամ լոկ խօսքով է անոնց ազգասիրութիւնը, ազգը գովելու, երգելու եւ փայլ ցուցնելու վարժուած են քան բան մը յարդիւնս ածելու։ Ո՛րն որ ըլլայ, Բողոքականք իրաւունք ունեցած կհամարին բաժանիլ գաւթէ մը, ուր կամ յառաջդիմութիւն չըլլար եւ կամ գործել չկենար, կամ մեծ արգելքներ կան եւ կամ գործունէութիւն չկայ։

ԺԺԱ. Երկրորդ կարգին կամ պատճառին ալ վերահաս ըլլալու համար եթէ միտք բերենք որ ինչ ըսուեցաւ Յառաջաբանի (Ե. Զ.) նկատմամբ կրօնի եւ քրիստոնէութեան թշնամեաց, եթէ միտք բերենք ծայրայեղները որ կրօնական յեղափոխութիւն կուզեն գործել (ԶԱ.), եւ յառաջ երթանք տեսնելու կարգ մը մարդիկ որ մեծ գործ ըրած կերեւին ծաղրելով կրօնն եւ անարգելով զկրօնաւորս, ցաւ ի սիրտ պիտի պարտաւորիմք ընդունելու, թէ ազգին մէջ կան մարդիկ որ կրօնը այնքան ո՛չինչ բան կհամարին, որ կրօնը երբէք շարժառիթ չկրնար ըլլալ գործոց մարդկան կամ ըլլալու չէ, այնպէս որ քիչ շատ խորհող մէկը չկրնար ի սէր կրօնի եկեղեցափոխութիւն ընել, առանց ուրիշ շարժառիթներ ունենալու։ Մասիսի յօդուածագիրը, Վահրամ, որ այս կարգէն մէկը ըլլալու է, կամ գրածը չնկատող պատանեակ մը, ամենայն վստահութեամբ գրեց, թէ «Մայրաքաղաքիս եւ գաւառաց մէջ անոնք որ կրօնափոխութեան դիմած են եւ կդիմեն, ինչպէս որ ամէն ոք գիտէ (բաց ի գրողէն), ո՛չ թէ ներքին համոզմամբ

(որ ըլլալիք բան չէ), կամ փրկուելու յուսով (որ ո՛վ գիտէ ինչ է) այլ կամ շահամոլ բախտախնդրութեան կամ սիրահարութեան, կամ հարստահարութեանց դէմ պաշտպանուելու և կամ տրոց վճարումէ ազատելու պատճառներով միայն, (որք ըստ իս են միայն պատճառք գործողութեանց), իրենց ազգային եկեղեցիէն բաժնուած են.” (Մասիս 1638 թիւ)։

ԺԺԲ. Այսպիսի արտաքոյ դատում ընողը միայն Վահրամ չէ, շատեր եղեր են և կան որ իրենց բաժանեալ եղբարց—Պապականաց և Բողոքականաց վրայ այս նոյն գաղափարը կկրեն և կգրեն։ Մասիս՝ Հայրենիք՝ Լոյս և Ցոյս կարդացողները շատ պատահած են նոյնատիպ գաղափարաց արտահօսանաց, զորս ի հանդէս ածել կվախնանք թէ տաղտկալի ըլլայ ազնուական մտաց։ Այնպիսի ազգասիրութեան ոգւով գրողները իսկ չե՞ն խորհիր արդեօք, թէ աւելի կուտան օտարաց որ խորհին թէ այս բաժանեալ իբր 100,000 Պապական և Բողոքական Հայերն, որոց դէթ չորրորդ մասը ի խելահասութեան կրօնափոխ եղած են, կեղծաւոր, խաբեբայ և շահասէր են նէ, նոյն մէկն և արիւնէն եղող Հայերն ալ միթէ նոյն բնաւորութեանց տէրը ճանչցուելու չե՞ն։ Եթէ իրենք քանի մը մարդ ճանչնալով կրնան ամենուն վրայ դատումն ընել, ո՞չ ապաքէն օտարք՝ եթէ 100,000 կրթեալ և ուսեալ համարելի ժողովրդեան վրայ իրենց լածին պէս գաղափար ստանան, առաւել բանաւորապէս կրնան ազգին նուաստութեան վճիռ տալ։ Այսպէս կտեսնենք դարձեալ, ինչպէս տեսանք մի քանի տեղ (կԲ. ՁԲ. ՂԱ.), որ ծայրայեղութիւնը հակառակ արդիւնք կբերէ, այսպիսի դատաւորք ազգը պատուելի ընելու կելլեն՝ պարսաւանաց առիթ տալով կնստին։ Եւ միթէ այսպիսի զրպարտութիւններ Բողոքականաց մտաց վրայ լաւագոյն տպաւորութիւն մը կրնա՞ն ըրած լինել, չէ նէ գնացողները գնացեր են մենք մնացածները ձեռքէ չհանելու համար է որ կգրենք պիտի խորհին։ Բաղդը է անշուշտ բաղմաց այսպէս խորհիլ ի վերայ այնպիսի դատաւորաց, որոց խօսքերը եթէ աւեր կգործեն, իւրեւ աւերեալ չըլլայ նաև տեղին ուստի կըղխեն։

ԺԺԳ. Կարի պատշաճապէս կխրատէ զայսպիսիս Մ. Վարդապետ Մուրատեանց (եկեղ. պատմ. 620), ասելով թէ «Մեր ազգի և եկեղեցւոյ օգուտը կպահանջէ օտար միակերպութենէ ի սպառ հեռու կենալ . . . և (միանգամայն) միշտ սէր և համակրութիւն ցոյց տալ մեր հատուածեալ Հռովմէական և Բողոքական եղբայրներուն . . . նոքա երբ և իցէ պիտի հակամոլին դառնալ, ուստի մեզ կվայլէ սիրով նոցա դարձը աճապարել։” Այո՛, եթէ ազգասիրութիւնը զոմանս կպահէ ի ծոց Հայրենի եկեղեցւոյն, նոյն իսկ ազգասիրութիւնը կպարտաւորէ սիրել Հայը, թէև ըլլայ տարբեր համոզման տէր և տարապարտուց չվիրաւորել զնա։ Ազգասիրութեան ոգին պէտք է ազատ գաղափար ներշնչէ յերակս համօրին եղբարց, և Յ. Ոսկանեան էֆէնտիին ըսածին պէս (ազգ. վիճ. ընդհանուր տեսութիւն 52) Հայը համոզուելու է թէ «ո՛չ զգեստափոխութիւն, ո՛չ լեզուափոխութիւն, ո՛չ գաղափարափոխութիւն և ո՛չ իսկ կրօնափոխութիւն՝ զինքն իր ազգութենէն չեն կրնար մեկուսացնել կամ զրկել։ Հայը ասկից վերջը ալ կամք ունենալու չէ յարդանդէ Հայ եղբօրը խղճին վրայ բռնանալու, և իրեն աշխարհիկ եղբօրմէն այնպիսի հաշիւ մը պահանջելու՝ զոր իւրաքանչիւր ոք Աստուծոյ միայն պարտի տալ։”

ԺԺԴ. Բողոքականք այսպիսի ազատ գաղափարով կընդունին ազգասիրութիւնը, որ չյանդգնիր ուրիշին խիղճը բռնաբարել, մանաւանդ սահմանազանց չգտնուիր և քան զկրօնս գերազանցութիւն պահանջել։ Ըստ սոցա՝ առաջին պարտքն է կրօնասիրութիւն, քանզի նա մարդոյն յաւիտենական բարւոյն կվերաբերի, նորա առարկայն, Աստուած, է գերագոյն քան զամենայն, և մարդոյն առ նա ունեցած պաշտօնը ամենագերազանց։ Կրօնասիրութիւնն է հիմն ամենայն առաքինութեանց և կուտայ զօրութիւն ամէն տեսակ պարտուց կատարման, մինչ զի կրօնասէրն հարկաւ կըլլայ և ազգասէր, աստուածապաշտը կըլլայ անձնուրաց ի փառս Աստուծոյ և ի սէր ընկերին։ Ուստի ժողովուրդ մը որ չունի կրօնասիրութիւն չունի և բարոյական զօրութիւն. Հայը կրնայ թուով եղածին տասնապատիկը լինել և ոչինչ ազգասիրական գործ ընել, եթէ կրօնասիրութիւնը չտիրէ նորա վերայ։ Կրնայ Հայը յաւելուլ իր ուժն ու զօրութիւնը, բայց չկրնար առաւելուլ եղբայրասիրութիւնը՝ եթէ չազդէ նոցա սրտից վերայ աստուածպաշտութիւնը։ «Ուրեմն,” կըսէ Աւետաբեր (86), «ազգասիրութիւնը Աւետարանով լուսաւորեալ ըլլալու է, Քրիստոնէական սկզբունքներով առաջնորդուելու է։ Հետևապէս քանի մը բաներ կան որոնք Քրիստոնեայ ազգասէրը պարտաւոր է իր երկրին մէջ յառաջ տանիլ, թէ և հակառակութեանց պատահի։”

ԺԺԵ. «Նախ իբրև ազգասէր պարտաւոր է բոլոր իր ազգին մէջը Աւետարանին ազդեցութեան տարածուիլը փնտռել, որոյ օրինակ ունինք զՊօղոս . . . Երկրորդ բանը՝ որ Քրիստոնեայ ազգասէր մը պիտի փնտռէ, իր ազգին երիտասարդաց ամենէն կարևոր կրթութիւնն է։ Ինքը գիտէ թէ կրօնքէ և բարոյականութենէ զատուած լոկ մտաւոր լուսաւորութիւնք բնաւ ազգ մը յաջող և երջանիկ չըներ։ Ա-

նիկայ կրօնքը և բարոյականութիւնը կրթութեան իբրև հարկաւոր և անբաժանելի մասունքը կսեպէ. Քրիստոնէական կրթութիւնն է որ ամէն Քրիստոնեայ ազգասէր իր ազգին համար փափաքելու է։" Ուստի Հայք ոմանք յազգասիրութենէ շարժեալ այս գործերը կատարել կտենչան և կուզեն որ ազգը իր այս կարօտութիւնքը ինքնին չկրնար հոգալ, և սակայն բարեսէր ձեռքեր կկառկառին յօգնութիւն. ազգատեցութի՞ւն ըրած կըլլայ երբ նոցա նպաստն ընդունելու մերժենայ։ Հայ Բողոքականը Ամերիկացւոց նպաստները ընդունելով ազգին ի՞նչը վրայ տուաւ, նորա ի՞նչը կորոյս, ազգին ո՞ր իրաւունքը ոտնակոխ ընել տուաւ։

ԾԺԶ. Բան մը դեռ կորուսած չեն ալ նէ, կխորհին ոմանք, մեզմէ բաժնուելովնին ուժերնիս կտկարացունեն, մէկտեղ մնայինք, միաբանաբար գործէինք, իրարու դէմ չըլլէինք նէ լաւ եւս չէ՞ր ըլլէր։ Ոչ, չէր լինէր. որովհետև Լուս. դրութիւնը պիտի թող չըտար ժողովրդեան մէջ Աւետարան տարածել, զի մի նախնեաց աւանդէն խոտորին, և առանց բաժնուելու անոր ազդեցութենէն այս կարևոր գործը չէր կատարեր։ Լուս. դրութիւնը իւր արարողութեամբը և բազմաց անիմանալի լեզուաւը չէր կրնար ազգին մէջ Քրիստոնէական հոգին արծարծել, առանց որոյ բարոյական անգործադրութեան մէջ պիտի մնային։ Ազգը խեղճ կացութեան մը մէջ էր, որ չէր կրնար զինքը կրթելու քարոզիչ և ուսուցիչ պատրաստել, չէր կրնար դաստիարակութեան գործը յառաջ տանիլ։ Այո, Հայաստան Քրդաց բռնութենէն ազատելու համար այսօր Հայը ինչպէս կկարօտի Քրիստոնեայ պետութեանց պաշտպանութեանը, նոյնչափ Հայաստանեայց ժողովուրդը տգիտութեան ճիրանէն ազատելու համար կկարօտէր երէկ Ամերիկացւոց ձեռնտուութեանը։ Հիւանդանոց մը շատ մեծ և բազմաթիւ հիւանդ ունենալովը չէ որ կրնայ լինել անուանի և բժշկել զախտաժէտս, անօթի ճամբորդները իրարու բեռ են մանաւանդ քան նպաստամատոյց։ Ուստի եթէ հիւանդաց ոմանք երբ աղէկնան քիչ մը և դուրս ելլեն նէ, հիւանդները մեզ տկարացուցիք կրնա՞ն ըսել պատշաճապէս. ճամբորդաց ոմանք երբ կաճապարեն յառաջ կանցնին և կերթան մերձակայ գիւղէն օգնական ուղարկելու, կրնա՞ն մեղադրեուիլ թէ ընկերնին ճամբան թողին։ Եթէ ազգը ցարդ այսպիսի սխալ խորհուրդներով իրարու դէմ զինեցաւ, թող ալ ուշաբերի, օտարին նպաստն ալ իրեն ունեցածին հետ խառնէ և իմաստութեամբ յօգուտ գործածէ։ Ասոր վրայ պատեհ առթիւ ուրիշ տեղեր ալ գրոյց պիտի լինի, վասն որոյ աստ՝ այսքանս թող բաւ համարուի։ (Տես Գլ. Զ. 2, 3)։ —

6. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ՝ ՀԱՅՈՑ ԱՒԵՏԱՐԱՆ ՔԱՐՈԶԵԼԸ ՀԱԿԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԳՈՐԾ Է ԿԱՄ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԾԺԷ. Հայք ոմանք՝ ո և է պատճառաւ չկարենալով վերահասու լինել կամ համոզուիլ, թէ Բողոքական Քրիստոնէից Աւետարան քարոզել տալը Հայոց ազգին փրկական է և կեցուցիչ, իբրև ազգին բարելաւութեան փափաքողներ, կատեն զԲողոքական Քրիստոնեայս համարելով նոցա գործը ազգին կորստական և քայքայիչ։ Ընդհանրապէս կանարգեն Հայ հեղինակք զԲողոքական ընկերութիւնս, որ իրենց մէջ Միսիոնարներ խրկեր են, ինչպէս է «Բարի մարդ և բարի Քրիստոնէի" Ե. գլուխը, ուր Սրբազանը բազմիցս կարտայայտէ այս մասին սրտին ցաւը։ «Այս Բողոքական անուանեալ քարոզիչները (և զանոնք խրկող ընկերութիւնները) ի՞նչ բան ունին Քրիստոնէական ուղղափառ հաւատքով և մկրտութեան շընորհիւ յաւիտենական կենաց ժառանգաւոր Քրիստոնեայ (Հայ և Յոյն) ազգերուն մէջ . . . այս հաւատացեալները անոնց հաւատոյ քարոզութեան կարօտ չեն (զի) առողջ գործունեայ հաւատք ունին։" Դարձեալ, «Այս Բողոքական քարոզիչները Ս. Աւետարանէն և Սըրբազան Առաքեալներէն չունին հեղինակութիւն։ Քրիստոնեայ ազգաց մէջ մտնելով, իրենց վարդապետութիւնը քարոզելով մոլոր պարզամիտներուն, և անոնցմէ ժողովուրդ ստանալով իրենց Բողոքական անունը անոնց վրայ դնելը ուրկի՞ց սորվեցան։" Այսպիսի համոզումն եղաւ մէկ պատճառն ալ, որով ազգը Ամերիկացի Քրիստոնէից ձեռնտուութիւնը մերժեց բացէ ի բաց և անարգեց զնոսա, ինչպէս ցուցուցաւ վերը՝ ի գլուխ Բ. 4 և 5։ Ուրիշներ ալ նոյն ցաւը յայտներ են շատ անգամ, և առ հասարակ անարգանօք կխօսին Բողոքական Քրիստոնէից այս ձեռնարկութեան վրայ, առանց Մուհամմէտականաց և Հրէից համար կրած աշխատութիւննին յիշելու։

ԾԺԸ. Ոմանք ալ կամ այսպիսի անարգանք մը չուզելով ընծայել հռչակաւոր Բողոքական ազգաց, կամ անգիտութենէ թէ միակամ են ամենայն Բողոքականք Աւետարան տարածելու մասին, կհամարին թէ միայն Ամերիկացիք են որ Հայոց Աւետարան քարոզել կուտան, ուստի և միայն զանոնք կանարգեն։ Այսպէս կընէ Մասիս շատ անգամ, զոր օրինակ 272 թուով կըսէ, թէ «Մեր գանգատները բնաւ վերաբերութիւն չունին այն արգոյ և պատկառելի Բողոքական ազգաց, որք են Անգղիացիք՝ Բրուսիացիք՝ Գերմանացիք և ուրիշ անոնց նման իմաստուն՝ իրաւասէր և իրաւագէտ Բողոքական

ժողովուրդները", այլ միայն Ամերիկացւոց։ Ջանք ալ եղած է ցուցընելու, թէ ոչ միայն այլ Բողոքական ազգեր համամիտ չեն ընդ Ամերիկացիս, որ Հայոց Աւետարան քարոզեն, այլ թէ Ամերիկացիները չեն ընդունիր իսկ իրենց հաղորդակցութեան մէջ։ Այսպէս կուզէ ցուցնել Մասիսի (թիւ 385) Մ. Ա. Յօդուածագիրը, երբ այն թէ Անգլիոյ և այլ Եպիսկոպոսական եկեղեցիները՝ Ամերիկացիներէն այնչափ հեռու են, որչափ որ Հայերը՝ Յոյները և Պապականները։ "Հայոց եկեղեցին և Ամերիկացի քարոզիչք" անուն տետրակն ալ մեծ ջանք կընէ որ հաւատացունել տայ ընթերցողաց, թէ Ամերիկացի քարոզիչները (հետևապէս զանոնք ղրկող եկեղեցիները) մերժուած և հերետիկոս համարուած են աշխարհիս մէջ գտնուած բոլոր մեծ Բրօթեսթանդ եկեղեցիներէն։ Եւ թէ այս քարոզչաց կրօնական սկզբունքը հերքուած ու դատապարտուած են, ուստի "սատանայական մեծ սուտ մը" խօսելու յանդգնած կըլլան միսիոնարք՝ երբ կը ցուցնեն թէ իրենք աշխարհիս մէջ եղած 90,000,000 Բրօթեսթանդաց հետ յարակցութիւն և հաղորդակցութիւն ունին։

ԾԺԹ. Յուսալի էր թէ այսպիսի սխալ տեղեկութիւններ պիտի չակուէին երբ ուղիղ տեղեկութիւններ տրուէին Բողոքական ընկերութեանց, Նոցա Աւետարան քարոզելու ջանից, և ամենուն մէջ գտնուած միաբանութեան վրայ։ Մանաւանդ երբ վերահաս լինէին ընկերութեանց գործերուն, որք միաբանաբար կաշխատին ի Տաճկաստան, որոց վրայ հակիրճ տեղեկութիւններ տրուեցան վերը ի գլուխ Բ. (խնդ. 2, 3)։ Այն խրողութեանց վրայ շարունակ նորանոր տեղեկութիւններ տրուեցան, իսկ թուի թէ Լուսաւորչականութեան ջատագով հեղինակներ կամ զանոնք չեն իմացեր կամ խորհուրդնին փոխել չեն ուզեր։ Մանաւանդ թէ ոմանք զայրացած խակերևին տեսնելով հակառակորդաց միաբանական զօրութիւնը, որոյ դէմ դնել և յաղթել իրենց համար յուսալի բան չէր։ Արմաշու Յոյսը (Հատ Զ. 1) "Հին խաչակիրները," կըսէ, "փոխանունաբար Աւետարանական ուխտ տիտղոսով անցեալ օրեր (Յամի 1876) եկին մեր երկիրը և մեր վեհապետին յիշատակագիր մատուցանել ուզեցին ի մասին կրօնական ազատութեան։ Գոհութիւն ունի ամբողջ Տաճկաստան մեր կառավարութեան իմաստութենէն, որ մերժեց Աւետարանականներուն պատգամաւորութիւնը . . . Տաճկաստանի Քրիստոնէական եկեղեցիք . . . ուրախ եղան, և իրաւունք ալ ունէին որ մերժուեցան այս ոչ—առաքեալները . . . Մենք մեր վեհապետին պատգամաւորութեամբ ներկայանալով աւելի իրաւունք ունինք խնդրելու որ հեռացունէ մեր երկրէն այս խռովարարները,

որ յանուն Անգլիոյ և Ամերիկայի հասարակութեան Քրիստոնէութիւն տարածելու կու գան։"

ԾԻ. Հռչակաւոր ազգաց՝ միլիոնաւոր ժողովրդոց՝ և երևելի եկեղեցեաց վրայ այսպիսի անարգութիւն թափող բերաններէն ի՞նչ կրնայ սպասուիլ որ ըսեն իրենց մէջ գործող քարոզչաց կամ Միսիոնարաց համար։ Ատոնց ըրածին մին կամ անոնցմէ մէկը գրով գովող մը չտեսնուիր ի հրապարակի, իսկ անարգող՝ քամահող և ամէն տեսակ նուաստութիւն նոցա վերայ դնողներ շատ շատ են։ Անանկ որ Միսիոնարաց վրայ խօսող որ և է գրութեան մէջ յեղյեղեալ և կրկնուած են հետևեալները՝ իբրև սովորական մակդիր որ նոցա կպատկանի։ Ամերիկացի Միսիոնարք են "ստախօս, խարդախ խաբեբայ, հերետիկոս, սուտ առաքեալ, դև, սատանայ, ևն. ևն։" Առ Լուսոյ մէկ թիւը ձեռքդ, զոր օրինակ ԺԳ. ը Նոր աղանդ ոչ—առաքեալները պիտի ստորագրեալ գտնես իբրև "կրօնի ապստամբներ," "ամբարշտութեան վատ ոգի կրողներ," որոց "նպատակն է մի միայն անձնական շահ։" Այսպիսի անարգանաց վրայ կդիտէ Դիտակ (թիւ 141), թէ "Հիմա հանրութեան միտքը այն հին վիճակին մէջ չէ, որ չոր խօսքով ահաբեկի, ամէն մարդ բաւական վարժուեցաւ իր լածներուն մէջ փաստ և իրողութիւն որոնելու փառաւոր կանոնին, անանկ ամէն լածին կայր զկուրայն այս բառ ապուշներ շատ քիչ՝ և գրեթէ չկան հիմա։"

ԾԻԱ. Աւետարանական ընկերութիւնք և պատուելի Միսիոնարք այս արտայայտութեանց վրայ կնային իբր նշան տգիտութեան, քրիստոնէական զգացմանց թմրութեան և բարոյական սկզբանց ապականութեան։ Հետևապէս՝ ոչ միայն չեն լքաներ իրենց գործը այլ առաւել գործունէութեան պարապ մը կտեսնեն, իբրև բժիշկներ որ հիւանդին վրայ կորուսիչ ախտին ստոյգ նշանները կտեսնեն։ Որովհետև Հայ հեղինակներ այնպէս կխօսին, մանաւանդ կրօնական խնդրոց և իրողութեանց վրայ, որպէս թէ ամէն բան կատարելապէս գիտեն, մինչ նոյն իսկ գրութիւննին կցուցանեն թէ տգէտ են շատ մը կարևոր գիտելեաց։ Ասոր օրինակ կրնայ համարուիլ ինչ որ վերը ըսուեցաւ նկատմամբ Տաճկաստան գործող Բողոքականաց վրայ, որպէս թէ աշխարհի վերայ Աւետարան քարոզող միայն Ամերիկացիք կան. անոնք ալ մերժեալ են համայն Բողոքական եկեղեցիներէ։ "Իմաստունին մէկը, կըսէ հեղինակ մը, խեղճ և տկար մտաց առաջին նշան այս կը սեպէ, որ չգիտցած բանին վերայ գիտցածի պէս կճառամաբանէ։" Եթէ Հայք գիտուն և փորձառու ըլլային Քրիստոնեայ աշխարհի օգնութիւնը չէին մերժեր և

արհամարհէր, մինչ նորա շատ ու շատ կարօտ ըլլալին անուրանալի է։ Միով բանիւ՝ Հայք եթէ խելացի և իմաստուն ըլլային չպիտի երևէին այնպէս, ինչպէս ցարդ երևեցան ի հանդիսի, զորս՝ եթէ օգտի մը համար չըլլար, արենակցութեան պարտք մը պիտի ըլլար հանդիսաւորին որ ծածկէր զանոնք։

ԾԻԲ. Հայուն համար աշխատողները, ըսինք, նոցա վրայ կնային իբրև ժողովուրդ որոյ Քրիստոնէական աշխոյժը գնացեր և ոգին թմրեր է, որ ոչ միայն ուրախութեամբ չողջուներ Քրիստոնէական կրօնին ի Տաճկաստան տարածելու ջանքերը, այլ և կուրախանայ որ կրօնի ազատութիւն խնդրող պատգամաւորք անյաջող կդառնան։ Հայը սովորութեան մէջ չէ կրցեր իր կրօնը Մահմէտականին ճանչցունել, և երբ ազատ ժողովուրդներ կուգան նոցա համար գործելու, փոխան նոցա ըստ կարի ձեռնտու ըլլալու՝ արհամարհանօք կելնի ընդդէմ նոցա։ Հայը Աւետարան տարածելու և քարոզելու պարտքը այնպէս մոռցեր է, որ հաւատալը չի գար թէ աշխարհի մէջ ժողովուրդ կայ որ ատիկա իրեն բան գործ ըրած է։ Եւ ինչո՞ւ այսպէս պաղ՝ անարգանօք և արհամարհանօք կվարուի նոցա հետ, որովհետև կըսէ, կրօնիս թշնամի են՝ եկեղեցիիս բան կըսեն։ Եթէ իրաւամբ կըսեն ցաւէ և շտկէ, խօսք մտիկ ըրէ և բարեկարգէ, եթէ յանիրաւի, պարտիս ըսել. "Հայր թող սոցա զի ոչ գիտեն զինչ գործեն։" եթէ անհատ անձի ներելու ես, պարտական չե՞ս ներել և ժողովրդոց։ Հապա ի՞նչ են այդ անարգանքները որ կուզես բերել ազգաց և ժողովրդոց, ընկերութեանց և մանաւանդ նոցա գործաւորաց վերայ, որք միայն անձնական շահու համար կաշխատին կըսես։

ԾԻԳ. Եւ ահա այլոց վերայ Հայոց ոմանց այսպէս խօսիլն և այլոց նոցա ձայնին ականջ դնել և ըսելը՝ ցոյց մը կըլլայ յաչս Միսիոնարաց որ զմեզ բարոյական սկզբունք չունեցող՝ նուաստախոհ ժողովուրդ համարին։ "ի յաւելուածոյ սրտի խօսի բերան," կըսէ Ս. Աւետարանն, և ստոյգ է թէ մարդ իրեն պէս կսեպէ զամեն մարդ, ուրիշին վրայ վճիռ տուած ատեննիս շատ անգամ ինքզինքնիս գտած՝ մեր ինչ ըլլալը յայտնած կըլլանք։ Ըստ Հայ գրիչներու, զորս յիշեցինք նախորդ և այս խնդրոյն մէջ, կերպով նուաստ շարժառիթով միայն Բողոքական եղած են իբր 25—30,000 Հայ, ընկ անձնական շահու և խաբէութեան համար է որ իբր 100 Միսիոնարք 40—50 տարի կընէ կաշխատին ի Տաճկաստան. մի միայն Բողոքական անունը մարդոց վրայ դնելով իրենց գաղափարակիցները շատցունելու նպատակաւ է որ երկրիս ամէն կողմերը գործակատարներ կուղարկեն ընկերութիւնք։ Այսպէս կգրեն Հայ եպիսկոպոսներ՝ վարդապետներ և աշխարհականներ և մէկը չհամարձակիր կամ չուզեր ասոնց հակառակը գրել, ալ ի՞նչ կըլլայ օտարականի մը այսպիսի ժողովրդեան վրայ ձևացունելու գաղափարը։ Աղէկ որ մեզի համար աշխատողները մանաւանդ կարգահասին քան կրտսերին, երբ մեզ այսպէս կգտնեն, և կվարուին հետերնիս ինչպէս պէտք է վարուիլ տղու մը հետ որ դեռ բարոյական սկզբանց վարժ չէ և գիտէ թէ մի միայն ուտել է ամենայն գործողութեանց վախճանն։

ԾԻԴ. Ներեն ընթերցողք, եթէ կհամարին որ Հայը կանարգեմ և օտարը կգովեմ, ինչպէս զեկուցի ի Յառաջաբանի անդ (Ժթ.) չեմ իշխեր շատ մը Հայերուն այս թերութիւնը պատրուակել և չհրատարակել օտարաց արժանիքը, որք կրնան կոչիլ բարերարք ազգիս։ Մանաւանդ թէ ազգին շահն ու կրթութիւնը իսկ կպահանջէ գէթ այսքան մը պախարակել, որ ըսածնուն վրայ խորհին և ուղղեն խորհուրդնին և խօսքերնին, եթէ կուզեն ի դաստիարակութեան՝ ի Քրիստոնէական վարս և յառաքինութիւնս յառաջ դիմել. և այս ջանքերնուն մէջ օտարէն օժանդակութիւն գտնել, որոյ կկարօտին։ Ուստի իբր Հայ պարտ անձին կվարկանեմ հրապարակաւ խոստովանիլ ազգակցաց ոմանց այս թերութիւնքը և թողութիւն իսկ խնդրել, եթէ համոզուած չըլլայի թէ նոքա, ոչ այնքան մեր շնորհակալութենէն ու գովեստէն, և ոչ երախտամոռացութենէն ու նախատինքէն ներգործութիւն կընդունին, որքան որ իրենց պարտուց ճանաչումէն և զգացումէն։ Եւ թերևս քիչ քաջալերութիւն ալ եղած չէ նոցա՝ տեսնելով որ բոլոր Հայերը համախոհ չեն այն նախատչաց հետ, այլ ազգին մէջ կան յոլովք որ ի դիպել առթին բանիւ բերանոյ գոհունակութիւն յայտնած են Աւետարանական ընկերութեանց և պատուելի Միսիոնարաց այն գործոց վրայ՝ որ զՏաճկաստան աւետարանելու և Հայը դաստիարակելու կծառայեն։ Այս կարգէն են և Հայ Բողոքականք որ մերթ և գրով շնորհակալութիւն մատուցանելէ չեն պակասիր, ինչպէս ըրին Աւետարանական Դաշնակցութեան ժողովոյն, որ ի Պեռլին Յ. 1857, և նոցա պատգամաւորաց՝ որ եկին մերս ի Տաճկաստան խնդրել լիակատար կրօնական ազատութիւն։

ԾԻԵ. Քանզի ըստ տեսութեան Բողոքական հասարակութեան Քարոզչական և Ս. Գրոց ամէն ընկերութիւն, յատկապէս Ամերիկեան Պօրտ, քրիստոնէական պարտք մը կկատարեն (Գղ. Բ. 1), և Հայուն մեծամեծ օրհնութեանց դուռ բացեր են այնու գործառնութեամբ զոր սկսեր են ի Տաճկաստան, և Պատուելի Միսիոնարք ևս ի փառս Քրիստոսի անձնուէր ծառայութիւն կմատուցանեն Հայոց,

ինչպէս և այլ ազգաց, որ բարեկարգեալ եկեղեցի և դաստիարակեալ ժողովուրդ մը ըլլան։ Թէպէտ և գիտեն բնիկ Բողոքականք թէ Մխիթարեանց մէջ կրնան գտնուիլ անձնասէր և անպիտան մարդիկ, կրնան ընել անխոհեմ և վնասակար գործեր, իսկ ասով հանդերձ՝ անուրանալի է թէ նոցա գործերն մեծաւ մասամբ Հայոց շահաւէտ է և նոցա խորհրդոց վախճանը փրկաւէտ։ Թէպէտ և Պօրտի բոլոր անօրէնութիւնքը հաճելի չեն թուիր Հայ Բողոքականաց, ինչպէս է այն որ ստակի մատակարարութեան մասին խորհրդական չընդունիր բնիկներէ, Մխիթարք ևս չեն կրնար կամ չեն ուզեր բնիկներու խորհրդոց հետևիլ դրամական գործոց մէջ, (տե՛ս Գիտակ թիւ 103, 106, 107 և 112), թէպէտ մերթ կտրտնջան՝ տեսնելով իրենց շատ մը կարօտութիւնքը և համարելով թէ ընկերութիւնք, նա՛ Մխիթար պատուելիք, կրնան այս կարօտութիւնները լեցունել, բայց չեն ըներ, ինչպէս բարձրագոյն դաստիարակութիւն և ճոխ մատենագրութիւն ունենալու գործը. կան ալ որ գանգատ կընեն երբ կտեսնեն թէ Բողոքական ազգեր բնիկներուն ակնկալածին չափ ջանք չեն ըներ՝ որ Հայ Բողոքականք ունենան ազգային լաւ կազմակերպութիւն և Բ. դրան առջև առաւել նկատողութիւն, պէտք եղածին չափ դպրոցի և հիւանդանոցի շէնքեր և հոյակապ եկեղեցիներ կամ աղօթատեղիներ. սակայն և այսպէս այն ազգաց ըրածներէն մեծապէս գոհ են բնիկք, մանաւանդ անոնք որ կվստահին թէ յիշեալ ազգերը չեն կրնար աւելին ընել՝ քան զոր կընեն, և բնիկները կյուսան որ անկից վերջն առաւելն ընելու պիտի հաճին անոնք, և ասոր նշան կրնան համարիլ Կոստանդնուպօլսոյ Պայպըլ Հաուզը և Ռօպերտ գօլէճը, և ևս Անթապու կեդրոնական և Խարբերդու Արմենիա գօլէճները որք վերջերս հաստատեցան և որոց ծառայութիւնը մեծաւ մասամբ Հայուն կպատկանի։

7. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՄԷՋ

ԾԻԶ. Եթէ անդրադառնանք և նայինք որ ինչ հանդիսացաւ այս գլխոյն մէջ և բովանդակենք զանոնք, պիտի տեսնենք թէ Հայ ազգին մէջ նկատմամբ եկեղեցական կարևոր խնդրոց այս օր տարաձայնութիւն մը կտիրէ, և այն ոչ միայն ընդ մէջ Պապական՝ Բողոքական և Լուսաւորչեան ազգակցաց, այլ և ի մի և նոյն գաւիթ միութեան, ի ծոց Լուսաւորչական եկեղեցւոյն ժողովեալ համադաւան եղբարց մէջ։ Թողունք հոս Պապականը որ երթայ իր Մխիթարեան

և Գօլէճեան վարդապետները միաբանեցունէ, և Հասունեանց ու Հակահասունեանց կռիւները դադրեցունէ։ Թողունք վայրիկ մալ Բողոքականը, որ «ազատ մը ժողովուրդ» կհամարուի և զատ եկեղեցական կազմակերպութիւն ունի։ Եւ առ այժմ նկատենք Լուսաւորչականը, որ մեծամասնութիւնն է Հայ ազգին, որոյ գործերը մեծ ազդեցութիւն ունի հանրութեան վերայ, և որ իր վրայ կկրէ Հայ. Լուսաւորչեան անունը։ Պատմական իրողութիւնք կցուցնեն մեզ, ինչպէս տեսանք ու պիտի տեսնենք ի հանդիսի աստ (ՄԷ. ՄԲ.), թէ այս եկեղեցական մարմինը այս օրուան օրս կռնակ դարձուցեր է Պապականութենէ, առ որ կդիմէր քանի մը դարուց ի վեր, և դէմ եղեալ կերթայ ի Բողոքականութիւն, որոյ ծանօթացաւ վերջին յիսուն տարուան միջոցին։ Բողոքականութիւն՝ որ հակադրականն է Պապական դրութեան, և միակ դրութիւն Քրիստոնէական կրօնի, որ կրնայ ազատ քաղաքականութեան և ճշմարիտ գիտութեան հետ յառաջ երթալ, որոյ հետամուտ է Տաճկաստանի Հայը։ Այնանկ որ Լուս. եկեղեցւոյ որդւոց եկեղեցական իրաց վերաբերեալ գաղափարները այս երկու ծայրերուն, իմա պապականութեան և բողոքականութեան մէջ տարածեալ կայ, երկու կողման վրայ ալ հակեալներ եղեր և հաստատեալ կեցեր են։ Ուստի դրոց և գլխոց մէջ երկաքանչիւր կողման ալ գաղափարակից՝ ջատագով և հակառակողներ ունի, թէ և ունի և մեծամասնութիւն մը որ երկու ծայրերէն ալ քաշուելով կդիմէ ի միջակէտ և կուզէ կղզիանալ ի Լուսաւորչական դրութեան։ (Տես Արևելեան մամուլ 1874 ի Ա. թիւ)։

ԾԻԷ. Ասկէ պիտի տեսնուի թէ Լուսաւորչականաց մէջ տարաձայն անդամք հարկաւ պիտի ըլլան և իրօք ալ կան, ինչպէս ըսինք (Զ. ԶԱ.), Հնասէրներ և Նորասէրներ։ Հնասէրները կնզովեն զԲողոքականութիւնը՝ իբր մոլորութիւն որոյ «ծայրը յանհաւատութիւն կը յանգի։» Նորասէրները կօրհնեն զնա որ դուռն բացաւ ազատ խորհրդոյ նկատմամբ աւանդութեան եկեղեցւոյ։ Նոքա Քրիստոնեայ անուան իսկ արժանի չեն համարիր զԲողոքական ազինս, սոքա նոցա գաղափարները կորդեգրեն և կրօնական հաղորդակցութիւն ալ կընեն ընդ Բողոքականս։ Հնասէրները կջանան յամենայն զօրութենէ որ նախնեաց դաւանութենէն՝ կանոններէն և արարողութիւններէն չհեռանան, Նորասէրները կուզեն հաւատալիքները պակսեցունել, կանոնները բարենորոգել և արարողութիւնը փոփոխել մոռնալով ինչ որ ըսեր են հինները և ըրեր են։ Նոքա եկեղեցին իրենց կռնակ ըրած ո՛չ ինչ բան կփոխեն, սոքա տուները իրենց ամրոց ըրած կընեն ինչ որ կուզեն, թէ և ապստամբ համարին

եկեղեցական իշխանութենէ։ Հնասէրներն կպնդեն թէ Հայ եկեղեցւոյ դաւանութիւնն ողջամիտ են եւ չիք ի նոսա ինչ հակառակ Ս. Գրոց, կանոններն ամենայն իմաստութեամբ սահմանադրեալ են եւ գործադրութիւնն ազգին կարեւոր, արարողութիւնք եւս անփոփոխելի եւ յորմէ լաւագոյնը չկրնար ըլլալ։ Նորասէրները կը հաստատեն թէ հաւատալեաց մէջ կան ուղղելի վարդապետութիւններ որք չեն կրնար հաստատուիլ Ս. Գրովք, կանոնադրութեանց մէջ պէտք է ըլլայ հարկաւոր բարենորոգում որ ազգին պիտոյից յարմարի, մանաւանդ արարողութիւնք պէտք է բարեփոխուին որ շինութիւն տան ժողովրդեան մտացն ու սրտին։ Նոքա կրցածնուն չափ կգովեն ինչ որ եկեղեցական է, եւ պակասութիւնները ուրիշ պատճառաց կընծայեն, սոքա անլուռ են նոցա գովեստից եւ հակեալ արհամարհելու նոցա գովածը, եւ շատ մը թերութիւններ՝ որ ուրիշ պատճառներէ յառաջ կու գան կընծայեն եկեղեցական դրութեան։

ԺԻԸ. Այս տարաձայնութիւնքը հարկաւ չէին կրնար անգործադրելի մնալ եւ իրօք ալ հակառակ ջանքեր եւ գործողութիւններ ալ տեսնուեցան։ Եղան Նորասէրները եւ Ազգային Սահմանադրութիւն մը խմբագրել տուին, յուսալով թէ ատով ճար մը պիտի գտնէին եկեղեցական սահմանադրութիւն մալ ընել տալու։ Հնասէրները վերահաս եղան ատոր, ուր հանեցին եկեղեցական դասը, ատոնք ալ դռնհիկ մասը թելադրեցին, ընդդիմութիւնք մեծցան եւ սահմանադրական կռիւներն բացուեցան։ Ասոնց յաջորդեցին լուսաւորեալները, որ կուզէին Երուսաղեմայ միաբանութիւնը եւ այլ վանս ազգին պիտոյից ծառայեցունել, խաւարեալ կոչուած կուսակցութիւնը կընդդիմանար ասոնց եւ յաջողեցաւ ալ։ Լուսաւորեալք Լուսաւորչեան անուամբ երեւան ելան, որք կըսէին թէ նախ եկեղեցին բարեկարգելու է, որ կղերը բարեկարգի եւ սահմանադրութիւնը գործադրելի լինի, եկեղեցականք շուտով կրցին ասոնց միաբանութիւնը քակել, ցուցունելով թէ ազգը Բողոքական ընել կուզեն։ Հետեւութիւնը աս եղաւ որ նոքա պաղեցան եկեղեցիէն եւ զզուեցան եկեղեցականէն, եւ սկսան պապականութեան անուամբ այլ եւ այլ գրութիւններով ծխականութիւնն եւ եկեղեցականութիւնն նենգագործ ճանչցունել, ինչպէս է Յառաջաբանն «Անիծեալ Աբբայի»։ Սոքա ալ՝ ճարերնին հատած զանոնք անհաւատ եւ անկրօն կճանչնան, իսկ առ ահի չեն նեղեր, որ չըլլայ թէ եկեղեցին ուրիշ հատուած մալ տայ։ Քանզի երկուքին կողմանք ալ չեն ուզեր ազգին մէջ բաժանումն հանել, զոր վնասակար կսեպեն ազգային յառա-

ջադիմութեան եւ մարդկութեան անպատշաճ ու անկարեւոր՝ իրաց այս պարագայից մէջ։

ԺԻԹ. Եւ ահա այսու համոզմամբ է որ սոքա եւս կմիաբանին ընդ աւանդապահս եկեղեցւոյ, եւ կպնդեն թէ երբեք՝ պատճառ չկայ Լուսաւորչական եկեղեցիէն դուրս ելլելու։ Որոց կընդդիմանան Բողոքականք ցուցունելով թէ ազգին բարելաւութիւնը կպահանջէ բարեկարգութիւն եկեղեցական յօրինուածութեան, զոր յարդիւնս ածել անկարելի կթուի մնալով ի ծոց նոյն եկեղեցւոյն։ Նոքա որ հաւանական կսեպեն այս բարենորոգումը, կաշխատին գրքերով պատրաստել ժողովրդեան միտքը, սոքա որ անհաւանական կսեպեն այն ակնկալեալ բարեկարգութիւնը, անբաւական դարման կը ճանչնան մի քանի անձանց մեղմով եղած ջանքը՝ ընդդէմ մեծ բազմութեան մը հակառակ ջանից։ Լուսաւորչականաց կրօնասէրները, հետեւապէս, եկեղեցիէն հատուածեալ Բողոքականները կսեպեն մոլորեալ՝ հերետիկոս. . . եւ անհաւատ, իսկ կրօնը մեծ բանի տեղ չդնողներ ալ կան՝ որ զանոնք ազգուրաց՝ կրեւք պաշարեալ. . . եւ նուաստ կհամարին. Բողոքականք ալ այսպիսեաց վրայ կնային՝ զոմանս իբրեւ նախապաշարեալս եւ զոմանս չափազանց ազգասէրս նկատելով։ Վասն զի սոքա յանիրաւի կմեղադրեն եւ կանարգեն ոչ միայն Հայ Բողոքականները, այլ եւ Բողոքական ընկերութիւններն ու նոցա գործակալները, որք կաշխատին ի Տաճկաստան եւ արժանի են Հայոց ալ բարերարներ կոչուելու։

ԺԼ. Ասոնք ալ, Հայ ազգին Քրիստոնէական վարուց եւ կատարեալ դաստիարակութեան մէջ յառաջ երթալու մասին, այնպիսի կարեւոր խնդիրներ են, որոց վրայ տարաձայնիլը յառաջընթացութեան առջեւ խոչեր եւ արգելքներ դնելու առիթ կըլլան։ Վասն որոյ Լուսաւորչականք իրենց մէջ եղած տարաձայնութեամբը դեռ չեն յաջողեր Քրիստոնէական հրահանգներ սահմանել, թողունք գործադրել, դաստիարակութեան համար սահմանեալներն ալ կան եւ մնան անգործ եւ իբրեւ զչեղեալ։ Այս ցաւալի կացութիւնը իրողութեամբ ի յայտ պիտի գայ երբ յառաջ երթանք Լուսաւորչական հասարակութեան որպիսութիւնը նկատելու (ի գլուխ Դ.)։ Հոս տեղն է որ նկատենք թէ այս խեղճ ազգին երկու ճիւղերը, Լուսաւորչականն ու Բողոքականն, առաւել տարաձայն են ընդ միմեանս եւ գրեթէ բոլոր գործողութիւնին իրարու թշնամական կերեւին, հետեւապէս իրարու դէմ կելլեն եւ փոխան շինութեանց շատ անգամ աւեր կը գործեն։ Մէկը իր բազմաւորութեամբը եւ նախնականութեամբը եւ միւսը իր Արեւմտեայց պաշտպանութեամբը եւ բարեկարգեալ ըլլա-

լու պահանջմամբը՝ ուր որ պատահին իրարու, դէմ առջի բերան՝ ուր բողոքականութիւնը նոր տարածիլ կսկսի, կընդհարկանին ընդմիմեանս, և Հայը կվնասէ զՀայը ի՛նչ կերպով որ պարագայք կներեն։

ՃԼԱ. Այսպիսի սաստիկ ընդհարում մը տեղի ունեցաւ Յամի 1860 ի Կոստանդնուպօլիս Խալիճէ Գաւուսին, ուր Հայոց գերեզմանատունը Բողոքականի մը դիակը թաղել ուզեցին Բողոքականք, որոց դէմ ելաւ բրաղէն գրոհ մը, զոր վանելու համար պէտք եղաւ խումբ մը զինուորաց սուիններու միջամտութիւնը։ Այս յաղթութեան, զոր արարին Հայք՝ դիակը երկու օր անթաղ պահելով, արդիւնքը եղաւ վեհափառ կայսեր գերեզմանի կալուած մը շնորհելը Բողոքական հասարակութեան։ Զայս երբ ստացան Բողոքականք՝ խնդրեցին Պատրիարքարանէն թոյլ տալ որ համբիւն եղբարք ի մի հող տապանին հանգչին, և զանոնք որ՝ եկեղեցական և քաղաքական իրաւասութենէ զատուելու պարտաւորեցին, չպարտաւորեն և գերեզմանատունը զատել։ Պատրիարքարանն լաւ սեպեց որ կարելի եղած ամէն բանով հեռանան՝ և հաղորդակցութիւն չունենան հիւանդամիտ ժողովրդեան մը հետ, զի մի դուցէ իրեն կենդանի կամ մեռեալ հասարակութեան ալ փոխուի նոցա ախտը։ Այս խնդրութիւնը, զոր պարծանօք հրատարակեցին լրագիրք, ծանուցում մը եղաւ որ և ի Գաւառս Բողոքականները Հայ գերեզմանոցները չթաղուին։ Ակնցիք այնպէս հաւատարիմ եղան այս ազդարարութեան, որ յաջողեցան ցուցունել թէ Ակնայ բոլոր հողերը գերեզման են ազգին, մինչ իսկ պարտաւորել որ Բողոքականք իրենց առջին մեռեալը քաղքէն 8 ժամ հեռացունեն՝ Արաբկերու Շփիկ գիւղը տանին։ (Տես Աւետ. 1872ի 39 և թիւ 146, 147)։ Զմկլացակցիք ալ՝ ինչ որ չյաջողեցան ցերեկը ընել, քանզի Բողոքականք գերեզմանատուն ունէին և ամփոփեր էին ննջեցեալը, համարձակեցան գիշերը ընել, դիակը հանեցին և բարբարոսաբար խայտառակեցին։ Ուրիշ տեղ մալ Բողոքականաց գերեզմանէն հանեցին և Հայոց գերեզմանը տարին թաղեցին՝ ի գիշերի, որ ցոյց մը էր մոգական զօրութեան մը, թէ կրնայ և մեռեալ Բողոքականը իսկ դարձունել ի ծոց չիրմի Հայոց։

ՃԼԲ. Մեռելոց հետ եղած այսպիսի վարմունքներէն կրնան մակաբերուիլ թէ կենդանեա՛ց հետ ինչպէս կապրին ասոնք։ Բողոքականաց 1846ի հրատարակած Յայտարարութիւնը կըսէ, թէ Թողլով Մայրաքաղաքի մէջ եղածները, որք յիշատակեցան ի վեր անդր (կթ), «Կարնոյ մէջ եկեղեցական մը երեք տարի առաջ անողորմաբար ծեծ կերաւ Եպիսկոպոսէն Աւետարանը քարոզելուն համար։ Տրապիզոնի

մէջ մեզմէ մէկը աքսորեցին ի Քարահիսար երկու տարի առաջ։ Նոյնպէս մէկն ալ տարի մը առաջ Տրապիզոնէն Պօլիս խրկեցին և Եէտի Գուլէի հիւանդանոցը շղթաներով կապեցին. առաւել դեռ վարուելով նմա հետ քան թէ ամենանուաստ եղեռնագործի մը հետ, ո՛չ այլ ինչ պատճառաւ՝ այլ Աւետարանը ընդունելուն համար։ Թող տեղ տեղ բանտարկուողներուն և ծեծ ուտողներուն և տուժ տուողներուն թիւը..։ Նիկոմիդիոյ առաջնորդը եկեղեցական մը իր պաշտօնէն հանելէն ետև բանտը նետել տուաւ. բանտէն հանեցին առաջնորդարանը տարին և երբ տեսան որ չընդունիր (Մատթէոս Պատրիարքի հանած) հանգանակը՝ ոչ միայն մօրուքը այլ և գլուխը ածիլեցին, և այնպէս անհնարին նախատանօք փողոցէ փողոց պտըտցունելէ ետև կրկին բանտը դրին։ Նիկոմիդիոյ և Ադաբազարի մէջ Բողոքական ո՛չ տուն մնաց և ո՛չ մարդ մը՝ որ չքարկոծուեցաւ, և Ադաբազարի մէջ խումբ մը մարդիկ երկու վարդապետներու առաջնորդութեամբ՝ ոչ միայն տուները կոխեցին, այլ և ձեռքերնին ինչ որ անցաւ նէ կոտրեցին թափեցին, ծառերը կտրեցին, պարտէզները աւերեցին, հաւերն ու արջառները մեռցուցին. մենք ալ ստիպուեցանք որ փախչինք և կեանքերնիս ազատենք։ Տրապիզոնի առաջնորդը այս հանգանակը չկնքողները ծեծեց՝ բանադրեց և չարչարեց։ Երիտասարդ մը յիսուն հարուած ընդունեց և ուրիշ տանջանքներ քաշելէն ետև 24 ժամ առանց հացի և ջրի բանտը մնաց. մէկ ուրիշն ալ 150 հարուած ընդունեց, միւսներն ալ պէս պէս վնասուց և նախատանաց տակ ինկան։ Կարնի մէջ մէկը նոր հանգանակը չընդունելուն համար պառկեցուցին առաջնորդին հրամանաւը և սաստիկ ծեծ մը քաշեցին, և քանի որ չորս հոգի զինքը կծեծէին քահանայ մը ոտքովը երեսին այնչափ զարկաւ, որ քթէն բերնէն արիւն ցատկեց։ Եւ մասերս խումբ մը կատղած մարդիկ եկեղեցականի մը վրայ յարձակեցան, եղած տունէն դուրս քաշեցին և երեսը թքնելով ու ծեծելով և մօրուքէն քաշքշելով առաջնորդարանը տարին, ուր իրենց անօրէնութեան վարձքը ընդունելնուն վրայ՝ շուտ մը նոյն տունը դարձան, վազեցին հօն գտնուողներուն վրայ և սոսկալի անգթութեամբ ծեծելով անկենդան դիակի նման ձգեցին, պատուհանները՝ դռները և կահ կարասիքը կտոր կտոր ըրին, ուզածնին գողցան և տունը աւերակ ըրած թողին գնացին։»

ՃԼԳ. Ո՞վ չկրնար մակաբերել թէ ինչ որ պատահած են մի քանի տեղեր նոյնը պատահած ըլլալու են և այլ ուրեք, ուր նոյն պատճառները կան։ Եւ թէ կրօնի և համոզման համար եթէ բռ-

Նաքարութիւն կը գործածուի մարմնոյ վրայ, ժողովրդենէ մը՝ որ կարծես թէ միշտ ճնշուեր է օտար բռնութենէ, մինչ չմնալ իշխողութիւն ի վերայ մարմնոյ, քանի առաւել բռնութիւն պիտի չգործածուի ի վերայ մտաց որ դիւրինն է և պատշաճն։ Ապաքէն Լուսաւորչականն միշտ արգելքներ հաներ է որ Բողոքականաց գրքերն չտարածուին, մինչ իսկ ուսումնականները, որոց կկարօտէր ազգը, որ նոցա հետ կրօնական հաղորդակցութիւն չլինի, և անոնց դպրոցները չյաջողին։ Որովհետև գիտեն թէ առնոց ո՛չ մեկը նպաստաւոր է Լուսաւորչական դրութեան, դեռ երէկ և այն մայրաքաղաքին մէջ յարձակումներ կըլլային Ռօպէրթ գօլէճի և Հօմ դպրոցի դէմ, որ պախեցուներն նոցա աշակերտները և կառեցուներն յառաջընթացութիւնը։ “Ի՞նչ ինկեր էք, կաղաղակէր Օրագիր (թիւ 1636), մարդկային թշուառութեան հեղինակ՝ այդ օտար քարոզիչներուն լարած որոգայթը. միթէ կասկա՞ծ ունիք (խուլիւտարցիք) ձեր Քրիստոնէութեան վրայ, որ գացեր ալ աւելի ուղիղ ճամբայ մը գտնելու յուսով՝ օտար քարոզիչներու բերան ի վար կախուեր էք և փրկարանութեան ասպարէզ կբանաք, չէք գիտեր թէ ի՛նչ կընէք։” Որոյ վրայ կը յաւելու Լոյս. “Կրօնական վիճաբանութեան ասպարէզ նետուողները շատ սխալ քայլ առին. երբ հաւատացին թէ այդ միջոցաւ պիտի կարենան նոր աղանդից շահերը ձաղկել. . . (այս մասին) կրօնական պատկառելի ժողովոյ բռնած անտարբեր ընթացքն ալ մեկնութեան կարօտ է . . . որ կթողու խուլիւտարու հասարակութիւնը որ կրօնական վիճաբանութեամբ ժամանակ անցունէ և նոր աղանդից շահու նոր դուռ մը բանայ” (Ա. Շրջան. Եր. 198)։

ՃԼԴ. Ասոնք ցաւօք սրտի իբրև օրինակ հանդուռնատիպ խրողութեանց կպարտաւորիմք ի հանդէս ածել, որ վերահաս լինիմք թէ այս համարիւն եղբարց մէջ թշնամական վարմունքներ կան, որք անշուշտ՝ եթէ չկործանեն ազգը, յետս կընկրկեն և չեն թողուր որ ժամանակին պահանջմանը համեմատ յառաջեն։ Բողոքականութեան և Լուսաւորչականութեան ընդդիմամարտ զօրութիւնները՝ եթէ միանան և դէպ ի մի և նոյն ուղղութիւն ազգը յառաջացնելու գործածուին, քանի՛ երագընթաց կրնայ լինել Հայուն շոգեկառքը։ Եւ եթէ Բողոքականք զատ ճամբայ մը բռներ կերթան և չեն ուզեր կամ չեն կրնար մտանել Հայաստանեայց կառաշուին մէջ, ինչո՞ւ նոյն այս կառաշուին վարիչները ըլլային միակամ և համախոհ ու փոխան բանի՝ արգեամբ յառաջ տանէին զայն։ Սակայն նոցա մէջ ալ կայ տարաձայնութիւն, ինչպէս տեսանք, որք արգելք կըլլան ազգին ուսումնական, բարոյական ու կրօնական յառաջընթացութեան։ Անհատական և մասնաւոր իրաց մէջ յառաջխաղացութեան վրայ չէ խօսքերնիս, որ՝ ինչպէս տեսանք ի յառաջաբանի (Գ. Դ.), շատերուն մէջ սկսած է և կերթայ, այլ ամբողջական և ամէն կարևոր իրաց նկատմամբ, որոյ համար ոմանք կարծեր են թէ բնաւ չկայ։ Եղածներն ալ այնքան մեծ զոհողութեամբ՝ դժուարութեամբ և քիչ արդեամբ եղած բաներ են, որ ըստ ոմանց զեղծմունք են և ապականութիւն, իսկ ըստ իս քաշքըշուք են և ծեքծեքանք յառաջ եկեալ ի բռնութենէ արտաքին պարագայից։ Ինչո՞ւ համար վասն զի ազգային նաւը, իմա՛ Լուսաւորչական յօրինուածութիւնը, չունի այնպիսի կազմութիւն մը որ կարենայ ընդդէմ դնել բռնութեան հողմոց, չունի շոգի որ կարենայ առանց հողմոյ ընթանալ, այլ նման է առագաստաւոր նաւու, զոր կառավարողներէն ոմանք կերկնչին դուրս ելնել նաւահանգիստէն, զի մի գուցէ մրրկէն յափշտակուին, և այլք կյանդըգնին դուրս կելլեն և ամպրոպք կտանին զնոսա ուր և տանին։

ԳԼՈՒԽ Դ

ԶՈՒԳԱԿՇԻՌ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅՈՒՆ ԸՆԴ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆԻՆ

ՃԼԵ. Փափաքելի էր մեզ այս գլխոյ մէջ ներկայել չէ թէ թերի չրջագիծը դաստիարակութեան և կառավարութեան Լուսաւորչական և Բողոքական Հայոց, որ ի Տաճկաստան, այլ անթերի գծագրութիւնը—վիճակագրութիւնն և նոցա ոպխութեան ճշգրիտ նըկարագիրը, որ անթերի երևէր խակական տիպարն արդի Հայուն Թուրքիոյ։ Սակայն՝ ինչպէս զեկուցեր եմք յառաջագոյն (ԽԱ.), առայս պէտք եղածներն կպակասին, ուստի ունեցածնիս կրցանք ի հանդէս ածել, ակն ունելով թէև սա կրնայ օգտակար լինել ըստ իւրում չափու։ Վասն որոյ ներելի թող համարուի մեզ այս ակամայ թերութիւնն, և չթուի չարակամութեան կամ կողմնակցութեան արդիւնք. Իբր այն թէ ծածկել ուզեր եմք ինչ որ մեր բանին չգար կամ վախճանին չծառայեր։ Նաև զգուշացանք մեզմէ խորհուրդ, դոյն տալ այն տեղերուն, որք ստուեր կարկանեն ազգին հինաւուրց պատկերին վերայ կամ նորա վիրալից մասերը կցուցանեն։ Այո՛, պիտի տեսնենք թէ Հայը ունի վիրաւոր անդամ, զոր թերևս խոհեմութիւն կըլլար ծածկել, եթէ վասն դարման

գտնելոյ բժշկի առջև բանալու պէս բացում մը չհամարէինք զայս հանդէս։ Եւ ահա այսու խորհրդով պիտի նկատենք աստ Թուրքիոյ արդի Լուսաւորչական և Բողոքական Հայուն 1. ժողովրդեան թիւն ու իմացական և բարոյական որպիսութիւնը։ 2. Երկաքանչիւրոց ուսումնավայրերն և դաստիարակաց որպիսութիւնը։ 3. Նոցա ազգային կամ քաղաքական կառավարութիւնն և ասոր պաշտօնէից հանգամանքը։ 4. Լուսաւորչական և Աւետարանական եկեղեցեաց կառավարութիւնն և եկեղեցականաց որպիսութիւնը։ 5. Երկուքին ալ մատենագրութեան հանգամանքը, և ի վերջոյ 6. ընդ միմեանս բաղդատութիւն Հայ Լուսաւորչական և Հայ Աւետարանական հասարակութեան ներկայ կացութեանց։

1. ԹԻՒ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՈՒ ԻՄԱՑԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԱ։

ՃԼԶ. “Հայ ազգն” կըսէ Հ. Եփրեմ Զագըճեան (ի Պատմ. Հայոց. երես 404), “որ ըստ նորագոյն հաշուոց 4 միլիոնի մօտ ժողովուրդ ունի ամէն տեղ տարածուած, ի վերայ այսր ամենայնի դեռ իր մեծ կէսն 2½ միլիոնը, իր հայրենեաց մէջ կընակի . . .։ Տաճկաստանի ընդհանուր Հայերն, որոց թիւն երկու ու կէս միլիոն կհամարուի, Հայաստանէն զատ կընակին գլխաւորաբար փոքր Ասիոյ, Կիլիկիոյ, Կոստանդնուպօլսոյ և շրջակայից ու Մոլտավիոյ մէջ, Եգիպտոսի մէջ ալ 3000–4000 հոգի կգտնուին։” Ոմանք կարծեն թէ՝ եթէ ճշգրիտ վիճակագիր լինի Տաճկաստանի Հայն հազիւ երկու միլիոն պիտի ընէ, որք և պակսելու վրայ են, քանի որ Թուրքիոյ պետութեան սահմանը կամփոփի, ինչպէս եղաւ այս տարի։ Ըստ որի պէտք կըլլայ Եւրոպական Տաճկաստանի հիւսիսային, այն է Պուլկարիոյ և Մոլտավիոյ Հայոց թիւը, նաև Ասիական Տաճկաստանի հիւսիսային, խմա Կարսի և Արտահանի կողմանց Հայերուն թիւը պակսեցունել իբր երկու միլիոն համարեալ գումարէն։ Տաճկաստանի Հայը կնուազի նաև գաղթականութեամբ՝ որ ընդ միշտ կայ, յատկապէս վերջին պատերազմի առթիւ Կարնոյ և Պարսկահայոց կողմերն եղածները, որք Ռուսիա կերթան։ Հայ ազգին նուազման մէկ ցաւալի պատճառ մալ կայ և այն է կոտորածն, որ տեղ տեղ Քրդերէն կպատահի, ինչպէս եղաւ հերու Պայազիտի կողմերն, որոց չկարենալով դիմանալ կխառնուին նոցա հետ և կքրդանան։ Ստուգիւ հեղինակք ոմանք ի պարծանս և այլք քաղաքական նկատողութեամբ Թուրքիոյ Հայոց թիւն առաւել կհաշուեն քան երկու միլիոնն, իսկ թուի մեզ թէ

անկէ պակաս են այս օր, և կպակասին ամ ըստ ամէ, քանի որ աւելնալու պատճառ չկայ իսկ պակսելուն առիթները չեն վերնար։

ՃԼԷ. Այս Հայոցմէ հատուածեալ են Հայ Պապականք և Հայ Բողոքականք, և այն գլխաւորապէս քաղաքակրթեալ մասէն Հայոց, որք Տաճկաստանի գլխաւոր քաղաքները և անոնց գիւղերը կընակին։ Հ. Վարդան Վ. Սկարեան Պապականաց բաժանմանն վրայ եկեղեցական պատմութեան մէջ (երես 410–414) կտեղեկագրէ, թէ “կաթոլիկեայ Հայոց գլուխն եկած այս ամէն (հալածանաց և աքսորանաց) աղետալի արկածները Պիոս Ը. Քահանայապետին ականջը հասնելով շատ տրտմեցաւ, և փութաց անմիջապէս իրենց ամէն կարելի օգնութիւն ընելու . . . Նախ յամի 1830 յունուարի 6 ին առանձին կայսերական հրովարտակաւ Հռովմէական Հայք աքսորքէն դառնալու հրաման ընդունեցին, և ստացուածքնին իրենց ետ առընուեցաւ . . . . Նոյն տարին Քահանայապետը առանձին թղթով մը . . . կաթոլիկեայ Հայոց համար Կոստանդնուպօլիս Արքեպիսկոպոսական–նախագահական աթոռ մը հաստատեց . . . Այսպէս Կոստանդնուպօլսոյ Ուղղափառ Հայք իրենց եկեղեցական անկախութիւնը գտնելէն և առանձին նուիրապետութիւն ընդունելէն ետև, այս նոր եկեղեցական Ուղղափառ Հայ դասուն յաջողութեամբ սկսաւ ծաղկիլ և պայծառանալ։ Այնպէս որ իբր 1838 ին . . . նոյն նախագահական աթոռն իր տակը ունէր 27,000 էն աւելի կաթոլիկեայ Հայ, որոնց մեծ մասը Կոստանդնուպօլիս և անոր շրջակայ տեղերն, իսկ մնացածը Գաղատիա՝ Կարին՝ Տրապիզոն և Հայաստանի ուրիշ քաղաքները կընակէին։ . . . Պիոս Թ. ալ Ասիոյ ներքին կողմերուն Հայ ուղղափառաց համար 1850 ին հանած համառօտագրով մը Անկիւրիա՝ Արտուին՝ Պրուսա՝ Կարին ու Տրապիզոն քաղաքները Եպիսկոպոսական աթոռներ հաստատեց, Կոստանդնուպօլսոյ նախագահական աթոռոյն իրաւաբանութեանը տակ։ (Այս աթոռոց) վրայ աւելցաւ ետքէն, յամի 1865, Մեզրէտի Խարբերդ քաղաքին եպիսկոպոսական աթոռը . . . (Կիլիկիոյ) Պատրիարքին մահուանէն քանի մը ամիս ետքը, 1866 սեպտեմ. 14, Կիլիկիոյ Պատրիարքութեան եպիսկոպոսները . . . Զմմառ ժողովեցան և միաբան հաւանութեամբ զԳեր. Անտոն Հասունեան՝ Կոստանդնուպօլսոյ նախագահը Կիլիկիոյ Պատրիարք ընտրեցին, դնելով երկու՝ այսինքն Կիլիկիոյ Պատրիարքական և Կոստանդնուպօլսոյ նախագահական աթոռոց միութիւնը, . . . Պիոս Թ. Քահանայապետն ալ 1867 Յուլ. 10 ին հանած սահմանադրովը թէ՛ Գեր. Անտոն Հասունեանին ընտրութիւնը և թէ՛ կրկին եկեղեցական նահանգաց միութիւնն ընդու-

նեց և հաստատեց՝ Պատրիարքական աթոռն կոստանդնուպօլիս փոխադրելով։ Այս աթոռոյն իրաւասութեան ներքև մնացեալ կաթողիկեայ Հայոց թիւը (1870 ին) 75–80,000 կհամարուի։"

ճԼԸ. Ըստ պատմութեան Հայոց Պէրպէրեանի Գլ. Ծէ. Մատթէոս Պատրիարքի դահակալած ատենը, 1846 ին, կոստանդնուպօլսոյ և շրջակայ տեղեաց մէջ 8,000 ի չափ են եղեր Հայ Բողոքականք, յորոց մեծ մասը ի շնորհս ջանից Պատրիարքին դարձեր են ի ծոց Լուս. եկեղեցւոյ և մնացեր են միայն իբր 1,500 հոգի (կԱ)։ Ազգային շատ մը հեղինակներ ընդ միշտ կրկնեցին, զոր ինչ գրեց Յով. Վար. Փափազեան ի Յորդորակին որ առ Անգլիս (Պատասխանի երես 8), թէ "կրօնափոխութիւնը կտարածուի այն ժողովրդեան մէջ, որ ուսմունք չեն գիտեր և գիտնականներ չկան իրենց մէջ։ Այս, ապացոյցն ալ այս է որ, ժամանակ յառաջ շատ գաւառներու և նոյն իսկ Պօլսոյ մէջ տարածուեցաւ Բողոքականութիւնը, բայց հետզհետէ քանի որ գիտութիւնք և գիտնականք բազմացան, անոնց զօրութիւնն ալ պակսեցաւ" և նուազեցան։ Արմաշու վանական Յոյսն ալ (հատ. Է. 1) յուսադրեց, թէ ի շնորհս սահմանադրութեան "վերցաւ թշնամեաց (Միսիոնարաց) խոշոր երևցուցած վնասը... և հետզհետէ Բողոքական ընտանիքներէ շատերը վերադարձան իրենց մայրենի եկեղեցին. . (թէև) Բողոքականք տակաւին կշարունակեն իրենց ճգնութիւնները, բայց արդիւնքնին հետզհետէ կորսնցնելու վրայ են, և շատ բացայայտ է, որ՝ եթէ Հայոց մէջ ուսումն և կրթութիւն յառաջ երթայ, Բողոքական առաքեալները ոտքերնէն թօթուելու փոշի ալ պիտի չունենան Հայերէն, ու՛ր մնաց հետևող։" Մասիս 1857 ին (ի թիւ 300) կգրեր, թէ տէրութեան երկրին մէջ գտնուած Բրօթեսթանդ ժողովուրդը բոլորը մէկանց առնելով "ոչինչ բաներ են ու եկեղեցի մալ կազմելու (բաւական) չեն կրնար համարուիլ։" 1866 ին ալ (ի թիւ 736) կիմացունէ թէ Բողոքականութիւնը Հայոց մէջ "ինչո՞ւ համար անկանգնելի կերպով ինկաւ։"

ճԼԹ. Սակայն նկատելի է թէ այսպիսի հրատարակութիւններ առանց բաւական տեղեկութիւն տալու միայն ենթադրութիւն՝ յուսադրութիւն և փափաքելի ակնկալութիւնք են։ Ինչպէս որ Մասիս (ի թիւ 360) մի քանի Բողոքական դարձելոց վրայ խօսելով կակընկալէ թէ "մնացած Բրօթեսթանդներն ալ անոնց բարի օրինակին պիտի հետևին։" Ասկէ առաւել յուսալից կթուէր Լուսոյ նամակագիր բարեկամը, որ երբ Բրօթեսթանդի մը եկեղեցի երթալը տեսաւ առ խնդին փութայ գրել, թէ "Բողոքականութիւնը որ յառաջ (Ակնայ) վիճակիս մէջ տարածուիլ սկսած էր (1871 էն ի վեր)

այժմ (1875 ին) հազիւ թէ մէկ քանի տուն մնացած է, և որք (գիտցեր է թէ) մտադիր են մօտերս դառնալ ի ծոց Հայ. Ս. եկեղեցւոյ։ Միայն թէ (վերահաս եղեր է որ) կստատմին խզել իրենց մէջ եղած այն (իրեն յայտնի իսկ այլոց) թագուն կապը, որոյ հանգուցին չկարացինք ցարդ հասու ըլլալ (հանդերձ մտադրութեամբ մերով)։ Ակն ունիմք որ քիչ օրէն սոյա դարձին աւետիսն ալ աւետելու բարեբաղդութիւնը կունենամք յուրախութիւն ազգասէր սրտին" (Լոյս. շրջ. Բ. 1)։ Նամակագիրը ցարդ չկրցաւ հանգոյցը քակել տալ և աւետիսը գրել, նման նկատելի Յուսոյ և ըստ ակնկալութեան Մասիսի, ուստի՝ թէ յուրախութիւն և թէ ի ցաւ, Հանդիսատէրը գիտցած կրողութիւնը ի տես ածել պարտաւորեալ է։ Ակնայ (վիճակին) 1879 ի տարեկան վիճակագրութենէն կերևի թէ իբր 20 տուն Բողոքական կան և են առաւել քան 110 անձինք մեծ մասը 15 տարեկանէն վեր, յորոց 33 ը հաղորդական անդամ են, և առ հասարակ թողածնին և ընդունածնին գիտցող մարդիկ, որք նոյն տարին կրօնական գործի համար վճարած են իբր 55 ոսկի։ Եւ այս թիւերն գրեթէ կրկնապատիկն են 1874 ինին երբ վերի նամակը գրուեցաւ։

ճԽ. Ասիկայ կրնայ համարուիլ մէկ օրինակն, լաւ ևս է ըսել մանրանկարն Տաճկաստանի մէջ Բողոքականութեան տարածմանը, որ՝ հակառակ ակնկալութեան ազգային հեղինակաց, փոխան նուազելուն՝ պակսելուն և անկանգնելի անկմանը, ըստ Օրագրի՝ կըստուարանայ՝ կաւելնայ, և ըստ Աւետաբերի անյաղթելի կերպով յառաջ կերթայ։ Եւ այս յայտնի է տարուէ տարի հրատարակեալ պաշտօնական վիճակագրութիւններէն, զոր օրինակ 1871 ին Բողոքականաց ազգապետարանը հրատարակեց, թէ "Թուրքիոյ այլ և այլ կողմերը Բողոքական ժողովրդեան արձանագրութեան մէջ՝ իբրև անոր անդամ նշանակուած անձինք են 23,000, որոց մեծագոյն մասը Հայ է" (Աւետ. 1871 թիւ 40)։ Ուրիշ վիճակագիր մը, զոր Աւետաբեր կհրատարակէ 1873 ին (ի թիւ 19) կպարունակէ միայն Անատօլուի, բաց ի Ասորիքէ, Բողոքականաց աճումը 1855 ը 1871 ին հետ բաղդատելով։ Ուր կը տեսնուի թէ 1855 ին Բողոքականաց թիւն էր 3,538 իսկ 71 ին 19,471 գրեթէ բոլորն ալ Հայ, 55 ին եկեղեցւոյ անդամք էին 626 իսկ 71 ինեղան 4,032, պաշտաման ներկայ եղողները 55 ին 2,451 էին, 71 ին եղեր են 13,600, քարոզութիւն եղած տեղերն ալ 37 էն 202 ի հասած են։ Անգլիարէն հրատարակեալ պաշտօնական վիճակագրութիւնք 1878 ի կցուցնեն, թէ այս մասին մէջ կան 25,500 Բողոքականք, եկեղեցւոյ անդամք 5,919, և քարոզութեան տեղւքն առաւել քան 220։

Այս համեմատութեամբ աճեցեալ համարելով Սիւրիոյ և Եւրոպական Ցաճկաստանի քանի մը տեղն ալ ինչպէս Եգիպտոս, ամբողջ գումարն Բողոքականաց 30,000 էն աւելի կըլլայ, յորոց 25,000 էն աւելին կրնան Հայ հաշուիլ։

ԾԽԱ. Այս ժողովրդեան իմացական և բարոյական որպիսութեանց վրայ՝ Մեծապատիւ Ցակոբ էֆէնտի Մատթէոսեան, Ազգապետն նոցին, 1871 ին յայց ելանելով նոցա՝ ի մօտոյ տեղեկացեր է, թէ «այս նորընծայ ժողովուրդը, ազգային սնտուկ (եկամուտ) կամ դրամագլուխ չունի, ժողովարաններու՝ դպրոցներու և ուրիշ ազգային հաստատութեանց համար անհատից վրայ անկեալ ծախուց բեռը ծանր է, թէպէտ և երբեմն Միսիոնարաց ընկերութենէն նպաստ կառնու... ստակի և ծախուց մասին Բողոքականաց վիճակն այսպէս ըլլալով տակաւին թէ նոցա ազգային հաստատութիւնները երթալով կշատնան և կբարւոքին, և թէ կրօնքին անոնց մտաւոր կարողութեանց վրայ ըրած ազդեցութիւնը զանոնք արթուն և գործունեայ ըլլալու կտանի։ Այնպէս զի՝ ընդհանրապէս խօսելով, Բողոքական եղող անհատից այժմու վիճակն՝ նոցին նախկին վիճակին հետ բաղդատելով՝ ամէն կերպով փոխուած և յառաջադիմական է։.. Անոնք դպրոցներն և կրօնական ուրիշ հաստատութիւններն հոգալու համար՝ ժողովրդեան ամէն անհատ իր վաստակին կամ եկամուտին գրեթէ 100 էն 12 ը կուտայ։ Ժողովրդեան դպրութիւնն սակաւաժամանակեան ըլլալով, արդարև չէին կրնար անոր մէջ՝ այլևայլ նկատմամբ հռչակաւոր անձինք յառաջ գալ, բայց և այնպէս գրեթէ ամէն Բողոքական անհատ սրտի մտօք կաշխատի իր վիճակը լաւցնելու և յառաջ երթալու։ Իւրաքանչիւր 100 չափահաս Բողոքականի մէջ 85 ին կարդալ գիտնալը ուշադրութեան արժանի կէտ մըն է։ Սիւրիոյ մէջ Բողոքականներէն ոմանք ընիկ ժողովրդեան ամենէն գիտուններուն կարգէն են։ Բողոքական ժողովրդեան մէջ 40 համբաւաւոր բժիշկ կայ, և ամէն 60 չափահաս անձանց մէկը գիտութիւն մը կամ օգտակար արհեստ մը իր ծախքովը սորված է Եւրոպա կամ Ամերիկա» (Աւետ. 40 թիւ 1871 ի)։ Անոնց բարոյական որպիսութեան մէկ նշանակիչ թիւը կրնայ համարուիլ այն որ ըսուեցաւ, թէ հոգւոյ վրայ հաշուելով մէն մին վաստակին 100 էն 12 ը կու տայ, որով Անատոլուէ բաց ի Սիւրիոյ, Բողոքական ժողովրդեան 1871 ին վիճակագրութեան մէջ կգտնեմք թէ 636 ոսկի տուեր են կրօնական և դաստիարակութեան գործոյն։ Անցեալ տարի իսկ՝ որ Ցաճկաստանի վնասու և գործոց ձախողութեան տարին էր, սոյն այս ժողովուրդը տուած է եղեր 420 ոս-

կի ինչպէս կտեղեկագրէ Պօրտի արտաքին գործոց գրագիրը։

ԾԽԲ. Լուսաւորչական Հայուն իմացական և բարոյական որպիսութեան վրայ տեսութիւն ունենալու համար պէտք է զանոնք այլ և այլ գաւառաց մէջ նկատել։ «Սիս (իմա Կիլիկիոյ վիճակը) մեռած է,» կըսէ Հմայեակ վարդապետ Դիմաքսեան (Լոյս շրջ. Դ. 2.) ...«հոն ժողովուրդն է անհովիւ և անառաջնորդ, զուրկ ամէն տեսակ կրօնական և բարոյական մխիթարութենէ, և ազգին ամէն տեսակ խնդիրներն ու գործերը երեսի վրայ մնացած։ Նոյն իսկ Կիլիկիոյ վիճակին մէջ ոչ եկեղեցիներն օրինաւոր պաշտամունք կկատարեն, ոչ մանկտին վարժարան կյաճախեն։ Ի մի բան ամէն կարգ և օրէնք վեր ի վայր շրջեալ անկենդան դիակ մը դարձեր է Սսոյ վիճակը։» Դիտելու է թէ ասիկա տեղեկագիրն է իր այցելութեան որ ըրաւ հրամանաւ Պատրիարքի 1877 ին։ Մշոյ և Քրդստանի վրայ հետեւեալը կտեղեկագրէ Պատ. Հ. Մ. Կիրակոսեան, որ 1867 ին Խարբերդու Աւետա. Միութեան մի քանի երիցանց հետ այդ գաւառուն բարոյական վիճակը դիտելու գնացեր էր։ «Միութեան պաշտօնեայք,» կըսէ, «Նախախնամութեան առաջնորդութեամբը այս անցեալ Նոյեմբեր ամսոյն Պիշերի՝ Ռըտվան՝ Մշոյ դաշտ՝ Պօկլան և Ճապաղջուր գաւառները պտտելու պատեհութիւն ունենալով» նոցա Հայ բնակչաց վրայ ի մօտոյ դիտողութիւն և քննութիւն ըրաւ ու գտաւ թէ «Անոնք ազգութեան (Հայութեան) վրայ խորհուրդ չունին։ Ամբողջ գաւառներ իրենց մայրենի լեզուն կորուսած Քրդերէն կխօսին։ Մշոյ դաշտը թէպէտ Հայերէն կխօսին, բայց անանկ ձևով մը որ միայն իրենք կհասկնան։ Անոնք անուններն ալ փոխած են, ինչպէս Մհօ, Օսօ, Ռաշօ ևն. և կանանց անունները Պէզէ՝ Ռընտէ՝ Կիւլէ են։ Անանկ որ բանով մը միւս Քրդերէն չեն տարբերիր։ Անոնք կրօնքնին ալ կորսնցուցած են, մինչ զի ցաւ է տեսնել, որ Քրիստոնէութեան վրայ բնաւ բան մը չգիտեն։ Ամբողջ գիւղերու մէջ ո՛չ եկեղեցի կայ, ո՛չ քահանայ և ո՛չ այբ մը գիտցող։ Քահանայ եղած տեղերն ալ՝ միայն քանի մը արարողութիւններ կկատարուին, ան ալ գրաբար լեզուաւ, որ նոյն իսկ քահանան չհասկնար։ Մշոյ դաշտը՝ որ 100 էն աւելի Հայու գիւղեր ունի, ճիշդ այս վիճակին մէջն է, ձմեռուան եղանակին դաշտին երեսին վրայ ինչպէս թանձր մէգը կպատէ, նոյնպէս տգիտութեան մէգն ու մառախուղը այս ընդարձակ և լայնածաւալ դաշտին վրայ պատած կեցեր է։» (Աւետ. թիւ 258)։

ԾԽԳ. Քրդստանի մէջ ուրիշ մասին վրայ Պատ. Գ. Մ. Շմաւոնեան կտեղեկագրէ, որ «Գըլթրպլի Աւետա. Եկեղեցւոյն Հովիւ

Պատ. Ապտնուրին հետ" Բրիթաստանի Սըլիվան և Ջրուըք գաւառները այցելեց 1868ին վերջերը։ «Մեր բոլոր ճամբորդութեան մէջ սիրտ ցաւցունելիք դառն թշուառութենէ զատ՝ բան չտեսանք։ Ի՞նչ է տեսածնիս — տեսանք հարստահարութիւն։ Եւ ո՞վ են հարստահարողք — 1. Ուշկոթանցի կոչուած վրանաբնակ Քուրթ ցեղը... 2. Բուն խիկ Ռէյիս կոչուած Հայ իշխաններէն ոմանք։ Ասոնք հարուստ մարդիկ են, Ուշկօթանցւոց հետ մտերիմ բարեկամութիւն ունին, անոնց հաց կկերցունեն՝ ձի կու տան և հանդերձ կհագցունեն որպէս զի միանան հետերնին ու իրենց խեղճ և թշուառ ազգայինները ճնշեն։ Ասոնց խեղճերն ալ վախերնուն ձայն չեն հաներ. 3. Հայ եկեղեցականները։ Վերը յիշեալներուն պակաս թողածը ասոնք կլրացունեն։ Հոս կանոնաւոր բնակութիւն ունեցող տէրտէր ու վարդապետ չեն գտնուիր, շատերը դրսերէն կու գան և ուզածնին կընեն։ Այս թշուառ Հայերը կարծեն թէ, իրենց մեռելը տէրտէրը չթաղէ նէ դժոխք պիտի երթան . . . անոր համար թաղում ընող մըրքահանան ժողովուրդէն ինչ որ ուզէ կառնէ։ Ճիշդ ասանկ է մըրքահանան ժողովուրդէն ինչ որ ուզէ կառնէ։ . . . Տեսանք նաև (ի Բրիթաստան) տգիտութիւնն ու պսակը։

Իրենց մայրենի լեզուն չեն գիտեր. կարդալ, գրել գիտցող գուցէ միայն Հազրօ գիւղաքաղաքը գտնուի, ան ալ չեմ կարծեր թէ այնչափ գիտեն որ կարող ըլլան գիրք մը կամ լրագիր մը հասկնալ. անկէ ի զատ բնաւ չկայ Սլիվանի և Ջրուըքի (գաւառաց) մէջ անանկ գիւղ մը ուր կարդալ, գրել գիտցողներ գտնուին։ Քրթերը գրականութիւն չունին, անոնց տգիտութիւնը արդէն ամէն տեղ լուած է, մեր խեղճ ազգայիններն ալ անոնց լեզուին մնացեր են. Հայերէն գիրք կամ լրագիր չեմ կարծեր թէ տեսնողներ մինչև անգամ կան, բայց ի տէրտէրներուն ձեռաց Մաշտոցէն։ Տէրտէրներն անգամ բան չեն հասկնար և եկեղեցւոյ արարողութեանց վրայ ալ շիտակ տեղեկութիւն չունին։ Կպատմուի թէ անգամ մը քահանայ մը տեղ մը պատարագ կընէ եղեր, քանի որ Հայ Քրթերն դուրսը կխաղան, քանի մը անգամ կկրկեն կհարցունեն, 'Տէրտէր, հոգը եփա՞ւ.' ան ալ կպատասխանէ եղեր թէ 'չէ'։ Քիչ մը ետքը մէկը կելլէ տանիքին վրայ ու Քրթերէն լեզուաւ կպոռայ. 'Հա, ուարնայ հազորդ, հա ուարնայ հազորդ,' որ եկէք հաղորդութեան ըսել է։" (Աւետ. 4, 5 Թիւ 1869ին)։

Ճխդ. Ջոյն կյայտարարէր նաև Մ. Հայրիկն Հայաստանեայց յատենի ընդհանուր ժողովոյն ըսելով, թէ «կըսեն թէ առաջ Սահմանադրութիւնը գաւառաց մէջ չէր գործադրէր, իսկ հիմա (1873ին)

սկսաւ գործադրուիլ, բայց ի՞նչպէս—ի պատասխան գաւառներէն եկած տեղեկութիւնները աչքէ անցունելու է. . . Երեք տարիէ ի վեր Պատրիարքարանի մէջ գաւառներէն տեղեկագիր կընդունիմ Սահմանադրութեան գործադրութեան վրայ, և ի՞նչպէս։ Ձեր զրկած հրահանգը ստացայ, կգրէր ինձ առաջնորդաց մին, բայց զո՞վ ընտրեմ ժողովին ատենապետ և ժողովականներն ո՞ւրկէ գտնեմ։ Ուրիշ մալ մասնաւոր նամակի մը մէջ կգրէր, ընտրական գործողութիւնները կատարելու համար՝ ո՛չ քուէատուփ կայ, ո՛չ սեղան և ոչ տախտակ զանոնք շինելու համար. ի՞նչ ընեմ։ Այս ինչ գիւղացիները, կըսէր նա, գրել կարդալ չգիտեն, այլ միայն խոփն ու արօր կճանչնան. . . քաղաքացւոց պարտուց տակ ճնշուեր են խեղճերը, թէ որ ընտրուին ու քաղաք գան չորպաճիին կամքը իրենց պատգամը պիտի դառնայ։ . . . Ուստի յիշեալ վարդապետը գաւառական ազգայնոց համար՝ Լոյս և Սահմանադրութեան տետրակէն առաջ քերական կխնդրէր։" (Արձանագ. 807)։ Տէր Երեմիայ Եպիսկոպոս ևս յատենի ընդհանուր ժողովոյ ուրիշ տեսութեամբ մը զնոյնը կբացատրէր 1870ին (Արձանագ. 153, 154.)։ «Մեր գաւառական Հայ եղբարք, կըսէր, գլխաւորապէս երկու կերպ հարստահարութեանց ենթակայ եղած են, ներքին և արտաքին։ Ներքին հարստահարիչք մեր մէջ գտնուելու եմք, իսկ արտաքինն օտարաց մէջ։ Տեսակ մը ներքին հարստահարող՝ մեր եղբարց վրայ տիրող խորին տգիտութիւնն ու տգիտութենէ յառաջ եկած անմիաբանութիւնն է։ Եւ այս բռնաւորի անուրը՝ թէև խիստ մեծ և զօրաւոր է, իսկ մեր ձեռքն է նորա բռնութիւնը խորտակել և զօրութիւնը նուաճել, երբ կրթութեան՝ դաստիարակութեան և լուսաւորութեան դիմենք։ Զի՝ եթէ այժմէն սկսինք այն երեակ անընկճելի զօրութեանց ձեռն տալ և համրածաւալ ընել, տարակոյս չկայ որ այն վայրկենէն կսկսի՝ խաւարային բռնութիւն և կործանիչ անմիաբանութիւն հետզհետէ տեղի տալ, ընկճիլ ու յաղթահարիլ, որն որ բազմաց մահ բերաւ և գերեզման փորեց։ . . . Գաւառաց երկրորդ տեսակ ներքին հարստահարողք դարձեալ մեր մէջն են. անունով Հայ են, յաւազանէ Քրիստոնեայ են, բայց շատ անգամ օտար և արտաքին բռնաւորներէն աւելի վնասակար և աւելի դաւաճան են ազգին և հայրենեաց։ Թերևս գիտէք թէ այս օր գաւառաց մէջ այնպիսի բռնաւոր Հայեր ունինք, որոց եղեռն և բռնութիւնք առաւել վնասակար են քան վատակինն եղան Ազգին։ Սոյն հրէշ բռնաւորները դոդ թէ գիշեր ցերեկ բան գործ ըրած են ազգ մաշել, անմեղներ զրպարտել, աղքատ ժողովուրդ կեղեքել և հարստահարել, աշխարհ խառնել և

տակն ու վրայ ընել իրենց շահուն և ամբարտաւանութեանց համար։ Մեր խեղճ ազգայնոցմէ ո՛վ որ չուխտեր այն բռնաւորաց հնազանդ և կամակատար ծառայ լինել, անշուշտ պիտի հալածուի և նախատուի մեծամեծ վնասուց հանդիպելով, մինչև անդամ մահու ենթարկուի։" (Տես և Ազգ. Պատմու. փափազեանի երես 307—310)։

ՃԽԵ. Վերյիշեալ տեղեկութիւնք առ հասարակ կպատկանին մայրաքաղաքէն հեռի գաւառաց, մասնաւորապէս Անատոլուի հարաւային մասին, ուր առ հասարակ ադխտութիւն և բռնութիւն կտիրէ։ Բայց առաւել ցաւալի պիտի լինի նոյն բանը տեսնել և հիւսիսային կողմերը լուսաւորեալ համարուած գաւառաց մօտերը, ինչպէս Սամսոնի գիւղերը։ «Ճանիկու, խմս Սամսոնի գաւառին Գուրշուն տէրէսի կոչուած գիւղերուն մէջ,» կտեղեկագրէ այցելու մը —Յ. Տ. Գալուստեան (Աւետ. 12 Թիւ 1869ի,) «1200 է աւելի Հայազգի տուն կհամրուի։ Ասոնք ի վաղուց Տրապիզոնի գեղերէն և Համշէն կոչուած գաւառէն գաղթած և բնակութիւննին այստեղ հաստատած են։ Այս գիւղերը, որ 18 են, ունին 10 եկեղեցի, խակ դպրոցի անունը հազիւ կլսուի իրենց մէջ. . . Ասոնք լեռներ ու ձորեր ցրուած՝ կիրակի օրերն 2–3 ժամ ճամբորդելով կուգան եկեղեցի կհաւաքուին, ուր իրենց հարստահարիչ աղաներուն ձեռքը կմատնուին։ Ասոնց հարստահարութիւնք և խեղճութիւնք Քրթստանի Հայոց կրածէն քիչ վար է։ Լեզունին գրաբարէ և աշխարհաբարէ խիստ տարբեր բան մը է. գրաբար բնաւ չեն հասկնար, աշխարհաբարն ալ գրեթէ նոյնչափ. խօսուած տաճկերէննին ալ այնչափ ռամկօրէն է, որ հոգեւոր բառերն աղէկ չեն հասկնար։ Ասոնց խօսած աշխարհաբար լեզուին օրինակ մը դնենք. 'Տօ՛ էգոնց էգունէ հօղա արի հընու խաչը էլօնք,' որ ըսել է, Պարոն, առաւօտեանց կանուխ հոս եկուր՝ եկեղեցի երթանք։" Եւ ըստ որում լեզուին կանոնաւորութիւնն ու ճոխութիւնը նշան է մտաւոր կրթութեան և զարգացման, գաւառացի Հայ ժողովրդոց մտաց կրթութիւնը չափած կըլլանք նոյա բարբառն չափելով։ Եւ ո՞վ չգիտեր թէ գաւառացիք այնքան կոշտ և կոպիտ կբարբառին, ինչ որ ալ ըլլայ գործածած լեզունին, թէ՛ Հայերէն, թէ Թրքերէն և թէ Քրթերէն, որ մէկ տեղային ուրիշ գաւառացիին բարբարոս կթուի, և ապաքէն եթէ ո՛չ երկուքը, մէկը գէթ պէտք է համարուի խուժ դուժ։

ՃԽԶ. Ցարդ Հայ ժողովրդեան իմացական և բարոյական որպիսութեանց վրայ ըսուածները՝ եթէ գլխաւորապէս կպատկանին Պէտանի գիւղացւոց կամ խաւարեալ գաւառաց, կան և գիտողութիւններ որք առաւելապէս կպատկանին կրթեալ քաղաքացւոց և լուսաւորեալ

ազգայնոց վիճակին։ Ինչպէս են այն բարոյական զեղծմունքները, զոր կնկարագրէ Խրիմեան Հայրիկ Դրախտի ընտանեաց գրքին մէջ, որք Եւրոպայւոց հետեւող զընտանիս կործանել կսպառնան։ Ինչպէս են այն կրօնական թուլութիւնն կամ անկրօնական խորհուրդները, զորս նա ի բան կբերէ Խաչի ճառին մէջ, որք մարդուն ազնուութեան ոսկերաց ծուծը կչորցունեն, որոց վերայ խօսք անցած է և ի Յառաջաբանի մեր (Ը. Թ.)։ Կան այս յիշեալ քաղաքացւոց վրայ նշաններ որ նոյա իմացական տկարութիւնն և բարոյական թերութիւնքը կնշանակեն, ինչպէս են հետեւեալ խնդրոց մէջ բռնելիքները, և համարեա թէ ամբողջ Հանդէսը, որ զայսպիսիս կներկայացունէ յաւէտ, քան զոդէտ գիւղացիս և գաւառացիս որոց խօսքը շատ չըլլար գրական ասպարէզի մէջ։ Ուստի այնպիսեաց վրայ ալ մասնաւորապէս խօսիլը առ այժմ թողլով այս խնդիրը կգոցենք 1686 Թիւ Մանզումէի ազգին ընդհանրութեան վրայ ըրած մէկ դիտողութեամբը, ուր "շատ փորձերով հասկցած ենք, կըսէ, որ եթէ ազգերնիս 3,000,000 հաշուենք, ոտվհեաւ 1000 էն մէկը գիրք և լրագիր կկարդայ, 3000 հոգի ընթերցող կելլեն, որոց հազիւ 10 էն մէկը կրնայ կարդացածը պէտք եղածին պէս հասկնալ" որ ըսել է երեք միլիոն ազգէն հազիւ 300 հոգի կայ, որ կարդացածէն օգուտ կրնայ քաղել։

2. ՈՒՍՈՒՄՆԱՎԱՅՐՔ ԵՒ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԱՑ

ՃԽԷ. Բողոքականաց ուսումնավայրերուն հետ պիտի հաշուեմք նաև այն հաստատութիւնները որք Միսիոնարաց հսկողութեան տակ են ինչպէս են նոյա խնամած դպրոցներն ու վարժարանները. նաև Բողոքականաց Գօլէճներն, որք թէև օտար բարեսիրաց արդեամբ կը հոգացուին մեծաւ մասամբ, խակ արդիւնքը գլխաւորապէս Թուրքիոյ Բողոքականաց կվերաբերին։ Մանաւանդ թէ, քանի որ Լուսաւորչականաց վանքերն ու եկամուտները և շէնքերը, որք ի նախնեաց մնացած ըլլալով հանդերձ, ի հաշիւ պիտի առնեմք մէկ կողմէն, պէտք է և ի հաշիւ առնեմք միւս կողմէն՝ այն նպաստները որոց փոխարէնն են ազգային հաստատութիւնները, որպէս զի զուգակշռութիւնը համեմատական ըլլայ։ Արդ Մեծ. Յակոբ Էֆէնտի Մաթթէոսեան Ազգասէրը կտեղեկագրէ, թէ «Բողոքականաց հասարակ դպրոցաց մէջ (1871 ին) կար 5227 աշակերտ, բարձրագոյն դպրոցներուն կամ ուսումնարաններուն (ճեմարաններուն և վարժարաններուն) մէջ ալ 380 աշակերտ։» «Միսիոնարաց հաստատած դպրոցներուն մէջ (ալ) կան 6720 աշակերտք։ Ասոնք հաստատած են նաև

որբանոց մը և արուեստից դպրոց մը որոց մէջ 300 բնիկ աշակերտք կան։" (Աւետ. 1871 ի 40, 41 թիւ։) Բաց ի Ասորիքէ Անատոլու մասին մէջ 1855 ին կային 44 վարժարան կամ դպրոց, որք ունէին 44 դասատու 1151 աշակերտ, նաև 3 աստուածաբանական դպրոց, ուր կային 71 աշակերտ, և մէկ գիշերօթիկ դպրոց աղջկանց 25 աշակերտօք։ Այն ատեն Բողոքականաց դաստիարակութեան համար կաշխատէին 27 Միսիոնարք, 5 հովիւք և 10 քարոզիչք և 74 օգնականք։ 15 տարի վերջը, յամի 1871ին, այս թիւերը աճեցան առհասարակ և կային 222 դպրոցք 178 վարժապետօք և 6391 աշակերտօք։ Աստուածաբանական դպրոցներն եղան 9, և աշակերտք 153, աղջկանց գիշերօթիկ դպրոցը 10 և աշակերտուհիք 246։ Նաև Ամերիկացի Միսիոնարք եղան 40, բնիկ հովիւք 47, քարոզիչք 56 և օգնական պաշտօնեայք 202. բաց ի մի քանի պաշտօնատարաց որ կաշխատէին ի Գօլէճս և դաստիարակութեան ուրիշ ճիւղերու մէջ։ (Տես Աւետ. 1873 ի 19։) Փորտ ընկերութեան 1878ի վիճակագրէն կտեսնուի թէ Տաճկաստանի այս մասին մէջ Փորտի դաստիարակութեան տակ կան 11,188 անձինք, որոց մէջ կան 9543 հասարակ՝ դպրոցաց աշակերտք, 208 արու և 380 էգ աստուածաբանական և այլ գիշերօթիկ դպրոցաց աշակերտ։ կան 55 հովիւ, 67 քարոզիչ, 273 ուսուցիչ և 97 օգնական, 115 Ամերիկացի որոց 44ը Միսիոնար են և 71ը դաստիարակութեան մէջ աշխատող էգ գործաւորք։ Այնանկ որ Բողոքականաց դաստիարակութեան տակ ի Տաճկաստան կան 15,000ի չափ անձինք, բաւական դաստիարակօք և տեղեօք։

ՃԽԲ. Ուսումնարաններուն մէջ մանաւոր յիշատակութեան արժանի են գիշերօթիկ դպրոցներն ու վարժարանները, յորոց ոմանք անգղիական են Տաճկաստանի Հայոց մէջ։ Ինչպէս են Մարաշու՝ Մարսուանու և Խարբերդու աստուածաբանական ճեմարանները, ուր, ինչպէս և սոյն նման ուրիշ տեղեր, երիտասարդներ կկրթուին վարժապետութեան՝ քարոզչութեան և հովուութեան պաշտօնից համար։ Ասոնց հետ կան և աղջկանց գիշերօթիկ դպրոցներ, ուր իգական սեռին բարձրագոյն դաստիարակութիւն կտրուի, որոց մէջ նշանաւոր է Իւսկիւտարի Հօմ դպրոցը, որ իր կատարելութեամբը անգղիական է Պոլսոյ մէջ, որպէս և այլք իրենց եղած տեղերը։ Այնթապու կամ կեդրոնական Թուրքիոյ Գօլէճը իր յառաջադիմութեամբն ու գերազանցութեամբը համբաւաւոր եղած է արդէն, որ շատ տեղերէ երիտասարդներ ժողվելով բարձրագոյն դաստիարակութեամբ հանդերձ՝ բժշկական ուսումը կաւանդէ։ Այսպէս է նաև Խարբերդու՝ Արմենիա Գօլէճը, ուր 32 աշակերտ կդաս-

տիարակուին և կպատրաստուին աստուածաբանական՝ բժշկական և իրաւաբանական ճիւղերուն։ Հանրածանօթ եղած է արդէն Կոստանդնուպօլսոյ Ռօպերթ Գօլէճն իր բարձրագոյն դիրքովը և համաձայն տաղանդաւոր աշակերտներովը, որոց թիւը երբեմն 200 ի չափ էր։ Սիւրիոյ մէջ Պէյրութի Գօլէճն ալ Ռօպերդեանէն վար չմնալէ զատ բժշկական ճիւղովն ալ կգերազանցէ, և եղած է այժմէն ուսումնավայր Սիւրիոյ Քրիստոնեայ հասարակութեանց։

ՃԽԳ. Նկատելի հանգամանք մը է թէ օտարազգի Բողոքականաց Հայ ազգին, յատկապէս Աւետարանականաց ըրած և խոստացած նպաստից նպատակն է դաստիարակութիւն հանդերձ Աւետարանով, առանց որոյ չըլլար ուղիղ բարոյականութիւն և առանց բարոյականութեան անպիտան է դաստիարակութիւն։ Վասն որոյ յորմէ հետէ Տաճկաստան մտեր է Բողոքականութիւնն, այս երկուքին ճիւղին մէջ ճիգ կթափուի, որ ժողովուրդը յառաջ երթայ և զարգանայ, ինչպէս տեսանք վերն ալ (ՃԴ. ՃԵ.) որ Միսիոնարք դպրոցով սկսեցին գործը, զոր անընդհատ կշարունակեն, ըստ ներելոյ պարագայից։ Այնանկ որ տեղի մը դպրոցը կամ ճեմարանը գոցուելէն հետեւցնելու չէ թէ դաստիարակութեան գործը թողեր են, այլ թէ պարագայից փոփոխութեամբը և փորձառութեան սորվեցուցածին պէս տեղափոխեալ են և ուսումնավայրք։ Այսպէս Պէպէքի ուսումնարանը, քիչ մը ընդհատելէն ետև, փոխեցաւ ի Ռումելի Հիսար Ռօպերդեան վարժարան անուամբ. Նէնի գաբուի աղջկանց դպրոցը որ նոր բացուեր էր, փոխեցաւ յԻւսկիւտար Հօմ դպրոցի անունով, Թօգաթի ճեմարանն փոխեցաւ Մարսուան, Այնթապունն ալ Մարաշ, ինչպէս և Մուսուլինը Մարտին։ Այսպիսի ուսումնավայրից վրայ 1873 ին (Աւետ. 22) Տաճկաստանի Արևմտեան մասին մէջ աշխատող Միսիոնարք կազդարարեն, թէ "վարժուհիներ, երիցանց համար կանայք և միսիոնարական դաշտին ընդարձակ մասանց համար կին օգնականներ ունենալու նկատմամբ մեր ակնկալութիւնը, ինչպէս մինչև ցարդ, հիմա ալ, գլխաւորապէս Մարսուանու աղջկանց վարժարանն է։ Եւ 'կայաններու աղջկանց գիշերօթիկ դպրոց' կոչուած ուսումնավայրերն կհամարինք շատ կարևոր, իբրև նախակրթարաններ Մարսուանու աղջկանց վարժարանին աշակերտ և գիւղերու մէջ աշխատող կին օգնականներ պատրաստելու համար։"

ՃԽԴ. Պատանիներն աստուածաբանական ճեմարաններու մէջ աւանդուած բարձրագոյն ուսմանց պատրաստելու համար Միսիոնարական կայանաց մէջ եղած դասերը (ուսումնավայրերը) հարկաւոր կհամարինք առ այժմ։ Այսինքն մինչև որ այս պատրաստութիւնը Ա-

ւետարանական եղբարց անօրէնութեան ներքև գտնուած բարձրագոյն դպրոցաց մէջ ընել կարելի ըլլայ ։ Վասն որոյ կխնդրեմք . . . բոլոր մարդոց աղօթքը , որ Աստուած օրհնէ այն դասերը . . . Մարսուանու ճեմարանը և . . . Տաճկաստանու մէջ բացուած ուրիշ 4 աստուածաբանական ճեմարանները . . . որպէս զի բարեկիրթ և ջերմեռանդ պաշտօնէից խումբ մը ելլէ այն ճեմարաններէն , եկեղեցեաց առաջնորդներ և հովիւներ և տակաւին ոչ աւետարանեալ ժողովրդոց մէջ աւետարանիչներ ըլլալու համար ։ Նաև որպէս զի Աստուածմէ կոչուած և իրենց ի վերուստ յանձնուած գործը կատարելու համար Աստուածային շնորհքով պատրաստուած աշխատաւորաց թիւը հաւասար ըլլայ կարօտութեան այս ընդարձակ դաշտերուն՝ որ հնձուելու (դաստիարակուելու) համար արդէն ճերմկցած (պատրաստուած) են ։” Այսու զեկուցմամբ կիմացուին վախճանն և կրթութիւնը ուսումնարաններուն , որք են ընդ հսկողութեամբ Միսիոնարաց , որք արական և իգական սեռին դաստիարակութեան և կրօնական կարօտութեանց դարման պատրաստելու համար աշխատող պաշտօնեաներ են միայն։

ՃԾԱ. Կշարունակէն դարձեալ նոյն Միսիոնարք ասելով , թէ “Աւետարանական ժողովրդոց նպատակը միայն և կամ բուն մասին Ամերիկեան Պօրտ ընկերութեան օգնութեամբը հոգացուած նախակրթական դպրոցներն՝ իրենց թուոյն և որպիսութեանը կողմանէ , բաւական գոհացուցիչ են թէև , բայց և այնպէս ամէն ջանք ի գործ դնելու է այս տեսակ դպրոցաց թիւը և օգտակարութիւննին աւելցնելու ։ Աւելի բարձր աստիճանի դպրոցներուն հիմնուելու համար ալ՝ ամէն պատշաճ կերպով քաջալերութիւն և նպաստ մատուցանելու է ,” ինչպէս են Ատաբազար և Պրուսայ բացուելիք վարժարանները , կըսեն , որք և ցարդ բացուած են և յաջողութիւննին յուսալի եղած ։ Այս ամենայն դպրոցաց մէջ նոր մեթօտով , միտք զարգացնելու սկզբունքով կըլլան դասախօսութիւնք , որոյ վարժ են դասատուք և բուն այնմ յարմարեալ են թէ Հայերէն և թէ Տաճկերէն դասագիրքերն նախակրթական ամէն ուսմանց համար ։ Լեզուախօսութիւնն ալ զանց եղած չէ Բողոքական վարժարանաց և դպրոցաց մէջ , ուր ժողովրդեան գործածած Հայերէն կամ Տաճկերէնն աւանդելէն ետև , կուսուցանեն նաև Հայկաբանութիւն՝ Տաճկերէն գրական լեզուն և Անգղիարէն , ինչպէս և մի քանի տեղ Գաղղիարէն և Յունարէն ալ ։ Այսպէս կտեսնուի թէ Բողոքականք արական և իգական սեռին կատարեալ դաստիարակութիւն մը տալու կարևոր գործոյն մէջ գործունէութիւն մը ունին ամէն տեղ և ամէն կերպով ։

ՃԾԲ. Լուսաւորչական Հայոց ուսումնարաններուն վիճակը բու-

թիւը չունիմք , ուստի մի քանի երևելի վարժարանաց վրայ պատմական տեղեկութեամբ առ ժամս պիտի անցնիմք ։ Ի սկզբանէ անտի վանքերն ճանչցուած են ուսումնարանք ժառանգաւորաց , որք վանահօր կամ մեծաւորի խնամոց տակ կուսանին ինչ որ կրնան Քրիստոնէական վարդապետութեան և եկեղեցական կանոնաց վրայ , և կըլլան վարդապետ վանական կամ վիճակաւոր ։ Վերջերս Հայ վանուց մէջ իւր ժառանգաւորաց դպրոցովը երևելի համբաւեցաւ Ս . Յակոբայ վանքը , որ ի Ս . Երուսաղէմ , որ ի խնամս Եսայեայ սրբազան Պատրիարքի , յորմէ հետէ ընտրուեցաւ նա պատրիարք , հաստատեց այս վարժարանը , ուր պէտք եղած ուսումը կաւանդէի աշակերտաց , որք առ հասարակ ուխտեալ են եկեղեցական պաշտօնէութեան ։ Անկից վերջը կուգայ Արմաշու վանուց վարժարանը , ուր ժառանգաւոր աշակերտաց հետ կուսանին և ազգային սանունք , յորոց ոմանք վարժապետութեան կպատրաստուին , ինչպէս և ժառանգաւորք եկեղեցականութեան ։ Ասոր կնմանէր և Նուպար–Շահնազարեան վարժարանն , Կոստանդնուպօլսոյ , ուր՝ ընդ տեսչութեամբ Ներսէս սրբազանին , այժմեան պատրիարք հօր , երիտասարդք կպատրաստուէին եկեղեցական և դաստիարակութեան պաշտօններու , ոմանք ալ որ թոշակաւոր էին ուզած գործերնին ընելով՝ ազգին օգտակար անդամներ ըլլալու ։ Այս վարժարանը բարեյիշատակ Կարապետ վարդապետ Շահնազարեանի կտակած փոքրիկ դրամագլխոյ միջոցով բացուեցաւ , որոյ վրայ աւելցուց Նուպար փաշա այնքան ոսկի , որոց եկամուտովը կրնար խնամուիլ բարձրկեկ ուսումնական մը ։ Սակայն դրամագլուխը արժէթուղթի տրուած ըլլալով՝ կորեաւ Տաճկաստանի ձախողութեամբը և վերջապէս վարժարանն փակեցաւ փակելով ընդ իւր և այն դուռն , որ բացուած էր Հայ երիտասարդաց դաստիարակութեան առջև ։ “Նշանաւոր են”, կըսէ Փափազեան (Ազգ . պատմ . երես 316) , “Վանայ Վարագ վանուցը մէջ հաստատուած ժառանգաւորաց վարժարանն և ազգային տպարանը , զոր առաջին անգամ Հայաստան մուծուց հայրենասէր (Հայրիկ)՝ Խրիմեան Մկրտիչ վարդապետը 1856 ին ։”

ՃԾԳ. Ազգին դաստիարակութեան կարևոր ծառայութիւն մատուցած կերևի փարիզու Արևելեան ճեմարանը , զոր անօրինեց յամի 1856 Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի ընդ Հ . Ամբրոսիոս Գալֆաեանի և Հ . Սարգիս Թէոդորեանի , որք երբ դարձան ի Պապականութենէ առ Լուսաւորչականութիւն՝ այս ուսումնարանին մէջ գիտութիւն և ուսումն աւանդեցին , ինչպէս կընէին Մուրատեան վարժարանի մէջ ։ Այն վարժարանը քիչ մը ետքը կոչուեցաւ Հայ-

կողեան վարժարան, որ առ ի չգոյէ դրամագլխոյ փակեցաւ (իբր 1858)։ Կամ լաւ ևս է ըսել փոխեցաւ ի Թէոդոսիա, ուր կոչեցաւ Խալիպեան վարժարան, յանուն բարերարին, որ մեծ դրամագլխով մը հաստատեց զնա, ուր կդասախօսէր և խորին վարդապետ Նար պէյ ընդ տնօրէնութեամբ Գաբրիէլ եպիսկոպոսին, վերյիշեալ վարդապետին։ Կոստանդնուպոլիս ևս ունեցաւ ազգօգուտ ճեմարաններ այլայլ ձևի փոխուած, առանց փոխելու նպատակը, որ էր երիտասարդաց բարձր դաստիարակութիւն մը տալ հանդերձ արծարծմամբ ազգային ոգւոյ։ «Պէզճեան Ամիրայի խնամօքն անոր տանէն ի վեր բարեկարգ և յարատև կերթար, կըսէ Փափազեան (Ազգ. պատմ. 260), Մայր եկեղեցւոյ ուսումնարանը . . . զոր գերազանցեց Խասգիւղի Ներսէսեան վարժարանը, որ սկսաւ ծաղկիլ 1836 ին . . .։ Միւս կողմէն Իւսկիւտար Ս. Երուսաղեմայ վանուցը մէջ գիշերօթիկ վարժարան մը կշինուէր Ճեմարան անունով . . . գրեթէ Խասգիւղի վարժարանին հետ մրցելու, . . . որ երբ բացուեցաւ 1838 ին, Խասգիւղի վարժարանէն զրկուած ուսումնատենչ մանկըտին սկսաւ հոն դիմել։» Ասիկայ առ ի չգոյէ դրամագլխոյ փակեցաւ 1841 ին վերջերը, մինչ իսկ եղաւ զօրանոց, ապա Մատթէոս պատրիարքի օրով (1846) վերստին բացուեցաւ, իսկ 1850 ին իր դպրոցքն ու աշակերտներովը փոխադրեցաւ Եէնի գալէի Ս. Փրկչի վանքը, յորմէ հետէ նման վարժարաններ ալ որովհետև բացուեցան ի Պօլիս, նա իւր նշանաւորութիւնը կորոյս։ Ասոր նման դպրոցներ բացուեր են և Զմիւռնիա և ի գաւառս այլ ուրեք, որոց թիւը կաւելնայ օր ըստ օրէ, և կխնամուորի ի խնամս փորձառու տնօրէնութեանց, և ի շնորհս ձեռնտու ընկերութեանց, որք վերջերս սկսեր են կազմուիլ ազգին մէջ։

ՃԾԴ. Բայց առանց որպիսութեան գալով, ցաւ է ըսել թէ պէտք եղած յարատևութիւնը և արդիւնքը չեն տուեր, մինչ զի Մխիթարեանց բերանը կբացուի ըսելու (Հերքումն . . . անուանեալ տետրին 24 երեսին մէջ), թէ «լսեցինք և տեսանք Պօլսոյ արուարձաններէ ճեմարաններ բացուիլը՝ ազգին իշխանաց նպաստիւքը, և ուրախացանք. բայց ուր են հիմա (1854) այն ճեմարանները, կհարցունեմք, անպտղաբեր միայն ապառաժի վրայ ձգուած հունտի պէս։» Վարագայ Հովատախի խմբագիրն ալ (ի թիւ 7), Մ. Յ. Սըվաճեան էֆէնտի 1868 ին կգրէ, թէ «Մեր արդի դպրոցաց վիճակը գոհացուցիչ չըլլալէ զատ՝ ընդհակառակն վերջին աստիճան խեղճութեան մէջ ինկեր կայ, . . . Թողունք դրսերն եղած դպրոցներուն խեղճութիւնը, և գանք Մայրաքաղաքն եղած դպրոցներուն, բաց ի Խաս-

գիւղի Նուպար — Շահնազարեան վարժարանէն գիշերօթիկ ուրիշ դպրոց մալ ունի՞նք . . .։ Գանք այլ ուրեք եղած դպրոցաց, որոց մեծագոյն մասը տակաւին կվարին հին և բարձի թողի ըլլալէք ընթացքովն ու սկզբունքովը, ուրիշներն ալ՝ որ կարգաւորեալ են, հարկաւոր պիտոյից կարօտութեան ենթարկեալ են, և կպարտաւորին թողուլ այն դասերն և ուսումները՝ զորս հարկաւոր կդատեն աշակերտաց դաստիարակութեանն։» Մանզումէ (ի թիւ 1697) կհաստատէ, թէ քաղաքացի ազգ տասնէն մէկը հազիւ կարդալ գրել կուսանին տակաւին, աղջկանց ալ կրնանք ըսել, քսանէն կամ երեսունէն մէկը, ըստ որում դեռ շատ տեղեր աղջկանց կարդալ գիտնալը ոչ միայն հարկաւոր կսեպեն այլ վնասակար իսկ։

ՃԾԵ. «Գաւառական դպրոցները ընդհանրապէս և մեծ մասամբ ընթեռնարան կամ ծաղկոցներ են,» կըսէ Յոյս (հատոր Ե. 3.), «իսկ երկրորդական վարժարանի կամ ուսումնարանի տեղ ծառայելու յատկացուցած են նախակրթական վարժարանները։ Չափով մը կընայինք գոհ ըլլալ եթէ ընթեռնարանք և նախակրթարանք գոնէ իրենց վախճանին ծառայելու յարմար դիրք մը ունեցած ըլլային, բայց շատ տեղեր ընթեռնարանք ո՛չ միայն լաւ առոգանութիւն՝ բաւական ուղղագրութիւն և գիր գիտցող վարժապետ չունին, (ըստ որում ազգը դեռ վարժապետանոցներ չունի)։ . . . Ընթեռնարաններէ աստիճանաբար վեր ելլելով կրնանք չափել նախակրթարանաց վիճակն ալ առանց մանրամասնութեան իջնելու . . . տեղ տեղ հաստատուած աղջկանց դպրոցներն ալ նոյն անշարժութեան մէջ կմընան» տակաւին, Յ. 1877։ Հայրենիքն ալ (ի թիւ 279) 1876 ին մինչ նախորդ տարուան ազգային գործոց հանդէսը կընէ, «Ազգային վանօրէից մէջ,» կըսէ, «Էջմիածին Երուսաղէմ և Արմաշ անդադար կգործեն և պարբերականներով ժողովրդեան սիրտը կհրահանգեն, իսկ միւս վանքերը տակաւին չեն խլրտիր, կենդանութեան շարժում չեն ցուցուներ և համարատուութեան պարտքերնին (անգամ) չեն կատարեր։ Ազգային վարժարաններէն շատ քիչեր բարւոք վիճակ մը ունին և ազգային մանկտւոյն ուղիղ և հաստատուն դաստիարակութիւն կմատակարարեն։ Մասնաւոր (անձանց բացած) վարժարանաց մէջ առաջին տեղ բռնած է Մէզպուրեան վարժարանը՝ իւր բազմարդիւն հիմնադրին անխոնջ աշխատութեան շնորհիւ։»

ՃԾԶ. Մասիս ալ (ի թիւ 410) Յամի 1859 ին կգրէր, թէ «Մեր արդոյ ընթերցողաց շատերը կյիշեն, այն երկար և շարունակեալ յօդուածները, որ քանի մը տարի առաջ հրատարակած ենք ազգային դաստիարակութեան վրայ։ Ի՞նչու համար դաստիարակութիւնը

ըստ արժանւոյն չյաջողիր ազգերնուս մէջ կհարցունէինք այն ժամանակը . . . ։ Անկէ մինչև այսօր 7–8 տարի անցաւ և դարձեալ այսօրուան օրս կրնա՞նք ժխտել, նոյն հարցմունքը շատերուն հետ մենք ալ նորէն ընելու պարտաւորեալ եմք դժբախտաբար ։ Այս դաստիարակութիւնը ըստ արժանւոյն չյաջողիր կոր, վասն զի յաջողելու միջոցները պակասաւոր են ։ Դպրոցներ ունինք բայց շատը անկարգ և ապարդիւն վիճակի մէջ։ Միայն Կոստանդնուպօլսոյ մէջ քսանէն աւելի դպրոցներ կան, որոց համար ամիսը 100,000 դահեկանէն աւելի ծախք կըլլայ, բայց փոխարէն տեսնուած արդիւնքը քիչ բան է, և մեծագոյն մասինը զրօյի հաւասար ։ . . . Ասոր առաջին պատճառն է դպրոցներուն վերատեսչութիւնը անուսում և տգէտ անձանց ձեռքն ըլլալը, երկրորդն է հմուտ և յաջողակ վարժապետներ չգտնուիլը կամ խիստ քիչ գտնուիլը ։ Արդարև այս օրուան օրս Կ . Պօլսոյ ամէն դպրոցներուն մէջ Նախնական դաստիարակութեան՝ հայկաբանութեան՝ թուաբանութեան՝ աշխարհագրութեան՝ Գաղղիարէն լեզուի են են ի վարժապետներ և դասատուներ կան, բայց շատը չգիտցածնին սորվեցունելու եկած հրաշագործներ են ։ Ուսումնական իրաց և անձանց մէջ ընտրութիւն ընելու բաւականութիւն ունեցողները կրնան վկայել, որ Կ . Պօլսոյ մէջ այս օրուան օրս հազիւ երեք չորս վարժապետ կգտնուի հայկաբան կոչուելու քիչ շատ արժանի, մնացածներուն մէջ շատերը կան որ երկու տող կանոնաւոր չէ թէ գրաբար այլ աշխարհաբար անգամ գրելու կարող չեն, այսու ամենայնիւ վերը յիշուած երեք չորս արժանաւորներէն աւելի յարգ և վարձք կընդունին, և վեց ամիսը անգամ մըն ալ չքեղապայծառ քննութիւններ տալով կփառաւորուին ։ Նոյնը պէտք է իմանալ նաև ուրիշ ուսմանց դասատուներուն համար ։”

ՃՄԷ. “Իսկ Նախնական դաստիարակութիւնը աւելի դժբախտ վիճակի մէջ է,” կշարունակէ ըսելով, “քանզի ազգին մանկտեաց սկզբնական կրթութիւնը, ցաւալի է ըսել, մեծ մասամբ անկիրթ՝ կոշտ և դռեհիկ մարդոց յանձնուած է, որոնք ոչ միայն անարժան են դաստիարակութեան ազնիւ պաշտօնը կատարելու, այլ և բոլորովին անյարմար ։ Վասն զի ի՞նչպէս հնար է կրթութիւն սպասել անկիրթէն, սրտի փափկութիւն սպասել կոշտէն, ազնիւ զգացումներ ըսպասել դռեհիկէն ։” Այս դիտողութիւնները կհաստատէ և Տ . Պ . Միսաքեան էֆէնտի (Մասիս 415), Մա՛սիս, կըսէ նա, “թէ որ այդ փառաւորեալ վարժապետները հայկաբանութիւննին աղէկ ալ գիտնային, յայտնի է որ մանկական հասակին մեծ փոյթն ըլլալիք բանը չըլլալով, տակաւին բնական գիտութեանց՝ աշխարհագրութեան՝

պատմութեան և իմաստասիրական սկզբանց ծանօթութիւններուն տեղը բաց պիտի մնար, բայց վարժապետն իր լեզուն ալ չգիտէ եղեր . . . ։ Ըսել է որ ‘չքեղապայծառ քննութիւններուն’ տակը չկայ, և այնչափ չկայ, որ Օրտուի գիւղին դպրոցին աշակերտները Տաճիկ Միւտիրին առջևը քերականութեան և քրիստոնէականի քննութիւն են անցուցեր տաճկերէն լեզուով ։” Նոյն Հանդէսն ալ (ՀԸՋ. Գ . 2) Յամի 1875 ին կգրեր թէ “գիշեր ցերեկ միշտ կտրտնջանք թէ ազգային վարժարաններն տարտամ մի վիճակի մէջ են, յուսացուած արդիւնքը չեն գոյացուներ, թէ բարոյական դաստիարակութիւն չեն աւանդուիր և գրեթէ Ազգային բոլոր վարժարանները անխնամ լքեալ են ։ Մեր ազգային վարժարանաց այս ձախորդ և անյաջող դրութեան դարման տանելու (շատ միջոցներ կգործածուին) . . . իսկ վարժապետներն իրենց յառաջընթաց շաւղէն բնաւ խախտած չեն՝ եթէ ըսենք, կարծենք չափազանցութեամբ խօսած չենք ըլլար ։”

ՃՄԸ. Արմաշու Յոյս Նս (Հատոր Ն. Թիւ 3) ազգային վարժապետաց կարի ողբալի մէկ քանի թերութիւնքը կխոստովանէ հետևեալ բանիւք ։ “Ազգերնիս շատոնց կարծես դարաւոր թմրութենէ մը արթնցած . . . (կարծէր) թէ դպրոց ունէր, բայց ժամանակը սորվեցուց իրեն, թէ ունենալ կարծածը չունի տիրապէս ։ Դպրոց ունինք բայց վարժապետ անուան իսկապէս արժանի վարժապետ շատ քիչ ունինք . . . ։ Այս աւուր ունեցած թէ՛ մեր պիտակ անուն վարժապետները և թէ՛ անոնք՝ որ իրենց սակաւաւորութեան և իրական արժանեաց համար մատով կրնամք ցուցունել, մի օրինակ աշակերտ են կամ ժողովրդական և Նախնական դպրոցներու և կամ բարձր ուսմանց վարժապետներու, որ տակաւին շատ ստորին են Եւրոպական բարձրագոյն ուսմանց վարժարաններու համեմատութեամբ . . . ։ Այս աշակերտներէն կան որ բաւական ուսումնառեր են բայց ուսուցանելու բնական յարմարութիւն (չունին), կամ գոնէ իրենց ուսուցչին կերպին ուշադրութիւն կամ ունակութիւն չեն ունեցեր, և ուսուցիչ են (եղեր) առանց ուսուցանել գիտնալու, որով ազգն ալ խաբուած է առանց օգուտ մը քաղելու ։ Ո՞ւր թողունք անոնք որ առանց ինքնին ուսեալ ըլլալու ուսուցանելու եկած են ։ Այս վերջիններուն դառն համը աւելի գաւառացիք առած են մանաւանդ վերջին 10–15 տարիներուն մէջ, որ ատեն սուտ անուն և ողորմելի վարժապետաց խուժան մը շատ տեղ կվխտար և իրենց լեզուին ծայրն ունեցած քանի մը օտար լեզուաց կցկտուր բառերով, և ակնոցի՝ գաւազանի և զգեստուց արտաքին

փայլունութեամբ պահ մը առեն աս ու ան հրապուրել և ստակ կորզել յաջողեցան . . . ։ Շատեր ալ եղած են, և թերևս հիմա ալ ըլլան որ առանց վստահելի բարոյականի և կրօնի վրայ ճշմարիտ և անխարդախ գաղափար մը ունենալու, զեղծ բարոյականութեամբ և կրօնի խախուտ գաղափարներով կամ անկրօնութեամբ վարժապետական կոչումն ունեցած են ։ Որով ոչ միայն նոյն պաշտամանն նուիրականութիւնը՝ այլ և անմեղ մանկութեան միտք և սրտի մաքրութիւնը աղտեղած և ապականած են ։ Այս ամէն չարիք ո՞ւսկից մուտ գտած են և ի՞նչպէս յառաջացած . . . — ժողովրդեան մէկ մասին տգիտութիւնը . . . մէկ մասին կրօնի և հաւատալեաց համար ունեցած անտարբերութիւնը են, են. բոլոր այս չարեաց նախապատճառ կհամարինք ։ . . . Այս չարեաց վրայ ցաւած ատեննիս չենք կրնար առաւել չմորմոքել՝ երբ քանիցս աչօք տեսած եմք, որ այսպիսի տգէտ և անպիտան բախտախնդիրներու ձեռք՝ նոյն իսկ բարձրաստիճան մարդոցմէ յանձնարարական կամ վկայութեան թղթեր տրուած են ։ Այսպէս մեր դպրոցները՝ որ տգիտութեան դէմ մանկութիւնը զինուորելու կրթարան պէտք ըլլան . . . ընդհակառակն շատ անգամ կամ բախտախնդիր անձանց պատսպարան կամ անուանական վարժապետաց անկելանոց դարձեր են ։ Ասոնք ոչ իբր զրպարտութիւն կամ կարելի բաներ կնշանակեմք, այլ իբրև անձին փորձառութեամբ և ականատես վկայութեամբ հաստատուած ցաւալի իրողութիւններ են,” որ առ ի դտանել զդարման ի հրապարակ կհանեմք ։

ԾԶԹ. «Մեր երկրին մէջ, կըսէ Ցոյս (հատոր Ե. 3.), թողունք արուեստական և մեքենական գիտութեանց յատկացեալ լսարանները՝ որ բնաւ չկան, պարզ ընթերցանութիւնը տարածելու համար վերծանութիւն կոչուած թադարաններուն ալ սկիզբ ու դադրիլը մէկ եղան, որովհետև նախնական կրթութիւնը պակաս էր . . . ։ Գաղղիոյ ժողովրդեան ծնողաց վարքը և անտարբերութիւնը՝ մեր երկրին մէջ աւելի սաստիկ է ։ Բայց ի՞նչ օգուտ որ այս անտարբերութիւնը դարմանելու հոգ ըրած չենք ։ Դարմանին կերպը Գաղղիոյ կրթութեան պաշտօնէին խորհած և գործադրածն է, դաստիարակներ յարուցանել որ թմրած՝ ինքնահաւան՝ թեթևամիտ և տգէտ չըլլան ։ Այս բարքը ունին, քիչ բացառութեամբ, մեր բոլոր դաստիարակները ։ Շատեր կան որ իրենց թեթևամտութեամբը ծնողաց և ժողովրդեան նախապաշարմանց դէմ անժամանակ և անպատեհ յարձակումներ կընեն, մեծ մաս մը կայ որ իրենց անկարողութիւնը պատսպարելու համար՝ դպրոցի մէջ պաշտօն ունին այս կամ այն

ազդեցութեան շնորհիւ, ասանկով դպրոցը այնպիսի դաստիարակաց համար՝ կերպ մը անկելանոց և հիւանդանոց դարձած է ։ Դաստիարակ կամ և ուսուցիչներ ալ կան որոց գիտցածը թերի է, և կամ շատերն ալ ուսում աւանդելու կերպը չեն գիտեր, պարապ տեղը ամսական վարձքերնին կառնեն, բայց արդիւնք մը երևան չգար ։ Ուսուցչաց կարգը կրթելու համար վարժապետական ժողով մը ունեցանք, որոց բոլոր գիտութիւնը աշխարհաբարի և գրաբարի (գործածութեան) խնդրոյն վրայ հատաւ, խնդիրն ալ չկրցաւ լուծել, ցրուեցաւ ։ Ասանկով մեր անապատին վրայ ծաղիկ բուսնելիք չունի ։”

ԾԿ. Նոյն խմբագիրը (հատոր Ե. 3.) ըստ հրահանգի բարեկարգութեան ազգային վարժարանաց, զոր հրատարակած է Ուսումնական խորհուրդը, վարժապետաց բարեմասնութիւնքը ստորագրելէն ետև, կյաւելու թէ « Ազգայինք պիտի հարցունեն անշուշտ, թէ ո՞ւր գտնելու եմք այդ հանգամանքներն իր վրայ բովանդակող վարժապետ մը ։ Իրաւացի՛ հարցումն, այդ և մեք կխոստովանիմք, թէ այդչափ դիւրին չէ այս (գրելով և հրատարակելով չըլլար), բայց որչափ կարելի է աշխատելու է գիտնականը և առաքինին գտնել ։” Եւ թուի թէ ազգին մէջ այս հաղուադիւտ եղածը, շատ տեղեր մանաւանդ ի գաւառս բազում ծնողքներ երբէք չկարենալով գտնել, իրենց զաւկները Պապական և Բողոքական դպրոցներ և վարժարաններ կուղարկեն, ուր կերևի թէ առաւել յարմար և բանգէտ դասատուներ և պատշաճ կանոնաւորութիւն կգտնեն, քան զոր ունին ազգային ուսումնավայրք ։ Եւ այս յայտնի է վերասաց վիճակագրութենէն, որ իբր 30,000 Բողոքականաց մէջ 15,000 ի չափ ուսանող կայ, որոց երրորդին չափը՝ անոր ալ մեծ մասը Լուսաւորչական տղաք են, զորս դժուար կըլլայ բերել ազգային ուսումնավայրերն՝ առանց գէթ նոցա հաւասար կանոնաւոր և արդիւնաւոր դպրոցներ ունենալու ։ Աս ալ անկարելի է ունենալ առանց ուսեալ ժողովուրդ և հմուտ ուսուցիչ ունենալու, որ կըլլայ շատ մը ուսումնարաններ ունենալով, աս ալ շատ մը դրամագլխով և առաջնորդելու կարող մարդոցմով, զորս գտնելու ճարը մտածելու է ազգը ։ Եթէ ո՛չ այսպիսի դաստիարակութեամբ ո՛չ կրթութիւն կըլլայ և ոչ յառաջդիմութիւն, մանաւանդ թէ նոյն դրացի եղբարց յառաջընթացութիւնը ետ մնացած և ընկրկեալ պիտի ցուցանէ ազգային մարմինը, յորմէ զատուիլ և յառաջդիմողին հետ խառնուիլ պիտի ուզեն, որք ժամանակին պահանջմանը համեմատ դաստիարակել կուզեն ։ Այս հետամտութեան առջևը չառներ այլ ևս նախատել՝ քամահել՝ նզովել, Բողոքականը ազգատեաց և մոլորեալ

ցուցունել, և նոցա դպրոցներն ու դաստիարակութիւնը ռամկին խութալի և կորստական երևցունել։ Հասկցողը կհասկնայ և ընելիքն ալ կրնայ որոշել և ընել առանց տէրպապաէն հրաման առնելու և ապայներուն հաճութիւնը ստանալու, որք կերևի թէ կամ լոկ իրենց շահը կմտածեն, ինչպէս պիտի երևի հետևեալ խնդրոց մէջ, կամ լոկ սին երևոյթի և ազգին անուանական փառացը պաշտպան են, առանց իրականն և իսկականը նկատելու։

3. ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՆՈՐԱ

ՃԿԱ. Ազգային կառավարութիւն ըսելով կիմանամք՝ այն քաղաքական յօրինուածութիւնը, որ ուղղակի եկեղեցական գործոց չըխառնուիր, այլ ազգին ոչ-կրօնական գործերը կտնօրինէ, ըստ տրամադրութեան ազգային Սահմանադրութեան։ Եւ այս մասին տեղեկութիւնք կպակսին գաւառաբնակ ազգայնոց կառավարութեան նըկատմամբ, այսքանն յայտնի է որ առաջնորդ մը կամ վարդապետ մը կերթայ եղեր Պօլսէն և տեղացի իշխանաց հետ ինչոր կսեպեն թէ օգտակար է ազգին, զնա գործադրել տալու կաշխատին բուռն զօրութեամբ։ Ասոր օրինակ է նոյն իսկ Մայրաքաղաքին կառավարութիւնը, որ քիչ շատ ազդեցութիւն ունեցեր է և գաւառացւոց վըրայ։ Մինչև յԹանզիմաթն «ազգին գործերն միշտ բացարձակ Ամիրաներէն կախեալ էին", կըսէ փափազեան Ազգ. պատմութիւնը, «որոց դէմ էսնաֆ ժողովրդեան մէջէն արդէն ատամունք կրճըտողներ կային, որոց բարեկամ էին ճարտարապետ՝ վառօդապետ՝ և Երկանեան ամիրաներն։" Սոցա թիկնապահութեամբ ժողովուրդը ազգային ճեմարանին տեսչութիւնը յաջողեցաւ ի ձեռս բերել, զոր՝ երբ կրցաւ միայնակ կառավարել, գիջաւ և ամիրայից աջակից եղաւ։ Այս առեն «Ազգային Պատրիարքարանին մէջ դատաստանական ժողով մը դրուեցաւ եկեղեցականէ և աշխարհականէ խառն՝ ընդ նախագահութեամբ Պատրիարքական փոխանորդին։ Այս դատաստանական ժողովէն ճիւղեր հաստատուեցան (Պօլսոյ) ամէն թաղերուն մէջ որոնք յարաբերութիւն ունէին Պատրիարքարանի դատաստանական ժողովին հետ։" 1841ին Պօլսոյ ժողովուրդը Բ. Դուռը «աղերսագիր տուաւ, և բոլոր ազգային եկամտից և գործոց տեսչութեան համար խնդրեց որ (էսնաֆէն ընտրեալ) 24 անձանց պաշտօնը վաւերացունէ . . . անանկ որ ամիրաներն ամենևին (գործի) չխառնուին, այլ իւրաքանչիւր էսնաֆ իրենց մէջ համագումար ժողովով երեսփոխան ընտրէ, և էսնաֆին բազմակնիք վկայականով ընտ-

րեալը տայ Պատրիարքարան, և անոնցմով կազմուի 24 անձանց ժողով, որ բոլոր ազգային գործոց տեսչութիւնը վարէ։" Ասոր վրայ ազգային խռովութիւն մը եղաւ և քանի մը անձինք աքսորուեցան Մայրաքաղաքի հասարակութենէն, որք թէ վախցան և թէ ձանձրացան վրանին ինկած հոգերէն, ամիրայք ալ ազգային գործերը լքեր թողեր էին երբ Մատթէոս եպիսկոպոս պատրիարք ընտրուեցաւ։"

ՃԿԲ. «Մատթէոս պատրիարք բացարձակ իշխանութիւն կվարէր . . . Ամիրայք ալ առաջին յեղափոխութիւնով բաւական խրատուած ըլլալով, Մատթէոս պատրիարքին ազատ կամացը արգելք ըլլալ չէին կրնար," և նա ուզածը կընէր (տե՛ս ԿԱ.)։ Բայց ալ դարը չէր տաներ որ ազգ մը մարդու մը խելքէն կախեալ ըլլայ, ուստի ամիրայից ոմանց ջանքովը 1848 ին հրովարտակ մը ելաւ, որ կտնօրինէր «երկու ժողով հաստատել, մէկը 20 աշխարհական անձերէ բաղկացած Գերագոյն անունով ժողով մը . . . և միւսը 14 եկեղեցականէ բաղկացած Հոգևոր անունով ժողով մը . . . և այս երկու ժողովներուն Պատրիարքը պիտի նախագահէր, և Լէօղօֆէթ անունով պաշտօնեայ մը, որ Գերագոյն ժողովոյ տնօրէնութեանց գործադիրը պիտի ըլլար։" Եւ այս Գերագոյն ժողովը 1853 ին «պաշտօնական յայտարարութեամբ մը հաստատեց Ուսումնական խորհուրդ մը 14 ուսումնական և բազմահմուտ անձերէ։ Այս խորհուրդին գլխաւոր պաշտօնն էր ազգային դաստիարակութեան ընդհանուր վերատեսչութիւնը," բայց առանց բան մը ընել կարենալու ինքնին լուծուեցաւ յաջորդ տարին։ Ազգը այլ ևս լոկ ժողովոց անուամբ չէր կրնար գոհ ըլլալ. ուստի 1857ին «Գերագոյն ժողովոյ անդամ ընտրուած ուսումնական և քաղաքագէտ անձերէն ազգային կանոնադրութիւն մը խմբագրելու կարևորութիւնը տեսնելով, և մասնաւոր Յանձնաժողովոյ մը ձեռամբ զայն պատրաստելով ներկայացուցին ազգային ընդհանուր ժողովոյ մը, որ զայն ընդունեց անմիջապէս, բայց ասոր համեմատ հաստատուած տնտեսական ժողով մը միայն յարատեւութիւն ունեցաւ և ոչ ինքը։" Վասն որոյ «1859 ին ազգային եկամտից կարգադրութեան և Պատրիարքարանի ծախուց մատակարարութեան դիւրութեան համար՝ յանձնաժողովոյ մը ձեռամբ՝ յատուկ կանոնադրութիւն մը խմբագրեցաւ, բայց ասիկա ազգային կանոնադրութեան մը ամբողջութիւնը չունենալով, Գերագոյն ժողովն որոշեց որ, թէ՛ երկու տարի յառաջ խմբագրուած կանոնադրութեան՝ և թէ այս նոր խմբագրուածին յանձնաժողովները միանալով երրորդ մը խմբագրեն։ Ահա ասկէ ծնաւ 1860 Մայիս 24 ին՝

անմահ յիշատակաց արժանի աւուր մէջ ստորագրեալ ազգային Սահմանադրութիւնը։"

ՃԿԳ. Սահմանադրութիւնը՝ զոր երգել և տօնել ուխտեց ազգին երախտապարտութիւնը և գովել ու հռչակել առաջադրեցին ազգային խմբագիրք, նորա սկզբունքները դասի նիւթ ըրին դաստիարակք և քարոզի նիւթ ատենախօսք. հասարակութիւնն ալ կարծեց թէ ազգին ամէն թերութիւնք լցան և սխալանք ուղղեցան։ Սակայն ըստ ուրում Բարձրագոյն դռնէն վաւերացեալ չէր նա, ուստի ի սոսկումն ամենեցուն, 1862 ի Յունվարին գործադրութենէ դադրեցաւ, մինչև որ քննուի և վաւերացուի, որ և կրկին Յանձնաժողովոյ ձեռամբ քաղաքականի մասին քանի մի փոփոխութիւններ ըլլալով՝ կատարեցաւ 1863 Մարտի վերջերը, երբ հրատարակեցաւ կայսերական Թուղթ ի ճակատի կրելով։ Ուրախացաւ ազգը և Մայրաքաղաքէն սկսեալ գործադրութեանը հետամուտ եղաւ անքոյթ արտաքին երկիւղէ, իսկ Ընդհ. Ժողովոյ մէջ տեղի ունեցած ներքին խռովութեան մը վրայ 1868 Փետր. 4 ին "պետական հարուած" մը եւս ընդունեց և դարձեալ կեցաւ Սահմանադրութիւնը գործադրութենէ, իբր անյարմար ազգ. վիճակին և անդէպ ի գործադրութիւն։ Վասն որոյ Բ. Դռնէն կարգեալ Յանձնաժողով մը սրբագրեց զնա և մատոյց առ կառավարութիւնն, որ ան ալ ղրկեց առ Պատրիարքարանն ի դիտողութիւն, զոր՝ Ընդհ. Ժողովը յանձնեց մասնախմբի մը։ Մասնախումբն ալ իբր տարի մը դիտողութիւն ընելէն վերջը 1870 Օգոս. 20 ին մատոյց Ընդհ. Ժողովոյն, երբ նոր էր Պատրիարք եղեր Հայրիկ և Ընդհ. Ժողովը վերստին հաստատեր էր։ Այս Ժողովը ոչ Դրան յանձնախմբին և ո՛չ իւր կարգած մասնախմբին ըրած փոփոխութեանց հաւնեցաւ, այլ որոշեց յատենի իւր յօդուած առ յօդուած վերաքննել զնա, և մինչև ցաւարտ քննութեան՝ կարելի եղածին չափ գործադրել 1863 ի վաւերացեալ Սահմանադրութեան անօրէնութիւնքը։ Այս քննութիւնն դեռ չաւարտեցաւ հետևապէս ի գործածութեան եղածը այն կանոնագիրն է, որոյ թերութիւնքը ցուցեր են քննիչք և գործադիր պաշտօնեայք։

ՃԿԴ. Արդ տեսնենք այս փառաւորեալ Սահմանադրութեան արդիւնքը, եթէ կայ, քանզի Վրոյրի Նամականին (երես 30) կցուցնէ, թէ Սահմանադրութիւնը ազգին շատ կարևոր է թէև ու կենսատու, իսկ չկայ գործադրութիւն նոյն իսկ Կ. Պօլսոյ մէջ ուր ծնաւ։ Ընդհանուր Ժողովոյ Ատենապետը կըսէր, թէ "Սահմանադրապէս ժողովներ պիտի կազմէինք գաւառներուն մէջ, բայց մինչև հիմա (1870) չկրցինք յառաջ տանիլ այս գործը" (Արձանագ. 164. տես

և ՃԽԴ)։ Փափազեան Ս. էֆէնտի ալ յատենի Ընդ. Ժողովոյ կը հաստատէ, թէ "Երեսփոխանական Ժողովը ընտրական գործողութեանց և ինքզինքը ուղղելու միայն կպարապի ինչպէս որ ըրաւ 8 տարիէ ի վեր. և ազգին ներքին գործոց, հանրական՝ գաւառական և այլ և այլ խնդրոց վրայ չպարապիր, և անոնց ուղղութիւն չտար և գործադրութիւնը չյանձներ գործադիր իշխանութեան, ինչպէս չըրաւ 8 տարիէ ի վեր։" Կհաստատէ իրողութեամբ այս դիտողութիւնը, և կցուցնէ թէ ազգային պարտքը տալու և տուրք հաւաքելու ձեռք չէ զարնուեր, դաստիարակութեան խնդիրն, որ ազգային կենաց և մահու խնդիրն է, դեռ ուշադրութեան չէ առնուեր. Պատրիարքարանը դեռ չգիտեր թէ ազգը քանի վանք՝ քանի եկեղեցի և որքան կալուած կայ, թէ քանի ազգայինք՝ քանի դըպրոց և ինչ եկամուտներ կան, դեռ Հայերէն Գիւանատունն չէ կանոնաւորեր, ուր չգիտցուիր թէ ինչ թղթեր կան, դեռ չգիտեր Պատրիարքարանը թէ քանի առաջնորդութիւնք կան և անոնց ինքզինքնին իսկ կառավարելու անկարող առաջնորդները ո՛ր ջրերուն մէջ են։ (Արձանգր. 370)

ՃԿԵ. Սահմանադրութեան "վերաքննիչ Յանձնախումբն" ալ կը տեղեկագրէ, թէ յորմէ հետէ Սահմանադրութիւնը հաստատեալ է տակաւին "օրինաւոր ժողովներ և խորհուրդներ ունեցանք, օրինաւորապէս ընտրեալ Պատրիարք և ազգային պաշտօնեաներ ունեցանք, օրինաւորապէս՝ այսինքն մեծագոյն մասով խնդիրներ լուծեցինք, և դարձեալ հոն ենք այսօր (1870) ուր էինք առաջ. և հոն են այս օր ազգային գործերն ուր էին նախ քան զՍահմանադրութիւնը։ Ո՞ր սահմանադրական Պատրիարք ազգօգուտ նոր յիշատակ մը ձըգած է, ո՞ր սահմանադրական վարչութիւն նոր բարեկարգութիւն մը հաստատած է։ Տասը տարի է Սահմանադրութիւն ունինք, Ազգ. Ուսումնարան մը չունինք Մայրաքաղաքիս մէջ, գոնէ անկէ առաջ աղէկ գէշ հատ մը ունէինք (ՃԾԳ), ազգային պատսպարան մը՝ Հիւանդանոց անունով Սահմանադրական օրերէն շատ առաջ ունէինք, և փառք տալու է թէ որ այսօր առջինէն գէշ վիճակի մէջ չէ, դեռ ազգային հանդանակութիւն մը չէ հաստատուած։ Տասը տարի է որ Երեսփոխանական Ժողով ունինք և դեռ կսպասենք գաւառական Երեսփոխանաց գալստեանը։ Սահմանադրութիւնը գաւառաց մէջ դեռ ի գործ չէ դրուեր և չենք իշխեր հարցունել թէ Պօլսեցիք արդեօք ի՞նչ չահեցան անոր տասնամեայ գործածութենէն։" (Արձանագիր 17) Տասը տարի վերջն ալ Ազգ. Քաղաքական Ժողովը կտեղեկագրէ ըսելով "Յայտնի է թէ յառաջդիմու-

թիւնը բառերով (ճառերով և կանոնադրութեամբ) չըլլար, ապացոյց՝ տասը տարիէն աւելի է ազգը Սահմանադրական վիճակի մէջ մտաւ, այս տաճարիս մէջ և թէ դրսերը գաւառաց մէջ, և մինչև անգամ լեռներուն և դաշտերուն վրայ, ազգին ընտրելագոյն գլուխներն (ու հանճարները) իրենց ազգասիրական եռանդին բոցը սքանչելի ատենախօսութիւններով արտայայտեցին. բայց տակաւին ազգին վիճակին մէջ, չենք փարանիր ըսելու, թէ զգալի փոփոխութիւն մը չկայ։" (Արձանագր. 344)

ՃԿԶ. "Կան կարգ մը մարդիկ", կըսէ Ցոյս (հատ. Ե. 6), "որոնք Սահմանադրութեան կհակառակին կամ չեն սիրեր զայն, և երբ պատճառը հարցուի, կպատասխանեն թէ 14 տարիէ ի վեր (1874) ազգը այդ կանոնէն ի՞նչ շահեցաւ, շարունակ կռիւ, շարունակ պաշտօնէից փոփոխութիւնք, և փոփոխութեանց պատճառաւ ալ շարունակ գայթակղութիւնք տեղի ունեցան . . . ։ Այս ամէն փոփոխութեանց միջոցին վարչական անդամոց անկումները և անկէց ծագած անձնական ատելութիւնները՝ ընտանեաց մէջ ալ մուտ գտան և հակառակութիւններ յառաջ բերին։" Իսկ "Սահմանադրութիւնը շատ փառաւոր բան է", կըսէ Գիտակ (թիւ 59), "բայց սահմանադրական ազգ մը սահմանադրական օրինաց և սկզբունքներու հմուտ ըլլալու է, նոյնպէս վարելու և նոյնպէս կառավարելու արհեստը սորված ըլլալու է . . . . ։ Շատերը ազգերնուս այս վիճակը անտես ընելով շարունակ օրինօք և սահմանադրապէս կառավարելու դրութիւնը կըամբաստանեն և անոր վրայ կգայթակղին, բայց իրաւամբ չէ, սխալ է դատումնին։ Ազգը պէտք է (կրթել որ) օրէնքին ուժը ու հոգին իր սրտին մէջ ունենայ, իր կիրքերը և զգացումները անով թրծուած ըլլան։ Տգիտութիւնն է որ եղծմանց առջևը ասպարէզ կբանայ և ընդհանրութեան փառը մասնաւորաց ձեռքը խաղալիք կընէ։ Թէ որ ազգը ճշմարտապէս գրկած և որդեգրած է Սահմանադրութիւնը, յայնժամ ինքնայայտ է իւր պարտականութիւնը, պարտի գիտնալ զայն գործադրելու արհեստը, եթէ ոչ նա չգործեր։"

ՃԿԷ. Ցարդ ըսուածներն կվերաբերին նաև պաշտօնէից ազգային գործոց դէթ անուղղակի, զորս պիտի բացատրեն հետևեալք, որք ուղղակի պաշտօնէից որպիսութեանց վրայ դիտողութիւնք են։ "Ահա այս (ձախող) կացութեան մէջ են մեր անսխալ երեսփոխանք, որոց խմորը չփոխուիր, և այք ձախողակի ընտրեալ են ըստ անօրէնութեան ձախող Սահմանադրութեան, բայց տեսնենք թէ այսպէ՞ս են ամենայն երեսփոխանք. ո՛չ, ոչ ամենեքեան. ասոնք կարգ մը մարդիկ են միայն։ Ընդհանուր ժողով ըսելով պէտք չէ իմանալ

այն 60–70 անձինքը, որք ժողովին կու գան և ներկայութեան տոմարը արձանագրելով կերթան, այլ յիշեալ կարգը, որ եօթը ութը հոգի են, և նոյա հետևող իբր 20 անձինքը։ Քանզի երեսփոխանաց մէջ երեք տեսակ անձինք կան, որոց մէկ տեսակը Ազգ. գործոց վերաբերեալ բան մը չգիտեր և բանի չխառնուիր, այլ կերթայ գերեզմանի քարի պէս կոնկուի, և մերթ այլոց հովուն զօրութեամբը մեքենապէս թև և ձեռք կշարժեն ու թիւ կլեցունեն։ Երկրորդ տեսակն ալ թէ և բան կհասկնայ քիչ շատ իսկ միայն կերթայ կու գայ առանց խօսքի խառնուելու, քանզի այսպիսիք կամ խօսելու կոկարանան, կամ ըստ բաւականի Հայերէն չեն գիտեր, կամ այն զրպարտիչ անդամներէն կվախնան, կամ այն կարգէն են՝ որք ինծի չդպչող օձը հազար տարի թող ապրի, կըսեն, ինծի ի՞նչ փոյթ։ Բայց երրորդ տեսակը Աստուծոյ (թոյլ տուած) պատիժն են և ազգին պատուհասը, որք նոյն տեղը իրենց բուն և օճախ սահմանած լինելով ամէն բանի կխառնուին, ամէն գործի կաշխատին, ամէն տեսակ միջոցի և հնարից դիմելով ամէն բան կկատարեն ու ի գլուխ կհանեն, որով ամբողջ ազգին Պատրիարքաց և կաթողիկոսաց ժողովոց և դատուց բոլորին կտիրեն. որք ոչ յոգնիլ գիտեն և ոչ ձանձրանալ, ոչ որդողիլ և ոչ ցաւիլ, ոչ ևս բանի տեղ կդնեն խըղնիքն ու ամաչելը։" Ցաւալի է լսել այսպիսի ինչ, իսկ իրողութեամբ կհաստատէ և փաստիւք կցուցնէ այս իր առաջարկը Մանզումէ (թիւ 3616)։

ՃԿԸ. Ազգին կամ Պատրիարքարանի "Դատաստանական օրէնքն է" կըսէ Շահնուր (Արև. Մամուլ 1874 Մարտի մէջ), "անուշ տեղը կապել, և յանցանքն՝ եթէ հրապարակային չէ, արձակել, իսկ եթէ ծանր է և հանրածանօթ՝ մոռցունել, քննութիւնը երկարաձգելով։ (Որով կաթողիկոսաց պէս ոճրագործներ անմեղ կելլեն և կորբանան իսկ) . . . այսպիսի կրօնաւորներ եկեղեցեաց աղտեր՝ դաս մը դաւաճան Հայոց գործիքն են, որ նպատակ ունին օրինաւոր վարչութեան դէմ դժուարութիւններ հանել ի վնաս ազգին։ Եւ կան խել մը կոյր և ապականակիր մարդիկ մեր մէջ, որ այսպիսի հրէշ պաշտպանելու չափ կյանդգնին։ Վա՜յ ան ազգին որ ոճրագործը և սրբապիղծը անպատիժ թողլով անզգամութեան և անօրէնութեան քաջալեր կհանդիսանայ, իսկ մեր վարչութիւնները . . . հայրական կառավարութիւններ են (եղեր). էհ, ես ալ կըսեմ դիւական, որք իրենց պաշտօնին ամենէն էական մասը զանց կընեն մեղսակցութեամբ։" Մանզումէ պատմելով թէ Ալաշկերտի կարօտելոց համար մինչ իսկ գաւառներէն հաւաքեալ իբր 100,000 անձանց ստակէն փա-

րա մը չէ տուեր Պատրիարքարանը խղճալեաց, այլ Հայաստանի վանքերէն առնելիք Մուգաթայի տակին սեպեր է 40–50ը, մնացածն ալ Ջերքէսներու ծախք ըրեր է, ապա կաղաղակէ. «աւա՜ղ ի սէր Աստուծոյ, ո՛վ որ մէկ հատիկ դէպք մը գիտէ, զոր կատարեր է Պատրիարքարանը կամ վարչութիւնը արդարութեամբ և իրաւամբ, ըստ օրինի և ըստ մարդկութեան, թող հաճի ծանուցանել մեզ, որ ի մխիթարութիւն սրտի վշտացելոց հրատարակենք լրագրիս միջոցով: Քանզի մենք շատ խորհեցանք, մինչ իսկ շատերուն հարցինք բայց աւա՜ղ և ամօ՜թ որ անկարելի եղաւ մեզ յիշել և գտնել" նոցունց տասն և ութն ամեայ ծառայութեանց և աշխատութեանց մէջ: (Մանզ. 3844): Մանզումէ կհաստատէ Արիստակէս եպիսկոպոսի խորհուրդը, զոր ըսեր է թէ «Ստոյգ է թէ մեր պակասութիւնը այս է, որ խաչատուր կաթողիկոսի պէս (կաշառ տալու) քանի մը հազար ոսկի չունիմք, կամ այնքան անդամալոյծ չեմք որ Պատրիարքարանի Պրօպատիկէ աւազանը նետուինք . . . ասիկա աշխարհ լաւ գիտէ:" (Մանզ. 3661)

ՃԿԹ. Քանի մը խօսք ալ գաւառական պաշտօնէութեանց և առաջնորդաց վրայ յառաջ բերեմք, ցուցունելու համար թէ ազգային Պաշտօնատարութեան վրայ յոտից ցգլուխ առողջութիւն չկայ: «Տաճկաստանի մէջ 60 առաջնորդական վիճակ կհամրուի", կըսէ Յօդուածագիր մը (Մանզումէ 340), «ուր՝ խեղճ և տգէտ բազմաթիւ ժողովրդոց վրայ առաջնորդներ բացարձակ իշխանութեամբ ըստ հաճոյս իւրեանց կիշխեն: . . . Ասոնք աշխարհականի վերաբերեալ գործերով (կպարապին), և առաջնորդական իրաւունք անունով խել մը կողոպուտներ կառնուն . . . Խիստ շատ անգամ ականատես եղած եմ, ինչպէս որ շատերն ալ վկայեր են, թէ զանազան վիճակաց առաջնորդներ իրարմէ աւելի հարստութիւն դիզելու մասին իրարու հետ կմրցին: Շատ անգամներ ականջովս լսեր եմ այս կամ այնինչ վարդապետին երկու մեծ տոպրակ ոսկի ունենալը, այն ինչ եպիսկոպոսին թանկագին ադամանդները՝ զգեստներն ու ձիերը: Դեռ երեք ամիս առաջ առաջնորդին մէկը Կարնոյ Յարութիւն եպիսկոպոսին վրայ ինձ հետ խօսած ատենը (նորա ճոխ հարստութեանց վրայ սանկ պատմութիւն մը ընելէն ետև) աւելցուց, ‹Մենք ալ իրմէ շատ վար չենք մնար, եթէ տեսնես մեր ունեցածներն ալ, նա մանաւանդ հիմա Սրբազան եպիսկոպոս եղաւ թէ որ շուտով ալ Պատրիարք ըլլայ, այն ատեն ո՞ր կմնայ Յարութիւն եպիսկոպոսը, երկու տարի բաւական է, ալ այն ատեն կե՛ր ա՛րբ և ուրախ լե՛ր': . . . ‹Առաջնորդական արդար իրաւանց' կարդէն են . . . ճիւղանհա-

մարի պակասութեան համար առնուած տուգանքը, որոյ մեղքը վերցնելու համար պահպանիչ մը բաւական կըլլայ. (եկամուտ կայ նաև) դատաստանական գործերէն, վանուց եկամուտներէն, շատերուն անծանօթ եղած Սուրբերու ուխտատեղիներէն գոյացած հասոյթէն, . . . : Լաւ կյիշեմ որ անկէց երկու ամիս յառաջ այս առաջնորդներէն մէկը ինձ պատմեց, թէ այս ինչ վիճակի առաջնորդը՝ մեկուն, Դու գերեզմանի վրայ խաչ փորեր ես ըսելով 500 դահեկան առեր և այն փորողին մէկ երկու արտն ալ գրաւեր է . . . անպիտան և տգէտ եկեղեցական մը հազարաւոր մարդկանց գլուխ կեցած, տե՛ս, ի՛նչպէս առօք փառօք կեանք կվարէ:" (տես և ՃԽԳ. 3.): Փափազեան Ս. էֆէնտի ընդհանուր ժողովոյ դիտողութեան կներկայացունէ, թէ «Ան որ ինքզինք անգամ կառավարել չգիտեր առաջնորդ, և կառավար եղած է, այն որ եկեղեցական չեղած ժամկոչ անգամ չէր կրնար ըլլար, եղեր է դէտ, տեսուչ և հայր" (արձանագ. 371): Ազգային պաշտօնէութեան վրայ եղած դիտողութիւնք շատ ընդարձակ են, որոյ դրեթէ կհանդիպին ամէն շաբաթ լրագիր ընթերցողք, ուստի իբրև օրինակ բազմաց վերի դիտողութիւնք բաւական համարուած են:

ՃՀ. Ի վեր անդր տեսանք (կ.) թէ Բողոքականութիւնը Հայոց մէջ մտաւ 1830ի ատենները, և մինչ 1840 եղան Կոստանդնուպոլիս և շրջակայները իբր 1000 Բողոքականք, որք այն ատեններէն սկսեալ հալածեցան՝ իբրև ժողովուրդ ընդ իրաւասութեամբ Հայոց Պատրիարքին: Վասն որոյ 1850ի Նոյեմբերի շնորհուած Հրովարտակաւ զատ ժողովուրդ ճանչցուեցան Բարձր. Դռնէն՝ ընդ իրաւասութեամբ Ազգապետի որ եղաւ Յակոբոս Պատրիարքին եղբայրը—Ստեփան էֆէնտի, որոյ յաջորդեց Տ. Ղազարոս էֆէնտի, ասոր ալ այժմեան ազգապետը—Յակոբ էֆէնտի: Ասոնք ալ ունին հպատակ ժողովրդոց Պատրիարքներուն սովորական եղած թոշակն և ամէն արտօնութիւնք, մանաւորապէս շնորհեալ է նոցա Տեսչութեան դուռը սենեակ մը իբր պաշտօնարան Բողոքականաց, որք դեռ ազգային սեպհականութիւն մը ունեցած չեն այս վախճանաւ գործածելի: Միայն թէ ժողովուրդնին որովհետև քիչուոր են տակաւին, և իրենք ըստ ժամանակի ուրիշներէն վերջը ազգի ներկայացուցիչ եղեր են, իրաւամբ առաջնութիւն չեն կրնար ունենալ առաջի դրան, առանց մեծամեծ ծառայութեան պետութեան: Բողոքականք գաւառներուն մէջ ալ ունին տեղական Ազգապետներ յորոց 18–20ը (Յ. 1870 մինչև) թօշակաւոր անդամք էին ժողովոյ, և այլք պաշտօնական ներկայացուցիչք Բողոքականաց: Այս թիւերն աճելու վրայ են ըստ

ածման Բողոքական հասարակութեան՝ որ ի գաւառս, իսկ քիչուոր են անդամակցելու յօժարակամ, գիտնալով թէ քիչ օգուտ կրնան ընել հասարակութեան հանդերձ իրենց մեծ ջանաներովը, որք արդիւնք են ժողովականաց ապօրինաւորութեանցը ։

ՃՀԱ. Ընդ նախագահութեամբ Ստեփան Էֆէնտիի գումարեալ ազգային ժողովը՝ 1856 Մայիսի մէջ Բողոքականաց համար կանոնադրութիւն մը խմբագրեց, որ յաւուրս Ղազարոս Էֆէնտիի (1865 Հոկ.) բարեփոխեցաւ ։ Այժմեան Ազգապետն ալ՝ իւր այցելութեամբը վերահաս լինելով թէ դեռ կան ըլլալիք բարեփոխութիւնք այն կանոնադրութեան մէջ, օրինաւորապէս կազմեալ երեսփոխանական ժողովքի մը միջոցաւ Սահմանադրութիւն մը խմբագրել տուաւ, և այն ինչ մատուցանելու վրայ էր Բարձր. Դրան ի վաւերացումն, վերջին պատերազմը վրայ հասաւ, և գործը անորոշ ժամանակի թողուեցաւ ։ Այնպէս որ սոքա վաւերական Սահմանադրութիւն չունին թէպէտ, մինչև հիմա ջանացեր են ըստ տանելոյ պարագայից ամէն բան օրինաւորապէս կատարել, և չափով մը յաջողեր են ի պատճառս կրթութեան ժողովրդեան և սակաւամասնութեան ։ Ապաքէն առանց բարեկարգութեան երկրին և առանց պատրաստութեան ժողովրդեան՝ անուանական Սահմանադրութիւն մը ի՞նչ ծառայութիւն կրնայ մատուցանել ազգի մը, եթէ ոչ, ինչպէս ցաւ է տեսնել այլ ուրեք, բանամարտ բանալ օրինաց տառին փակչող օրինասէրներու ։

4. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ԵՒ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՆՈՑԱ

ՃՀԲ. Եկեղեցւոյ կառավարութեան կվերաբերի որ ինչ չէ դաւանութիւն և արարողութիւն, այլ կերպեր որովք եկեղեցւոյ անդամք և պաշտօնեայք կվարուին ընդ միմեանս, և ինչ որ կվերաբերի տեսանելի եկեղեցւոյ յօրինուածութեանը ։ Հայ Աւետարանական եկեղեցին ունի հրատարակեալ և ընդունուած Սահմանադրութիւն, զոր առանձին եկեղեցիք ընդուներ են և կգործադրեն, ինչպէս են Կոստանդնուպօլսոյ՝ Տիարպէքիրու և Այնթապու եկեղեցեաց հրատարակած կանոնադրութիւնքը, որք մի և նոյն են ։ Անանկ որ իբրև Հայ Աւետարանական եկեղեցեաց Սահմանադրութիւն կրնայ համարուիլ որ ինչ հրատարակեալ են “Առաջնորդ եկեղեցւոյ անդամոց” անուն գրքին մէջ, ուսկից կտեսնենք թէ Աւետարանական եկեղեցւոյն յօրինուածութեան մէջ կան Բողոքական ժողովուրդք,

եկեղեցւոյ անդամք, օգնականք, երիցունք կամ հոգաբարձուք եկեղեցւոյ, սարկաւագք և սարկաւագուհիք, քարոզիչք, երէցք կամ եպիսկոպոսք ։ Բողոքական ժողովուրդ են որք այս հասարակութեան արձանագրութեան կվերաբերին քաղաքականապէս, կամ ճանչցուած են անջատեալ ուրիշ ժողովուրդէ, զոր օրինակ ի Հայոց, Ասորւոց և ի Յունաց, և խառնուած այս ժողովրդեան հետ, ընդ որս կմիանան հասարակաց պաշտաման մէջ, նաև այսպիսեաց զաւակունքը, եթէ չափահաս գոլով ուրիշ ժողովրդեան մը հետ չեն խառնուիր ։ Եկեղեցւոյ անդամք են, բաց ի մկրտեալ մանկանց որք կհամարուին իբրև որդիք ընդ խնամով ծնողաց իւրեանց մինչև ըլլան չափահաս և իրենց գործերը անօրինեն անձնական որոշմամբ, տիրապէս այն խելահաս անձինք որ Աւետարանական եկեղեցւոյն դաւանութիւնը որդեգրեր՝ հրապարակաւ դաւաներ և Ս. Սեղանոյն հաղորդակից եղեր են ։ “ Որովհետև Ս. Գրոց նայելով եկեղեցւոյ կարգադրութեան պահպանութիւնը միայն եկեղեցականաց չիյնար կըսէ նոյն գիրքը (եր. 13), հապա ժողովրդեան (իմա՝ եկեղեցւոյ անդամոց) ալ, և որովհետև միշտ պատշաճ և կարևոր չըլլար որ բոլոր եկեղեցին այս բանիս համար մէկտեղ գայ, վասն որոյ երեք կամ աւելի երէցներ ընտրուելու են (իրենց մէջէն) իբրև օգնական կամ կառավար ։ Ասոնք, երէցը և սարկաւագները կկազմեն Հոգաբարձուաց ժողովը, որ կքննեն եկեղեցւոյ մէջ նոր ընդունուելու անդամները, (այսինքն նոցա ուղղադաւան և ճշմարիտ նորոգեալ ըլլալը), և հոգ տանին եկեղեցւոյ բարեկարգութեանը՝ կառավարութեանը և շինութեանը .” “ սարկաւագի (ինչպէս և սարկաւագուհւոյն ըստ Հռով. ԺԶ. 1.) պաշտօնը գլխաւորապէս և առանց երկբայութեան եկեղեցւոյ աղքատաց վրայ եղած հոգն է, ըստ Գործ. Զ։ Իր գործն է եկեղեցւոյ ողորմութեան կարօտեալները գիտել, պարագայներնին քննել, օգնել անոնց իր համակրութեամբը և խորհրդովը և այս նպատակաւ իրեն աւանդուած ողորմութիւնը տալ անոնց . . . ։ Սարկաւագը աղքատին հոգ տարած ատենը՝ Հոգաբարձուաց ժողովին հետ խորհուրդ ընելու է ։” Օրինաւոր քարոզիչ կճանչցուի այն միայն որ “պաշտօնէից ժողովէ մը քարոզելու համար յատուկ արտօնագիր ընդունած է”, և ժողովրդեան մը կողմանէ պաշտօնի կարգեալ է որ պաշտամունք կատարէ հրապարակաւ ։ Հովիւ՝ Երէց կամ Եպիսկոպոս են այն պաշտօնեայք որ պաշտօնէից ժողովէ մը ձեռնադրութեամբ կկարգուին եկեղեցւոյ մը հոգևոր գործոց տեսուչ և ժողովրդեան շինութեանն սպասաւոր ըլլալու, (տես Անդ, գլ. Գ) ։

ՃՀԳ. Այս յօրինուածութենէն արտաքոյ են շրջիկ քարոզիչք, Այցելու Երիցունք և Աւետարանիչք կամ Միսիոնարք, որք թէպէտ օրինաւոր պաշտօնեայք մատակարարութեան բանին Աստուծոյ, իսկ եկեղեցւոյ կամ ժողովրդեան մը հետ վերնոյ նման կապակցութիւն չունին։ Շրջիկ քարոզիչք են որք այս պաշտօնին կարգեալ են ձեռնհաս պաշտօնէութենէ մը, որ յարմար տեղեր կրօնական պաշտամունք կատարեն։ Ասոնցմէ տարբեր են որք առանց մէկէն առ այս պաշտօն կարգելու՝ իրենց Քրիստոնէական պարտք կհամարին որ գտնուած տեղերնուն ժողովրդեան ուսուցանեն, և ինչ կերպով որ կրնան կուսուցանեն կամ կքարոզեն զոր ինչ օգտակար կհամարին։ Այցելու Երիցունք են այն հովիւք, որ կամ առանց յառաջագոյն եկեղեցւոյ մը հետ կապուելու կամ կապուելէն վերջը հրաժարելով ի կապակցութենէ, Երիցական պաշտօն կվարեն ուր որ գտնուին։ Աւետարանիչք կամ Միսիոնարք են այն պաշտօնեայք, որք այցելու երիցանց նման առհասարակ ձեռնադրեալք են, և կերթան օտար երկիր Աւետարանական ճշմարտութիւն տարածելու, Քրիստոնէական եկեղեցիներ կազմելու և ժողովուրդը կրօնական և բարոյական ուսմամբ դաստիարակելու։ Թէ Աւետարանական եկեղեցին ցարդ քանի պաշտօնեաներ և անդամներ ունի բաւեցան վերը (ԽԲ. ՃԽ.) միայն պէտք է յիշել թէ այն տեղերն յիշեալ օգնականները, որ քարոզչական գործոյն օգնող պաշտօնակալներ կնշանակեն, պէտք չէ շփոթել Երիցու օգնականաց կամ Հոգաբարձուաց հետ։

ՃՀԴ. Եկեղեցական յօրինուածութիւնն օրինաւորութեան մէջ մնալու համար պէտք է եկեղեցւոյ անդամք և պաշտօնեայք գըտնուին և օրինաւորապէս ընդունուին և կարգուին։ Եւ ահա, ինչպէս ըսինք, Հոգաբարձուաց ժողովը կքննէ, որք կուզեն անդամակցիլ ընդ Աւետարանական եկեղեցիս, և եթէ յարմար գտնէ կընդունի անդամակցութեան, որ կկատարուի հանդիսապէս դաւանութիւն տալով ուխտելով և իրեն համար աղօթք մատուցելով (տես Առաջնորդ... Գլ. Բ.)։ Օգնականք կամ Հոգաբարձուք ևս՝ երբ կընտրուին եկեղեցւոյ արու անդամոց մեծամասնութենէն՝ հանդիսաւոր աղօթքով կմտնեն իրենց պաշտօնին, որ քանի մը տարի կը տևէ՝ վերստին ընտրելի ըլլալու պայմանաւ (Անդ Գլ. Գ. Ա.) սարկաւագունք (և սարկաւագուհիք) երբ կընտրուին ըստ Գործ. Զ. գլխոյ, հանդիսաւոր պաշտամունք կըլլայ այս պարագային պատշաճաւոր բանիւք և աղօթքով, ու եկեղեցւոյն, նաև դրացի այլ եկեղեցեաց Երիցունք ձեռն կդնեն նորա վերայ, որոյ պաշտօնը տևական է ցմահ, եթէ պաշտօնին անյարմար երևնալու արգելք մը չելլէ։ Երիցուն ընտրութիւնը կընեն անդամք եկեղեցւոյն և ձեռնհաս պաշտօնէից հրաւէր կուղեն, որք միաբանական ժողով կկազմեն ուր որ երէցը պիտի հովիւ կարգի, և առաջի ժողովրդեան քննութիւն կըլլայ նորա Քրիստոնէական վարդապետութեան և պաշտօնական գործոց յարմարութեանց վրայ, ապա հանդիսաւոր ձեռնադրութիւն կընեն ներկայ երիցունք միանգամայն, և իրենցմէ մէկը աջ ձեռն կու տայ գործակցութեան (Անդ Գլ. Ժ.)։ Օրինաւոր և շրջիկ քարոզչաց արտօնագիրն կու տայ «Միութեան ժողով» կոչուած մարմինը, զոր կբաղկացունեն գաւառի մը մէջ գըտնուած եկեղեցւոյ պաշտօնեայք և նոցա ընտրեալ նուիրակք կամ երեսփոխանք։ Նոցա անկ է նաև ձեռնադրել այցելու երէցը, եթէ արդէն չէ ձեռնադրեալ, և տալ հաւանութիւն նորա այս պաշտօնին, եթէ ձեռնադրեալ է եկեղեցւոյ մը վրայ ու հրաժարեալ բանաւոր պատճառաւ։ Միսիոնարք որոց շատերը Ամերիկա երիցութեան ձեռնադրեալ են, կամ հաւանութիւն կընդունին ձեռնհաս ժողովէ մը, կամ կձեռնադրուին եթէ չեն ձեռնադրեալ, քանի մալ կան որ Տաճկաստան եկած են, ինչպէս և այլք այլուր, որ իբր բժիշկ կամ օգնական են Միսիոնարաց և ձեռնադրեալ չեն, և արտօնութիւն չունին Ս. խորհուրդ մատակարարելու։

ՃՀԵ. Եկեղեցւոյ կառավարութեան մէկ երևելի գործն ալ է յանցաւորը խրատել և ի զգաստութիւն բերել, նկատելով թէ, «Եկեղեցի մը ամենևին իրաւունք կամ արտօնութիւն չունի Ս. Գրքէն դուրս կամ անոր հակառակ խղճի վերաբերեալ ինչ և իցէ պարտաւորիչ օրէնքներ դնելու։» Նաև «Եկեղեցւոյ կառավարութիւնը այն օրէնքներով ըլլալու է, որ Տէր Յիսուս Քրիստոս տուաւ իր եկեղեցւոյն՝ յանցանքը տարագրելու, եկեղեցւոյն մաքրութեանն ու Քրիստոնէութեան, նաև յանցաւորին օգտին համար։ Բայց Քրիստոնէական կառավարութիւնը հոգևոր է (պատիժն ալ ըստ հոգևորի կանոնի), և մէկ բան մը ամբաստանութեան նիւթ և յանցանք սեպուելու չէ, որ Ս. Գրոց մէջէն չցուցուիր։ Առանձնական և անձնական (թեթև) յանցանքները անմիջապէս դատաստանի բերուելու չեն, հապա պէտք է Մատ. ԺԸ. գլխոյն մէջ մեր Փրկչին տուած կանոնին հետևիլ։ Իսկ յայտնի և գայթակղեցուցիչ (մեծ) յանցանքները, և մանաւանդ անոնք որ տասնաբանեայ պատուիրանքին դէմ կգործուին, անմիջապէս հոգաբարձուաց ժողովին իմաց տալու է։» Աս ալ եթէ չկրցաւ զգաստացունել յանցաւորը, եկեղեցւոյ ամբողջ անդամոց ժողովոյն ներկայելու է խնդիրն, եթէ ասոնց ալ ձեռնհասութենէն վեր երևեցաւ, ինչպէս կրնայ ըլլալ եթէ ամբաստան-

եալը երէց կամ այլ պաշտօնեայ և ազդեցութեան տէր կուսակցութիւն մը ըլլայ, յայնժամ դրացի եկեղեցեաց միաբանեալ ժողովին վերածելու է, և նոցա մեծամասնութեան որոշումը համարելի է վերջին վճիռ։ (Անդ Գլ. ԺԲ.)։ Ցանցաւորին տրուած պատիժն ալ ոչ այլ ինչ է բայց եթէ ժամանակ մը ետ կեցունել եկեղեցւոյ խորհրդոց հաղորդակցելէ, կամ բոլորովին կտրել անդամակցութենէ, կամ պաշտօնէն դադրեցունել՝ եթէ ունի, կամ մոլորեալ համարել եթէ սխալը վարդապետութեան և բարուց սկզբունքի մը կվերաբերի։

ՃՀԶ. Ցարդ ըսուածներէն կիմացուի թէ եկեղեցական կառավարութեան մէջ շատ անգամ պէտք կըլլայ ժողովներ ընել «երիցու, հոգաբարձուաց և սարկաւագաց ընտրութեանը, պաշտօնէից ապրուստը հոգալու, նոր անդամոց ընդունելութեան և յանցաւորաց խրատ ու յանդիմանութիւն տալու» համար։ Հայ Աւետարանական եկեղեցին մինչև ցարդ ճանչցած է մի քանի տեսակ ժողովներ, այն է եկեղեցական ժողով, ուր կհաւաքուին եկեղեցւոյ անդամք և պաշտօնեայք իրենց վերաբերեալ բանի մը, զոր օրինակ սարկաւագ և հոգաբարձու ընտրելու որոշում կուտան։ Արդէն քանի մը անգամ յիշեցինք հոգաբարձուաց ժողովն և նորա պարտքն և պաշտօնը։ Երիցական կամ գաւառական ժողով, զոր կկազմեն պաշտօնեայք և նուիրակք եկեղեցւոյ որ դրացի կհամարուին իրարու ի պատճառս մերձաւորութեան տեղեաց, որոյ պաշտօնական գործն է սարկաւագի ձեռնադրութեան և նման հանդիսաւորութեանց մէջ ներկայ գտնուիլ, իրեն վերածեալ ամբաստանութիւնները քննել, նա մանաւանդ «իրենց վիճակին կամ անոր շրջակայից մէջ Քրիստոսի գործոյն յաջողութեանը և յառաջդիմութեանը վրայօք խօսիլ և խորհրդակցիլ։» Միութեան կամ նահանգաց ժողով զոր կը կազմեն ամենայն օրինաւոր պաշտօնեայք և երեսփոխանք եկեղեցեաց որք մերձակայ գաւառաց մէջ են։ Ըստ այսմ Ասիոյ Տաճկաստանի հիւսիսային մասին Աւետարանական եկեղեցիք կկազմեն Նիկիոյ՝ Բիւթանիոյ՝ Կեդրոնական և Խարբերդու (լաւ եւս է ըսել փոքր Հայոց) միութիւնները, որոց ժողովոյն պարտքն ու պաշտօնն է քարոզչաց արտօնագիր տալ, իրենց սահմանին մէջ նոր եկեղեցիներ կազմել, երէցներ ձեռնադրել, իրենց վերածեալ ամբաստանութիւնները քննել և ընդհանուրի վերաբերեալ գործոց վրայ խորհուրդ տալ կամ կանոն դնել, իսկ առանց պարտաւորելու զեկեղեցիս որ ընդունին իբր անսխալ օրէնք։ Եւ են ջանալ սիրոյ և միութեան կապը հաստատ պահել տարբեր գաւառաց եկեղեցիներուն մէջ, և ա-

նոնց հոգևոր շինութեանն և բարեկաւութեանը համար թելադրել ինչ որ արժանն է և պատկան (Առաջնորդ . . . Գլ. Դ.)։ Մերթ այս միութեանց մէկէն ի միւսն կերթան ներկայացուցիչք, և իրենց խորհուրդները կհաղորդեն նոցա, մանաւանդ թէ իսկական միութիւններն կցուցունեն որ ունին ընդ միմեանս թէ դաւանութեամբ և թէ Սահմանադրութեամբ։ Ահա Հայ Աւետարանական եկեղեցիք, որ առայժմ 90 էն աւելի են, ունին բարւոք յօրինուած, կառավարութիւն և ընդ միմեանս կցորդութիւն զորս կցանկան առաւել ևս բարւոքել և արդիւնաւոր գործել ի ձեռն ընդհանրական ժողովոյ, որ միտք ունին շատ չանցած ընելու։

ՃՀԷ. Հոս կտեսնուի թէ Թուրքիոյ Աւետարանական եկեղեցին, ինչպէս ոմանք յանդգնօս կարծեր և ուզեր են ցուցունել, ուրիշ եկեղեցւոյ մը հետ միացած՝ նորա ծոցը դիմած և անոր դարձած չէ, այլ առանձինն և զատ եկեղեցական յօրինուածութիւն մը ունի։ Նա ո՛չ արևելեան է և ոչ արևմտեան, ոչ Անգլիգական է և ոչ Ամերիկեան, թէև սոցա պաշտօնէից աջակցութիւնը կկրէ և նպաստը կընդունի, ինչպէս կըսէ Աւետաբեր ալ (1874 ի 48 թիւ)։ «Յայտնի է որ Թուրքիոյ Աւետարանական եկեղեցիք կատարելապէս ազատ են հաստատել (ունէ տեսակ ձև կառավարութեան), եթէ լաւ կդատեն՝ երիցական կառավարութեան ամբողջ դրութիւնը, (կամ այլ ձև) և այնպէս անկախ ըլլալ՝ ինչպէս են Ամերիկոյ և Սկովտիոյ երիցական եկեղեցիք. ոչ Ամերիկոյ Պօրտ ընկերութիւնը ոչ ալ անոր Միսիոնարները դէմ կկենան ասոր։ Եւ իրօք Թուրքիոյ մէջ առաջին Աւետարանական եկեղեցին կազմուելէն ի վեր, Աւետարանական եկեղեցեաց կառավարութեան դրութիւնը ժողովական կոչուած դրութիւնը չէ (յորմէ են Միսիոնարաց մեծագոյն մասը և Պօրտի օգնողները), թէպէտ շատ անգամ կըսուի թէ ժողովական դրութիւն է, այլ ըստ մասին ժողովական և ըստ մասին երիցական դրութիւն է։» Ասիկա հաստատելու մի քանի իրողութիւնք յառաջ բերելէն վերջն ալ կաւելցունէ, թէ «Թուրքիոյ Աւետարանական եկեղեցիք որք միութիւն ձևացան՝ տարեկան ժողովներով կգումարուին ոչ միայն ի շինութիւն եկեղեցեաց այլ և դժուարութիւններ լուծելու և եկեղեցեաց վերաբերեալ գործերը որոշելու համար, և այս միութեանց ժողովներուն որոշումները վերջնական են։ Ժողովական եկեղեցիք ոչ գործի համար տարեկան ժողովներ ունին, ոչ ալ ժողովոց խրատները կամ որոշումները կընդունին իբրև վերջնական։ Եթէ Թուրքիոյ Աւետարանական եկեղեցիք յառաջ երթան հաստատելու ընդհանուր ժողով մը, ի սկզբանէ անտի յղացեալ խորհուրդ-

մը ի գործ դրած պիտի ըլլան ։ Այնպիսի ժողով մը, եթէ օրէնսդրական և դատաստանական իշխանութիւն ալ ունենայ, Անգլիոյ կամ Ամերիկայի բոլոր ժողովական եկեղեցիներուն ունեցած ժողովէն տարբեր պիտի ըլլայ, բայց միութեանց մեծաւ մասամբ արդէն ունեցած իշխանութիւնը վարած պիտի ըլլայ ։ Այս դիտողութիւններով կուզենք ցուցունել միայն թէ հիմա Թուրքիոյ Աւետարանական եկեղեցեաց մէջ տիրող կառավարութեան դրութիւնը տարբեր է ժողովրդական դրութենէն, և թէ մանաւանդ երիցական դրութեան յատուկ տարրերքն ունի ։"

ճՀԸ. Աւ կարգը կու գայ որ դիտողութիւննիս դարձունենք Հայ Լուսաւորչական եկեղեցւոյ յօրինուածութեան և կառավարութեան, յորս քանի մը տեղ կտարբերի թէև Աւետարանական եկեղեցիէն, իսկ առաւել հիմնական մասանց մէջ կնմանի նմա իբրև ծերունի մայր նորա, յորմէ թէպէտ կտարբերի դարուց և դարուց դիմական խորշոմութեամբը և ալեօրութեամբը, իսկ կմախքին կազմութեամբը ու դիմագրութեամբը նոյն և նման է ծոցածին դստերն, որ կայներ է աջ կողմը և չափահասութեան առոյգութեամբը կպանծայ ։ "Թող պանծայ" Աւետարանական եկեղեցին, ինչպէս երգեց Կոստանդնուպօլսոյ Հայ Աւետարանական եկեղեցին կազմուած օրը (1846 Յուլ. 1), բայց ներելի չէ եթէ բարձրամտի Հայաստանեայց մօր վերայ, որ դարաւոր ներքին խռովութեանց տոկացեր և արտաքին յարձակմանց դիմադրաւեր և իւր յօրինուածութիւնը պահպաներ է ։ Հետևապէս, քանի որ նոր սահմանադրութիւն չունի, նորա կազմութիւնն ու կառավարութիւնը դժուարին է անթերի ներկայել, բայց հետևեալը երևելի մասունքն են, որոց վրայ քիչ տարաձայնութիւն կայ Լուսաւորչեան հեղինակաց մէջ։ Եւ հոս նախապէս պէտք է իրարմէ զատել, որքան որ կրնայ ըմբռնուիլ, քաղաքական՝ վանական և եկեղեցական յօրինուածութիւնը, որք գործնականապէս կարի խառնուած են ընդ իրեարս ։ Քաղաքականին վրայ արդէն խօսուած է, ուր տեսանք եպիսկոպոս մը Կ. Պօլսոյ Պատրիարք, և այլ եպիսկոպոսունք եկեղեցական կարգէն և վարդապետք վանական կարգէն ի գաւառս՝ առաջնորդ կամ փոխանորդ Պատրիարքի ։ Վանական կարգն կամ յօրինուածութիւնն ալ, որ կկազմի ոչ-ամուսնացեալ պաշտօնեաներէ կամ վարդապետներէ, կվերաբերի Քրիստոնէական դաստիարակութեան, նման Աւետարանականաց այն կարգի պաշտօնէից որք այս ճիւղին մէջ կաշխատին և եկեղեցւոյ հետ կապեալ չեն (ճՀԳ.) ։ Վանական սանունք կամ փոքրաւորք են որ՝ ըստ յարմարութեան իւրեանց կըլլան և այնպէս տնօրինեալ է որ ըլլան,

քրիստոնեայ դաստիարակ, քարոզիչ, եպիսկոպոս և նոցա հետ ըլլան և քաղաքական գործոց պաշտօնեայ ։

ճՀԹ. Արդ Հայ Լուսաւորչական եկեղեցւոյ յօրինուածութեան մէջ կայ ժողովուրդ, քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս ։ Լուսաւորչական եկեղեցւոյն ժողովուրդ են մանկունք որ նորա աւազանին մէջ մկրտեալ են և մկրտեալ չափահասք որ ուրիշ եկեղեցւոյ մը չեն յարեր ։ Ասոնց ամէնն ալ արտօնութիւն ունին եկեղեցւոյ եօթն խորհրդոց կցորդ ըլլալու, բաց ի անոնցմէ որ կամ գաղտնի ծխատէր քահանայէն կարգելուին հաղորդուելէ միայն կամ հրապարակաւ, որ կըլլայ յառենի ժողովրդեան, ուր "նզովեալ" կամ "բանադրեալ" անձը կզրկուի ոչ միայն ի մասնակցութենէ խորհրդոց եկեղեցւոյ այլ և պաշտաման հաղորդակցութենէ, մինչև իսկ կանոնական թաղումէ ։ Քահանայք են եպիսկոպոսէն ձեռնադրեալ պաշտօնեայք մատակարարութեան խորհրդոյ և պաշտաման եկեղեցւոյ, նաև քարոզութեան աստուածային բանին՝ իբրև վերադիր պաշտաման քահանայութեան ։ Եպիսկոպոսք են կաթողիկոսէն ձեռնադրեալ պաշտօնեայք առ ի հովուել զեկեղեցիս, որոց վրայ որ կկարգուին, գլխաւորապէս առ ի հսկել բարեկարգութեան եկեղեցեաց և քարոզութեան Ս. Աւետարանի ։ Կաթողիկոսն է տեսանելի գլուխ այն ամենայն եկեղեցեաց, որոց կենդանի եպիսկոպոսաց ուղղակի կամ անուղղակի հաւանութեամբը կձեռնադրի քանի մը եպիսկոպոսներէ, որք մերձ կան կաթողիկոսարանին ։ Այս յօրինուածութեան նայելով է որ այժմ Լուս. եկեղեցին երեք կաթողիկոս ունի, որք են Էջմիածնայ, որ՝ պիտակ անուամբ կանուանուի "Ամենայն Հայոց", Սսոյ կամ "տանն Կիլիկիոյ" և Աղթամարայ կամ Վասպուրականի ։ Ըստ այսմ յօրինուածութեան դէթ ամէն գաւառ իր եպիսկոպոսն ունենալու է, բայց չունի վասն նուազութեան արժանաւորաց և յաճախութեան շրջիկ վարդապետաց կամ առաջնորդաց ։ Մէն մի եկեղեցի կրնայ քանի մը քահանայ ունենալ հանդերձ դպրօք և սարկաւագօք, որք սպասաւոր են կանոնական պաշտաման և քահանայագործութեան ։

ճՁ. Այս պաշտօնէից ընտրութիւնը ժողովրդենէ է, և վաւերացումը կամ ձեռնադրութիւնը վերնագոյն պաշտօնեայէն. նոյնպէս և պաշտօնանկութեան բողոքը կըլլայ ի ժողովրդենէ և անկումը ձեռնահաս պաշտօնեայէն ։ Ուստի ժողովուրդը կընտրէ քահանայացուն, և եպիսկոպոսը առաջի նոյն ժողովրդեան կձեռնադրէ, հրապարակաւ առնելով նոցա հաւանութիւնը, թէ արժանի է այնր սրբապաշտութեան ։ Մէն մի գաւառ իւր եպիսկոպոսը չունենալուն հա-

մար է, որ ժողովուրդը այս արտօնութենէն կզրկուի և մերձակայ գտնուած եպիսկոպոսի մը կուղարկէ իր Տէրտէրցուն: Գաւառական եկեղեցիք, եկեղեցականք և աշխարհականք կընտրեն իրենց եպիսկոպոսը, զոր և կձեռնադրէ Թեմական կաթողիկոսը: Նոր բան մըն է զոր կտնօրինէ ազգ. Սահմանադրութիւնը, թէ Կ. Պօլսոյ կրօնական ժողովը տալու կամ վաւերացնելու է եպիսկոպոսական ձեռնադրութեան խնդրագիրը: Ցաւ է տեսնել, թէ աղէկ դէշ տակաւին այս յօրինուածութիւնն ալ չպահուիր, որով աւելի դէշին դարձած է Լուս. եկեղեցւոյ կազմակերպութիւնը վասն անբարեկարգութեան դարուց և պարագայից:

ԾԶԱ. Եկեղեցական ժողովոց և պատժական կառավարութեանց համար ինչ որ ալ ըսեմք, վերոյն պէս՝ պիտի գտնեմք թէ անուանական է կամ տեսական, իրականը և տիրականը չկայ. զոր օրինակ պատժական մասին դեռ երեկ Հմայեակ վարդապետ (Լոյս. Ա. շրջ. 6) կպնդէր թէ Լուս. Ս. եկեղեցին կկտրէ անդամակցութենէ պարտազանցները, իսկ ո՞վ տեսեր կամ գիտցեր է պարտազանցի մը՝ յայտնի յանցաւորի մը կտրուիլը: Ասիկայ գիտնան և ընեն նէ քահանայք պիտի ընեն, անոնցմէ ալ ոմանք կխորհին թէ կտրել պէտք ըլլայ նէ ամէնն ալ գրեթէ կտրուելու են, ոմանք ալ կվախնան թէ նախ իրենց կտրուիլը վճռուի: Ժողովներուն գալով պէտք է ըսել թէ եկեղեցական ժողով բնաւ չըլլար, ատոր համար թէև հին կանոնաց մէջ շատ բան կայ, իսկ դեռ չգործադրուիր նոյն իսկ Սահմանադրութեան տնօրինած ժողովոց շատերն: Եւ եթէ ուրեք երբեք ժողով կըլլայ ան ալ սահմանադրական է մանաւանդ քան կանոնական, քաղաքական քան թէ եկեղեցական, որով ոչ բարեկարգութեան մը ձեռք կզարնուի և ոչ բարեփոխութիւն մը կըլլայ, որոյ հարկաւորութիւնը վերը տեսանք թէ ինչպէս ընդհանուր ճանչցուած է: (Տես ՂԱ—ՂԳ.): Ոչ խրատ կայ ոչ պատիժ եկեղեցւոյ մէջ, ուր կայ ամէն տեսակ յանցանքի տէր մարդ՝ և ամէն տեսակ մոլար գաղափար ունեցող գլուխ, իսկ այս տարիներս մէջ մի միայն Բողոքականք գտնուեցան կերևի թէ «Նզովելի» և «բանադրելի», որք եկեղեցիէն դուրս ելածնուն պէս ալ ծուռ միտք չըմնաց:

ԾԶԲ. Ապաքէն վշտալի է այսպիսի խառնափնդոր կառավարութիւն մը դիտել, նա՛ վշտալի ևս է զնա ներկայել, ապա և կծելի հետադայ որպիսութիւնքը նկատել, որ այս կառավարութեան պաշտօնէից ողբալի կացութիւնը կցուցնէ: «Շատ նուաղ են, կըսէ Ցոյս հանդէսը (հատոր Ե. տետր 2), այն եպիսկոպոսներն ալ որոց բարոյականը՝ կրօնքը և գիտութիւնը (փոքրաւորաց կամ հետևողաց) օրինակել արժէ . . . . եպիսկոպոսներու կամ առաջնորդ վարդապետներու թեմէ թեմ համտեսելով շրջելու բարքը, առանց իրական գործունէութեան համբաւով և լրագիրներով հռչակուելու թեթևութիւնը, ժամանակին ախորժակին համեմատ դպրոց դոչելով եկեղեցւոյ ատեանէն դառալու, իսկ միւս կողմանէ ժողովրդեան հոգևոր վիճակը բանի տեղ չդնելու անտարբերութիւնը, թեմէն քսակ շինելով տեղ մը քաշուելու անհոգութիւնը, են, են, մէկ մէկ գլուխ Աստուածաբանութեան դասեր ըրած են իրենց աշակերտ փոքրաւորները կամ աբեղայները: Ատոր համար կերպարանեալ վարդապետներ որ փնտռես կգտնուի, բայց ճշմարիտը գտնել՝ շատ դժուար է . . . : Թեմերու մէջ այցելութիւն ընողները գիտեն, թէ որչափ անարգ վիճակի մը հասած է աշխարհական եկեղեցականութիւնը կամ քահանայութիւնը: Տգիտութեան հետ մէկտեղ խառնուած աղքատութիւնը և ժողովրդեան ալ՝ իւր քահանային ապրուստին բնաւ նշանակութիւն չտալը, այն աստիճանի չողոքորթ ըրած են զիրենք, որ երբեմն ժողովրդեան մէջ դժբախտաբար պատահած բաժանման մէկ մը այս և մէկ մը այն կողմը կանցնին և կտարուբերին: . . . (Հասարակ դպրոցի) աշակերտները կամ բնաւ բան չսորվելով դուրս կուգան, կամ յոյժ ծանծաղ քանի մը բան ունելով՝ որ մինչև քահանայ լինելու հասակը գալ առած քանի մը դասերը զիրենք կատարեալ իմաստակ մը կշինեն: Ա՛ռ դուն և քահանայ ըրէ, եպիսկոպոս, առնոց որը որ ձեռք կանցնի, բայց եկեղեցին ու՞ր կերթայ: . . . (Այս չարեաց դարմանն է վանական կամ ժառանգաւորաց դպրոցներ) ընդ խնամով այնպիսի եկեղեցականաց, որոց վրայ ճշմարիտ ամուրիութիւնը պատիւ և արդիւնք ունի . . . : Այսպէս չարեաց առաջքը առնելու համար պէտք է ապականութեանց հոսանքը խափանել, անեկեղեցականութիւնը ի հիմանց վեր առնելու և փառօք եկեղեցւոյ բեմը տանելու է:»

ԾԶԳ. Մանզումէ խայտառակեր և ի հրապարակ հաներ էր կղերիկոսաց տգիտութիւնը և անբարոյական վարքն ու բարքը, զոր մերժելու համար ընդդէմ գրեր են ոմանք և այլք մեղադրեր են որ պահուելիքը կպախարակէ, ատոր վրայ Խոսրով Էֆէնտի հետևեալը կգրէ (Մանզ. 330): «Հայը կշարժի, բայց ոչ յառաջ, ամէն Հայաբնակ քաղաքաց մէջ շարժումներ պակաս չեն, բայց հին (եկեղեցականներէ չնչեալ) ոգիի արդիւնքներ են: Աչքդ ո՛ր կողմ դարձունես՝ առաջնորդ ուզել և չուզելու փտտած և ձանձրացուցիչ կռիւներ կտեսնես, որք տգէտ և որովայնամոլ առաջնորդաց թելադրու-

թեամբը մնած են և կմնին. պարզ ժողովուրդն նոցա ձեռքը խաղալիկ եղած իրենք՝ իրենց և իրենց սերնդեան կործանումը կփութացնեն։ Խեղճ ժողովուրդը . . . իր խելքը՝ միտքը՝ ժամանակը և ստակը առաջնորդ ունելու կամ չունելու կնուիրէ, որպէս զի հեղգ՝ անպիտան և ցոփակեաց եկեղեցական մը փառաւորուի կամ արտաքսուի։ Սակայն ասկէ ի՞նչ օգուտ, միթէ ասկէց 30–40 տարի առաջ ալ ճիշդ աս ադխատական կռիւները չէ՞ին Հայ ժողովուրդը զբաղեցնող և այս զզուելի խեղճութեան հասցնողները . . . ։ Խմբագիր, ինչ ըսեն ձեզի . . . երբ յաջողութենէ շարժեալ իրաւամբ ի հրապարակ հաներցիք և կհանէք այն մոլի և անպիտան ու մարդկութեան թշնամի եկեղեցականաց գարշելի և մահաշունչ արարքները։ Անմիջապէս ամէն մահահոտ մոլութեանց պաշտպան կանգնելով ձեզ դէմ յարձակեցան . . . իբրև թէ այն անպիտան կրօնականաց վրայ գրուած ճշմարտութիւնները՝ զրպարտութիւն եղած ըլլային։ Դուք գրեցիք և կգրէք, որպէս զի անիրաւներն զգուշանան և իրենց վնասակար ընթացքէն ետ կենան, բայց անոնք փոխանակ իրենց ազգակործան (և մահացու) ընթացքը փոխելու՝ իրենց պէս անիրաւ բռնաւորները պաշտպան գտնելով առաւել ևս յաճախել յանդգնեցան իրենց անիրաւ ընթացից մէջ. . . ։ Ահա Հայը դեռ մինչև ցարդ մեծաւ մասամբ անզգայաբար զինքը այս թշուառութեան գուբը հասցնող ձեռքը գորովանօք կհամբուրէ և կզօրացունէ . . . ։ Հայը սևագլուխ ստորաքէյին երկաթեայ բազկաց տակ կարծես դիւթութեամբ թմբրեր մնացեր է։ . . . (Հա՛յք) այլ ևս ճանչցէք կրօնքը իբրև գործիք բռնելով սուտեր տեղացող եկեղեցականին ձայնին՝ և հաւատարիմ մշակին ձայնին մէջտեղի տարբերութիւնը, առաջինը մերժելով և վերջնոյն հետևելով, որպէս զի բարոյական և նիւթական փրկութեան հասնիք, ապա թէ ոչ՝ եթէ քիչ մը ևս շարունակէք այս մահահոտ ընթացքին մէջ, լաւ գիտցէք որ կորստեան ժամը խիստ մօտեցած է ձեզի։" Եկեղեցական դատին վրայ չեմք ուզեր յառաջ տանիլ մեր նկարագիրը, զի մի ոմանց թշնամանքը և այլոց կսկիծները գրգռենք, հանդիսատեսը բաւական գաղափար ունեցած կըլլայ որ ինչ ըսուեցան ցարդ, եթէ կուզէ առաւել մոմոքիլ թող տեսնէ և ՃԿԸ. ՃԿԹ։

ՃՁԴ. Ժամ է մեզ ակնարկ մըն ձգել Աւետարանական եկեղեցւոյ պաշտօնէից վրայ, որք 30–40 տարիէ ի վեր Ցաճկաստանի ամէն կողմերը կան և քննուեր ու զննուեր են ամէն կարգի մարդոցմէ։ Աս հասարակ Բողոքականք կխրեն և առ պատուականս կհամարին իրենց կրօնական պաշտօնեայները, և եթէ ուրեք երբէք դժգոհու-

թեան ցոյցեր եղած են նոցա դէմ, ընդհանրապէս անոր համար չէ որ նոքա զեղծ և անբարոյական մարդիկ են, այլ որովհետև նոցա ուսումն և կրթութիւնը գոհ չեն ըներ զիրենք։ Ազգայնոց մէջ քանի մը Լուսաւորչականութեան պաշտպան և չափազանց ազգասէր գրիչներ ալ կան, որ Բողոքականաց պաշտօնեայները պախարակելու ջանք մը կցուցունեն, օրինակ առնելով մի քանի թեթև յանցաւորներ, զորս կմեծցունեն և ամենուն պատկերը կհամարին։ Այսպիսեաց համար յառաջագոյն (ՃԹ–ՃԺԲ) դիտողութիւն եղաւ, թէ ինչ ոճով և ինչ ոգւով ու խելքով կգրեն ու կնկարագրեն, որոց հաւատացողներ քիչոր են, մանաւանդ անոնց մէջէն որք առանց փաստի սոսկ չեն ամբաստանութիւն ընդունել, և ևս ի մօտոյ տեսեր և ճանչցեր են զԲողոքական պաշտօնեայս։ Անանկ որ այսպիսի պաշտօնեայք, ուր որ կեցեր են և ճանչցուեր ազգին խոհական մասէն յարգուեր են՝ իբրև բանիբուն և բարեբարոյ անձինք, թէև կրօնական համոզմամբ տարբեր իրենց գաղափարներէն։ Արդարասէր գրիչներ ալ եղեր են որ հրապարակաւ հռչակեր են նոցա առաւելութիւնքը ինչպիսի է Մանզումէի (Թիւ 2959) գրածը, թէ մեր վարդապետներն ու եպիսկոպոսները կրօնական տեղեկութեանց թէև շատ ու շատ աւելի կարօտութիւն ունին քան զքարոզիչս Բողոքականաց, իսկ անոնցմէ շատ սակաւն ատենի մը մէջ կը գտնուին։" Արմաշու Միաբանութիւնն ալ այս տգիտութեան բարձմանը ճար մը գտնելու խորհրդով պարտաւորեալ է ըսել (Ցոյս հատ. Ե. 2.), թէ «Բողոքական քարոզիչներ, ամէնէն տկարը, մեր եկեղեցականաց մեծ մասին քանի անգամը կշռելով կրթեալ և վարժ են . . . բայց մեր քաղաքապահ քահանայից բանակը կամ քնոյ և տգիտութեան մէջ է և կամ կռւոյ ընդ բուն իսկ ժողովրդեան։"

ՃՁԵ. Թուի թէ իրողութեան ցուցուցած ճշմարտութենէ հեռացած չեմք ըլլար եթէ ըսեմք, թէ ամէն տեղի Աւետարանական պաշտօնեայք կգերազանցեն նոյն տեղի համապաշտօն Լուսաւորչական պաշտօնեայս։ Այսինքն գիւղի մը քարոզիչը կամ երէցը առաւել բանգէտ՝ բարեբարոյ և գործունեայ է քան նոյն գիւղի Լուս. քահանան. քաղքի մը երէցը կամ եպիսկոպոսը նոյնպիսի առաւելութիւններ ունի քան նոյն տեղի աւագերէցս կամ քարոզիչ վարդապետը, նոյնպէս խմա և գզաստախարակս։ Եւ պէտք էր այնպէս ըլլալ նայելով այն նախապատրաստութեան զոր կստանան այս պաշտօնեայք, մինչ քահանայ մը գտնուած գիւղին կամ քաղքին հասարակ դպրոցի աշակերտութենէ յառաջ եկած տիրացու մըն է, քարոզիչը աստուածաբանական դպրոցի ուսանող մը, որ քարոզչու-

թեան վերաբերեալ ամէն ուսման դասն ալ առեր է։ Մինչ վարդապետը մեծաւորի մը փոքրաւորն կամ վանքի մը սպասաւոր աբեղան էր, ուր կանոնաւոր պատրաստութիւն շատ քիչերը կյաջողին տեսնել, ան ալ քիչ մը գրաբարի և եկեղեցւոյ վերաբերեալ բաներու մէջ, երէցը աստուածաբանական և հովուաբանական դասեր կառնէր հանդերձ քարոզչական հրահանգութեամբ։ Այսու հաստատութեամբ ասել չուզեցինք, թէ Աւետարանական պաշտօնէից մէջ տկար և անյարմարներ չկան, և թէ Լուսաւորչական ամենայն պաշտօնեայք ստորադաս են քան զնոսա, ուրախութեամբ կյիշենք այն եկեղեցականները որ դարոյս Հայ հանճարին պարծանք են և փառք։ Այլ, աւա՜ղ, քանի՜ սակաւաւորք են այսպիսիք ընդ մէջ բիւրաւոր ապիկարաց, որոց թիւը պակսեցնել և փառաւորելոց դասը ճոխացնել կարի ստիպողական է թէպէտ, ո՞ւր են պատրաստութիւնք, ի՞նչ յուսալի պարագայք կան։ Իսկ՝ ըստ որում ի Բողոքականս դաստիարակութիւնը, ինչպէս տեսանք (ՃԽԸ—ՃԾԱ) որ ամ ըստ ամէ կբարձրանայ, և ուսումը կճոխանայ, յաջորդ պաշտօնեայք կտեսնուին թէ կատարելագոյն են քան զնախորդս իւրեանց, մինչ Լուսաւորչականաց մէջ շատ անգամ յաջորդը նախորդէն քիչ կտարբերի և կստորնանայ անգամ։

ՃԶԶ. Աւետարանական երիցանց կամ քարոզչաց՝ վարդապետներն ու քահանայները գերազանցելուն պատճառն ալ այս է որ, մինչ սոքա քաղաքական գործի շատ կխառնուին նոքա ետ կքաշուին։ Սահմանադրութիւնը կտնօրինէ որ առաջնորդք կամ տեղապահ եկեղեցականք տեղական կառավարութեան առջև ազգին ներկայացուցիչը ըլլան, պետական օրէնսդրութիւնն ալ “մէճլիսի խաւրէին” անդամութեան կհրաւիրէ գլխաւոր զեկեղեցականս, որք կտեսնեն թէ երթալովին ծառայութիւն մալ կրնան ընել ազգ. գործոց մէջ։ Այնպէս զի ամէն առաջնորդ և տեղապահ ի գաւառս անդամ է պետական ժողովոյ, ուր ազդեցութիւն աւելցնելու ջանքեր կըլլան թէ նոյն իսկ եկեղեցականաց և թէ ժողովրդեան կողմէն։ Տեղ տեղ փորձուեցան և Աւետարանական երիցունք յակամայից նոցա օրինակին հետևելով մէճլիսը նստիլ, սակայն թէ իրենց ճաշակին չեկաւ քաղաքական գործոց վրայ ոտճալն և թէ ժողովուրդը ընդդէմ բողոքեց և առ հասարակ չուզեր որ եկեղեցւոյ պաշտօնեայք այսպիսի գործոց խառնուին։ (Տես Աւետ. 1871 թիւ 14)։ Բաց աստի առաջնորդները և տեղակալք առ հասարակ դատաւորի պաշտօն կվարեն կամ դէթ միջնորդ կհանդիսանան այն ամէն մարմնաւոր կամ աշխարհական գործոց, որ ազգին մէջ տեղի կունենան,

մինչ Աւետարանի պաշտօնեայք կքաշուին յայսպիսեաց։ Հետևապէս մէկը մանաւանդ հոգևոր գործով կպարապի և յուսմունս կյառաջէ, մէկալը յաւէտ մարմնաւոր գործով կզբաղի և յօրէնս կյառաջանայ. նա՛ կպատրաստուի ընտիր քարոզչութեան և սա փառաւոր առաջնորդութեան։

ՃԶԷ. Աւետարանական պաշտօնէից յառաջդիմութեան կնպաստէ նաև ըստ Բողոքականաց կատարուած կրօնական պաշտամունքը, զոր քարոզիչը պարտի տնօրինել, ան ալ գլխաւորապէս իւր մտքէն բղխելով նորա մէջ կատարելի աղօթքներն ու մաղթանքները, մինչ Լուսաւորչականացը ամենայն ինչ նախագրեալ է ի նախնեաց և տնօրինեալ, պաշտօնէին կմնայ ըստ պատշաճին կարդալ։ Լուսաւորչական պաշտաման մէջ տարին հազիւ 30–40 քարոզ տալու առիթ կըլլայ, մինչ Բողոքականինը քառապատիկ աւելի է. նոցայն՝ պատմական և ըստ պատշաճի աւուրն մեծաւ մասամբ, սոցայն՝ վարդապետական և ըստ պահանջման պարագայից։ Նոյնպէս Լուսաւորչականաց այլևայլ կանոնական ծիսից կատարման ատեն, զոր օրինակ ի պսակելն և ի թաղելն, հազիւ ուրեք պէտք կըլլայ ուղերձել, մինչ Աւետարանականաց արարողութեան մեծ մասը ուղերձէ կբաղկանայ։ Այսոքիկ և սոցին նման բազմաթիւ առիթք կպարտաւորեն զմիտս Աւետարանական պաշտօնէին ի գործածութիւն, որով բնականապէս կվարժուի լաւ քարոզութեան և ընտիր ուղերձի, մինչ Լուսաւորչական քարոզիչ քահանայն կամ վարդապետը զուրկ է այս պատեհութենէն և հետևաբար կարկամեալ մտօք։

ՃԶԸ. Աւետարանական քարոզչաց և երիցանց յառաջընթացութեան կարի կնպաստէ նաև ժողովրդեան դաստիարակութիւնը, որոց կքարոզէ այլ և այլ առթիւ և յաճախակի։ Տկարամիտ ատենախօսք անգամ սերտելով և գոց ընելով կյաջողին տարին քանի մը անգամ քարոզել մտադրութեան արժանի բանիւ և ձևերով, և այն մանաւանդ առաջի գռեհիկ կամ քարոզած բանին անդէտ անձանց։ Սակայն գործ է գոհացուցիչ կերպով շատ անգամ խօսիլ և այն յատենի հմուտ անձանց, որք կնկատեն թէ՛ փաստին զօրութիւնը և թէ՛ բանին ձևերն ու ասացուածները։ Այսպիսի ժողովրդեան քարոզողն է ահա, որ ստիպեալ ի պարագայից պերճախօս ատենաբան և լաւ բեմբասաց ըլլալու կրնայ վարժուիլ, եթէ կուզէ օգտակար լինել։ Եւ որովհետև առաւել դաստիարակեալ գտանք զԲողոքականս, մանաւանդ ի գաւառս, քան զԼուս. հասարակութիւնս (Գլ. Դ. 1), և որովհետև Բողոքական պաշտօնեայն առաւել քարոզել և ուղերձել պարտաւորեալ է, ուրեմն սոցա քարոզիչը աւելի կրթիչ պա-

բաղդայից մէջ է, քան Լուսաւորչականացը։ Եւ այս է մէկ առիթը որ Աւետարանական քարոզչաց առենախօսութիւնները լսելու առաւել Լուսաւորչականք կերթան և կհաւնին, քան որքան Լուս. վարդապետաց քարոզին կերթան Բողոքականք և քիչերը կհաւնին։ Այնպիսի նպաստաւոր պարագայները կրնայինք յառաջ բերել և ցուցնել Աւետարանի պաշտօնէից բարոյական ուրիշ առաւելութիւններն ալ, բայց կերկնչիմք զի մի կողմնակից թուիցիմք։ Ըսածներնիս ալ մի միայն սա նպատակաւ էր, որ տեսնուի թէ Աւետարանական եկեղեցւոյն դրութիւնը նպաստաւոր է ամէն այն տեսակ յառաջդիմութեան, մինչ Լուսաւորչական դրութիւնը կպակսի յայսմ։

5. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԱ

ՃՁԹ. Մոռնալու չէ թէ այս Հանդէսին մէջ ինչ որ կներկայենք վերջին 50 տարուան շրջանին կվերաբերին, մատենագրութեան վրայ ըսելիքներնիս ալ այս միջոցին ի լոյս ընծայեալ գրոց՝ տետրակաց և լրագրաց կպատկանին։ Պապական հեղինակութեանց վրայ բան չենք ըսեր, զի այս հանդիսաւորութեան ամփոփումը, ինչպէս ըսեր ենք, չներեր և զնոսա ներկայել, ուստի կմնայ Լուսաւորչական և Բողոքական Հայոց մատենագրութեան վրայ եղած դիտողութիւնները հանդիսացունել։ Մելքիսեդ վարդապետ Մ. (եկեղ. պատմ. 617), “Եթէ մեր նպատակէն դուրս չլինէր, կըսէ, մի առ մի յիշատակել ներկայ դարուս մէջ եղած երկասիրութիւնները և օրագրութեանց մէջ հրատարակուած նշանաւոր յօդուածները, պիտի տեսնուէր յայտնապէս որ մտաւոր զարգացումն առաւել յառաջ գացած է աշխարհականաց քան թէ եկեղեցականաց մէջ, մինչդեռ նախնի դարուց մատենագիրներն մեծաւ մասամբ եկեղեցականք էին։ Եթէ մի կողմէն տխրալի է եկեղեցականաց մատենագրական յետադիմութիւնը՝ միւս կողմէն խիստ մխիթարական է ժողովրդային շարժումը, որ եթէ յարատեւէ, անշուշտ պիտի յառաջ բերէ և ընտիր եկեղեցականներ, որոց կարօտութիւնը արդէն զգալի եղած է ո՛չ միայն աշխարհական՝ այլ և եկեղեցական դասուն մէջ։” Աշխարհականք գոլով մատենագրութիւնը ճոխացնողք՝ աշխարհականաց վերաբերեալ գրքեր հեղինակեր և թարգմաներ են, որպիսիք են լեզուագիտական և ուսումնական դասագրքեր, որոց մէն մի տեսակէն 5-10 դասագիրք կրնայ համրուիլ, այսպէս են քերականութիւններ և թուաբանութիւններ իրարմէ քիչ տարբերութեամբ։

ՃՂ. Թուի թէ ուսումնական՝ պատմական և գիտնական գրքե֊

րու հասարակութիւնը սակ չատր, որոց վրայ պէտք եղած երկասիրութիւնք բաւական ընդարձակութիւն չունին, մինչ նոցա բաղդատմամբ շատ ճոխ են ի պէտս ժողովրդեան թարգմանեալ վիպասանութիւնք։ Վասն որոյ ի ձեւ չափազանցութեան կգրէ Յոյս (հատ. Ե. 9) թէ “Մեր ազգին մէջ դժբախտաբար վիպասանութենէ ուրիշ գիրք տպուած չունի, բաւական տարիներէ հետէ, մեր խմբագրութեան բոլոր հմտութիւնը և ճաշակը ասկէ անդին չանցնիր։” Մանաւանդ ծանծաղամիտ հասարակութեան և աշխոյժ երեւակայութեան տէր երիտասարդաց ճաշակին կարի քաղցր կուգան և հաճոյական այնպիսի վէպեր, որոց ընթերցումը կըսէ հեղինակ մը թէև զուարճալի են, միտքը կտկարացունեն և անյարմար կընեն օգտակար և խրատական գրքեր կարդալու։ Բայց կերեւի թէ ազգային հեղինակք կամ թարգմանիչք՝ կամ այս սկզբունքը չընդունելով կամ այլ ինչ վախճանաւ կը խճողեն զնոսա մինչ իսկ օրագրութեանց և Հանդէսից մէջ, ուր մաս առ մաս կերցուներնին ալ բաւական չեն համարիր, կելլեն վերստին և առանձինն տպագրութիւն մալ կընեն։ Յոյս իսկ, որ տեսանք թէ վիպասանութեան աւելազանցութենէ կը գանգատի, սովոր է մէն մի թուոյ մէջ վէպեր հրատարակել։ Ինչո՞ւ արդեօք — որ թերեւս վիպաց սիրահարք ի շնորհս զանոնք կարդալու՝ կարդան և միւս յօդուածները։ Հապա ինչո՞ւ կելլեն վանականք զատ ալ կտպեն — որ ըլլայ թէ վանուց մամուլը ծախքը հանէ, ըստ որում այդպիսի գրքեր են որ շատ կծախուին ազգին մէջ։ Ժողովրդեան այս ճաշակին յայտնի ցոյց մը ունեցած կըլլամք երբ նկատենք թէ այս վիպասանութեանց մի քանին խոշոր հատորներէ կբաղկանան, և ցրուած իսկ են Տաճկաստանու ամէն կողմերը։ Ազգին թարգմանչաց և ընթերցողաց այս հակումը երբ տեսաւ Զօրայեան Նիկողոս էֆէնտի Ընթերցասիրութիւն գրքին մէջ (երես 260, 371, 372) կարեւոր խորհրդածութիւններ ըրաւ ցուցնելով որ հեղինակք՝ թարգմանիչք և հրատարակիչք պարտին նկատել, թէ ազգը մանաւանդ միտք կրթելիք գրոց պէտք ունի, որք սակաւ են թուով և համառօտ։ (Տես անդ երես 217—222։)

ՃՂԱ. Մատենագրութեան պարունակութիւնը դիտողները՝ վէպեր հրատարակելուն ալ յակամայից զիջան վերջերս՝ տեսնելով թէ սկսան անկրօնութեան և անբարոյականութեան ժայթքումներ իսկ լինել։ Տէրոյենց կամ Զամուռճեան Յովհաննէս պատուելին Յոյս Հանդէսին մէջ գիտեց (հատ. Է. 7), թէ “վերջին ժամանակներս ազգին մէջ ելլող քանի մը երիտասարդներ, որ գիտնականի անուն և պարծանք ստանալ կջանան, անխորհրդաբար կարծեն թէ, վեր֊

ջին ժամանակի յետամիտ Գաղղիացի հեղինակաց գաղափարներն
ազգին մէջ տարածելը՝ իրենց (ազատութեան) փափաքանացը հա-
սանելոյ օրինաւոր կերպ մըն է (Ե. Զ) . . . ։ Ասոնցմէ մէկն եղաւ
ասկէց բաւական ժամանակ յառաջ Ռենանի Վարք Յիսուսի մակա-
դրեալ գիրքը լրագրաց մէջ հրատարակելու ։ Ուրիշներ ուրիշ ճամ-
բաներ բռնեցին հաւատքը ու եկեղեցին պախարակելու՝ կեղծ պատ-
մութիւններ թարգմանելու . . . . մօտ ժամանակներս ալ մէկ թե-
թևամիտ երիտասարդ մը եղաւ Ցրպէ Գաղղիացի անհաւատ հեղի-
նակին Յայտնութիւնք ծածկելոց անուն մէկ գիրքը թարգմանելու
և տպելու, որոյ հեղինակը կուզէ հաւատացունել, թէ Ս. Գրոց մէջ
պատմուած հրաշալի բաները՝ սուտ (սքանչելիք) չեն, և Յունական
հին առասպելներէ առնուած են . . . ։ Ուրիշ մըն ալ եղած է, որ
շատերու ձեռք անցած լրագրի մը միջոցաւ ուրիշ տեսակ խոհեր
ժայթքած է, ըսելով թէ Նախնի Քրիստոնէից մէջ 54 Աւետարան
կայ եղեր, և Նիկիոյ ժողովը ասոնցմէ 50ը դուրս է ձգեր և միայն
4ը ընդուներ է ։" Այս դիտողութենէն վերջը հրատարակեց Գալուստ
Կոստանդեան ալ "Մեթօտի վրայ" հեղինակութիւն մը, ուր կուզէ
հաւատացունել թէ Աստուծոյ՝ նախախնամութեան՝ յայտնութեան՝
Քրիստոսի և յաւիտենականութեան նոյն իսկ հոգւոյ գոյութեան
հաւատալը տգիտութենէ ծնեալ երևակայութեան սուտ ցնորքներ են ։
Ծ.Ղ.Բ. Կարգ մը գրիչներ ալ կան, որ նախայիշատակելոց չափ
քաջութիւն չունին կերևի թէ, կամ իրենց պարագայքը չեն ներեր
որ գաղափարնին իրենց ստորագրութեամբը պարզապէս ըսեն, ուս-
տի կեղծ դիմակներ—ստորագրութիւններ և ձևեր կգործածեն ։
Այսպիսեաց օրինակ մը ըլլայ Վրոյր, որ ի Նամականիս (եր. 148), երազ
մը պատմել կու տայ ծպտեալ հիւրի մը և առիթ կառնու ձեռք
արհամարհել Ս. Գրոց մարգարէութիւնները, իբր թէ են նոքա պա-
ռաւական երազներ, որոց մեկնութիւններ տուեր են և կու տան ։
Դարձեալ նոյն գործոյն վերջին մասանց մէջ որպէս թէ երազով ե-
րևելի և հանրածանօթ եկեղեցականներ կտեսնէր, որ թատրոն կը
մտնեն դիմակ կդնեն և անբարոյականութիւն չմնար որ չգործեն,
(Նամակ ԿԳ. ԿԵ. և ԿԸ.) ։ Մամուլ լրագիրն ալ իւր շարժվարքներո-
վը՝ ապականարար ազդեցութիւններ կթափէ կրօնական և բարոյա-
կան իրաց վրայ, զոր տեսեալ Մանզումէի (թիւ 1014), "լմի գըր-
ուածներովը երիտասարդաց և մանաւանդ իգական սեռին անկըր-
թութիւն (անբարոյականութիւն) սովրեցունելու պատճառ կըլլայ" ը-
սաւ, որոյ օրինակ մը կու տայ Յօդուածագիր մը (Մանզ. 1016) ։ Ուր կը
սէ թէ "Մամուլ իր 35 թերթերովը քաջապէս հաստատած է, թէ

ազգային՝ եկեղեցական՝ ընտանեկան և անհատական պատիւ, ու
նուիրական սրբութիւն բառերը՝ իրեն համար նշանակութիւն չունին,
և թէ ինք խայտառակութեան զինուոր գրուելէն ի վեր ասոնց դէմ
մարտնչելէ դադրած չէ ։ Սակայն գիտցիր, ժպի՛րհ թերթ, որ զզուելի
լրձունքներովդ որ և է նուիրական բան աղարտելու կարող չես,
գիտցիր որ Սրբազան բաները քու անկարգ կրիցդ յագուրդ տալու
գործիք չեն կրնար ըլլալ ։" Այս նամականւոյն երազոց և Շարի-
վարիի յօդուածոց պէս կան և ծպտեալ երգեր, սիրահարական
թատերգութիւններ և անբարոյական վէպեր, որ վերջնոյս մատե-
նագրութեան խել մը տեղը կբռնեն ։
Ծ.Ղ.Գ. Նկատելով թէ վերջերս ազգային մատենագրութիւնը ա-
զատ կճանաչէ ինքզինքը պաշտօնական քննադատութենէ, պատ-
կան կթուի մեզ ազատութեան վրայ Դիտակայ (թիւ 90) հետևեալ
կտորը դնել, որ և է գրականութեան վրայ դիտողութիւն մ'է ։
"Ազատութիւնը փառաւոր բան է, բանականութեան կեանքը անոր
մէջ է . . . ։ Սակայն սա ալ փորձով ստուգուած անժխտելի իրո-
ղութիւն մ'է որ, որ սանձարձակ և անսահման ազատութիւնը մարդ-
կութեան նոյն իսկ ժանտախտն է, ուր ամենևին կեանք չունի մարդ-
Ազատութիւնն այս վիճակին մէջ անէծք է ընկերութեան, յարա-
բերութեան բոլոր կապերը կլուծէ ։ Հաւասար ընդ հաւասարի, մեծի
և պզտիկի, պատւոյ և աստիճանի, ակնածութեան և յարգանաց
բոլոր զգացումները կքանդէ և կջնջէ սրտերուն մէջէն, և կընէ
մարդկութեան հրապարակը բանական վայրագ հրէշներու տաժա-
նելի ասպարէզ մը . . . ուր ոչ մեծ պիտի նային ոչ պզտիկ, ոչ
կարգ պիտի նային ոչ կանոն, այլ բերաններնուն եկածը պի-
տի փչեն՝ անդօսնեն՝ արհամարհեն՝ հեգնեն՝ հայհոյեն, վերջա-
պէս ամէն բան ընեն, և մէկը ի՞նչ կընէք կամ ի՞նչ կըսէք ըսելու
չէ, որովհետև մարդիկ ազատ են ։ . . . Այսպէս շատերուն գաղա-
փարը աւրուած կերևի հիմա ազատութեան վրայ, որպէս թէ ա-
նով այս խառնաշփոթ՝ կռուազան և անդօսնիչ վիճակը հասկցած
ըլլար, մանաւանդ գրական ասպարէզին մէջ ։ . . . Երբ ազատու-
թիւնը այնպէս չափազանցութեանց և անկարգութեանց ծածկոց
կըլլայ, ըսել է որ մարդիկ դեռ այդ փառաւոր արտօնութիւնը վա-
յելելու փառաւոր վիճակին հասած չեն ։ Ցարժամ ազատութիւնը
տղոց ձեռքը զէնք տալու պէս բան մ'է . . . միշտ այսպէս եղած
է ազատութեան սահմանը և կանոնները չգիտցող ժողովրդոց վի-
ճակին ալ, յաւէտ զխտուած են անկէ քան թէ օգուտ քաղած ։"
Որոյ յաւելի մէկ օրինակն ալ ահա վերոյիշեալ ազատ հրատարա-

կութեանց արդիւնքն են, որոց ծանրութիւնը դիւրաւ չկրնալ կարենայ վերցունել Հայութեան մարմինը, որ կաթի կկարօտի առ ի սնունդ քան մէջի և յարձակմանց ընդդէմ կրօնի և բարոյականի։

ԺԳ. 1871ին կգրէ և Աւետաբեր (Թիւ 47), թէ «այս օրերս այս երկրին լրագիրներուն մէջ շատ բան կխօսուի դպրոցաց մէջ (և այլ ուրեք) բարոյականութիւն սովրեցնելու նկատմամբ։ Ասիկա շատ աղէկ նշան է, և կցուցնէ թէ տղոց դաստիարակութեան մէջ լեզուագիտութենէ և այլ և այլ հասարակ գիտութիւններէ զատ ուրիշ բանի մալ կարօտութիւնը սկսած է ճանչցուիլ։ Բայց և այնպէս այս նիւթին վրայ գրուած յօդուածներէն շատերուն մէջ երկու բան կպակսի։ Նախ յօդուածներուն հեղինակները չեն ցուցներ, թէ բարոյականութիւն կամ բարոյական դաստիարակութիւն ըսելով ի՞նչ կհասկընան։ Այս բառը յաճախ կգործածուի նոյն յօդուածոց մէջ, իսկ ամենևին տեղ մը բացատրուած և լուսաւորուած չէ թէ ինչպիսի բան է ան՝ որոյ դպրոցաց մէջ ուսանիլը այսքան բաղձալի է։ Երկրորդ . . . յիշեալ յօդուածոց հեղինակները չեն ցուցներ, թէ այս բարոյական դաստիարակութիւնը ի՞նչ կանոնի կամ օրէնքի համեմատ ըլլալու է, կամ թէ այս մասին ճշմարիտ կանոնները սորվելէն ետքը այն կանոնաց հնազանդելը ի՞նչ միջոցով կարելի է։» Այսպէս շատ ուրիշ դրութեանց գաղափարներն ալ անորոշ են և խառնաշփոթ, որ հարկաւ ընթերցողաց քիչ օգուտ կըլլայ։ Մանաւանդ թէ անգործադրելի իսկ, եթէ կրօնական սկզբանց վրայ հաստատեալ և նորա ուսուցածին պէս Աստուծոյ շնորհիւ օժանդակեալ չըլլայ, զոր ի ձեռս բերելու կերպերն ու վարդապետութիւնքը կուսուցանեն Քրիստոնէական դրութիւնք։

ԺԴ. Այս շրջանին մէջ ելած կրօնական կամ Քրիստոնէական գրոց մեծ մասը դասատետրներ են, որք՝ նման ուսումնական դասի գրքերուն, իրարմէ քիչ շատ տարբերութեամբ նոյն կամ այլ հեղինակաց գործերն են։ Մաս մալ կան որ ջատագովութիւններ են Լուս. եկեղեցւոյն, ինչպէս են Համդխարանն Մատ. Եպիսկոպոսի և Բարի մարդ Բարի Քրիստոնեայ անուանեալ գործ նորա, ուր կըլնի նաև ընդդէմ Պապական Մխիթարեանց, մանաւանդ Բողոքական Միսիոնարաց։ Կան որ ի պէտս զարգացելոց Քրիստոնէական վարդապետութիւն են, նման Շահնազարեանի Քրիստոնէական վարդապետութեան և Տէր Սարգիսեանի Քննական կրօնագիտութեան, որք իրենց տեսակին մէջ փառք են մատենագրութեան և օգտամատոյց ազգին կարօտութեանց։ Այս կարգէն են Խորէն Սըրբազանի Քրիստոնէական գրքերն, ուր կրօնական վարդապետութիւնը ազգին երիտասարդութեան մտացն յարմար փաստերով կը լուսաբանի ընտիր լեզուով և ճոխ իմաստիւք։ Կան և հոգևոր գրքեր կամ Աւետարանական խրատաբանութիւններ, որոց մէջ պանծալի է Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր Համաբարբառ ուսումն Աւետարանի, և Մարգարիտ արքայութեան երկնից, Յիսուսի վերջին շաբաթը, Սիրաք և Սամուէլ, զորս ոգեգրեաց Հայրն Հայաստանեայց Խրիմեան Սրբազան։ Այսօրիկ և սոյին նմանք իրաւամբ պարծանք են Հայ մատենագրութեան դարոյս, և փառք եկեղեցական դասուն, ուր կփայլին այսպիսի լուսաւոր ջահք Հայաստանեայց։ Գիտենք թէ Հայ մատենագրութեան վրայ այս հանդիսացումը շատ թերի է, իսկ առկէ աւելին չէինք կրնար ընել այսպիսի համառօտութեան մը մէջ, ուր բաւ է մեզ տեսնել թէ այս շրջանը միայն իր ճոխութեամբը կրնայ հաւասարակշիռ գալ նախնեաց ի լոյս ընծայած մատենագրութեան, և թէ աշխարհաբար լեզուն, ի շնորհս այս հեղինակաց, այնքան սնունդ ընդուներ է իր մօրէն, գրաբարէն, և այնքան կանոնաւորութեան մերձեցեր, որ ալ վերնալու վրայ է գրաբար լեզուն հասարակաց բարբառ ըլլալու դժուարութիւնը։

ԺԵ. Բողոքական հեղինակաց մատենագրական գործերը խառն են ընդ հրատարակութիւնս Միսիոնարաց, որք Պէրութի մէջ հաստատած են տպարան մը Արաբացի լեզուով հրատարակութեան, զոր ընթերցողք յայտ է թէ Հայ չեն և դուրս Հայերէն մատենագրութենէ։ Սոքա կառուցին ի Կ. Պոլիս Ս. Գրոց տուն մը, Պայպըլ Հաուս, կամ Ամերիկան խան, ուր կկատարին տպագրական գործողութիւնք մատենագրութեանց Տաճկաստանի ժողովրդեան համար։ Միսիոնարաց աշխատութիւնը՝ ըստ որում միայն Հայոց համար չէ, այլ և ուրիշ ազգաց համար, հրատարակութիւններ ունին Յունարէն՝ Պուլկարերէն՝ Տաճկերէն և Հայերէն, յորոց վերջին երկուքը կրնան Հայ Բողոքականաց վերաբերեալ նկատուիլ։ Արդ այս Հայագիր Տաճկերէն և Հայերէն աշխարհաբար լեզուով հրատարակեալ են Աստուածաշնչի քանի մը տեսակ թարգմանութիւնքը զոր նոր ըրած են, գրաբարէն ալ Նոր Կտակարանն ու Սաղմոսը քանի մը տեսակ տպագրութեամբ, և ևս Արարատեան կոչուած լեզուով։ Սոքա հրատարակած են և Քրիստոնէական գրքեր, զոր օրինակ Աստուածաբանութիւն, Քրիստոնէական վարդապետութիւն և Ս. Գրոց կտորներուն վրայ մեկնութիւններ։ Նաև վարդապետական և հոգևոր գրքեր ի պէտս ժողովրդեան, որպիսիք են Տաճկերէն Իլմի իլահի, Աստուածպաշտութիւն և Սրբոց հանդիսա անուանեալ մատեանք։

Գիտնական և ուսումնական դասագրքեր ևս ունին սոքա, որոց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են Մտաւորական փիլիսոփայութիւնն ու Հայերէն և Տաճկերէն Մարդակազմութիւններն, որք առաջին հրատարակութիւն են իրենց տեսակին մէջ։ Վէպեր իսկ կան որք կամ վարդապետութիւն կամ բարոյականութիւն բացատրելու կծառայեն Քրիստոնէական ճամբորդութեան և Հենրիկոսի նման։ Բողոքականք ունին նաև վիճաբանական տետրակներ, կամ ի պատասխանի ընդդէմ իրենց հրատարակեալ գրոց, ինչպէս է Բաբի մարդը, կամ առ ի բողոքել ընդդէմ մոլար վարդապետութեան մը՝ նման Հերքումն խոստովանութեան տետրակին։ Ասոնց և ոչ միոյն մէջ կան ընդդէմ կրօնի և բարոյականի խօսք մը, այլ ամէնն ալ շինիչ են և հրահանգիչ Քրիստոնէական վարդապետութեան և ուղիղ բարոյականի, թէ և կան վարդապետութիւններ եկեղեցական խնդրոց վերայ, որք մոլորութիւն համարեալ են ուրիշ եկեղեցեաց ուսուցիչներէն։

ԾՂԷ. Թուի մեզ թէ Բողոքականաց մատենագրական ծառայութենէն հաշուելի են նաև այն հրատարակութիւնք, որոց հեղինակները Բողոքական ժողովրդեան կվերաբերին, որպիսիք են Սուրիացւոց Արաբերէն հեղինակութիւնները, նաև Գ. Պաղտասարեանի, Ա. Մ. Գարագաշեանի և Ամիրխանեանի գործերը։ Գիտակ լրագիր ալ, զոր իբր երեք տարի խմբագրեց Պատ. Սիմէոն Իւթիւճեան, օրինակ մը կրնայ համարուիլ թէ՝ երբ պարագայք ներեն և Հայ Աւետարանականք ի գրական ասպարիզի երևան, ինչպէս և ինչ կը գրեն ի շինութիւն հասարակաց մտաց։ Աւետաբեր ալ որ ասպնջականն է Բողոքական յօդուածագրերու քառորդ դար մը է որ կաշխատի օգտակար ծանօթութիւններ տալու, ուր կրօնի և բարոյականութեան դէմ բան մը տեսնուած չէ։ Սա ևս նկատելու է, թէ մինչ քանի մը Լուսաւորչական համարեալ հեղինակք կղեղծանին ի գրականութեան և չարաչար կվարեն ազատութիւնն տպագրութեան, Բողոքական համարելոց մէջ չէ երևցեր այսպիսի բան մը, նոցա գրութեանց մէջ չկայ խօսք մը որ հակառակ ըլլայ Ս. Գրոց և բարոյական սկզբանց։ Ուստի կտեսնենք թէ Հայ Բողոքականք գրականութեան մէջ ալ պահեր են առաւելութիւն մը, որ յայտ ընծայելի է իրենց կրօնական դաստիարակութեան և մտաւոր լուսաւորութեան։ Վասն որոյ և սոցա մատենագրական աշխատութիւնները պատիւ համարելի են Քրիստոնէական մատենագրութեան և ճոխութեան թէ տեսակաւ և թէ թուով ու լեզուով։

6. ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆԱՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑ

ԾՂԸ. Մինչև ցայս վայր որ ինչ երևեցան ի Հանդիսի աստ, յատկապէս այս գլխոյն դիտողութիւնքը բաւական պատրաստած ըլլալու են զմիտս ամփոփ տեսութիւն մը ունենալու Հայուն Լուսաւորչական և Աւետարանական կուսակցութեան վերայ։ Անանկ որ կգտնենք Տաճկաստանի հողոյն վերայ իբր երկու միլիոն Հայ ժողովուրդ մը, յորոց կրթեալ մասն արդէն իբր 75,000 անձինք Լուս. եկեղեցիէն անջատեալ Հռովմէականին յարեր են, մնացելոց մեծագոյն մասը տգիտութեան և բռնութեանց տակ կորուսեր են մայրենի լեզունին՝ կխօսին կամ ուրիշ ազգի մը լեզու կամ միայն իրենց խմնալի գաւառական բարբառ մը, կորուսեր են և ազգութեան ու Քրիստոնէական կարևոր ծանօթութիւնները։ Որով ոչինչ նուազ յայլազգաց, օտարի պէս կապրին իրարու հետ, և անծանօթ իրարու կարևոր հանգամանաց վերայ, յորոց բռնադոյնք և վատթարագոյնք կփիոխան ընդ օտարս և կնեղեն ու կկեղեքեն իրենց համարիւն և համակրօն եղբայրները։ Ազգին քաղաքակրթեալ՝ լուսաւորեալ և յառաջադէմ մասը կլալէ սոցա վերայ և կմորմոքի, իսկ իրենց տկարութիւնքը և քաղաքական ձախողութիւնք պարապ չեն տար նոցա խեղճութեան դարման տանիլ։ Բողոքական ազգեր կուզեն այս ժողովուրդը ձեռք առնել և ի ձեռն սոցա Աւետարանել զՏաճկաստան և լուսաւորել որում կարօտ են նոյն իսկ Հայուն յառաջադէմ և կրթեալ մասը, և ահա սոցա մէջ տարաձայնութիւն մը է կսկսի, և Բողոքականաց կուսակիցք կհատուածին իբր 40 տարի յառաջ։ Մնացեալ մեծ մասը կջանայ սոցա միաբանութիւնը քայքայել, որոյ վասն կգործածէ ինչ միջոց որ պատկան կդատէ առ վախճանն, և կհրատարակէ կամ կարծէ թէ իսկապէս ջլատեց նոցա ուժը և կործանեց ամբարտակը, որ կանգնեալ կհամարի ազգին յառաջընթացութեան առջևն։ Բայց նոքա ամ ըստ ամէ կաճին, մինչև նոցա մէջ եղած Հայոց թիւը կհասնի 25,000 ի, մեծաւ մասամբ ունեալ՝ բանիբուն և ընդ միմեանս համակամ անձինք, և անձնուէր յառաջ տանելու Աւետարանական գործը աջակցութեամբ Ամերիկայի Միսիոնարաց։

ԾՂԹ. Վասն որոյ դաստիարակութեան գործը կսկսին ի հիմանց հասարակ դպրոցներէ, ուր արական և իգական սեռին միանգամայն նախնական դասեր կաւանդեն։ Զափահասից կարդալ, գրել ուսանելուն ալ միջոցներ կգտնեն, մինչև համարեա թէ չգտանիլ իրենց չափահասից մէջ կարող մէկը որ կարդալ և հասկնալ չգիտնայ՝ ըստ

չափու հասակի։ Նկատուին և ճեմարանք, ուր երկրին ամէն կողմէն երիտասարդք և օրիորդք կժողովին ուսանիլ որ ինչ պէտք են ուսուցչական պաշտօնի թէ ի բեմի և թէ ի դասարանի, որով հասարակ դպրոցներ կունենան իրենց յարմար վարժապետներն և վարժուհիները։ Նկատուին և վարժարանք առ ի աւանդել բարձրագոյն կրթութիւն մտաց և սրտի և պատրաստել տաղանդաւոր հանճարներ ի ծառայութիւն Աստուծոյ և Ազգին՝ ուսանելի բժշկական արհեստին ոմանք մարմնական և ոմանք հոգեկան ցաւոց բուժել ջանալով։ Այդ օրինակին կհետևի և Լուսաւորչական կուսակցութիւնը, կբանայ դպրոցներ, ուր չկան յարմար դասագրքեր, և միտք բանալու կերպով հրահանգող դասատուներ, հետևապէս չվայելէր սըտուգն կրթութեան և ընթերցման, որ գլխաւորապէս արական սեռին կսեպէ սեպհական։ Դպրոցաց ամլութեան պատճառ կսեպէ չէնքին անյարմարութիւնը, կելլէ մեծածախ ուսումնավայրեր կկառուցանէ, և աշակերտաց լոկ թիւը յաւելուլ կջանայ, առանց ներքին բարեկարգութեան հոգ տանելու։ Վարժարաններ կամ ճեմարաններ ալ կունենայ նա, յորդորեալ ի պարագայից, ուր պատանիք և երիտասարդք գոգցես երգել միայն կուսանին և խօսիլ քանի մը սովորական խնդրոց վերայ։ Ասոնց ոմանք կուտան գրչնին տաղեր տողելու, այլք բանաստեղծութիւն և վէպ թարգմանելու, կամ դպրոցական ճառերը սրբագրել և ի հրապարակ հանելու, իսկ այլք որ դասատուութեան կժամանեն առաւ երգեր կուսուցանեն և փառաւոր քննութիւններ կուտան հանդերձ չքեղ հանդիսաւորութեամբ։ Ասոնցմէ կշլանայ ժողովուրդը, որ արտաքինը միայն կրնայ դատել, կուտայ առատ սակն և տուրքը, որոց միտք թանկագին է քան զադամանդ, սպասելով որ դաստիարակութեան քաղցր պըտուղը վայելէ մշակեալ այգւոյն, և նա ագոխ կուտայ թթու և դառնահամ։ Իմա ուսանողաց ոմանք կըլլան խակամիտ և թերուսումն, ոմանք անբարոյական և ապականեալ բարուք, մինչ իսկ անկրօնք և անհաւանք Քրիստոնէութեան։

Մ. Լուսաւորչական Հայը որ Տաճկաստանի յառաջադէմ ժողովրդոց մէկն է, ժամանակին լուսաւորութենէն այնպէս կազդուի, որ ազգային կառավարութեան տիրող ձևը կկործանի նորա ազատախոհութեան առջև։ Ազգային գործոց կանոնաւորութեան համար կհաստատէ Սահմանադրութիւն մը, զոր դուն կգործէ ի գործ դնել, և սակայն ժողովրդեան սիրտը և միտքը անպատրաստ գոլով այսմ օրինաւորութեան, հազար ու մէկ խոչընդոտներ կելլան։ Մինչ իսկ օրինադիրքը կըլլայ անօրինաց առիթ խռովութեան և ազգային

շփոթից և ժողովոյ վայրը կռուարան, ուր Հայրիկն Հայոց յետ երկար փորձառութեան կվճռէ, թէ նախ քան զՍահմանադրութիւն ժողովուրդը սահմանադրեալ ընելու, և փոխան Սահմանադրութեան ժողովուրդը սրբագրելու է։ Բողոքականը, որ փոքրիկ ժողովուրդ մը է, շատ կարօտութիւն չունեցաւ Սահմանադրութեան, մանաւանդ որ իրենցմէ ոմանք համոզեալ իսկ էին Հայրիկի վճռոյն, թէ նախ սահմանադրեալ ժողովուրդ պատրաստելու է, ապա Սահմանադրութիւն։ Մանաւանդ թէ անկարգ պետական իշխանութեան մէջ ի՞նչ կրնայ ընել հպատակ ժողովրդեան մը կանոնադրութիւնը այն դժուարութեանց, որ քաղաքական պաշտօնէութեանց արդարասիրութեամբը միայն կրնան վերնալ։

ՄԱ. Վասն որոյ Բողոքականք փոխան քաղաքական կամ ազգային բարեկարգութեան ջանացին և հաստատեցին եկեղեցական բարեկարգութիւն, այնպիսի յօրինուածով որ առանց անկախութիւննին կորուսանելու յարաբերութեան մէջ լինին ընդ միմեանս և ընդ այլ Բողոքական եկեղեցիս։ Որոց նպատակն ու խորհրդոցը գիտեն թէ կարօտ են, առ ի կարող լինել յառաջ տանիլ այն մեծ գործը, որ է բարեկարգել տալ ազգային եկեղեցին և աւետարանել զՏաճկաստան ամբողջովին։ Եւ ապաքէն այսօր ունին եկեղեցական բարւոք կացութիւն և պատրաստութիւն յառաջընթացութեան, այնպիսի լաւ կառավարութեամբ, որ միշտ եկեղեցին կարտաքսէ խօթացեալ անդամները և պաշտօնեաները, և կընդունի առողջն և առաջնորդելու կարողը։ Անանկ որ չերևիր նոցա եկեղեցւոյ անդամոց մէջ ամբարիշտ՝ մոլորեալ և անհաւատ մէկը, մանաւանդ ի պաշտօնեայս նոցա, որք իրենց հմտութեամբը և բարեբարոյութեամբ պատուելի են յաչս օտար ժողովրդոց իսկ։ Սակայն Լուսաւորչականք տարաձայն են եկեղեցական խնդրոց վերայ, վասն որոյ անկարող եկեղեցական բարեկարգութիւն մը ընելու, որով երբ թէ վաղընջական յօրինուածութիւնը և կառավարութիւնը կպահեն, որ յայտնի չէ թէ ինչ է, եղածն ալ անգործադրելի։ Անանկ որ նորա ոչ անդամը յայտ է և ոչ անջատեալը, ո՛չ դաւանութիւնը և ո՛չ նզովքը, զի իր մէջ ունի ամէն տեսակ ապականեալ վարուց և մոլորական գաղափարաց տէր, մէկուն ալ չհամարձակիր բան մը ըսել։ Եւ հարկաւ պաշտօնեայք ալ, դէթ քիչ մը յարմարելով իրենց խոստովանորդաց, եղած են, բաց ի սակաւուց, պախարակելի և մոլի ու մոլորեալ, որոց չգիտեմ կյարմա՞րի արդեօք որ ինչ ըսաւ Եսայի երբեմն ի վերայ ժողովրդեանն Յուդայ, թէ «եթէ ոչ Տէառն պահեալ էր զմնացորդս իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանէաք։»

ՄԲ. Սոյն այս ապականարար ազդեցութիւնը ցաւ է տեսնել և ի մատենագրութեան, որ ոմանք մելանին հետ թոյն եւս խառնած կերևէին, որոց դեղթափներ ալ, փա՜ռք Աստուծոյ, տուողներ պակաս չեն։ Անանկ որ Աստուծոյ շնորհաց պահած մնացորդը իւր շինիչ և հրահանգիչ գործերովը լուսաւորութեան հետ ազնուութիւն ալ կտարածեն, յուսալի է թէ սոյն մելանին հետ արտասուք եւս խառնեալ կան, որք հոսեցան առաջի գահուն շնորհաց։ Սակայն, Բողոքականաց գործերն ալ Լուսաւորչականին հետ խառնելով, անբաւական համարելի է բաղդատմամբ ընդարձակութեան հիւանդութեանց, որ ճարակեալ կերևէին շատ քաղաքներ։ Անբարոյականութիւն կը բղխի ամէն սրտէ, ուր շնորհքը չէ ներգործեր, և անհաւատութիւն ամէն մտքէ, որ ճշմարտութիւնը չէ ջահաւորեր, ախտեր՝ որոց ենթակայ եղած է մարդկային սեռը, ախտեր որ երևան կելլան երբ ազատութիւն գտնեն կամ առիթ ունենան։ Ախտեր որ դարմանելի են այն միջոցներով, զոր հոգւոյ բժիշկը ուսուցեր է իւր ներշնչութեամբը։ Ասոր համար է որ Բողոքականք մանաւանդ այս գրքին՝ և նորա վարդապետութեանց տարածմանը կաշխատին։ Այս հակիրճ բովանդակութիւնը արդեօք բաւ՞ է համոզել ոմանց, որք յանդէտս կխորհին թէ «Հայ Բողոքականք քնոյ մէջ են» և չեն գործեր Ազգին բարոյական և ուսումնական մասին մէջ։

ՄԳ. Կգործեն եղեր Բողոքականք, որ այսօր այս կացութիւնը ունին, իսկ կգործեն եղեր անխռով և հանդարտ, որ գուցէ յաչս շթափողաց և երևութականաց բան մը չերևի, իսկ անոնք որ արդեանց կնայեն պիտի տեսնեն թէ կայ նոցա մէջ զօրութիւն արդիւնարար։ Այսպէս յարդեանց դատելով բաւ Մանզումէ (1586 թիւ), թէ մեր բոլոր ըրածները «միայն արտաքուստ ազգասիրութիւն և ուսումնասիրութիւն ցուցնել է, այսինքն խարդախութիւն՝ կեղծաւորութիւն և ժամանակին նորաձևութեան յարմարելով խաբել է զերար և ինքզինքնիս իսկ։ Սուտ է Հայաստա՜ն, Հայաստա՜ն աղաղակելնիս, սուտ է դպրո՜ց, դպրո՜ց գոչելնիս, սուտ է յառաջադիմութի՜ւն, յառաջադիմութի՜ւն կանչելնիս. ինչպէս շատ անգամ ըսինք, վերստին կըսեմք, թէ այս ազգին ընթացքը դէպ ի կործանում է, դեռ բան մը ընել չէ սկսեր, միայն բանիւ և լոկ հանդէսներ ու սուտ ցոյցեր կատարելով ժամանակ կանցունէ և ինքզինքը կխաբէ,» և դեռ բան մալ ընելու կարող չէ։ Արևելեան Մամուլ ալ 1873 ի Յունուար ամսոյ թուոյն մէջ Ազգին վիճակը հետևեալ բանիւ կհանգիտացունէ. «Ափսո՜ս, ժամանակները կանցնին և մեզ կթողուն ուր որ էինք տարիներ առաջ. ազգային կենաց եղանակները կաշեն կերթան և մեզի համար ոչ գարուն ունին և ոչ ամառ, եթէ ոչ մեռելութիւնը և սառնութիւնը կշրջապատէ մեր ջղակտոր մարմինը, որ փուշերու և տատասկներու թշուառութեան ստրկութեան մէջ դեռ եւս կերերանք, հազիւ ուրեմն կենդանութեան նշան մը տալով, . . . չէ, Հայը հիմնական քայլ մը անգամ առած չէ օտար ազգաց յառաջադիմական ասպարէզին մէջ, Հայն իր բոլոր գովաբանեալ յատկութիւններով, որ թերևս այժմ թերութիւններ են, յաղթանակ մը չէ տարած իր ազգայնութեան՝ ազատութեան և գիտութեան որ և է շրջանի մէջ իր ստրկութենէն ի վեր։ Եւ թող մեր այս աւաղն հռետորական ծաղիկ և յուսահատութեան հառաչ չհամարուի. թող մեր այս խորհրդածութիւն ճշմարտութենէ և իրողութենէ հեռի ծայրայեղութիւն մը չսեպուի, այն ազգայնոց կողմէ որ եթէ անձուկ տեսութեամբ դատեն ազգային այժմեան վիճակը՝ թերևս առաւելութիւններ գտնեն նախորդ ժամանակաց հետ համեմատելով։ Սակայն եթէ իբրև փորձաքար բռնեն ժամանակիս ոգին, գիտութեանց ընթացքը, ազատութեան սահմաններն, այն ատեն պիտի համոզուին որ մեր անցեալը, եթէ ո՛չ աննշան, տխուր է, մեր ներկայն ողբալի և մեր ապագան շա՜տ մութ է։»

ՄԴ. Եւ արդ տեսնենք պատճառները, որովք Բողոքականը կը յառաջէ ի բարելաւութիւն քան Հայը։ Ամենայայտնի է թէ Հայ ժողովուրդը միանգամայն հաշուելով չունի այնքան ստակ տալու կարողութիւն, որ բաւական ըլլայ վարժարաններ և դպրոցներ բանալ՝ հաստատուն պահել կանոնաւորել, որ կարող ըլլայ մատենագրութիւնը ճոխացունել և հարկաւոր եղած գրենով ազգին միտքը կրթել։ Հետևապէս չկրնար ունենալ կատարեալ դաստիարակութիւն և դաստիարակեալ անդամներ, թերի եղածներն ալ ահա վերը երևցածներուն պէս կըլլան։ Իսկ Բողոքականք կընդունին մեծ նպաստ Բողոքական ընկերութիւններէ, որով իրենց ամփոփ սահմանաւորութեան մէջ, առաւել նիւթական կարողութիւն ունեցած կըլլան քան զՀայս, և հետևապէս կունենան յարմար դասատու և դասագիրք, հմուտ քարոզիչ և ժողովուրդ։ Ուրիշ պատճառ մալ այս է, որ մինչ Բողոքականք բարոյական կրթութեան առաւել հոգ կը տանին, Լուսաւորչականք իմացականին, նոքա յաւէտ սիրտը ազնուացնել կուզեն և սոքա մանաւանդ գլուխը տաղանդաւորել։ Հետևապէս նոքա ունին հասարակութիւն, որ զոր ինչ ունի կուզէ ի ծառայութիւն մարդկութեան գործածել կամ առաքինօրէն ապրիլ, սոքա ունին ժողովուրդ որ գիտէ փառաւոր ապրիլ և պատիւ ընդունիլ, և այս է որ զնոսա կերևցունէ քնոյ մէջ եղածի պէս հան-

գարտ, և զոսա ի հանդիսի երևացող դերասանի նման յուղեալ։ Կրնանք ըսել թէ Բողոքականը՝ մարմնաւոր և քաղաքական բաները կուզէ ծառայեցունել հոգևորին և կրօնականին, Լուսաւորչականը հակառակ կերևի հոգևոր և կրօնական գործերն ընել վասն մարմնաւորի և քաղաքականի։ Անոնք համոզեալ կերևին թէ մարդ նախ բարի լինելու է ապա կրնայ լինել գիտուն, ասոնք ալ թէ գիտուն թող ըլլայ նախ հարկաւ բարի ալ պիտի ըլլայ. անոնց արդի վիճակը իրենց սկզբունքը կհաստատէ իսկ ասոնցը ո՛չ։ Ուրեմն նոքա գտեր են յաջողելու ճամբան և գիտեն ուր պիտի վախճան առնուն, սոքա դեռ ուղղութիւն մը չեն կրցեր բռնել և դեռ չգիտեն ուր պիտի երթան։ Անոնց անցեալն էր դառն ներկայն յաջող ապագայն յուսալի, սոցա անցեալը յուսալի էր, ներկայն անյաջող և ապագայն վախնանք թէ ըլլայ ողբալի, ինչպէս պիտի տեսնենք հետևեալ գլխոյն մէջ։

ԳԼՈՒԽ Ե

ԿԱՆԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ԱՊԱԳԱՅԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆԻՆ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆԻՆ

ՄԵ. «Ծերոց համար կըսէ Խոսրով Էֆէնտի (Մանզ. 3886), անցեալը երազ է, կամ նոցա միակ զբաղումն է ներկային մէջ, ներկայն՝ անոնց համար մեղադրելի է և ողբերելի, ու ապագայն սոսկալի։ Կանացի զարդարանքի անձնասէր եղող պատանեաց կամ կարճատես երիտասարդաց համար ներկայն սոսկ զբօսանաց թատրոն մի է, նոցա համար անցեալ ու ապագայ չկայ։ Իսկ ամէն դէպքի առ իրերս ունեցած ինչ և իցէ ներքին կամ արտաքին ամենանուրբ օղակը զննող հեռատես անձանց համար անցեալը ու ներկայն՝ ապագային գուշակն ու կարապետն են։ Ահա ազգի մը փրկութիւնը այս վերջին տեսակի անձանցմէ կախում ունի։» Այսպիսեք, հեղինակի մը ըսածին պէս, անցեալէն կուսանին և ներկայէն ապագայն կչափեն, և բարւոք ապառնի մը ունենալու համար կջանան յուսալի ներկայ մը ունենալ։ «Բայց, կըսէ Խոսրով Էֆէնտի, անցեալ և ապագայ չխորհող կարճատեսները կարող չեն արդիւնքի մը իսկական պատճառները հասկնալ...։ Արդի ազգային վարչութիւնը չյաջողեցաւ (Հայկական խնդրոյն մէջ), կրնամ ըսել թէ այս անյաջողութեան պատճառը ուրիշ բան չէ, բայց միայն անց-

եալին ‹մոռացումը›, և ասկէ յառաջ յիսուն տարիի չափ ազգային վարչութեան ղեկը ձեռք առնող անձանց՝ ապագայն չխորհելու տըգիտութիւնը։»

ՄԶ. Ուրեմն՝ որպէս զի հանդիսատեսք օգուտ հանեն ապագային համար այն ամէն վշտալի տեսարաններէն զորս դիտեցին, և զոր իրենց խկութեամբը այս վախճանաւ ի հրապարակ հանել չխղճացինք, պէտք է անցելոյ պատճառները լաւ նկատել և փորձառութեամբ ապագայն ապահովել։ «Եթէ ծանր ճշմարտութիւն է ըսել թէ մեր անցեալը տխուր է», կըսէ Արևելեան Մամուլ (74 ի Յունվ.), «մեր ներկայն ողբալի և մեր ապագայն շատ մութ է, ի հարկէ ծանրագոյն է զայն խոստովանիլը, սակայն կամովին խաբուիլն և կամ խաբել ջանալն ալ վատութիւն է։ Անպատեհ հպարտութիւնն և անձնահաճութիւնը՝ ինչպէս անհատներու նոյնպէս ժողովրդոց մահաբեր եղեր են։ Անպաշար ոգւով մեր աղէտից պատճառները փնտըռելն՝ անոնց դարմանը գտնելու ճամբուն մէջ մտնել է, զարգացման առաջին պատճառն է արիութեան փորձ մը։» Եւ ահա այսու արիութեան փորձով ապագայն ներկայէն հետևցունելով, տեսնենք թէ ներկայն ինչպիսի ապագայ կցուցնէ Հայ Լուսաւորչականին և Բողոքականին։ Նախորդ գլխոյն վերջը արդէն մեր տեսութիւնը յառաջ բերեր ենք և ըսեր, թէ Լուսաւորչականին ներկայն անյաջող է և ապագայն երկիւղալի, իսկ Բողոքականին ներկայն յաջող և ապագայն յուսալի։ Այս տեսութիւնք հետևեալ պատճառաց վրայ հաստատեալ են, զորս պիտի դիտենք առանձին խնդիրներու բաժնելով։

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՔ ԱՆՆՊԱՍՏ ԵՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ Ի ՆՊԱՍՏ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԷ. Եթէ Հայոց պատմութեան վրայ նայինք, թողլով զայլազգիս, պիտի տեսնենք թէ իբրև ազգ ամբողջովին առեալ միշտ հակում մը ունեցեր է տիրող քաղաքականութեան հաճոյանալու, կամ տիրող քաղաքականութիւն իւր ազդեցութեան հպատակեցուցեր է ազգէն զոմանս։ Այսպէս էր կռապաշտ Պարսից և Մահմէտական Արաբացւոց ազդեցութիւնն անգամ. այսպէս եղաւ Յունաց ազդեցութիւնը Արշակունեաց ատենն, երբ ոմանք խառնուեցան ընդ Յոյնս և կորուսին ազգայնութիւննին ալ, ոմանք սոսկ եկեղեցական ծէսերն ընկալան և կոչեցան Հայ Հռոմք։ Նոյնը կտեսնուի և Ռու-

բննեանց իշխանութեան առեն, երբ Խաչակրաց ազդեցութեամբը Կիլիկիացիք Պապական ըլլալու ջանքեր ըրին, որոց ընդդիմացան Հայաստանցիք, որ տարբեր ազդեցութեան տակ էին ընդ որս խառնուեցան։ Պապականութեան ազդեցութիւնը երբ յԱրևելս զօրացաւ, Հայոց մէջ գործեցին և Ունիթորք, որոց աշխատութեամբ ազգէն հատուածեալ է Հայ Պապականն, որոց ազդեցութիւնը կարծես պակսեցաւ ըստ պակասութեան ազդեցութեան Գաղղիոյ ի վերայ Տաճկաստանի։ Եւ ինչ որ նոյն պատճառն գործեր է անցելոյն մէջ, պիտի ընէ և յապագայս, այնքան ճշդութեամբ, որքան որ նման ըլլան պարագայք իրաց։

ՄԸ. Եւ յայտ իսկ է թէ վերջերս Բողոքական պետութեանց, զոր օրինակ Բրուսիոյ և Անգղիոյ ազդեցութիւնք կաւելնան ի վերայ Տաճկաստանի, որոյ ճնշման տակ են Հայք և գաղափարով նոյնքան մերձ Բողոքականութեան արդիք, որքան մերձ էին Պապականութեան և Յունականութեան նախնիք։ Որքան կերևի թէ պիտի աւելնայ Անգղիոյ ազդեցութիւնը Հայուն վերայ, այնքան ալ այժմէն կտեսնենք թէ նորա գաղափարը կմերձենայ Բողոքականութեան, անանկ որ որու գաղափար որ միջակէտէն անցաւ, պիտի ալ երթայ խառնուի ընդ Բողոքականս։ Ասոնք ալ՝ նման նախնի Հայաստան բնակող Յունաց, Կիլիկիացի Լատինաց և Պոլսեցի Պապականաց, Տաճկաստանի ամէն կողմերն պատրաստեալ են սիրալի ընդունելութեան, որք կմերձենան իրենց, մանաւանդ թէ իրենց ալ կքաշեն հակամիտեալները։ Հարկ չենք տեսներ պատճառաբանել, թէ քաղաքականութիւնն ի՛նչպէս և ինչ ազդեցութիւն բանեցուցեր է և պիտի բանեցունէ կրօնական համոզմանց վերայ, որք ուղղակի ներգործութեան տակ չեն անկանիր քաղաքականութեան։ Անուղղակի շատ մը տեսակ ներգործութիւններ կան որք միանալով երբեմն ուղղակի եղածէն առաւել արդիւնարար կըլլան։

ՄԹ. Հայ Լուսաւորչականը չգիտենք թէ ի՛նչ պատրաստութիւն ունի, որով կարենայ զառաջս ունել այնպիսի ազդեցութեանց, որ առջի եղածներուն պէս վրայ չտայ։ Պիտի կարենա՞յ արդեօք համայն Բողոքականս նզովել իբրև հերետիկոս, ինչպէս ըրաւ յաւուրս Մատթէոս Պատրիարքի, ուր որ անմիջապէս պարտաւորեցաւ քաղաքական ազդեցութեամբ երթալ Անգղիոյ դեսպանէն ներումն խնդրել, ներկայիս ալ Հայոց Հայրիկը նոյնպիսի քաղաքական ազդեցութենէ յորդորեալ դնաց Լոնտոն Անգղիական եկեղեցին օրհնել։ Պիտի կարենա՞յ ժողովուրդը համոզել թէ օտար Քրիստոնեայ ազգաց մերձենալովն կասկած կու տանք կառավարութեան և նորա զայրու-

թին կենթարկենք, (տես. Պատկեր Հայաս. Ազդ.) մինչ ինք փոխանորդներ զրկեց օգնութիւն մաղթել վասն ազատութեան ազգին, չէ նէ տերտերները պիտի ըսեն տակաւին և հաւտացող ալ գտնեն, թէ որովհետև Բողոքականք եօթը խորհուրդ եկեղեցւոյ չունին, անոնք քրիստոնեայ չեն։ Սոյին նման ինչևիցէ փաստեր, որովք ժողովուրդը հեռու կպահէին ընդ Բողոքականս յարաբերութիւն ընելէ, կրնա՞ն այլ ևս բանի գալ ասկից վերջը, որոց հակառակը սկսեր են ըսել և ընել նոյն իսկ եկեղեցականք։ Ազգին մէջ եթէ նոր բան մը կայ, որ զՀայն կհեռացունէ Բողոքականութենէ, ան է, որքան որ կրնամք տեսնել, կրօնի վրայ անհոգ լինել կամ անկրօնութեան հակիլ, բայց ասոնք ալ անուղղակի պիտի զմարդիկ տանին ի Բողոքականութիւն, ինչպէս պիտի տեսնենք յընթացս բանից (ՄԼԴ)։

2. ԲՈՂՈՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՋԱՆԻՑ ԱՒԵԼՆԱԼԸ ԱՆՆՊԱՍՏ ԵՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆԻՆ ԵՒ ՆՊԱՍՏԱՒՈՐ ԲՈՂՈՔԱԿԱՆԻՆ

ՄԺ. Հանդիսիս երկրորդ գլխոյն մէջ տեսանք, թէ շարունակ թուով և կարողութեամբ կաւելնան Բողոքական այն ընկերութիւնք, որոց փախճանն է աւետարանել զաշխարհ։ Հոն տեսանք նաև թէ քանի մը Ամերիկեան և Անգղիական, ինչպէս և Բրուսական, ընկերութիւնք առաջադրեր են լուսաւորել զՏաճկաստան, ուր տարուէ տարի ըսկսած գործերնին կընդարձակեն և կհաստատեն (ԽԷ. ԽԹ.)։ Տեսանք դարձեալ թէ անցեալը իբր նախապատրաստութիւն համարելով արդիւնքին ասկէ վերջը մանաւանդ ակն ունին, յուսան թէ և Մահմէտականաց համար ալ առաւել ջանքով և զօրութեամբ աշխատելու առենն եկեր է, որոյ համար պէտք է որ Անգղիացիք ևս առաւել հոգ տանին այս գործոյն ինչ կերպով որ կըրնան (ԽԶ.)։ Վասն որոյ Աւետարանական պատգամաւորութիւն մը կու գայ վեհ. կայսրէն լիակատար ազատութիւն խնդրել կրօնի, Պերլինի Արքայաժողովին մէջ նոյն խնդիրը կարևորութիւն կառնու և դաշնագրութեան մէջ կտրուի։ Ամերիկեան և Անգղիական Աստուածաշնչի ընկերութիւնք ի Կոստանդնուպոլիս շինել կուտան Ս. Գրոց տուն, Պալատ Հաւուզ մը, ուր Աստուածաշնչի Թարգմանութիւնք կորբագրուին կըլլան հաստատատիպ և միշտ պատրաստ բիւրաւոր հատորներ տպելու ամէն լեզուէ։ Ամերիկացիք և Անգղիացիք իբր 35,000 լիրայ կպատրաստեն Կեդրոնական Թուրքիոյ և Արմենիա Գօլէճները հաստատելու։ Այս ամենայն ջանքեր ի՞նչու համար են,

եթէ ոչ Բողոքականութիւնը յառաջ տանելու ի Տաճկաստան, ուր որքան յառաջէ նա, կընկրկէ զԼուսաւորչական դրութիւն։

ՄԺԱ. Ինչո՞ւ համար։ Որովհետեւ անգամ մը մերժեց Բողոքականաց ձեռնտուութիւնը և կշարունակէ դեռ, կարծելով թէ նորա կործանմամբը ինք ապահով կլինի, ապա թէ ոչ գիտէ թէ նա Լուսաւորչական հին շէնքը պիտի քակէ և վերստին չինէ։ Ասիկայ ալ աւանդապահաց բանին չգար, ուստի Հայոց Յոյսը փանդի մէջ դըտաւ ինքզինքը՝ երբ տեսաւ թէ կրօնական ազատութիւն կխնդրուի իր վեհապետէն, և աղաղակեց (ի Թիւ 1, համար Զ), «Հին խաչակիրները՝ փոխանունաբար Աւետարանական ուխտ տիտղոսով, անցեալ օրեր եկին մեր երկիրը և մեր վեհապետին յիշատակագիր մատուցանել ուզեցին ի մասին կրօնական ազատութեան։ Գոհութիւն ունի ամբողջ Տաճկաստան կառավարութեան իմաստութենէն, որ մերժեց Աւետարանականաց պատգամաւորութիւնը . . . մենք մեր վեհապետին պատգամաւորութեան ներկայանալով՝ աւելի իրաւունք ունինք խնդրելու, որ հեռացունէ մեր երկրէն այս խռովարարները, որ յանուն Անգղիոյ և Ամերիկայի հասարակութեան Քրիստոնէութիւն տարածել կու գան.» (տես և ԼԸ, ՃԺԹ.)։ Զայնակցեցաւ սմա և Լոյս Հանդէսը, ինչպէս և այլ ազգային խմբագիրք, ինչպէս կըսէ Խօսրով էֆէնտի վերի (ՄԵ) յօդուածը շարունակելով, թէ «Մոռցա՞ն արդեօք լրագիր ընթերցողք, երբ աւելի մի քանի տարի յառաջ քանի մը Անգղիացիք Պօլիս գալով Քրիստոնէից պաշտպանութեանը համար տէրութենէն արտօնութիւն խնդրեցին նէ, այն ատեն մի քանի Հայ լրագիրք ի՞նչ աստիճան ծաղրական կծու լեզուներ գործածեցին ըսելով թէ այս մարդիկը ի՞նչ կուզեն, մենք անոնց պաշտպանութեանը կարօտ չենք, մենք հանդիստ եմք ու ազատ։» (կարդա Գլ. Գ. 6)։

ՄԺԲ. Ուրեմն քանի շահին այն ընկերութիւնք իրենց աշխատութեանց մէջ, այնքան պիտի կորուսանեն Լուսաւորչականք իրենց ժողովուրդէն, և քանի զօրանան նոքա և ճոխացունեն գործերնին, այնքան կտկարանան սոքա և ազդեցութիւննին կկորուսանեն։ Եւ արդէն կտեսնուի թէ նոքա սկսեր են յաջողիլ և սոքա ձախողիլ, երկուքն ալ հաւասարապէս ստոյգ և իրողութենէ հաստատեալ, որք գուշակ են թէ Աւետարանական եկեղեցին պիտի ճոխանայ և Լուսաւորչականն աղքատանայ։ Ասիկա անցեալին մէջ պերճացաւ՝ հալածեց և յուսաց թէ պիտի յաջողի, անիկայ ալ խոնարհեցաւ՝ նզովեցաւ և վախցաւ թէ մի գուցէ չկարենայ յոտին կանգնիլ, ներկայիս մէջ ալ Լուսաւորչականը սասանեալ կերեւի և խռովեալ, և

կերկնչի թէ մի գուցէ ապագային մէջ ունեցածն ալ կորուսանէ, Բողոքականը սակայն այժմ հաստատեալ կգտնուի և պատրաստեալ որ ապագային մէջ շատ անդամներ շահի։ Լուսաւորչականը, թուի թէ չպիտի կարենայ ազատ մնալ կորուսանելէ, եթէ ոչ բարեկամանայ այն Բողոքականաց հետ, զորս դեռ թշնամի կհամարի, և այս ուրիշ կերպով չըլլար բայց եթէ եկեղեցին բարեկարգելէն, ըստ փափաքանաց Աւետարանականաց։ Ասով թերեւս շահի և զհաստուածեալս, ապա թէ ոչ պիտի շարունակ վրայ տայ, զինքը տկարացունէ և հատուածը զօրացունէ, որ գուցէ նորա ծանրութենէն քաշուի և երթայ հետը խառնուի։

3. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ ՎՐԱՅ ԵՂԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԿԴԱԴՐԻ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆԱՑԸ ԿՍԿՍԻ

ՄԺԳ. Բողոքականութիւնը երբ մտաւ Տաճկաստան և ի Հայս, օտարական մը էր, որոյ մէն մի հանգամանացը վրայ տեղեկութիւն առնուլ ուզեցին հետաքրքիր մաքեր, և նա ինքզինք ճանչցունելու համար պարտաւորեալ էր նոցա հետաքրքրութիւնը յագեցունել։ Ուստի հրատարակեց իւր դաւանութիւնը, բացատրեց զնա և հաստատեց, ցուցուց նաև թէ ինչ բաներ են զոր կմերժէ և ինչու համար։ Հրատարակեց իւր կառավարութեան սկզբունքները և Եկեղեցական յօրինուածութիւնը և հասկցուց թէ վասն է՞ր կորդեգրէ զնոսա և կհեռանայ ուրիշ տեսակներէն։ Իմացուց թէ ինչ յարաբերութիւն ունի ինք քաղաքականութեան հետ, ինչ օգուտ կրնայ ընել իրեն հետեւողաց և ինչ բանի անձեռնհաս է։ Այս հրատարակութիւնները անկեղծ չհամարուեցան, թագուն խորհրդոց և գաղտնեաց ընծայեցան նորա գործողութիւնք. հերետիկոսական համարեցան նորա վարդապետութիւնք և կործանիչ իրեն սկզբունքները։ Վասն որոյ խիթալի երեւեցան առաջի քաղաքականութեան, նզովելի առաջի Քրիստոնէութեան Տաճկաստանի, և հալածելի առաջի հասարակութեան, և երկար ատեն, ինչպէս տեսանք վերերն (ԿԳ—ԿԹ.) բանադրեցան՝ հալածուեցան և անլսելի մնացին աղաչանքնին։ Բայց դամ քան զդամ այս դժուարութիւնք պակսեցան և ինք եղաւ կազմակերպեալ ժողովուրդ մը և բարեկարգեալ եկեղեցի, և ունի այսօր որ ինչ պէտք են ազատ և անկախ ժողովրդեան մը։ Ալ վախ չունի թէ նոր ի նորոյ քննութեան կանչուի, նոր հարցումներ լինին իրեն և նոր կասկածներ ըլլան իր վըրայ և նոր առիթներ ելնեն հալածանաց և նեղութեանց։

ՄԺԴ. Իսկ Լուսաւորչականութեան պարագայք համարեա թէ ըստ ամենայնի հակառակն են Բողոքականութեան։ Քանզի ժողովուրդը ամէն բան ի նախնեաց դասեր է, և իբրև սրբազան՝ առաքելական և աստուածադիր սովոր էր համարել, բայց դարուն լուսաւորութիւնը և այլ զարթուցիչ պարագայք կթելադրեն զմիտս որք սկսած են ամէն բան քննել։ Հայուն մէջ արդէն կայ կուսակցութիւն մը նորասիրաց, և պիտի աւելնայ աննպարակոյս, որք՝ ինչպէս ըսեր են, առաջադրեր են սկիպտիկեան, կասկածոտ ոգւով հետազօտել ամէն ինչ որ ազգային է, և ամէն ինչ որ հաւատալի է կամ գործադրելի (ՁԱ. ԴԱ.)։ Ուստի Լուսաւորչականութիւնն ալ ունի համարս տալ իւր ամենայն հաւատալեաց և ոչ հաւատալեաց, կանոնադրութեանց և աւանդութեանց, ծիսից և սովորութեանց, ան ալ այնպիսի փաստերով որ գոհ ընէ զմիտս լուսաւորեալս։ Մըտքեր որք քննեցին կերակրոց խտրութեան սովորութիւնը և լքեալ թողլին իբրև անհամաձայն Յայտնութեան ու բնութեան։ Քննեցին Ճիւղահամարի կանոնադրութիւնը և գտան չորս տարերաց վերայ հաստատեալ, ինչպէս դեռ երէկ հաստատելու ելեր էր խմբագիր վարդապետ մը, և՝ ըստ որում տեղ չունի գիտութեան մէջ չորս տարերքը, տեղիք չունեցաւ և եօթը և աւելի պորտ համրելու օրէնքը։ Քննեցին այս մտքերը Երուսաղեմայ Զատկական լուսոյն բաղդրութիւնը, և մերժեցին նորա հրաշալիութեան համարումը, զոր տեսեալ վանականաց իսկ խոստովանիլ պարտաւորեցան, թէ իրենք կշինեն ի յիշատակ Քրիստոսի յարութեան։ Այնպէս գտան և որբալոյս միւռոնի ինքնին եփելու զաղտնիքը, և գիտցան թէ նովաւ օծեալ չէ թէ խաչափայտին և գաստառակին վրայ, այլ և օծեալ քահանային և եպիսկոպոսին վրայ իսկ բնական կամ բարոյական փոփոխութիւն մը չըլլար։

ՄԺԵ. Այս հետազօտութիւնը պիտի շարունակէ մինչև որ ամէն բան մէկ մը աչքէ անցուցած լինի, և եթէ եկեղեցին բանաւոր փաստերով ընդունած և ըրած բան մը հաստատեց նա միայն պիտի մնայ, այլքն ամենայն, թէև ըլլան ըստ ինքեան ճշմարիտ, պիտի մերժուին իբրև անհիմն հաւատալիք։ Չգիտենք թէ Լուս. եկեղեցին երբ այսպիսի քննչաց առջև հանէ ո՞ր մէկ մասնաւորութիւնքը պիտի կարենայ հաստատել, որ իր Լուսաւորչականութեան նկարագիրը չկորուսանէ, չգիտենք թէ այսպիսիք երբ սրբագրելու ելլեն՝ Յայսմաւուրքէն քանի՞ թերթ պիտի թողուն, և շարականէն և մաշտոցէն քանի՞ կանոն։ Լաւը կանոնագիրքն է, որոյ անունը կայ ինք չկայ, և հետևապէս ազատ է գըլխիվայր, որոյ առջև Հայոց պատմութիւնն

անգամ ըստ ամենայն մասանց չկրնար տոկալ, ինչպէս է Ս. Դաստառակի պատմութիւնն ու Հռիփսիմէի կրծոց խաչը՝ Քրիստոսի խաչին փայտէն լինելու աւանդութիւնը։ Կտեսնենք այսպէս թէ պատմագիտութիւն, տարրալուծութիւն, կազմագիտութիւն և աստուածաբանութիւն պիտի միանան կաճառ մը կազմեն և հինաւուրց Լուսաւորչականութիւնը քննադատեն, և ո՜չ ապաքէն յայտնի է թէ հինցած փաստերը նորոգեալ մտքերը չպիտի կարենան համոզել։

ՄԺԶ. Ասիկա գիտելով պաշտպանաց Լուսաւորչական աւանդից, հնարս կհնարեն որ Լուսաւորչականութեան օձիքը քննութեան ձեռքը չտան։ Վասն որոյ՝ ըստ հրատարակութեան Լուսոյ (շրջ. Ա. 209 երես), երբ "Հոգևոր լսարանին մէջ կրօնական վիճաբանութեան (վրայ) խնդիր եղաւ ոմանց կողմանէ, եկեղեցականաց մեծամասնութեան քուէն բացէ ի բաց զայն մերժեց։" Այս երկիւղն ունենալուն համար ըլլալու էր, որ "Ցաւօք սրտի կտեսնենք", գրեց Լուսոյ խմբագիր վարդապետը (շրջ. Ա. երես 194), որ քանի մը շաբաթէ ի վեր Իւսկիւտարցիք կիրակնօրեայ դպրոցը թողլով իւր չափահասից ուսման նպատակը, և "գլխովին կրօնական վիճաբանութեան ասպարէզ մը դարձեր է, . . որ ուղղակի կամ անուղղակի անօգուտ և վնասակար է միանգամայն։ . . . Քանզի երբ այս տեսակ (ընդ Բողոքականս) կրօնական վիճաբանութեան սկզբունքն՝ ազգէն ընդունուի . . . նորաղանդից քարոզիչները . . . խօսքերու ճարտարութեամբ անխտիր պարզամիտ Հայ հասարակութեան մըտքերը և սրտերը պիտի պղտորեն և գայթակղեցունեն . . . ։ Զարմանօք կտեսնենք որ մեր եկեղեցականներէն ոմանք ալ այդ անօգուտ ձեռնարկութեան ոյժ տալու և քաջալերելու համար հոն կյաճախեն և վիճաբանութեան ալ կմտնեն եղեր։" Դարձեալ (անդ երես 198) այս մասին, կըսէ, "կրօնական պատկառելի ժողովոյ բռնած անտարբեր ընթացքն ալ մեկնութեան կարօտ է, որ կթողու Իւսկիւտարու հասարակութիւնը կրօնական վիճաբանութեամբ ժամանակ անցունէ, և նորաղանդից չահու դուռ բանայ։" Կրօնական ժողովն ալ այսպիսի երկիւղներէ զերծ չլինելով կիրակնօրեայ դըպրոցաց կանոնագիր մը հանեց, ուր արգելուած էր կրօնական վիճաբանութիւն ընել, առանց ներկայութեան աւագ երիցուն կամ քարոզչին և առանց թոյլտուութեան Թաղ. Խորհրդոյն։ Այսպէս ըրին Իւսկիւտարցիք, իրենց մէջ էր Տերոյենց բազմահմուտ պատուելին, իրենց հետ կային և եկեղեցականք, սակայն և այնպէս ցաւ եղաւ ոմանց երկիւղածաց տեսնել որ կրօնքի վրայ վէճ կըլլար։

ՄԺԷ. Ինչալ որ ընեն հետաքրքիր հոգին չըսպանիր, ծարաւին ջուր

կփնտռէ և ցրտացեալը հուր, գտնելու հնարք չպակասիր, արգելք դնել, ցաւ յայտնել և զգուշացնել փարա չըներ։ Պապականն իր մամուլներովը, կըսէ Վահան վարդապետ (Հայրենիք 277), նոյնպէս և Բողոքականը անդադար մեր եկեղեցւոյ դէմ կյարձակին, Եւրոպական հակակրօն կարծեաց հեղեղն մեր բարոյական աշխարհը ողողած է. իսկ մեր պաշտօնէական պաշտօնէութիւնը մերթ դիտող է, և մերթ սթափող և գործող. . . դեռ երէկ եկեղեցին բարեկարգելու ձայներ կլսուէր եկեղեցականներէ՛ անգամ, ո՞չ գիտէ թէ ինչ նպատակաւ. . . ։" Ահա այսպէս կրօնի զգացումը դրեթէ մարիլ սկսած է, ազգայինն ալ մօտալուտ կթուի, եկեղեցին ու ազգը հըզօր ձայնի կարօտ է, բայց ընդհակառակն լռելն իբր խոհեմութիւն համարուած է։ Երբ յիշենք նաև որ ինչ հանդիսացած է ՃԻԵ. ՃՂԱ. թուահամարներուն մէջ, կտեսնենք թէ անխափելի յարձակում մը կայ և պիտի շարունակէ ընդդէմ Լուս. դրութեան։ Եւ նա այլ և այլ տեղաց պիտի վիրաւորի, արիւնն հոսէ, ջերաջերմ ոգիք պաղըչկին և նա թալկացեալ անկանի, նման իւր մի նախնի նահատակին, Վահանայ Մամիկոնեանի, որ հետ երկար դիմադրաւի անկաւ ի խռան։

4. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԸ ԻՒՐ ԲԱՐԻՈՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ՊԻՏԻ ՎԱՅԵԼԷ, ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆՆ ԱԼ ԻՐ ԹԵՐՈՒԹԵԱՆՑԸ

ՄԺԸ. Տեսանք թէ Բողոքականք սկսեր են դաստիարակութիւնն ի հիմանց, խիս ընթերցանութենէ տղոց և չափահասից, առ հասարակ արուն և էգը կկրթեն միանգամայն, և ըստ ամենայն մասանց, որ է իմացական՝ բարոյական և կրօնական։ Այս նախնական կրթութիւնք կպատրաստեն հասարակութեան միտքն ու սիրտը ուղիղ խորհելու և բարւոք գործելու՝ թէ մարմնաւոր և թէ հոգևոր գործոց մէջ, ուրով կըլլայ յառաջդիմութիւն ազգի մը կամ ժողովրդեան։ Եւ ահա Բողոքական հասարակութիւնը կպատրաստուի վայելել զարդիւնս դաստիարակութեան, որոյ սերմունքը վաղուց դրուեցան իր մէջ և հիմա սկսեր են պտուղնին հասցունել։ Այս ժողովրդեան մէջ կերևին նոր արհեստաւորներ, հաւատարիմ վաճառականներ, հմուտ բժիշկներ, և առ հասարակ գործոյ յարմար անձինք։ Պատանիք կերիտասարդանան, և երիտասարդք կըլլան չափահաս և գործադիր ընտանեկան և ժողովրդական գործոց, ուր այժմէն կերևի գործունէութիւն և կանոնաւորութիւն՝ առանց ապականարար խառնութեանց։ Բողոքականը Ամերիկեան և Գերմանական

ընթացից մէջ է, որոց յաջողութիւնը փորձեալ և վաւերացեալ է, և յայտ իմն է, կըսէ Յ. Կ. Աճէմեան ներշնչութիւն արդի ժամանակի տետրին մէջ (երես 57, 58), թէ "Ազգի մը ապագայն՝ երջանկութիւնը ու բարգաւաճումը . . . (և ոչ մէկ բան մը կարող են ապահովել) որչափ որ դաստիարակութիւնը, ինչպէս է Ամերիգացին որ ամէն բանէ առաւել կյուզէ դաստիարակութեան կենսական խնդիրը։ Եւ կյարուցանէ այնպիսի հանճարներ, որ իրենց հեռատեսութեամբը և գործունէութեամբ երկրին կամ ազգին երջանիկ ապագայն կպատրաստեն . . . Ահա այս է ազգի մը կենդանութեան և յառաջդիմութեան անժխտելի պայմանը, պէտք է կրթութեամբ կատարելագործել մարմինը և միտքը ու սիրտը։"

ՄԺԹ. Առաւել քան զսա յուսալի է կրօնական դաստիարակութիւնը, որոյ պաշտօնեայք կառաւելուն թուով և բարձրագոյն պատրաստութեան ըստ որում ի մանկութենէ սկսեալ կուսանին զկարևորն և կամ բարձրագոյն ճեմարաններ և վարժարաններ, քան զաւուջինն։ Անանկ որ նոր պաշտօնեայք առաւել յարմարագոյն են քան զհինս, քան զնոսա առաւել թուով, որք պիտի շատ աւելնան այժմեան պատրաստութեամբք, զորս Տաճկաստանի ամէն կողմերը ձեռք առած են Բողոքականք։ Եւ քանի որ այսպիսիք պիտի աշխատին պատրաստական գործոց մէջ, մինչ նախնիք նորէն պիտի սկսէին, թէ դպրոցն թէ եկեղեցին և թէ ժողովուրդը, որոց պարագայք յարմարեալ են արդիւնաւորութեան, հարկաւ սոցա յաջողութիւնն առաւել պիտի լինի, քան որ մէն մի նախնի պաշտօնեայք կրցեր են ունենալ։ Ըստ օրինակին, զոր այսպիսի նիւթի մը համար կուտայ Աւետաբեր (79 ի 6 թիւ), հաւելլի մետաղին որ կրակին մէջ երկար ատեն կմնայ կրակ կտրած իսկ անփոփոխ նոյն վիճակէն երկար ատեն, մինչև որ մէկ կողմը հեղուկի նշան մը կերևի և իսկոյն կլուծանի մետաղն և ի հեղուկ կփոխի։ Այսպէս եղած են, կըսէ նա, ամէն ազգի մէջ բարեկարգութեան գործողութիւնք, և յոյս մեծ ունին Բողոքականք պիտի լինի և ի Հայս՝ ներգործութեամբ ջերմութեան Հոգւոյն շնորհաց, որոյ հեղման միջոցները կգործածեն անդուլ և տեղ տեղ սկսեր են երևիլ բարենորոգման նշանները։

ՄԻ. Բայց այսպէս չեն երևիր Լուսաւորչականութեան արդի հանգամանք, զոր տեսանք յարդ և մանաւանդ բարոյական և կրօնական իրաց վերայ ոմանց յայտնած գաղափարք, որք արդիւնք են թերի դաստիարակութեան և նշանք խակամտութեան կամ ապականութեան բարուց։ "Թերի և անկատար դաստիարակութիւնը," կըսէ արդի ժամանակի ներշնչութեան տետրը (երես 29), "առա-

ւել վնաս է, քան բնաւ չդաստիարակուած ըլլալ։ Դաստիարակութեան մէկ ճիւղին (զոր օրինակ իմացականին) մէջ կրթել և միւսին (ըսենք բարոյականին) մէջ անկիրթ պահել, միոյն մէջ գիտուն ընել և միւսին մէջ տգէտ (պահել) անօգուտ կըլլայ։" Քանզի ըստ պատճառաբանութեան նորա (երես 31), մարդ մը որ "միտքը ուսմանց գեղանի զարդուք և իմաստութեան ու ճշմարտութեան հրաշալեօք պճնաւորած է, . . . բայց յորժամ ուսմունքը և իմաստութիւնը՝ բարոյականի առաքինութեան միութենէն կզատէ, կբաժնէ և կմեղանչէ ընդդէմ բարոյականի՝ մարդկային զգացմանց և առաքինական վարուց, արժանի է պարսաւանաց քան զանուս և զանգէտ անձինս։ Զի դաստիարակութեան ամենամեծ նպատակը մարմինն ու միտքը կրթելէ զատ, մարդկային սեռին ուղիղ և մաքուր բարոյականութիւն պատրաստել է։"

ՄԻԱ. Ցաւ է տեսնել ազգային դաստիարակութեան վրայ այսպիսի թերութեանց բազմապիսի նշաններ (Ցես Ը. Թ. ԾԴԹ.), որոց վերայ ի զգուշութիւն և ի զգաստութիւն ազգային լրագիրք շատ օրինակներ կու տան, ինչպիսի է և այն զոր Մանզումէ կու տայ (ի թիւ 1853) լկտի սեղեխի մը նուաստ գործոց վերայ։ Եւ կյաւելու, թէ "Այսպիսի անամօթներ և վատեր ամէն տեղ՝ ամէն ազգի մէջ և ամէն ժամանակ կգտնուին և գտնուեր են, սակայն ըստ մեզ մեծապէս ցաւալի կէտն այս է որ մեր մէջ օր ըստ օրէ պակսելու փոխանակ կաւելնան։ Ան ալ լուսաւորեալ և ուսումնական կոչուած կարգին մէջէն շատ կելնեն, և ազգասիրութիւնն ու բարեսիրութիւնը ձեռքերնին գործիք մը և առիթ մը ընելով՝ շատ անգամ աղքատներն ու խեղճերը գլխէ կհանեն։ Նաև այսպիսի անառակներուն ու բարբարոսներուն վարքն ու բարքը առանց բնաւին նկատելու ազգովին պատիւ և յարգութիւն կընծայուի։ Վասն որոյ կրկին կըսենք և կըսենք, թէ քանի կերթայ ազգերնուս մէջ բարուց ապականութիւնը կաւելնայ, ըստ որում անամօթն ալ՝ անառակն ալ՝ գինեմոլ ալ կպատուուին, թէ զրպարտիչ՝ թէ ստախօս՝ թէ ուխտադրուժ՝ թէ լեզուագար՝ թէ նուաստ մինչ իսկ գողերն ու խարդախները առանց մերժուելու ի ժողովրդենէ անխտիր կընդունուին. ամէն ժողովոց և ամէն գումարմանց մէջ նաև ամէն պաշտօնի և գործի կընդունուին։ Ինչպէս նոյն լկտութիւնը և նուաստութիւնը գործելու զիջանող երիտասարդ ուսումնականը, որքան որ լաւ եմք, այս անամօթութիւնը առաջին անգամը չէ եղեր որ ըրեր է, բայց և այնպէս քանի ազգային պաշտօններու մէջ գտնուեր, աստ և անդ ճառեր խօսեր է, և հաւանական է թէ օր մալ երեսփոխանութեան քուէ ալ

պիտի ընդունի։ . . . Նաև այս մօտ ատեններս կերևին լրագիրներ ու տետրակներ, որք ժողովրդեան փոխան բարոյական քարոզելու, թէ կծաղրեն բարոյականութիւնը, թէ մանաւանդ կհրատարակեն շատ լկտի գրութիւններ և թէ ժողովուրդը զանոնք կյարգէ և ստակ տալով կգնէ։ Եւ եթէ (հեղինակները) օր մը մեռնին, կյուսան թէ ի դասս Սրբոց պիտի համարուին։"

5. ՀԱՅՈՑ ՄԷՋ ԱՆԿՐՕՆՈՒԹԻՒՆ ԿՏԱՐԱԾՈՒԻ

ՄԻԲ. Խորագրին խնդիրը կրնայ նախորդ խնդրոյն մասը համարիլ, իսկ իր կարևորութեանն համար առանձին բաժանման յարմար դատեցաւ։ Անկրօնութիւն ըսելով հոս պիտի հասկնանք մերժել զքրիստոնէութիւն կամ ուէ յայտնեալ կրօն, և հետևիլ լոկ բանականութեան, որ է բնական կրօն կամ Աստուածեանութիւն, որոյ հասարակութիւնը Ֆարմասօնութիւն կըսէ։ Անկրօնութեան պատճառին վրայ մեր նպատակէն չէ խօսիլ, բաւ է ըսել թէ նա կյայտնուի կամ ի վեր կելլէ առ հասարակ այն ժողովրդեան մէջ, որք կրօնական խաւարի մէջ ապրելէն վերջը վրանին կծագէ գիտնական լոյս մը, որով մոլորութեանց և ստութեանց վերահասու կըլլան և ընդ նոսա կմերժեն զամենայն կրօնական ճշմարտութիւն յանդէտս։ Զիք տարակոյս թէ այսպէս է և Հայուն վիճակը դարույս վերջին մասին մէջ մանաւանդ, ուստի տարօրինակ բան մը չէ տեսնել թէ լուսաւորեալ համարելոց ոմանք անկրօն եղած են և կըլլան, նման Եւրոպական Քրիստոնէից ոմանց որք երբ լուսաւորեցան, եղան անկրօն ժամանակ մը, մինչև որ Աւետարանն վրայ հաստատ և կրօնական դաստիարակութեամբ և բարեկարգութեամբ հաստատեց վերստին որ ինչ էր ճշմարտութիւն։ Աւետաբեր այս ընդհանրական պատճառին վրայ (ի թիւ 205) խօսելէն վերջը ուրիշ երեք մասնաւոր պատճառներ կու տայ Հայոց մէջ անհաւատութիւն կամ անկրօնութիւն տարածելուն, որք առաջինէն կբղխին, և զորս կհաստատեն Ազգային գիրք։

ՄԻԳ. Այս պատճառաց մին է "Գաղղիարէն լեզուին ու գրականութեան ազդեցութիւնը։" Առաջները շատ մը Հայեր իրենց որդիքը Փարիզ ղրկեցին յուսումն գիտութեանց և լեզուի, որք երբ կդառնային "երկու բան կրնային ընել դիւրութեամբ. նախ Գաղղիարէն խօսիլ, երկրորդ բոլոր կրօնքները ծաղրել։" Ասոնցմէ ոմանք, ինչպէս և իրենց պէս Գաղղիացւոց ոմանք, Տաճկաստան պաշտօնատարներ կըլլան և իրենց ազդեցութեամբը առանց քննութեան իր֊

րեւ ճշմարտութիւն կընդունուին բոլոր գաղափարներնին, և փոքերնին կըլլան օրինակ հետեւողաց իւրեանց։ Ոմանք դրականութեան ասպարէզ կիջնեն և կթարգմանեն իրենց գաղափարին վերաբերեալ գրքեր, կամ կհեղինակեն տետրեր ու յօդուածներ, զորս ընթերցողք տգէտ գոլով քան զհեղինակս՝ կընդունին նոցա խորհուրդները իբրեւ անուրանալի ճշմարտութիւն։ Ոմանք ևս կըլլան դասատու Ազգային վարժարանաց, ուր բանիւ և գործով կազդեն անգէտ ուսանողաց մտքին և անդ կհաստատեն իրենց գաղափարները։ «Մեր հիմակուան քիչ մը աւելի բարեկարգութեան միտում ունեցող դըպրոցներուն դասական ուսմանց կարգը անցած է, կըսէ Տերոյենց պատուելին, օտար լեզուաց մանաւանդ Գաղղիարէնի կրթութիւնը։ Այս լեզուով գրուած գրքեր կարդալը՝ իրենց կրօնիցը անհմուտ եղող նորահաս ուսանողաց վտանգաւոր կրնան ըլլալ, վասն զի սոյն լեզուով չէ թէ միայն ուղղափառ հաւատոյ դէմ հերետիկոսական գրքեր, այլեւ բացայայտ կերպով անաստուածութիւն և անհաւատութիւն սորվեցնող գրքեր ալ կգտնուին, և մարդ չկրնար գուշակել թէ երբ տղան այսպիսի գրքեր կարդալու սէր պիտի չծգէ՞,» քանի որ Տաճկաստանու Գաղղիախօսաց գրատունները լեցուն են այնպիսի գրենով։ (Յոյս. հատոր Ե. 12։)

Մ.Դ. Տաճկաստանի անհաւատութեան պատճառաց երկրորդն է, կըսէ Աւետաբեր, «Հին գաղափարաց՝ հին նախապաշարմանց, և հին հաւատալեաց մէկ դի թողուիլը, առանց հաստատուելու լաւագոյն հիման վերայ։ . . . Մարդիկ սկսած են ինքնիրեննուն խորհիլ և քըննել, և գտած են որ իրենց կրօնական ուսուցչաց շատը տգէտ են, եթէ գլխովին մոլի չեն, վասնորոյ մարդիկ չէ թէ միայն իրենց հոգեւոր առաջնորդաց վերայ ունեցած վստահութիւննին կորուսած են, այլ անոնց սորվեցունել ցուցած կրօնքին վերայ ունեցածնին ալ։» «Ընդհանրապէս շատերը զարմանք կյայտնեն», կըսէ Դիտակ (Թիւ 89), «թէ ինչո՞ւ մեր Ազգին վրայէն կրօնի կենդանի ներգործութիւնը պակսած է, ու՞ր մնաց նախնեաց այն նախանձելի ջերմեռանդութիւնը և նախանձը ի հաւատս որ ի Քրիստոս Յիսուս, ինչո՞ւ համար ընդհանուր անտարբերութիւն մը կտիրէ ամենուն վերայ նկատմամբ հոգեւորին։ Մենք ցաւագնեալ սրտիւ կըսեմք, թէ մէկ մեծ պատճառն այս է, (իմա եկեղեցականաց գայթակղեցուցիչ վարուց մէջ գտնուիլը), և եկեղեցականք մեծաւ մասամբ պատասխանատու են այս մասին։ (Վանայ Պօղոս վարդապետին) ընթացքին մէջ գտնուող եկեղեցականք բարի օրինակ չըլլալէ ի զատ, գայթակղութիւն ալ եղած են հօտին . . . և ոչ մէկ կրօնական օրէնք մը կներէ որ եկե-

ղեցական մը այնքան ծանր և գայթակղեցուցիչ ամբաստանութեան ներքեւ յանցաւոր դատուելէն զկնի, դարձեալ . . . պաշտօն վարէ։ Այն անձը վարդապետական տիտղոսը կրելու վիճակին մէջ չերեւիր՝ դէթ վանեցւոց համար։» Եւ ինչպէս տեսանք (ՃՁԳ.) թէ շատոր են այսպիսի գայթակղեցուցիչ եկեղեցականք ան ալ ծանր յանցանքներով, մարդասպան ամբաստանեալ կաթողիկոս, որիկայ եպիսկոպոս ևն, ևն, հարկաւ շատ և ծանր են նոցա տուած գայթակղութիւնք։ (Տես և Դիտակ 67։)

Մ.Ե. Հայոց մէջ անհաւատութիւն տարածուելուն երրորդ պատճառն ալ «կանոնաւոր և կատարեալ կրօնական դաստիարակութիւն չկենալն է։ . . . Չկրնար ուրացուիլ թէ եկեղեցականները՝ ժողովուրդը Աստուծոյ խօսքովը կրթելու համար խիստ քիչ բան կընեն . . . եկեղեցական պաշտաման մեծագոյն մաս մալ անանկ լեզուով մը է, որ ժողովուրդը միայն մասամբ իւիք կհասկնայ։ Հարիւրաւոր մարդիկ եկեղեցի կերթան՝ կրօնքին երևցած բաներովը խաբուելու, առանց անոր էութեանը. վրայի կեղեւն ունին, առանց մէջի նիւթին։ Քանզի կրնա՞յ մէկը համարձակիլ ըսելու, թէ Աստուծոյ խօսքը բոլոր ճըշմարիտ կրօնքին մէջի նիւթը չէ, վերցուր ասիկա մէջտեղէն և ահա բոլոր մնացածը բնաւ արժէք մը չունի։ Երբ Ս. Գիրքը մարդոց հասկընալ կրցած լեզուովը չբացատրուիր և սովրուիր, ի՞նչպէս կրնանք զարմանալ անհաւատ ըլլալնուն համար։ Քանզի անհաւատները ընդհանրապէս Ս. Գրոց վրայ տգէտ են, և այս տգիտութիւնն առհասարակ ընկերացած է ինքնահաւանութեան հետ։» Դպրոցաց մէջ ալ կրօնական դաստիարակութիւն չկայ. ինչպէս կըսէ և Յոյս (հատ. Ե. 12), թէ «Գիտենք որ ազգերնուս մէջ կայ այս օր կարգ մը երիտասարդութիւն, որ իւր կործանիչ դրութիւնն ունի կրօնի վերայ, և զայն՝ Եւրոպիոյ անհաւատ մատենագրաց ընթերցմամբ ընդունած է, դրութիւն մը՝ որ մեր ազգային տունը կքակէ։» Դարձեալ յայլում «Մեր դպրոցներէն բոլորովին ի բաց արտաքսեալ է, կըսէ, այն բընական և Քրիստոնէական ուղիղ բարոյականը, և Ազգային վարչութեան կրթական ժողովը տակաւին չյաջողեցաւ հաստատեալ կերպով իբր դաս աւանդել տալ ազգային մանկտւոյն։» Շատ շատ եղածն ալ Մանր Ուսմունք Քրիստոնէական հաւատոյ մը էր, զոր դասախօսներն ալ լաւ չեն գիտեր, սովրողներն ալ միայն ի մանկութեան կրնան գործածել կամ ընդունիլ, ի պատանեկութեան կմոռնան և յերիտասարդութեան կմերժեն։

Մ.Զ. Ամէն նկատող գիտէ թէ Գաղղիարէն լեզուին հետ մտաւ և ի Տաճկաստան ամէն գաղափար Գաղղիական վարմունք զոր կան-

ունենն սովորաբար ալաֆրանկք, և ըստ տարածման լեզուին և սովորութեան Գաղղիացւոց պիտի տեսնուին և նոցին արդիւնք։ Արդէն քաղաքական աշխարհ տեսած և հասկցած է Գաղղիականութեան ցաւալի արդիւնքը, բարոյական և կրօնական արդասիք ևս կերևին, յորոց կրնայ մակաբերել թէ Հայը ի նոցանէ փոխ առեալ գաղափարներէն և համակրութիւններէն ինչ կրնայ սպասել և առ յապա։ Սակայն եղածին վրայ նաև լալ ապիկարութիւն է և տկարամտութիւն, պէտք է գալիք չարեաց առաջքն առնուլ նախատեսութեամբ, և այս է գործ քաջի և խոհեմի, որոյ պէտք է աղէկ նայիլ Գաղղիոյ պատմութեան վերայ։ «Ամէն խելքը գլուխը եղող մարդ վկայեց և տակաւին կվկայէ, որ Գաղղիոյ անկմանը ներքին և իսկական պատճառն էր բարուց ընդհանրական ապականութիւնը, (որ գիտնոց վրայ անհաւատութիւն ալ կցուցնէ)։ Երևելի անձ մի ըսած է, թէ ‹Եթէ կարելի ըլլար Նաբօլէոնի Գ. ի ժամանակ Գաղղիոյ և մասնաւորապէս փարիզու բարոյական կացութեան մէկ պատկերը գծել, ալ դժոխքը տեսնելու հարկ չէր մնար, և այս է նորա ահռելի անկմանը միակ պատճառը, այլք ինչ որ ըսեն ականջս չմտներ›։» Վասն որոյ Յովհաննէս Էֆէնտի Մինասեան (Աւետ. 72 ի 20) կխրատէ զհայս ուղերձելով, թէ «Հայեր, օտար ազգաց անկրօնութենէն փախէք, և մի հետևիք անանկ (Գաղղիացի) ժողովրդեան օրինակին, որ մինչև անգամ ԺԸ դարուն վերջերը յեղափոխութեան ժամանակ ազգային ընդհանուր ժողովի մը մէջ—սոսկալո՜վ կըսեմ—յանդգնած է վճռել, թէ ‹ոչ գոյ Աստուած›։»

Մին. Եթէ անդրադառնանք և մէկ մալ նայինք որ ինչ ըսուեցան Յառաջաբանի (Ե—Ժ.) նկատմամբ կրօնական չփոթութեանց և բարուց ապականութեան, անտարակոյս պիտի ձայնակցինք, Հմայեակ վարդապետին հետ գոչելու, թէ «աճաւասիկ անհաւատութիւն և անկրօնութիւն եկած մօտեցած են Հայոց ընտանեկան կենաց դուռը։» Եւ տակաւին չերևիր թէ Հայք ըստ արժանւոյն կաշխատին նորա առջևն առնելու, քանզի՝ ինչպէս կըսեն Մանզումէ և Դիտակ (Թ. ՄԽԱ.) հասարակութիւնը պատուով և պաշտօնով կանուանէ զանոնք, ազգին մէջ նոցա գրքերն անարգել կդառնուին և գաղափարներն մտադիւր կընդունուին։ Հայ ժողովներ և եկեղեցւոյ ատեանք դարուս մէջ նզովեր են պապականութիւնը և բողոքականութիւնը, իսկ ոչ երբէք այնպիսի անկրօնները, արգիլուած կամ զգուշութիւն դրուած են որ չկարդայ հասարակութիւնը Պապականաց և Բողոքականաց գրքերն, պատկեր Հայաստանեայցի ընդունելութիւնը անգամ (Ղ.Գ.), իսկ ոչ անկրօնից գրքերն և անբարոյական

ռասպելները։ Անբարոյական կարգաւորներ երբեմն պաշտօնանկ եղեր են և հրապարակաւ ծանուցուեր, իսկ ոչ անկրօն կամ անբարոյական աշխարհականք, և ոչ նոցա անուանք պաշտօնապէս խայտառակած։ Չենք ըսեր թէ ասոնք օրինաւոր և բաւական միջոցներ են, որք եթէ գործածուին անհաւատութեան ու անբարոյականութեան առջևը կառնուն, վնասակար իսկ կրնան ըլլալ՝ եթէ անխոհեմաբար գործածուին, այլ կըսեմք թէ Հայը որ ցարդ այս դժգոհութեան ցոյցերն ընել սովոր էր ընդդէմ մոլութեանց և մոլորութեանց, զորս կմերժէր, հիմա, ընդդէմ անկրօնութեան անսովոր լռութիւն մը կպահէ, որ քիչ վնաս չկրեր հասարակութիւնը՝ քանի որ ուրիշ կերպով մերժելու և արհամարհելու ուրիշ կերպ մը դեռ ունեալ չէ։

Միր. Չենք ալ տեսներ թէ բաւական միջոցներ ձեռք առած է լուսաւորչականութիւնը որ թէ անկրօնները հաւատացեալ ընէ և թէ նոր ըլլալիքներուն առջևը առնէ։ Հրատարակեալ մի քանի համառօտ գրքեր անբաւական են ի դարման այնքան խորամուխ անհաւատութեան, որ եղածներէն առաւել հիմնական և զօրաւոր փաստերու կկարօտին։ Նա մանաւանդ, ինչպէս ըսուած է, դեռ չկայ ըստ պիտոյից կրօնական դաստիարակութիւն, ոչ ի դպրոցս ու վարժարանս և ոչ եկեղեցական ընթերցուածոց ու քարոզութեանց մէջ։ Եղածներն ալ տասը տեղէն մէկը կայ, ուր անհաւատութիւն տարածեալ ըլլալով ու տարածելու վերայ, դարմանոց կարօտ են անյապաղ։ Բայց բողոքականութիւնը ամէն տեղ ունի այնպիսի պաշտօնեայներ, որք կարող են Քրիստոնէութեան փաստին ջատագով կանգնիլ, և հրահանգել ժողովուրդը հանապազօրեայ դաստիարակութեամբ թէ ի բարոյականս և թէ ի կրօնականս։ Վասն որոյ ոչ միայն ասոնց մէջ անկրօնութիւնը Լուսաւորչականաց մէջ եղածին պէս մուտ գտած չէ, այլ և ի լուսաւորչականութեան անհաւատ եղածները բողոքականութեան մէջ կգտնեն դարմանը։ Որովհետև թէ նոցա պաշտամունք և քարոզութիւնք ապաքինիչ են ախտին և ուղղիչ ի մոլորութենէ, այլ ևս բողոքականութեան մէջ չունի այնքան հաւատալու բան, քան որ կայ ի ծխական եկեղեցիս։ Քանզի անհաւատը եթէ ընդունի Ս. Գրոց ներշնչութիւնը և նորա հաւատալեաց աղբիւր և վարուց կանոն ըլլալը, կըլլայ Բողոքական, իսկ լուսաւորչականութեան հանելու համար դեռ շատ յառաջ երթալիք տեղ կամ հաւատալու բաներ ունի, զորս ընդունել տալը քիչ դժուարութեանց չկարօտիր։ Այսպէս անհաւատութեան տարածումը ի Հայս՝ ժողովուրդը բողոքականութեան տանելու կծառայէ անուղ-

ղակի և սակայն ցաւալի կերպով մը, ուր անուղղայ կմնան ոմանք և կորսուեալ։

6. ԱՃՈՒՄՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Միթ. Եթէ մեր սահմանէն դուրս չելլէինք հոս կրնայինք բացատրել և ցուցունել այն աղբիւրներն ալ, որք Հայ բողոքականութեան աճման կու տան և նորա թիւը կստուարացունեն։ Եւ անոնք են օտար ազգաց բողոքականութեան մէջ խառնուիլը, ինչպիսի են Ասորիք՝ Խրտիք և Ասիաբնակ Յոյնք, նաև Եւրոպացի Բողոքական ազգք, նոյն իսկ ի Մահմետականաց Տաճիկք և Քուրդք։ Որոց ամենէն ալ Հայ Բողոքականաց հետ խառնուածներ կան և առաւել ևս խառնուելու ալ յոյս և պատճառ, ըստ որում այդ ամենեցուն Բողոքական ըլլալուն զօրաւոր ջանքեր պիտի ըլլան, յորոց դարձի եկողները պիտի խառնուին ընդ Հայ Բողոքականս, որ փոքր Ասիոյ մէջ մեծամասնութիւն ունեցող ազգը կամ հասարակութիւնն է։ Սակայն տեղ չունիմք ի Հանդիսի աստ մանրամասնութեան մտնելու և այս կէտը բացատրելու։ Իսկ բողոքականութեան տարածմանն ու բարգաւաճմանը վրայ, թուի մեզ թէ վերասաց իրողութիւնք բաւական հաստատութիւն են և ցոյց, որք կերևցունէին թէ Լուսաւորչականը Բողոքական ըլլալու դրից մէջ է, որ կրկին շահիլ ըսել է։ Նման կշռորդի մը մէկ նժարէն քաշ մը բան առնել և միւս նժարին մէջ դնելուն, որ երկու քաշ տարբերութիւն կընէ, կամ նման կարգ մը զօրաց հակառակ կողմը անցնելով նախնի կողմին դէմ պատերազմելուն, որով սա կրկին զօրութիւն պակսեցուցած կլլնի։ Ընդհակառակն չտեսանք պարագայ մը կամ առիթ, որ նպաստամատոյց լինի Լուսաւորչականութեան և աննպաստ բողոքականութեան, կամ պատճառ մը որ Բողոքականն ի Լուսաւորչականութիւն դարձունէ։ Գիտենք թէ մասնաւոր տեղեաց և անձանց համար կրնան մասնաւոր պատճառներ ըլլալ, մէկ կամ միւս կողմը դառնալու, ինչպէս որ եղած են ցարդ, սակայն մեք միայն ընդհանրական երևոյթից վրայ կխօսինք աստ, ինչպէս և յամենայն ուրեք, զոր պէտք է միտք պահել, որ մեր դիտողութիւնք սխալ կամ չափազանց չհամարուին։

ՄԼ. Եւ ահա այս ընդհանրական պատճառները կհամառօտենք աստ, թէ Բողոքականութիւնը եթէ կրցաւ հակառակ քաղաքականութեանց յաղթել և հաստատել ի Հայս, կողմնակից քաղաքական նկատումներով ալ աւելի պիտի տարածի։ Եթէ Բողոքական ընկերութիւնք իրենց տկարութեան ատենը կրցին հաստատել բողոքականութիւնը ի Տաճկաստան, առաւել յաջողութեամբ պիտի կարենան տարածել զնա մինչ այժմ զօրացած են և առաւել ոյժ պիտի տան։

լուսաւորչականութիւնն ալ ո՛չ քաղաքական և ո՛չ ընկերական այս ազդեցութեանց դէմ դնելու այնքան ոյժ ունի, որքան ունէր ասկէ առաջ, քանի որ բողոքականութիւնը ամենայն իրօք պատրաստեալ կայ և յաջող պարագաներէն օգուտ քաղել։ Եւ եթէ բողոքականութիւնը իւր տկարութեամբ կրցաւ դիմանալ սաստիկ հալածանաց և միահամուռ յարձակմանց, հիմա իւր զօրութեամբը ինչո՞ւ չպիտի կարենայ դիմադրաւ լինել, և ինքն իսկ յարձակիլ ի վերայ հակառակորդաց, որք արդէն իրենց մէջ բաժանեալ գոլով իրարու դէմ կելնին և ոմանք ի նպաստ իւր կգործեն։ Ըսել կուզեմ այն գրիչներ և կուսակցութիւնք, որք երբեմն միաբան ընդդէմ էին բողոքականութեան և ջատագով լուսաւորչականութեան, այսօր իրարու հակառակ են, ընդդէմ լուսաւորչականութեան և ջատագով իսկ բողոքականութեան։ Եւ լուսաւորչականութիւնը մինչ այսօր ենթարկեալ կայ խիստ քննութեան մը տակ, բողոքականութիւնը աւարտեր է զայդ և կայ ի կայի հաստատութեան, մինչ նորա քննադատեալ մէն մի խնդիրը զինքը կքայքայեն։ Լուսաւորչականութիւնը այսօր ենթարկեալ է չարեաց, որք հետևութիւնն են իւր թերի կամ առանց բարոյականի յառաջ տանիլ ուզած դաստիարակութեան, որով սրբութեան պաշտօնեայք իսկ ենթարկեալ են ստգտանաց։ Մինչ բողոքականութիւնը հանդերձեալ է վայելել զարգասիս բարոյական դաստիարակութեան իւրում, որով ունի բաղդատաբար առաքինի ժողովուրդս և բարեսէր անդամս եկեղեցւոյ։ Եւ՝ որ ողբալին է, լուսաւորչականութեան մէջ անկրօնութիւն մը սկսեր յառաջ կերթայ և նա ապիկար է որ տանի դարման նմա, որով իւր անդամոց ոմանք կըլլան բոլորովին անպիտան՝ քաղցկեղէ ախտացելոց նման, և ոմանք կըլլան Բողոքական։

ՄԼԱ. Ապա ուրեմն բարւոք է ներկայն Բողոքականին բաղդատմամբ Լուսաւորչականին, և յաջող ապագայն ու փառաւոր իսկ, բայց Լուսաւորչականինը անյաջող և մութ։ Որք բողոքականութիւնը կործանիչ կսեպեն լուսաւորչականութեան հարկաւ պիտի շատ տխուր սեպեն սորա ներկայն և կարի տխուր ապագայն։ Սակայն ոյք կհամարին բողոքականութիւնը եկեղեցական բարեկարգութիւն, և նախապատրաստութիւն ազգայնոյն. անոնք որ Բողոքականութիւնը նախաշաւիղ կհամարին Հայուն յառաջընթացութեանը և հաստատութիւն տարածման Քրիստոնէութեան ի Տաճկաստան, այսպիսեաց համար Հայ ժողովրդեան ներկայն է ուրախալի և ապագայն բերկրալի։ Ըսել չենք ուզեր երբէք թէ չկայ տեղ մը, ուր Լուսաւորչականին և Բողոքականին վիճակը տարբեր ըլլայ քան զոր նկարագրե-

ցաւ, կրնան հակառակը ըլլալ մինչև իսկ. այլ թուի մեզ թէ այս է երկու ժողովրդոց ընդհանուր նկարագիրը և այն իրարու բաղդատմամբ ո՛չ թէ բացարձակապէս ։ Այս թէութիւնը առաջի աչաց պահելու է ընթերցողը, ինչպէս որ ունեցած է գրողը, առանց որոյ, ինչպէս ըսեր ենք և ի յառաջաբանի անդ, հանդիպացեալ իրողութիւնք չափազանցութիւնք կրնան համարուիլ։ Թէ խօսքերնիս միշտ բաղդատաբար է և ընդհանուր առմամբ, մերթ միայն յիշեր ենք, աւելորդ համարելով ամէն տեղ կրկնել նոյն բանը, զոր համարիմք թէ ընթերցողք կրնան նկատել առանց մեր յիշելուն։ Բայց թէ ինչ ընելու են Հայք որ զերծ լինին երկկողմի չարիքներէն և յառաջեն յուսալի բարեաց մէջ, ասիկա պիտի լինի մեր վերջաբանին նիւթը և վախճան Հանդիսիս ։

ԳԼՈՒԽ Զ

ՎԵՐՋԱԲԱՆ

ՄԼԲ. Ցընթացս Հանդիսիս տեսանք թէ Քրիստոնեայ աշխարհն իբրև պարզ Քրիստոնէական և գործ առաքինական ձեռք զարկաւ Տաճկաստան Աւետարանելու, որոյ հետևութեամբ մաս մը հերձաւ Լուսաւորչական Մայր եկեղեցիէն և կազմեց Հայ-Աւետարանական եկեղեցին ։ Որ որքան նմանութիւն ունի Բողոքական եկեղեցւոյ մը գրեթէ նոյնքան և նմանութիւն ունի իր մօրը նախնական յօրինուածութեանը, որով կրնայ կոչուիլ բարեկարգեալ եկեղեցի Հայաստանեայց ըստ դրութեան Բողոքականաց ։ Ասիկա ձեռնտուութեամբ Բողոքական ազգաց և ընկերութեանց շարունակ աճելու վրայ է հանդերձ բարուք դաստիարակութեան ընթացիւք, որ լաւագոյն ապագայ մը կխոստանայ ։ Մինչ Լուսաւորչական մեծամասնութիւնը համարեա թէ հակառակութեամբ կամ գէթ անհաճոյ կվարուի նորա հետ, յորմէ հետէ մերժեց զնա իբրև մոլար դրութիւն և ազգամնաս կրօնափոխութիւն ։ Եւ ըստ բերման պարագայից ուզեց ընել ինչ ինչ եկեղեցական բարեփոխութիւն, բայց չյաջողեցաւ տակաւին փոփոխութիւն մը ընել, տալու ոյժը դպրոցական ուսման և կրթութեան, իսկ անկէ ալ ակնկալեալ պտուղը չկրցաւ քաղել ։ Անցեալ 40—50 տարուան մէջ նկատմամբ այս գործոյ՝ գրեթէ ազգին ամէն կարգի և աստիճանի մարդիկն ալ մասնակցութիւն ունեցան, որոց ոմանց աշխատութիւնը լաւ արդիւնք ունեցաւ և ոմանցը յոռի ։

ՄԼԳ. Եւ ահա զանոնք ջանացինք ի հանդէս ածել, ոչ որպէս զի մի քանին գովենք և միւսները պախարակենք, ոչ թէ այն նպատակաւ որ կուսակցութիւն մը սիրելի ընծայենք և ուրիշ կարգ մը ատելի ցուցնենք, այլ անցեալ իրողութիւններէն ներկայիս խրատ հանենք և ապագային համար լաւագոյն ուղղութիւն մը բռնենք, որ է վախճան գործոյս ։ Ուստի այն գործող անձանց շարժառիթին վերայ լաւագոյնն է բարեմտաբար նայիլ, իբր այն թէ պարտք համարեցան ընել ինչ որ բարի սեպեցին և օգտակար ազգին ու կրօնին, որոց ծառայել պարտաւոր էին ։ Սակայն իրենց ընթացից լրջութեամբ և խոհեմութեամբ հետևիլ, իբրև ազատ գործողներ որ առջևնին ունին փորձառութեան ցոյցերն ։ Այնպէս որ շարունակեմք որ ընթացքը որ լաւ արդիւնաւորեցաւ, և փոխեմք կամ թողումք ինչ որ չարիք հասուց ազգին և ազգայնոց ։ Եւ որովհետև իրողութեանց երևելին է Բողոքականաց բաժնուիլն և առ այդ եղած ընդդիմութիւնն, հոս յառաջ պիտի բերեմք մի քանի կերպեր միաբանութեան որոց համար ջանքեր եղեր են, և որոց պատշաճականին համար անշուշտ պէտք է առաւել ջանքեր ըլլան ։

1. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԼԴ. Հանդիսատէրն, ոմանց հետ, երբեմն կմեղադրէր Պատուելի Միսիոնարները որ առիթ տուին բաժանման, մանաւանդ կպախարակէր Հայ-Բողոքականները որ թողին իրենց մայրենի եկեղեցին ։ Բայց վերահասու ըլլալով ամենայն պարագայից, զորս համառօտեցաք, կտեսնէ թէ իրաւունք չունի զոք մեղադրելու, ոչ Միսիոնարները, ոչ Բողոքականացեալները, և ոչ իսկ Հայ ազգին առաջնորդները, որոնք ըրին ինչ որ պարագայք բերին, և թուի թէ անոնցմէ լաւագոյնը չէին կրնար ընել ։ Տգիտութիւն և նախապաշարում, անփորձութիւն և ապագային անգիտութիւն, արտաքին պարագայք և ներքին սրտնեղութիւն միացան և հատուած մը յառաջ բերին, որ թէև ոմանց օգտակար երևցաւ իսկ այլոց վնասակար թուեցաւ ։ Ըստ սոցա այս անջատումը կջլատէ ազգայնութեան միութիւնը և կտկարացունէ զայն, մանաւանդ այն ինչ միմեանց հակառակութեամբ կվարուին գէթ տեղիս տեղիս ։ Վասն որոյ կերպեր փնտռուեցան որ կամ հատուածը տկարանալով վերնայ, կամ իրենց մէջ տեսակ մը միութիւն ըլլայ ։

ՄԼԵ. Ոմանք, և այն գլխաւորապէս եկեղեցական դասէ, խորհեցան պահպանել Հայաստանեայց եկեղեցւոյ միութիւնը, անփո-

փոխ պահելով զամենայն աւանդութիւն զոր պաշտպանել ուխտեալ էին։ Վասն որոյ ի սկզբանէ անտի ջանք կընեն Ազգին մէջէն ջնջել վերցունել բողոքականութիւնը ինչ կերպով որ կրնան, ինչպէս տեսանք երկրորդ գլխոյն մէջ (ի խնդ. Ե)։ Բայց նոյա ջանքերն հակառակ արդիւնք բերին իբրև ծայրայեղութիւն (Ղ.Ա.), զոր տեսեալ այս կարգի անձանց եկեղեցական միութեան փափաքողաց՝ բանը եղանակաւորեցին և ջանացին եկեղեցական բարեփոխութիւն մը ընել, որ ոչ միայն ոմանք կբաժնուին այլ և թերևս բաժանեալք միանան։ Բայց ասոնք ալ ոչ միայն ընդդիմութեանց պատահեցան այլ և իրենց մէջ տարաձայն գտնուեցան առնելի բարեկարգութեան նկատմամբ, որով խոստացեալ բարենորոգման յոյս չմնաց և հատուածն երթալով ստուարացաւ։ Այս կրկնակի միջոցով բողոքականութիւնը Հայոց մէջէն վերցունելու դէթ նուազելու կամ տկար թողելու ջանքեր եղան ամէն կարգի մարդոց ձեռամբ և այլազան ձևերով, բայց ո՛չ յաջողեցան և ո՛չ յաջողելու յոյս թողին, ինչպէս կհաստատեն ցարդ հանդիպացեալ իրողութիւնք։

ՄԼԶ. Ազգային միութեան փափաքողներ ալ եղան, գլխաւորապէս իշխանաւորաց կարգէն և քաղաքական պաշտօնակալաց մէջէն, որք երբ վերահաս եղան թէ Լուսաւորչական եկեղեցին չկրնար իւր հովանւոյն տակ ամփոփեալ պահել Հայկայ որդիքը, խորհեցան այսպիսիք քաղաքական կամ ժողովրդական միութիւն մը հաստատել կամ պահել Բողոքականաց և Լուսաւորչականաց մէջ։ Խորհեցան թէ ինչպէս որ Էջմիածնայ՝ Կիլիկիոյ և Աղթամարայ Թեմերուն ժողովուրդները թէև զատ եկեղեցական գլուխ կամ ներկայացուցիչ ունին, բայց միացեալ են Կոստանդնուպոլսոյ Պատրիարքին գլխաւորութեան կամ իրաւասութեան տակ, նոյնպէս կրնան ըլլալ և Բողոքականք։ Բայց նկատելի է թէ այն տարբեր Թեմական ժողովրդոց մէջ եկեղեցական համարեա թէ խտրութիւն չկայ, մեծ խտիր դրուած է Լուսաւորչական և Աւետարանական եկեղեցեաց մէջ։ Նաև մինչ նոցա մէջ փոփոխութիւն մը ընելու ջանք չկայ արդեամբ որ դժտութեան առիթ ծագի, բողոքականութիւնը նոր բացած լինելով բարեկարգութեան դուռը յառաջ կընթանայ անդ, և առիթ կու տայ տարաձայնութեան ընդ մէջ երկու եկեղեցեաց։ Մանաւանդ թէ արդէն տեղի կունենան այնպիսի դէպքեր, որ ի նպաստ Լուսաւորչականին որոշուելով պաշտպան կկենայ նոյն իսկ Պատրիարքարանը, հապա ո՞վ պիտի լինի դատաւորը։ Այն օրինակ այնքան դժուարութիւնք երևեցան այս տեսակ միութեան համար, որ այն գաղափարն յղացողներն իսկ լքեալ թողին, մանաւանդ երբ քաղա-

քական օրինաց փոփոխութեամբ ցուցուեցաւ թէ ամէն ժողովուրդ իւր տեղական կառավարութեան ձեռամբ տեսնելու է ամէն ոչ կրօնական գործը, և թէ Պատրիարքունք և Ազգապետք միայն ընդհանուր կրօնական խնդրոց խառնուելու են։

ՄԼԷ. Միութեան հարկաւորութիւնը որքան չօշափելի է, կատարումն ալ այնքան բաղձալի, հետևապէս անոնք որ կերպ մը կը տեսնեն և արդիւնաւորելու յոյս տեսակ մը միութեան սիրելի է տեսնել որ ըստ այնմ ջանքեր կընեն։ Ինչպէս ըրին և կընեն ոմանք, գլխաւորապէս ուսեալներէ և երիտասարդներէ, որ ուսումնական միութիւններ հաստատել կուզեն Լուսաւորչական և Բողոքական հասարակութեան մէջ։ Ասոնք գիտեն թէ կան այնքան նիւթ ուսման և գիտութեան, որք ինչպէս արժանի են Հայ երիտասարդութեան հետևութեանը այնպէս ալ հեռի եկեղեցական տարբերութիւններէ և կրօնական խնդիրներէ։ Վասն որոյ այսպիսի բաներ ուսանելու և ուսուցանելու գովելի վախճանաւ տեղ տեղ ուսումնական ընկերութիւններ հաստատել, դպրոցաց ուսումը յառաջացունել և գիտնական գրքեր հրատարակել կուզեն, լսարաններ կամ խօսարաններ կբանան և թանգարան կամ ընթերցարան կհաստատեն։ Սակայն այս կերպ միութիւնն ալ ոչ ըստ ակնկալութեանց յաջողեր է, և ոչ ևս կրնայ յաջողիլ ըստ օրինակի համազգային ընկերութեան Լուսաւորչական և Պապական ուսումնականաց, որ հրամանաւ Պապին քայքայեցաւ (Պէրպէրեան պատմ. Հայոց Գլ. ԿԲ.)։ Որովհետև Լուսաւորչականը կվախնայ թէ Բողոքականը կերպ մը կգտնէ իւր որդւոց սիրտը եկեղեցիէն պաղեցնելու, Բողոքականն ալ թէ մի գուցէ իր երիտասարդները վնասակար ազդեցութիւն կրեն այսպիսի ընկերակցութենէ։ Եւ եթէ երբէք յաջողին իսկ այսպիսիք, զորս չվհատեցնելու համար դժուարութիւններ ցուցնել չենք ուզեր, յայտնի բան մը է թէ չկրնար ընդհանրական միութիւն համարուիլ, ոչ ալ այն արդիւնքը ունենալ որ միայն նա կրնայ արտադրել։ Յուսալի նորա կերպերն հետազօտել և հանգամանքները քննել մեզ մեր վախճանին կմերձեցունէ։ Հոս պիտի դիտողութեան առնենք ուրիշ կերպ մը՝ անուանելով զնա։

2. ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄ

ՄԼԸ. Արդեօք կարելի կամ հաւանակա՞ն է թէ բողոքականութիւնը Հայուն մէջ, դէթ ի Տաճկաստան, այնքան ընդհանրանայ և յառաջ երթայ, որ ջնջէ վերցունէ լուսաւորչականութիւնը, և ըլլայ միութիւն Հայոց հանդերձ Բողոքական դրութեամբ։ Զգիտեմ թէ

ճրագ այժմեան պարագայներէն հեռացնելով՝ քանի մարդ պիտի գտնուի որ հաւանական սեպէ զայս. բայց գիտեմ թէ յոյժ մեծամասնութիւն մը անկարելի պիտի համարի։ Եւ ընդհակառակն միթէ կարելի կամ հաւանակա՞ն է որ բողոքականութիւնը գէթ Հայոց մէջէն վերնայ և Հայը միացեալ գտնուի ի գաւիթ լուսաւորչականութեան։ Այս ևս անհաւանական պիտի երևի մնացեալ անոնց՝ որ հաճեցան կարդալ նախորդ գլուխը, ուր հանդիսացան ցոյցք ապագայից երկոքին հասարակութեանց։ Որոյ վերայ պէտք է յաւելուլ և մի քանի դիտողութիւններ, որք որքան կբացատրեն բողոքականութեան ազգին ընելիք ազդեցութիւնը՝ այնքան ալ կցուցնեն միութեան լաւագոյն կերպը։

ՄԼԹ. Ապաքէն միշտ եղեր են և պիտի ըլլան նուաստախոհ մարդիկ որք ըստ օրինակին Յուդայի ի շահ անձին կհեռանին Քրիստոսի և անոր կրօնին։ Ուստի եթէ բողոքականութիւնը շահաւէտ տեսնեն հոն կերթան, ուր եթէ ակնկալածնին չգտնեն ետ կդառնան։ Տեսանք թէ արտաքոյ դատաւորք ոմանք այսպէս համարեցան համայն Բողոքականները (ԺԹ), բայց ոյք գիտեն թէ ինչ է հոգի և ինչ կրօն, համոզուած են թէ Բողոքականաց կարի մեծամասնութիւնը Աւետարանական եկեղեցւոյն կդիմէ առ սէր ճշմարտութեան։ Եւ հոն կան ու կմնան այսու համոզմամբ թէ Ս. Աւետարանի յաճախ ընթերցումը և նորա փրկարար վարդապետութեանց ճոխ բացատրութիւնքը առաւել կսնուցանեն իրենց հոգին քան որ կայ Լուս. եկեղեցւոյն մէջ։ Եւ թէ ըստ ամենայն հանգամանաց բարւոք կհամարին Աւետ. եկեղեցւոյն յօրինուածութիւնը՝ դաւանութիւնը և պաշտամունքը բաղդատմամբ Լուսաւորչականին։ Գուցէ ոյք չեն վայելած Աւետարանի սնուցիչ կաթը, և մնալով ի ծոց Լուս. եկեղեցւոյն՝ ծիսական պաշտամամբ գոհ ըլլալ սովոր են, պիտի չհաւատան թէ Բողոքականը չկրնար վերստին դառնալ ի ծոց Լուս. եկեղեցւոյ՝ առանց կորուսանելոյ հոգւոյն քիմքը։ Ինչպէս տեսնուած է անոնց վերայ որք վերադարձէն զկնի առաւել անհոգ և անփոյթ կըլլան կրօնի և հոգևոր բաներու քան որ յառաջն էին։ Ուստի բողոքականութենէ դարձողներն կամ շահասէրներ պիտի ըլլան կամ հոգևոր թմրածներ, որոց բաժանումը կծանրաբեռնէ լուսաւորչականութիւնը և կթեթևցունէ բողոքականութիւնը։ Նման հիւանդաց գերի տարուելուն, մինչ անձնուրացն և հոգեսէրն կմնայ զինուորեալ բանակին մէջ կանգնիլ ախոյեան ճշմարտութեան ընդդէմ մոլութեանց և մոլորութեանց։

ՄԽ. Այսպիսի Բողոքականք կցաւին որ իրենք և իրենց անդա-

մակիցք այնքան յառաջ չեն կրնար երթալ որքան որ կակնկալէին և կփափաքէին, ուստի և շատերուն վրայ կմրմռքին և կգանգատին, բայց և այսպէս բաղդատմամբ Լուսաւորչականին առաւել յառաջընթաց և ազնիւ կգտնեն ասոնք։ Անանկ որ խելքը գլուխը եղող Բողոքականը չկրնար թողուլ այսպիսի անդամակիցներն, որք կան ի շաւիղս զարգացման, և ընդունիլ զայլ անդամս, որք դեռ ճամբու մտած չեն երևիր։ Այսպէս կրնան բաղդատուիլ նաև նկատմամբ դպրոցական՝ ընկերական և ժողովրդական գործոց, որոց և ոչ մին ունի վանողական զօրութիւն մը, որ հեռացունէ իր անդամները մինչև ձգել ի գոգ լուսաւորչականութեան։ Եւ ինչպէս տեսանք ի զուգակշիռ անդ (Գլ. Ե), մինչ բողոքականութեան ձգողական զօրութիւնը կառաւելու ըստ բերման յաջող պարագայից։ Լուսաւորչականինը կնուազի իսկ։ Անանկ որ եթէ կարող չեղաւ յարակից անդամները պահել, երբէք չպիտի կարենայ հեռացեալները առ ինքն քաշել, քանի որ փոփոխութիւն մը ընդունած չէ։ Այո՛, կկրկնենք որ ինչ ըսուեցաւ Յառաջաբանի, թէ Հայուն ամէն բանը փոխեցաւ բայց ոչ ի նպաստ լուսաւորչականութեան, ամէն բան ալ՝ որ դեռ տեղ տեղ և ոմանց մէջ անփոփոխ կայ, փոխուելու վրայ է և պիտի փոխուի քաղաքական և գիտնական ազդեցութեամբ, իսկ ոչ ի նպաստ լուսաւորչականութեան որ անփոփոխ կեցած է այս ամէն յեղափոխութեանց մէջ։ Վասն որոյ չպիտի յաջողի և մնացեալ որդիքը սնուցանել որով ուրիշի կաթին պիտի դիմեն, թող թէ խորթացեալները յաջողի առ ինքն ժողվել։

ՄԽԱ. Բայց համարինք թէ Բողոքականք ոմանք շարժեալ յազգասիրութենէ կամ յայլ ազնուական շարժառիթէ՝ դարձան ի ծոց նախնի մօրն իւրեանց, որ անփոփոխ կմնայ, ի՞նչպէս կուզէ վարուիլ նոցա հետ, կամ ինչ պիտի ըլլայ անոնցմէ պահանջումը։ Դարձողներն եթէ եկեղեցական են պարտին թողուլ ոչ միայն եկեղեցական պաշտօննին և կարգերնին այլ և գիտցածնին և գաղափարնին, ու ուխտեն լինել հաւատարիմ աւանդապահ բանից նախնեաց։ Ա՜լ այնպիսի մէկն ի՞նչ ծառայութիւն կրնայ մատուցանել, շատ մը կապեալ լեզուներու և կաշկանդեալ մտքերու վրայ մի քանիսն ալ աւելցունելով ի՞նչ օգուտ կըլլայ։ Եթէ դարձողը կրօնագէտ կամ ուսումնական մը ըլլայ, ո՜չ ապաքէն խորշելի պիտի լինի յաչս ժողովրդեան, որ մի գուցէ իւր մոլար գաղափարներովը շփոթէ իրենց միտքը, ինչպէս որ կզգուշանային մինչ ճանչցուած էր Բողոքական։ Բայց եթէ եկեղեցի եկածին պէս գերբնական ազդեցութիւն մը

պիտի ըլլայ նորա մօրաց վերայ որ բոլոր գլխացածները մնանայ և ըլլայ ըստ ամենայնի գաղափարակից Լուսաւորչական եղբարց, այս հրաշքով միթէ օգուտ մը կըլլա՞յ, իբր երկու միլիոն ժողովրդեան վրայ քանի մը անձանց աւելնալէն ի՞նչ շահ։ Դարձողը սեպենք հարուստ մէկը, որ իր ստակովը կրնայ օգնել ազգին, և որովհետև թէ ի բողոքականութեան և թէ ի լուսաւորչականութեան տայ, ուկին ոսկի է և Հայուն բարելաւութեանը համար կուտայ, խնդիրն այս պիտի ըլլայ թէ բողոքականութեա՞ն մէջ աւելի կուտայ և տուածը օգտաւ կրնայ գործածուիլ, թէ երբ Լուսաւորչական ըլլայ։ Հանգիտացեալ վիճակագիրք կհաստատեն թէ Բողոքականք աւելի ստակ կուտան և օգտաւ կգործածուին քան Լուսաւորչականք, անհատաբար հաշուելով ոչ թէ հաւաքաբար։ Ասոր պատճառներուն մէկըն այս է որ Աւետարանի հրահանգութիւնը կզօրացունէ մարդոյն ամէն ազնուական կարողութիւնները, զոր օրինակ Աստուածպաշտութիւնը՝ ազգասիրութիւնը և բարեսիրութիւնը, որով մեծատունը առաւել անձնանուէր կըլլայ, ինչպէս էր Պօղոս ի Քրիստոնէութեան քան ի Հրէայութեան (Հռով. Թ. 1–5)։ Եւ երբ բարեկարգեալ դրութեան շնորհիւ՝ տեսնէ թէ տուածն արդիւնաւոր կլինի ո՞չ ապաքէն կխրախուսի աւելին տալու, բայց երբ տեսներ թէ Ալաշկերտու տառապելոց հացագին նուէրն իսկ՝ Պատրիարքարանի պաշտօնեայք կուտեն, ալ փարայ մը կուտա՞յ (ՃԿԸ)։ Ուստի լուսաւորչականութեան դարձող օգտակար մարդիկ ալ պիտի կորուսանեն օգտակարութիւննին, զոր տեսանողաց և ոչ մին պիտի մատնէ ինքզինքը այդ անպիտանութեան։

Մխբ. Բա՛ւ ի մէնջ, որ սեպած ըլլանք թէ Լուսաւորչական եկեղեցւոյ անդամք ամենեքեան անպիտան են, այսպիսի խօսքեր հարկաւ ոչ ընդհանրապէս պիտի հասկցուին և ոչ բացարձակապէս, այլ մասնաւոր և բաղդատաբար։ Մինչ զի թուի մեզ, թէ մեծատունք և ուսեալք, որ այսօր են ի ծոցի Լուս. դրութեան և իրենց դանձերովն ու տաղանդովը օգտակար ծառայութիւն կմատուցանեն ազգին և կրօնին, շատ առաւել պիտանի ու օգտաւէտ պիտի ըլլային եթէ գտնուէին Աւետ. դրութեան տակ։ Քանզի հոս յաջող պարագայից զուգընթացութեամբ պիտի գործէ, շոգենաւը հոսանքէն վար պիտի երթար. սակայն հոն ձախողութեանց դէմ կուրծք տալով, ընդդէմ հոսանաց պիտի երթար։ Քանի՛ առաւել պիտի փայլէին այն հանճարեղ գլուխներն, որք մինչ կնդուղի տակ իրենց լոյսը կարտափայլեն, և քանի՛ առաւել պիտի արդիւնաւորէին այն թանկագին գոհարներն, որք մինչ ի խաւարչուին թանգարանս վանուց

և եկեղեցեաց անպիտանութեան մատնեալ կան։ Եթէ Հայուն կրօնասիրութիւնը բորբոքի ջերմութեամբ Ս. Աւետարանի, եթէ Հայուն բարեսիրութիւնը խրախուսի թելադրութեամբ արդիւնաւորութեան, եթէ Հայուն բնական գթութիւնը կակղանայ ներգործութեամբ Աստուծոյ բանին, ինչե՞ր պիտի չընէ յօգուտ ազգին և ի փառս Քրիստոսի։ Սակայն կերևի մեզ թէ ոչ եկեղեցական դրութիւնը և ոչ ազգային կառավարութիւնը կրնայ Հայուն սիրտը ոգևորել և միտքը լուսաւորել։ Հետևապէս Բողոքականը որ վարժեալ է ընդ միշտ ոգևորել և քաջալերել իր դրութեան մէջ, չկրնար զանիկա թողուլ կըսեմ, և տալ զանձն ի ձախողութիւնս։

Մխգ. Վայրկեան մալ համարենք թէ Բողոքականք միահամուռ դիմեցին ի ծոց Լուսաւորչական եկեղեցւոյ, որ անփոփոխ կեցեր նոցա դարձին կսպասէ, ասով ազգը կշահի՞ արդեօք թէ կվնասէ։ Թուի մեզ թէ այս դարձին վնասները այնքան շատ և ինքնայայտ են, որ նոյն իսկ յաչս խորագէտ Լուսաւորչականաց պիտի լինէր մեղադրելի՝ իբրև գործ անսկզբունք գործողի և թեթևամտի։ Քանզի ասով Լուսաւորչական աւանդից ջատագովք մեծ յաղթանակ մը տարած պիտի լինէին ի վերայ բարեկարգութեան, որոյ հետքը անգամ պիտի չթողուին մնալ նախնեաց աւանդից մէջ, որ իբրև աստուածային իմն այսպիսի յաղթութիւններ կգործէ։ Եւ ինչ որ երբեմն Մատթէոս Պատրիարք պահանջեց 40 տարի յառաջ, նոյնը պիտի պահանջէն և այժմեան պաշտպանք Լուս. դրութեան ի նա դիմողներէն, որ ընդունին ամէն ինչ որ ի նախնեաց մնացած է կըսուի։ Ասով 40 տարուան յետադարձ մը եղած պիտի լինի դէպ ի առաւել հինը՝ եւ երթալը սկզբունքով, և ո՞վ է որ չտեսներ ասոր չարիքներն ու վնասները։ Այս դարձը կենթադրէ, դարձեալ, մերժել զբողոքականութիւնն ինչպէս մերժուեցաւ 40—50 տարի յառաջ, մերժել Բողոքական եկեղեցիները իբրև հերետիկոսական և հերձուած, մերժել Բողոքական ազգաց և ընկերութեանց դրամական և բարեկամական նպաստը, ցուցունել թէ իրենց երբէք կարօտութիւն չունին։ Անոնք ալ հարկաւ զՀայս պիտի համարին իբրև ազգ յեղյեղուկ և անհաստատ, ժողովուրդ խաւարասէր և տգէտ, մարդիկ անպիտան և անընդունակ սկզբունքի։ Այս դարուս և Հայուն այս պարագայից մէջ ասոնք պզտիկ վնասներ չեն, մանաւանդ բաղդատելով այն յուսալի օգուտներուն որ կրնան յառաջ գալ ցարդ եղած փոփոխութիւնները խոհեմաբար եթէ յառաջ տարուին։

Մխդ. Ուրեմն խոհեմ և սկզբունքի տէր Բողոքականք չեն կրնար դառնալ ի լուսաւորչականութիւն, մինչ կան պատճառներ որք Լու-

սաւորչականները Բողոքական պիտի ըսեն ինչպէս որ ըրեր ալ են։ Կան շատ Լուսաւորչականներ որք գաղափարով Բողոքական են և դէպ ի հոն կերթան, թէ և տակաւին կերթան ի Լուս. եկեղեցին, իսկ չեն ընդունիր այն վարդապետութիւններն ու արարողութիւնները զորս և Բողոքականք չեն ընդունիր։ Կան ոմանք ալ, որ եթէ վարդապետական երկու դրութեանց խտիրը չկարենան որոշել, դիւրաւ վերահաս կըլլան թէ Բողոքականաց պաշտամունքէն առաւել շինութիւն կառնուն բան հասկնալով, քան թէ Լուսաւորչականէն, որ գրաբար է և լոկ աւուր պատշաճից կրկնութիւն, որ առանց բան մը հասկցնելու տաղտկութիւն կու տայ։ Այսպիսիք ոմանք երբ կտեսնեն զեղծ վարքն ու բարքն Եկեղեցականաց մեծ մասին հանդերձ խոր տգիտութեամբ իւրեանց, երբ կտեսնեն շատ մը ուսումնական համարելոց կրօնական անտարբերութիւնը մինչ իսկ անկրօնութիւնը, երբ կտեսնեն շատ մը բաներու մէջ մէկ կողմին թերութիւնն ու միւսին լրութիւնը, հարկաւ պիտի յարին Աւետ. Եկեղեցւոյն։ Նոյն իսկ անոնք որ այս օր լուսաւորչականութեան մէկ գործին մէջ ջերմաջերմ կաշխատին՝ անձնական փորձառութեամբ պիտի տեսնեն թէ անյաղթելի և անբառնալի դժուարութիւններ կան, ուստի շուտ մը պիտի զգաստանան և թողուն զայն կամ Բողոքականաց պէս օտար ձեռնտուութեան պիտի դիմեն։ Այսպէս գտաւ Խրիմեան Հայրիկ և յաջորդաց մտադրութիւնը առ այս հրաւիրեց, այնպէս գտաւ և Ներսէս Պատրիարք, այնպէս գտան և անձնուէր պաշտօնակատարք ազգին ինչպէս և Խմբագիրք։ Որոց մէջէն Մանզումէ, երբեմն ազգին ամէն գործոց մէջ անձնուէր գործող ջերմեռանդ մը, իւր բնական եղած ազատախօսութեամբը՝ երկար և շարունակական յօդուածներով հաստատել, թէ ազգին միակ ելլելիք ճամբան Բողոքական ըլլալն է (Մանզ. 2959)։

Մխե. Եւ ամէն նկատողաց օրինաւոր պիտի թուի այս առաջարկը։ Որովհետև ամէն բանի մէջ ալ օրինաւոր է սխալը ուղղել և թերին լրացունել, այսպէս է և նկատմամբ եկեղեցական խնդրոց, որոց հիմը ըլլալով Ս. Գիրքը, որ է բան յայտնութեան Աստուծոյ, է անսխալ և անփոփոխելի, իսկ ինչ որ նորա վերայ կառուցեալ են ի մարդկանէ, իբրև գործ սխալական մարդոց, է միշտ բարեփոխելի։ Այսպէս իմացան նախնի Հայրապետք որ ըստ պիտոյից փոփոխութիւններ ըրին, այսպէս իմացան Բողոքական ազգերն որ Պապական եկեղեցին բարեկարգեցին, այսպէս կիմանան և Հայք որ կուզեն բարենորոգումներ ընել եկեղեցական կրից մէջ։ Հասկցուած է և պիտի հասկցուի թէ Բողոքական Հայոց ըրածը ոչ այլ ինչ է բայց

եթէ օրինաւոր բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյն, որում կկարօտի նոյն իսկ բազում Լուսաւորչականաց վկայութեամբ։ Եւ եթէ օրինաւոր է առնել բարեկարգութիւն, ապա և խոհեմական, որ է ընել այն հարկաւոր բանը որքան որ պարագայք կներեն, կամ այնպիսի եղանակաւ մը յորմէ լաւագոյն չըլլար։ Արդ կրօնի հարկաւորութեան չափովը հարկաւոր է և բարեկարգութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյն, և շատերուն ջանք ընել ու չյաջողելէն ցոյց մը, թէ պարագայք չեն ներեր լաւագոյն կամ ուրիշ տեսակ բարեկարգութիւն քան զոր ըրին Բողոքականք։ Ուստի Լուսաւորչականին կմնայ ջանալ

3. ՅԱՂԱԳՍ ԲԱՐԵԿԱՐԳԵԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ

Մխջ. Տեսանք նախորդ խնդրոյն մէջ թէ բողոքականութիւնը տրամադիր է աճելու, իսկ ոչ այնքան ընդհանրանալու որ հաւանական լինի, թէ Լուս. եկեղեցին վերցուի։ Ուստի Հայուն մէջ կերևի թէ պիտի տևեն երկար ատեն Լուսաւորչական և Աւետարանական եկեղեցիք անմիաբան և հակառակ իրերաց, եթէ բանը այս ընթացքին մէջ թողուի։ Եւ այս եթէ ազգին անպատուութիւն չէ, վնասակար է նկատելով այս օգուտները որ կրնան յառաջ գալ միութենէ, մանաւանդ թէ Քրիստոնէական հոգին կպահանջէ սիրալիր միաբանութիւն ընդ մերձաւորս։ Այս միութիւնը մանաւանդ կարգինաւոր երբ ըլլայ միաբանութիւն դաւանութեան և եկեղեցւոյ, միութիւն հոգւոյ և գործոյ, առանց որոյ Հայն իբրև Քրիստոնեայ ժողովուրդ չկրնար լուսաւորել զՏաճկաստան, ուր դրուած է իբրև խմոր և խմորելուն մէջ է իր փառքն ու պարծանքը։ Բայց ցարդ չգտանք յոյս մը ոչ ազգային և ոչ քաղաքական միութեան, ոչ եկեղեցական ոչ ալ ուսումնական միութեան, ինչպէս որ մէկը կամ միւսը վերցուելու հաւանականութիւն մը ևս, հապա կմնայ և ի նկատի առնուլ բարեկարգեալ միութիւն կոչուած կերպը։ Այսինքն Բողոքականք ընդունին Լուսաւորչական եկեղեցւոյն մի քանի արարողութիւնները որ վնասակար չեն, և Լուսաւորչականք թողուն որ ինչ վնասակար են և անպիտան։

Մխէ. Ասով ընդհանուր ազգը կվայելէ բարեկարգութեան օրհնութիւնները, Բողոքականը կվայելէ իւր նախնական և հայկական սովորութեանց քաղցրութիւնը և ազատ կըլլայ Եւրոպական կամ Ամերիկեան եկեղեցւոյ մը նմանելէն։ Լուսաւորչականն ալ հաստատ կըլլայ բարեկարգութեան մը որուն կկարօտի և կփափաքի, ըստ որում այժմեանը ոչ սիրտը կկրթէ և ոչ միտքը կլուսաւորէ, և ի

վտանգի կայ կրօնական զգացումները կորսնցնելու առ ի չգոյէ մնացիչ ճարակի։ Այսու միութեամբ Հայը անշուշտ Արեւմտեայց կամ Քրիստոնեայ աշխարհի մտադրութիւնը առ ինքն պիտի ձգէ իբրեւ ժողովուրդ, որ նշանաւոր կհանդիսանայ ի մէջ արեւելեան ազգաց, որոց լուսատուն կրնայ լինել։ Քաղաքական աշխարհ իսկ չկրնար աննկատ մնալ այս մեծ շարժման վրայ, կրօնական ընկերութիւնք արդէն պատրաստ են ձեռն տալ օգնութեան երագ յառաջադիմութեան համար։ Այսով անշուշտ ազգայնութեան եւ քրիստոնէական սէրը պիտի առաւել եւս արծարծի ի սրտի համարին եւ համակրօն եղբարց մէջ. Լուսաւորչականը չպիտի կրօնափոխ եւ ազգուրաց համարի իր Բողոքական եղբայրը եւ հակառակի նմա, եւ սա չպիտի համարի իւր Լուսաւորչական եղբայրը կրօնի անփոյթ եւ տանջող ճշմարտութեան։ Հայ հանճարները առիթ կգտնեն եւ ասպարէզ մինչ ի ծագս արեւմտից շողշողալ բանիւ իւրեանց եւ գրենով, Եւրոպա առաւել կճանչնայ Հայուն տաղանդը, որ թէեւ չկրնար մրցիլ մեծ ազգաց հանճարաւոր տաղանդաց հետ, բայց կցուցնէ իւր ձիրքը որ է հետեւիլ անոնց։ Այս միութեան մատուցանելի օգտից վրայ ճառել, թուի մեզ թէ, ճառել կըլլայ արեգական աշխարհիս բրած օգտից վերայ, զորս ամէն ոք գիտէ։

ՄԽԸ. Եթէ երբէք այս միութեան վրայ դեռ մտադրութիւն չըլլար եւ անոր գործադրութեան կարեւորութիւն չտրուիր, անոր համար չէ որ օգուտներն յայտնի չեն, այլ անոր համար է որ հաւանական չէ թէ կրնայ այսպիսի միութիւն մը լինել։ Ապաքէն կան դժուարութիւնք յոմանց անյաղթելի համարեալ, եւ առ հասարակ անպատրաստ են հասարակաց մտքեր, որ մեծ ազդեցութիւն ունի այսպիսի խնդրոց վերայ։ Լուսաւորչականաց մէջ կան որք կրօնական իրաց կարեւորութիւն չեն տար, կան ալ որք եկեղեցւոյ մէկ բանը իսկ փոխելու չեն իշխեր, ոմանք այսպիսի առաջարկ մը ազգակործան կհամարին, ոմանք ալ Բողոքականաց մէկ հնարքը մարդ խաբելու համար։ Բողոքականաց մէջ ալ կան մարդիկ որ կվախնան թէ այսպիսի շարժում մը վերստին ծիսականութեան դառնալ է, եւ կան որ Աւետարանի գործոյն վնասակար կհամարին զայս։ Հայք իբրեւ մեծամասնութիւն՝ զիջում ընել չեն ուզեր «ափ մը» Բողոքականաց հետ համախոհութեան գալու. Բողոքականք իբրեւ ուղղութեան ճամբուն մէջ կեցողներ՝ չեն ուզեր յաջ կամ յահեակ շեղիլ որ Լուսաւորչականին ըլլան ընթացակից։ Այո՛, կան դժուարութիւնք յաջս մարդկան անկարելիք, բայց «միթէ տկարանայցէ՞ առ յԱստուծոյ ամենայն բան.» ո՛չ ապաքէն այս իր ուզած գործն է, որոյ օգնել

խոստացած է։ Աշխարհի մէջ Քրիստոնէութիւն տարածելու քանի առաւել քան զայս դժուարութիւնք կային, բայց Ամենակալին բազուկը լեռները դաշտի փոխեց, յոյս մեծ ունիմք թէ պիտի ընէ նոյնը եւ Հայաստանի լերանց վրայ։

ՄԽԹ. Մեր տեղը չներեր առայժմ ճառել՝ ձեռք առնուելիք այն միջոցներուն եւ բռնուելիք ընթացից վերայ, որովք յուսալի է ժամանել ի կէտ այնր բաղձալի միութեան, մանաւանդ յանդըգնութիւն իսկ կըլլայ կերպեր ցուցնել երկու կողման առաջակայից, որոց ձեռամբ պիտի յաջողի գործը, եւ որք իրենց բարձր դիրքովը առաւել շրջահայեաց տեսութիւն ունին քան զմերն։ Բայց առ ի յուսադրել ստորակայս, եւ ի քաջալեր մեզ նմանեաց՝ հակիրճ բանիւ պարտիմ յիշել, թէ այս միաբանութիւնը յարդիւնս բերել կարելի է եւ հաւանական, եթէ իւրաքանչիւր ոք, որ անոր կբաղձայ, ընթանայ դէպ ի նա, ընէ ինչ որ ձեռքէն կուգայ։ Թուի մեզ թէ ամէն ոք կրնայ այս գործոյն մէջ մասնակցութիւն մը ընել, որ բազմամասն ըլլալով կատարելի շատ տեսակ գործեր ունի, եւ այլեւայլ կարգի ու աստիճանի մարդոց աշխատութեամբը կկատարուի, անանկ որ մէկը սպասելու չէ որ ուրիշը գործէ եւ կատարէ, ուրիշ մալ ինքն է, թող ընէ ինչ որ կրնայ եւ պարտքն է։

ՄԾ. Եւ սակայն անհնարութեան մը համար աշխատիլ պիտի չսեպուին նկատելով որ ինչ հանդիսացան մինչ աստ, որովք կտեսնուի թէ Հայուն միտքը առ հասարակ կդիմէ ի բողոքականութիւն, գլխաւորապէս անոնցը որոց խորհուրդները մեծ ազդեցութիւն ունին հասարակաց մտաց վերայ։ Եւ արդէն Լուսաւորչական եւ Աւետարանական եկեղեցեաց մէջ սկզբան եւ կառավարութեան նոյնութիւն կայ, տարբերութիւնքը ալ դիւրաւ բառնալի բաներ են, եթէ կամք ըլլայ։ Արդարեւ նախնիք մեր ալ ջանք ըրին միութիւն մը ունենալ Յունական եկեղեցւոյն հետ, որ երբէք զիջում չէր ըներ, այլ միայն կպահանջէր, կպահանջէր որ Հայք այս ինչ վարդապետութիւնը եւ այն ինչ արարողութիւնը ընդունին, բայց Հայ Աւետարանականը զիջում կընէ։ Նոյն օրինակ ջանք մալ եղաւ ընդ Պապականս, որ իբր թէ Հայոց կըսէր, ի՞նչ կուտաք որ ձեզ հերետիկոս չսեպենք, եւ ապաքէն Պապական եկեղեցին չէր կրնար զիջանիլ որ բան մը ընդունի Հայերէն, բայց Հայ Աւետարանականը այնպէս չկրնար լինել։ Կմնայ ուրեմն որ ջանքեր ըլլան գործը փութացնելու եւ միութեան օրհնութեանց շուտով հասնելու ըստ երագութեան գործոց դարուս։

ՄԾԱ. Թող հապա ցուցուին այնպիսի միութեան մը հարկաւո-

րութիւնը և օգուտները, թող յառաջ բերուին և դժուարութիւններն ու անոնց առջևը առնելու կերպերն ու հնարքները, թող աւուր խնդրոյ կարգը անցնի այս մտադրութեան արժանի կէտը, թող յուզին մաքեր մինչև որ հանդարտին: Հաճեսցին կրօնագէտք ցուցունել այս երկուց կողմանց համաձայնեալ կէտերն, ինչպէս երբեմըն ըրած են Բողոքականք ոմանք, հաճեսցին պաշտօնեայք Աւետարանի պատրաստել զսիրտս առ սիրալիր ընդունելութիւն համարւին եղբարց՝ պատրաստ լինելով զիջումներ ընել ի փառս Աստուծոյ որ անշուշտ հաճոյական հայեցուածովք պիտի նայի այսպիսի շարժման մը վերայ: Ո՛հ, ալ թող ցուցուի թէ «զի՜ բարի է և զի՜ վայելուչ զի բնակին եղբարք ի միասին», որպիսի՜ հաճելի բան մը Քրիստոսի՝ տեսնել զորդիս Հայկայ ժողովեալ ընդ հովանեաւ խաչին իւրոյ և առ ջրովն կենաց: Հապա ալ թող դադրին հակառակորդ գրիչներ և կսկծեցուցիչ լեզուք, ոյժն ու ատելութիւն փոխուին բարեկամութեան և սիրոյ, ծեծ և հալածանք տեղի թող տան սիրոյ համբուրի և աջակցութեան: Հաճեսցին առաջակայք երկուց կողմանց օրինակ հանդիսանալ իրենց բանիւքը և վարուքը, մինչ իսկ ի հոգևոր պաշտաման կցորդ ըլլալով փոխադարձաբար: Եւ անոնք որ չեն կրնար այլոց համար բան մը ընել՝ թող ընեն իրենց անձին համար, դիմեն թող Աւետարանի դաստիարակութեան գիրկը, գիտելով թէ անով պիտի դիւրացունեն այս մեծ գործը: Գործ՝ որոյ միակ վախճանն է ազատել տգիտութենէ և վատթարութենէ Հայ Քրիստոնեայները և ի ձեռն նոցա զամենեսին, որք նստին ի խաւարի և ի ստուերս մահու: Հաճէ՛ և Դուն, Աստուած շնորհաց, արդիւնաւոր առնել զամենայն գործառնութիւնս, որք պիտի ըլլան այս բարենպատակ գործոյն համար: Պարգևէ ամենեցուն որ ինչ պէտք են՝ առնել զամենայն քու փառացդ համար և յերջանկութիւն Հայկայ որդւոյ, թափէ նոցա վերայ հոգի աստուածպաշտութեան, հոգի եղբայրսիրութեան և միաբանութեան:

ՄԾԲ. Ալ թող մտադիւր խօսուին բարեկարգեալ միութեան վրայ, մտադիր կարդացուին նորա նկատմամբ եղած ամէն տեսակ գրութիւնք, և թող մանկունք Հայկայ քաղցրաւաշ երգեն զերգս սիրոյ և միութեան: Թող կրկնուին հետևեալ տողերն, և նմանիք նոցա, մինչև ի բանէ արդիւնս տան այն ամենայն զգացմունք, զոր արտայայտեցին երկու Հայ քերթողք—Գ. Մ. Շմաւոնեան պատուելի Երեցն Խարբերդու Հայ Աւետարանական Եկեղեցւոյն, և Մ. Պէշիկթաշլեան, հանրածանօթ բանաստեղծն Հայոց:

ՍԻՐԷ ՀԱՅԸ

Սիրէ՛ Հայը, թէ և ըլլայ աղքատ՝ տնանկ անկարող,
Վրան գլուխը հին ու մին դանէ ի դուռ մուրացող.
Անունն է Հայ պարտ է քեզ
Սիրել ըզնա Հայու պէս:

Սիրէ՛ Հայը, թէ և ըլլայ հարուստ՝ փարթամ մեծատուն,
Եւ ունենայ պէյ՝ էֆէնտի, կամ ամիրայ պատուանուն.
Անունն է Հայ պարտ է մեզ ևն:

Սիրէ՛ Հայը, թէ և ըլլայ հայր սուրբ՝ տէրտէր՝ վարդապետ,
Վրան փիլոն, ծոցը սուրբ խաչ, կաթողիկոսն իւր վարպետ.
Անունն է Հայ պարտ է մեզ ևն:

Սիրէ՛ Հայը, թէ և ըլլայ Լուսաւորչեան՝ Բողոքական՝ Պապական,
Բստ քոյ կարծեաց ճիշտ մնապաշտ՝ հերետիկոս՝ մարդդաւան,
Անունն է Հայ պարտ է մեզ ևն: Գ. Մ. Շ

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան չքեղ,
Թէ երգք թռչնոց սիրողաբար.
Մատունք կուսին ամենադեղ,
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Ջունին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն:

Տու՛ր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք,
Որ մրկաւ էինք զատուած.
Բախտին ամէն ոխ չար ու նենգ
Ի մի համբոյր ցրուին ի բաց:
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալին եղբայր անուն:

Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժէին ցօղով։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն են ։

Մէկտեղ լացինք մենք ի հընում;
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և զխնդում,
Որ բաղմփծնունդ ըլլայ մեր ջան ։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն են ։

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ Թափին մեր քրտինքներ,
Ըղձունձք բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր ։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն են ։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՎԵՐՋ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм ССР
ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
ИМ. А. МЯСНИКЯНА

4431
4432
4433

4292
93
94

ՀՀ Ազգային գրադարան
NL0031436
ՀՀ Ազգային գրադարան
NL0031560
ՀՀ Ազգային գրադարան
NL0031559